

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՊՐԻԼ

1995

ԾԲ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՊՐԻԼ

1995

Նվիրվում է
Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության ու գահակալության

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴ

107-95
18249-

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՁՔՈՅՍ Ի ՔՈՅՈՑ ՔԵԶ ՄԱՏՈՒՑԱՆԵՄ

Ամենայն Հայոց հավատքի կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր տաճարում ապրիլի 4-ին Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովը Ամենայն Հայոց ընդհանրական Հայրապետ ընտրեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ շնորհազարդ Հայրապետին: 130 կաթողիկոսների աստղաճույղին ավելացավ մի նոր լուսավոր ու մաքրափայլ անուն՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա.
Վեհափառ և Սրբազնագույն Կաթողիկոս
Ամենայն Հայոց

Էջմիածինը որպես «խորհուրդ խորին», որպես հայ հավատքի բարձունք սիրտ ի մի համախմբեց բոլորին, Հայաստան աշխարհի չորս ծագերից՝ հյուսիսից, հարավից, արևելքից և արևմուտքից, ինչպես նաև Արցախ չքնաղ և զմրուխտյա աշխարհից, ապա և աշխարհի բոլոր կողմերի հեռու-մոտիկ անկյուններից, որտեղ կա հայ եկեղեցի, հայ շունչ և հայ ոգի, օտար ազգերից ու եկեղեցիներից, որպեսզի միասին տոնախմբվեր նորընտիր Վեհափառի գահակալության հանդեսը:

Ծաղկազարդի հրաշալի և փառավոր տոնին ծաղկազարդվեց Հայաստանյայց Մայր Եկեղեցին՝ իր բոլոր ուստերով: Վերացավ սգո քողը, շնորհազարդ նոր պատմուճանով զարդարվեց Քրիստոսի Իջման սեղանը:

Այսօր, Վեհափառ, քեզ եմ ընծայում իմ բանավոր ընծան, քո իսկ երանիներով, որ ընծայաբերեցիր քո նախորդին՝ երկնային կյանքի ճանապարհին քո հրաժեշտի խոսքը ասելիս:

«—Երանի՛ քեզ, ոգեշեն և ժողովրդաշեն Հայրապետ»,—

որ քո 18-ամյա գահակալության ընթացքին լուսավորչաշեն գավազանը ձեռքիդ ջանք ու եռանդ չխնայեցիր քրիստոնեությունը ամրապնդելու ի սփյուռս ցրված զավակներիդ հոգիներում: Քրիստոնեությունը որպես հայության ինքնաարտահայտման ոգեղեն ներկայություն «իբրև զգոյն մորթոյ» առնչվետ փառավորեցիր;

Դարձար «Կենաց Բանին» մեծ քարոզիչը։ Քրիստոնեության հավատքն ու գաղափարը դարձրիր հայ ժողովրդի գրահանդերձը, որպես ուժի անփոխարինելի բարիք՝ ընդդեմ չարի ու բռնության։

Ավետարանի քարոզչությամբ նոր կյանք շնորհեցիր քո ժողովրդին, որպես Լույսի Կյանք, Սիրո Կյանք, Հավատքի Կյանք։

Քրիստոսի Հարության տեսիլքով ներշնչված շրջեցիր ու ամենուր պատգամեցիր առաքյալի աստվածաշունչ խոսքը. «Ուրեմն, եղբայրներ, աղաչում ենք ձեզ և հորդորում Քրիստոս Հիսուսով, որ ինչպես սովորեցիք մեզնից, այնպես ընթանաք և հաճելի լինեք Աստծուն... Եվ գիտեք, թե ինչպիսի պատվերներ տվեցինք ձեզ Տեր Հիսուսով, որովհետև Աստծու կամքը ա՛յս է, որ դուք սուրբ լինեք» (Ա. Թեսաղ. Դ 1—3)։

«—Երանի՜ քեզ, Էջմիածնասեր ու եկեղեցաշեն Հայրապետ»,—

գործեցիր դրսում, բայց միշտ բարձր պահեցիր Էջմիածնի լուսաշող անունը, միշտ վառ պահեցիր քո հոգու ներսում Լուսավորչի կանթեղից առած անմար կրակը հայ հավատքի։ Էջմիածինը քեզ համար դարձրիր հավատամք՝ գրելով.

«Իջման սեղանին երկրպագելով գրեթե ամեն օր, անպայման ամեն անգամ, երբ Մայր տաճարից ներս ոտքերս եմ դնում, զգում եմ լուսանոս ալիքը Հիսուսի իջման, որ տարածվում է ողջ էությանս ափերի վրա, ներթափանցելով բոլոր այն տարրերի մեջ, որոնք ես եմ, այլապես եղած չլինելու պայմանով և ատիճանով»։ Եվ այդ հավատամքը քարոզեցիր ամենուր, ուր որ եղար, Հայաստանի մեջ թե արտասահմանում, հայ շրջանակներում թե օտար, անհուն սիրով և երկյուղածությամբ, հոգուդ քնարով հնչեցրիր աստվածային խորհրդի ձայնը և դրոշմեցիր ամենուր թանձրացյալ պատկերը տառագրելով՝ Էջմիածին։

«—Երանի՜ քեզ, հոգեշեն և գրքաշեն Հայրապետ»,—

Անթիլիասի Մայր տաճարի բակը դարձրած ոգեղեն մի սկիհ, «Հայոց գիրն ու խոսքը» դարձնելով նշխար ու գինի, հրավիրեցիր բոլորին Սուրբ Հաղորդության։ Որպես գրիչ, որպես դպիր, հայ գիրքը դարձրիր պատիվը հայի, պարտքը հայի, զրահանդերձը հայի, բալասանը հայի, այգեստանը հայի։

Հայ մարդուն դրեցիր հայ գրքի դիմաց, որպեսզի հայ մարդը հայոց լեզվով իր աղոթքը առաքի առ Աստված։ Ս. Մեսրոպի անմեռ լեզուն հայոց լուսաքաղձ աչքերի դիմաց, նախանձախնդրությամբ հնչեցրիր օտար ափերում՝ Մայրիների այուքի ներքո։ Մշտարթուն կերպով հնչեցրիր «Զմռուռնանք. հայ ժողովրդի կյանքի մեջ գիրքը ծնվել է Սուրբ Գրքով, Աստվածաշունչ Մատյանով։ ...Սրբության, նվիրականության օծում ունի իր մեջ հայ գիրքը։ Հայրենի՞քն է հայ գիրքը։ Վարդանանց բանակ են հայ տառերը, Խորենացիական պատգամ են հայ պատգամախոս մատյանները, Նարեկյան աղոթք են հայ բանաստեղծությունները, երգի բարձրացած Շնորհալիական մեղեդիներ են քնարական հոգեխոս քերթվածները»։

Անճառելի ճշմարտություն։

Հարգանք և երախտիք հայ գրքին։

Եվ վերջապես տվեցիր նորօրյա պատգամ.

«— Խոնարհվի՜ր հայ գրքի առջև, որպեսզի բարձանաս հայ գրքով»։

«—Երանի՜ քեզ, միասնաշեն ու միութենակերտ Հայրապետ»,—

որ Հայ Եկեղեցու միասնականությունը ամրապնդող քո քաջալերական և հուսադրիչ գործունեությամբ քո նախորդի հետ միախորհուրդ և միասնակամ ի հեճուկս հակառակորդների նոր դարագլուխ կերտեցիր ի հանուն Ամենակալի և մեր տառապյալ ազգի:

Քո նախորդի հետ մեկտեղ կոչ հղեցիք մեր հայրենի պետության բոլոր պատասխանատուներին, մեր ժողովրդի բոլոր զավակներին, մեծերին և փոքրերին, արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ արթուն և մաքուր պահեն իրենց հոգիները, որ անսասան պահեն իրենց անաղարտ հավատքը, իրենց աչքի լույսի պես՝ ի գին իրենց արյան:

Եվ ապա դարձար և վերստին կոչեցիր.

«Մեկ ազգ, մեկ Հայրենիք, մեկ Եկեղեցի ամեն բանից առաջ»:

«Երանի՜ քեզ, հայրենաշեն ու ազգաշեն Հայրապետ»,—

որ շրջեցիր ու քարոզեցիր Ավետարանի քարոզչությանը զուգընթաց «վասն հայրենեաց»... Մանկությանդ օրերից սկսյալ մինչև «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ դառնալդ գործելակերպի մի սկզբունք ունեցար. «Վասն Աստուծոյ և վասն Հայրենեաց»:

«Ի՞նչ պետք է անենք», «ի՞նչ կարող ենք անել»-ու փոխարեն գործնական և քաղաքացիական բարձր պարտականությամբ ու գիտակցությամբ, սիրտդ, հոգիդ, ֆիզիկական գոյությունդ և նյութականդ ի սպաս բերեցիր Հայրենիքին և պատգամեցիր ամեն հայի, որ Հայրենիքի շինության համար «Հարկ է որ մասնակցես, քո հայի իրավունքդ պարտքովդ արժևորես: Այս հիմքն է աշխարհի բոլոր առողջ ու մեծ, տոկուն ու ծաղկուն ազգերի և պետությունների»:

«—Երանի՜ քեզ, բարեշեն ու բարեգործ Հայրապետ»,—

որ բարեզարդեցիր ու պայծառացրիր Հայաստանյայց Եկեղեցին: Բարձր պահեցիր պատիվը մեր Մայր Եկեղեցվո և հայ ժողովրդի: Ոգևորեցիր և զորեպնդեցիր քո զավակներին՝ միշտ նույնը կրկնելով. «Սիրելինե՜ր, արժանիք ունենալը մի բան է, արժանիք ունենալու գիտակցություն ունենալը ուրիշ բան է: Որպես ազգ այս արժանիքը շահեցինք. արժեքը ունեցանք. բայց եթե չգիտենք արժանիքը ունենալու արժեքը, ունենալը ի՞նչ արժի: Մենք պատիվը ունենք այսօր աշխարհի մեջ մեր հայրերի մեզ ժառանգ թողած արժանիքը ունենալու: Հպարտությամբ ենք ասում երբեմն օտարներին, թե՝ մենք աշխարհի առաջին ազգն ենք, որ պետականորեն ճանաչեցինք Քրիստոնեությունը որպես ազգային կրոն: Այո՛, ասելը հեշտ է, բայց այն արժեցնելը մեր կյանքով, մեր գործով, մեր վկայությամբ, մեր ստեղծագործությամբ, ա՛յդ է մեր բուն, սեփական արժանիքը: Ձեր հայրերի ձեզ տվածով հպարտացեք, բայց մի՛ գոհացեք, նրա վրա ավելացրեք ձեր պատիվը, ձեր կենդանի վկայությամբ շահեցեք պատիվը»:

Այո՛, այդ արժանիքը ունենալու հպարտության գիտակցությամբ մի՜շտ գործեցեք վասն փառացն Աստուծո, վասն պայծառության Մայր Եկեղեցվո և վասն բարեշինության Մայր Հայրենիքի:

«—Երանի՛ քեզ, աստվածաշեն Հայրապետ»,—

որ քո անձի խոնարհությամբ և բոլորանվեր ինազանդությամբ մնացիր հավատարիմ ուխտիդ, որ է ծառայել Աստուծո և աստվածաշեն ընթացքով մատակարարել ազգիդ:

Այսպիսով ծառայեցիր և ծառայում ես քո կոչմանը: Կենդանացնում և զվարթացնում ես նոր շնչով քո ժողովրդին և խնդակից դառնում նրան:

Քո ուխտի առաջին իսկ պահին բաց ճակատով կանգնեցիր Աստծո առաջ և հպարտորեն ասացիր

«— Անհավասիկ ես, առաքի՛ր ինձ»:

«—Երանի՛ քեզ, երջանկությանդ համար»,—

որ այսօր, որպես ազգընտիր Հայրապետ Ամենայն Հայոց, նոր տեսիլքներով գոտեպնդված շարունակում ես քո ծառայությունը՝ հիշելով Առաքյալի կազդուրիչ խոսքերը. «Քանի որ ունենք այս պաշտոնը Աստծու ողորմությամբ, չենք տկարանում» (Բ Կորնթ., Դ 1):

Քրիստոսի Ավետարանի փառքի լույսը ունենալով միշտ ուղեկից, ստանալով Սուրբ Հոգու առատահեղ շնորհները, նախախնամության ներքո Ամենակալն Հոր Աստուծո, օ՛ն հառաջ, Հայրապետ Հայոց, ի սեր քո ժողովըրդի:

Եվ վերջապես:

Երանի՛ քեզ, հայ ժողովրդին Աստծո թագավորության ժառանգակիցը դարձնելու սրբազան գործում:

Հայ ժողովրդի հոգու խնամակալ և պահապան, կենդանի բժիշկ և մատակարար, երբ Տերը գա իր փառքով Երկրորդ Գալստյամբ, կկանգնես Նրա Աջ կողմում ու կասես.

— Անհավասիկ ես և իմ ժողովուրդը, դատի՛ր ինձ ըստ իմ գործերի և ողորմի՛ր իմ ժողովրդին. ամեն:

Ի ՓԱՌՆ ՀԱՎԱՏԻ ԵՎ ՀԱՅՐԵՆՅԱՑ

Այն հեռավոր 301 թվականից, երբ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, զորակցությամբ Տրդատ Մեծ արքայի, քրիստոնեական հավատքը հաստատեց Հայոց աշխարհում որպես պետական ու մշտնջենական կրոն, արդեն 1700 տարի իր ամենահաղթ խաչը բարձր է պարզել հայոց առաքելավես Եկեղեցին, քանզի այդ մեծ ու հզոր կառույցի հիմքերն էին դրել Տիրոջ կողմից Արևելք ու Հայոց աշխարհ առաքված Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, Հիսուսի աշակերտներն ու սրանց աշակերտները: Եվ մեր սուրբ Եկեղեցին առաքելաշավիղ դարձավ, քանզի հենց Տիրոջ կենդանության ժամանակներից ընթացավ այդ ուղիով: Եվ մեր հավատքի հաստատուն վեմը դարձավ Սուրբ Գրիգոր Լուսավորչի աննման տեսիլքով ձև ու մարմին առած Սուրբ Էջմիածնի տաճարը: Այնուհետև տեսիլք երևաց արքայիի, և Աստուծո հրեշտակն ասում էր. «Պետք է, որ դուք առանց հապաղելու Գրիգորին քահանայապետության պաշտոնը տաք, որպեսզի մկրտությամբ լուսավորի ձեզ»: Տեսիլքը երևաց սրբին, ու հրեշտակն ասում էր. «Քրիստոսից է այդ հրամայված քեզ»:

Ուրեմն հայոց մեր առաջին եպիսկոպոսապետը առաջին հերթին Աստվածընտիր էր և նոր միայն՝ Ազգընտիր: Իսկ վերջինս, որ ասվում է մինչև այսօր Հայոց Հայրապետների համար, գեղեցիկ արտահայտություն չէ, այլ այն իրողությունն է, որ մեծ մասամբ, ավելի կամ պակաս չափով կատարվել է նրանց ընտրության ժամանակ, և Հայոց Եկեղեցին ու ազգը մշտապես, եթե չար ժամանակներն ու հանգամանքները խանգարիչ չեն եղել, հավատարիմ են մնացել այս ավանդական կարգին: Ճիշտ է, թեև Սուրբ Լուսավորչից հետո մի որոշ շրջան կաթողիկոսությունը դարձավ ժառանգական նրա տոհմի համար, սակայն արքաները նոր Հովվապետ կարգելիս անպայման ստանում էին թե՛ հոգևոր դասի և թե՛ նշանավոր աշխարհականների համաձայնությունը, խորհրդակցում նրանց հետ:

Իսկ երբ թշնամիներին հաջողվեց վերացնել թագավորական իշխանությունը մեր երկրից, և պատմության ասպարեզից դուրս մղվեցին Արշակունիները, բարձրաստիճան հոգևորականներն ու ազնվական դասն ստեղծեցին համատեղ խորհուրդներ, որպեսզի միասնաբար քննարկեն ու լուծեն ազգային-եկեղեցական կարևորագույն հարցերը:

444 թվականին եղավ Շահապիվանի ժողովը, որն իրավամբ ազգային-եկեղեցական էր, և նրան մասնակցում էին ոչ միայն հոգևորականները,

այլև ձախարարներն ու զորականները: Իսկ ժողովը հավաքվել էր մի շատ կարևոր խնդրով՝ սահմանելու Հայոց աշխարհում օգտագործվելիք եկեղեցական կանոնները: Այն դժվարին ժամանակներում, երբ վերացել էր Արշակունյաց գահատոհմը, հոգևոր ու աշխարհիկ իշխանության միասնության մի փայլուն վկայություն էր սա: Այս ժողովն էր, որ օրինակ ծառայեց 449-ի Արտաշատի ժողովին, որը գումարվեց շատ տագնապալի առիթով՝ պատասխան տալու պարսից արքունիքին՝ կրոնափոխության առթիվ սրա հրամանին: Եվ ըստ ոսկեշուրթ Եղիշեի՝ նրան մասնակցում էին բոլոր եպիսկոպոսները, բազմաթիվ քորեպիսկոպոսներ, պատվական երեցներ, մեծամեծ ձախարարներ: Ու ձան այս ժողովում էր, որ ներկաները մեծ բազմության ներկայությամբ ու հավանությամբ հավաստեցին ու հայտարարեցին իրենց բացառիկ նվիրվածությունը քրիստոնեական հավատքին ու հայրենի երկրին. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված»:

Եվ դա հաստատեցին ոչ միայն գրչով, այլև երկու տարի անց Ավարայրում իրենց սուրբ արյունով:

Դարերի հոլովույթի մեջ նվիրական ու անսասան էր մնում Կաթողիկոսական Աթոռը, որքան էլ պատմական տարուբերումներ լինեին ու չար հողմեր փչեին: Եվ այդ Աթոռն էր գլխավորելու հայոց քրիստոնեությունը, և այդ քրիստոնեությունն էր պահելու ազգ ու հայրենիք, լեզու և մշակույթ, ազատասիրական ձգտումներն ու պետականության հույս-երազանքը: Իսկ Ազգային-Եկեղեցական Ժողովները շարունակվում էին գումարվել: Տեղի էին ունենում նաև արաբական տիրապետության շրջանում: Եվ եթե հարկ էր լինում՝ ընդդիմանում էին օտար բռնակալների ու կառավարիչների կամքին: Այդպես եղավ 840 թ., երբ արաբական կառավարիչը Հովհաննես Դ Ոձայեցուն զրկեց Հայրապետական Աթոռից: Իշխանաց և եպիսկոպոսաց ժողովը նրան վերահաստատեց իր գահին:

Բագրատունի թագավորներն սկզբնական շրջանում իրենք էին նշանակում Հայրապետին՝ իհարկե խորհրդակցելով շրջապատի հետ, սակայն ահա Մաշտոց Եղիվարդեցուն արդեն ժողովն ընտրեց կաթողիկոս: Ինչպես վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին, «թագավորը, ավագ իշխանները և անվանի ազատները նրան նստեցրին Լուսավորչի Աթոռին»: Իսկ երբ նա յոթ ամիս անց վախճանվեց, կրկին հավաքվեցին նախարարները և թագավորի հետ միասին ընտրեցին Դրասխանակերտցուն: Եվ բնավ էլ պատահական չէ, որ Դրասխանակերտցին հատուկ շեշտել է նախարարների ներկայությունը: Դա արել է միտումնավոր, որպեսզի ցույց տա, թե նրանք եթե կաթողիկոս են ընտրում, ուրեմն պարտ են մտահոգ լինել Եկեղեցու պայծառության համար: Եվ դա կարող է լինել միայն ու միայն ազգային միաբանությամբ՝ մի կողմ դնելով անձնական հաշիվներն ու քեն-վեճերը:

Հետագայում այդպիսի ժողովներ սկսեցին գումարվել և կիլիկյան Հայաստանում: Այսպես, եպիսկոպոսների և իշխանների համատեղ խորհրդում կաթողիկոս ընտրվեց Կոստանդին Ա Բարձրաբերդցին (1221—1267): Այդ տեղի ունեցավ 1220 թ. և փաստորեն վերահաստատումն էր կաթողիկոսի ընտրության ավանդական կարգի: Եվ հենց այս Հայրապետին էր վիճակված կոչվելու Ամենայն Հայոց Կաթողիկոս:

484 թ. Կաթողիկոսական Աթոռը Վաղարշապատից փոխադրվել էր Դվին, ապա աստանդական դարձել, մինչև հաստատվել էր Կիլիկիայում:

Իսկ երբ վերացավ պետականությունը կիլիկյան հողում, արդեն անհրաժեշտություն դարձավ այն կրկին Վաղարշապատում՝ Սուրբ Էջմիածնում հաստատելը: Եվ ահա եկավ ցանկալի ու բաղձալի օրը: Դա 1441 թվականն էր, երբ կրկին կաթողիկոսական կենտրոն էր դառնում Սուրբ Էջմիածինը: Ցնծագին գալիս էին Հայաստան աշխարհի բոլոր կողմերից՝ ներկա լինելու այդ մեծ տոնին, քանզի ժամանակի լուսամիտ այրերը դրա մեջ էին տեսնում ազգը միավորելու մի կարևոր ազդակ: Բանասեր Կարապետ Կոստանյանն այդ մասին այսպես է գրում. «Վաղարշապատ դիմող կրոնավորներն երևցնում են իրենց գիտակցական ձգտումը Հայոց Մայր Եկեղեցու դարավոր սուգը փարատել, որովհետև նրա մեջ էին մարմնացած ամբողջ ազգի գոյության և նորոգության գաղափարը»: Իսկ Թովմա Մեծոփեցին Սուրբ Էջմիածնի համար կասի. «Քրիստոսադիր Աթոռն մեր հայրենի»:

Եվ ահա այդ ժողովից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոս դարձավ Կիրակոս Ա Վիրապեցին: Ժողովը եղել է խիստ բազմամարդ, և առաջին անգամ վկայություն ենք գտնում, թե մասնակցել են նաև կանայք: Հետաքրքրական փաստ է և վկայում է մեր Եկեղեցու լայնախոհության մասին: Եղել են դեպքեր, երբ Եկեղեցու պայծառացմանը նպաստելու բարի նպատակով աշխարհիկ անձինք են նախաձեռնել կաթողիկոսի ընտրությանը: Այդպես եղավ 1628-ին, երբ ընտրվեց Մովսես Տաթևացին: Նա էլ վերականգնեց վանական կյանքը և զարկ տվեց լուսավորությանը: Իսկ նրան եթե չընտրեցին այլ վայրերից եկած պատվիրակները, ապա դա կատարվեց բոլոր գաղթօջախներից ստացված պատասխան համաձայնական նամակների միջոցով: Իսկ սա նշանակում է, որ կաթողիկոսական ընտրություններին ստեղծված պայմաններում մասնակցում էին համարյա բոլոր գաղթօջախները: Իսկ ընտրությունը Մայր Աթոռում կատարվեց հոգևորականների և աշխարհականների մեծ բազմության ներկայությամբ: Այդ կերպ ընտրվեց նաև նրան հաջորդած Փիլիպոս Կաթողիկոսը:

18-րդ դարում կաթողիկոսական ընտրության նախաձեռնությունը պատկանում էր Սպահանի մեծատուններին, 19-րդ դարում այդ դերն անցավ Կոստանդնուպոլսին, որի Պատրիարքարանի և մեծամեծների համաձայնությունը պարտադիր էր: Սակայն շուտով այս սուրբ գործն ընկավ քաղաքական ոլորտ, ուր բախվում էին պարսիկների, թուրքերի, իսկ 1800 թվականից արդեն՝ ռուսական արքունիքի շահերը:

Ռուսական կառավարության 1836 թ. նախաձեռնած «Պոլոժենիայի» (կանոնադրության) ընդունման, նպատակն էր որոշակի դարձնել հարաբերությունները ռուսական կառավարության և Հայոց Եկեղեցու միջև: Իհարկե տիրողները շատ հաճախ էին ստիպված լինում հաշվի նստել նաև ժողովրդի միասնական կամքի հետ:

«Պոլոժենիան» գործեց փաստորեն մինչև 1911 թվականը, երբ կատարվեց վերջին ընտրությունը, հետո նոր կանոնադրություններ մշակվեցին, որոնք գործում են ուո այսօր: Իսկ որ այսօր հասունացած խնդիր է եկեղեցական նոր սահմանադրություն ունենալը, դա փաստ է: Իսկ որ դա պիտի ընդունի և հաստատի Ազգային-Եկեղեցական Ժողովը, դա էլ քննարկման ենթակա չէ: Դա պիտի ընդունի երկու տարի անց գումարվելիք ժողովը:

Այս ամսիսից է նոր ու ժողովի ամբողջ գործունեությունը, սրի ամեն կիրակի Ազգային-Եկեղեցական ժողով։ Եվ ամեն անգամ ներկայացնում է ամառաքին։ Ձե՞ որ սա մի նոր ու ինքնուրույն ժողովի սկիզբն է, որ ամբողջ իրավունքներով ու պարտականություններով օժտված է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից, ինչպես նաև Հայրապետական Գահակալության կողմից։ Ամեն ինչ նոր է, ամեն ինչ ամառաքին։ Ամառաքին է նաև ժողովի նիստերի դահլիճը, որ Ազգային-Եկեղեցական Վարչության շենքում է գտնվում։ Եվ ամառաքին է, որ այդ դահլիճը ամբողջովին նորոգված է ու վերանորոգված։ Ամառաքին է նաև ժողովի նախագահական սեղանը, որ ամբողջովին նոր

վոր, որը կազմում Սասունը գնդապետից: Այժմ Մայր Աթոռը պետք է ծավալի և՛ հիմնադրամական-կառուցողական, և թե՛ ազգային-մշակութային աշխատանքներ: Ցնորական ու լուծ ձիշեցը, որ գրա կաթողիկոսության տասնյակ տարիներին իրագործել հն 850 հազար կազմող պատմա-բանասիրական, կրոնական, առաքելական խնդիրները:

Դարեր շարունակ Եկեղեցին է ղեկավարել, գրա ձեռքում հն գտնվել ազգային միասնության գաղափարը, ազգասիրական ոգին, հայ ժողովրդի միասնության միտքը: Սակայն վերջին տասնամյակներին մեր ժողովրդի մեջ տարածում գտավ այն կարծիքը, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ավելի, կորցրել էր առաջին ձեռքին իրեն վերապահված տեղը: Եվ այժմ արդեն իրատեսության է վերականգնել տեղը և վերադարձնել իրեն հոգևոր ուխտի (միաբանության) տրամադրության տակ գտնվող եկեղեցու դավանաբանական բնագրերի միջոցով ժողովրդի ներքին աշխարհը: Գլխավորը է, որ աշխատանք է տեղ գտնի ձեռք բերել ամենայն կարևորությամբ հայ ժողովրդի համար, որ կոչվում է Հայ Եկեղեցու պատմություն: Ի շարունակություն 1700-ամյակին լույս տեսած մեր հատորների, որ ձեռք չենք մեր ունեցել, մենք ունենք ամբողջական պատմություն, որը մեր սուրբ Եկեղեցու առաջնորդներից է կոչվել, հրատարակվել, ժողովրդի մատչելի ու հասկանալի ձևով ներկայացվել և մեր հոգևորականության ու աշխարհականության, որպեսզի այս ամենը հնարավորություն տա մեզ ավելի լավ ճանաչելու մեր անցյալը, ներկան և ապագան:

2001 թվականը շատ կարևոր թվական է դառնում մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքում: Մարտի 5-ի Ազգային-Եկեղեցական ժողովի հրավիրված Համահայկական Հայրապետական իր խոսքում ասաց, թե մեր առաջին գործը պետք է լիի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 1700-ամյակին նվիրված տոնակատարությունը: Ի շարունակություն այս մտքի ասվեց, «Ասում Եկեղեցիները ու կազմակերպությունները ու աշխատանքները, որոնք այս հոգևոր հայրերի հոգևոր ժառանգությունը, ինչպես ժամանակի պահանջներին համեմատ այդ կառուցվածքից Գնդևազից և Գրիգոր Տաթևացին, իսկ նոր ժամանակներում պահանջում էին կատարել Գարեգին Հովսեփյանցն ու Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանցն իրենց ոգեշունչ ու ազգանվեր բարոգիներով:

Այդ թե երջանկահիշատակ Գարեգին Հովսեփյանը դեռևս 1908 թվականին Մատթեոս Ե Նաթանիկոսի քննարկության էրջանում իրչ էր գրում, «Հայոց վերածննդության խարիսխը բրիտանական ավետարանական վերակենդանությունը է, մեր դարավոր և սրբազան ժառանգության բարե-

փոխություն ու բարեկարգությունը, որովհետև առանց բարոյական վերածնության ամենայն մի շարժում հաստատված է ավազի վրա»: Իսկ սա թելադրում է առաջին հերթին անխաթար ու անաղարտ պահել մեր հավատը ոտնձգություններից, որ ցանկանում են կատարել զանազան աղանդներ: Ահա թե ինչու մեր նորընտիր Հայրապետը այդ նույն ժողովում, խոսելով այս հարցի մասին, ասաց, թե մեր Եկեղեցին պիտի վերատին այնքան կենսունակություն կատանա, որ չթույլատրի օտար քարոզիչներին գալ այստեղ ու լցնել մեր հոգևոր դատարկությունը: Պետք չէ այս առիթով մեղադրել որևէ մեկին, այլ լծվել աշխատանքի:

Իսկ այդ հարցում ամենակարևոր աշխատանքը նոր սերնդի հոգևորականության պատրաստության հարցն է: Ըստ նրա՝ այստեղ մեծ դեր ունի հոգևոր ճեմարանը, որը սիրտն է մեր Եկեղեցու հոգևոր հաստատությունների, և նրան պետք է վերադարձնել Գևորգյան ճեմարանի փառքը:

Եվ շատ կարևոր է, որ Վեհափառը շեշտը դնում է հոգևորական նոր սերունդ դաստիարակելու վրա, չէ՞ որ այսօր փաստ է, որ եկեղեցական համակարգում խիստ նվազել է քահանաների դերը, և նրանք, որքան էլ ցավալի է, վերածվել են ծիսակատարություններ անողների: Եվ որ քահանաները հին օրերի օրինակով կրկին պետք է վերածվեն քարոզիչների, դա կասկածից դուրս է: Հենց դա է Եկեղեցու այսօրվա ճգնաժամից դուրս գալու կարևոր խնդիրներից մեկը: Իսկ այդպիսի իսկական քարոզիչ-քահանաներ պետք է կրթի ու դաստիարակի և պատրաստի հոգևոր ճեմարանը: Կարևոր է և ծիսական համայնքների վերականգնումը: Քանի որ դրանց բացակայության պատճառով է, որ կենդանի կապ չկա ժողովրդի և քահանաների միջև: Ահա թե ինչու որևէ ծիսական արարողություն կատարելու համար հավատացյալները չգիտեն, թե ում դիմեն: Նաև սա է պատճառը, որ որևէ հարցի պարզաբանման կամ ընդհանրապես այսօր ծագած հոգևոր ծարավը հագեցնելու համար նրանք ստիպված դիմում են օտարամուտ քարոզիչներին, որոնք յուրաքանչյուր շրջանում բացված ժողովարանների միջոցով ստեղծել են կազմակերպված ներքին ցանց, որի միջոցով էլ այժմ փաստորեն զբաղված են հոգեորսությամբ:

Այո, Հայ Եկեղեցին և ազգը եղել են միասնական, և այժմ ավելի պետք է ամրանա այդ միությունը, իսկ դրան այնքա՜ն կարևոր դեր է վերապահում Վեհափառ Հայրապետը: Դրան պետք է նպաստի և «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը: Ահա թե ինչու է մեր նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսն այնպես եռանդագին կոչ անում զորավիգ կանգնել նրան: Չէ որ նաև հիմնականում այս կերպ կարելի է ավելի ամրապնդել Հայրենիք-Սփյուռք կապերը և դրանք նպատակամղել հայրենիքի վերաշինության ու զորեղացման նվիրական գործին:

Մեր Եկեղեցու նորընտիր Հայրապետը լայն ճանաչում ու հարգանք ունի համաշխարհային հոգևորականության շրջանում: Նա Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Խորհրդի պատվավոր նախագահն է, և հավատացյալ հոտը լիահույս է, որ այսուհետ առավել ևս կբարձրացնի Հայ Եկեղեցու հեղինակությունը միջազգային ասպարեզում, և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում ըստ արժանվույն կներկայացնի մեր Եկեղեցին և ամենայն կերպ կնպաստի քույր Եկեղեցիների է՛լ ավելի մերձեցմանը, անխաթար պահպանելով Հայ Եկեղեցու պատմականորեն ձևավորված հոգևոր ինքնությունը:

Հարկ է վերաևորոգել ևաև ևախկին Խորհրդային Միության տարածքում գոյություն ունեցող այժմյան թեմական բաժանումը և այն հարմարեցնել այսօրվա հոգևոր-քաղաքական-մշակութային պահանջներին: Հաշվի առնելով այն իրողությունը, որ մեր Եկեղեցու թեմական առաջնորդները հանրապետությունների ղեկավարների կողմից միշտ էլ ընդունվել ու դիտվել են որպես տեղի հայկական համայնքների առաջնորդներ ու ներայացուցիչներ, անհրաժեշտ է թեմական նոր բաժանում կատարել ևախկին ԽՍՀՄ տարածքում և հարկ է, որ ընտրվեն այնպիսի թեմական առաջնորդներ, որոնք հոգևոր բարձր իմացականության հետ միասին կարողանան ըստ արժանվույն ներկայացնել իշխանությունների առջև հայ համայնքը և ի վիճակի լինեն լուծել ծագող բազմաթիվ հարցերն ու խնդիրները:

Կաթողիկոսական գահակալության առթիվ իր քարոզում Վեհափառ Հայրապետն ասաց. «Հայաստանյայց Եկեղեցին պիտի կատարի իր ազգային դերը, որովհետև ան անքակտելիորեն շաղախված է ողջ հայոց պատմության և ճակատագրի հետ:

Այդ նույն հասկացողությամբ է, որ մեր Եկեղեցին պիտի շարունակի զորավիգ կանգնիլ Արցախի մեր հարազատ եղբայրներուն ու քույրերուն, անոնց հերոսական մաքառումին մեջ, ի պաշտպանություն անոնց արդար իրավունքներու»:

Եվ ի հաստատումն այս խոսքերի՝ Վեհափառ Հայրապետը քիչ օրեր անց կատարեց իր հովվական առաջին այցելությունը Արցախի հավատացյալ հոտին՝ նրանց սրտերը լցնելով հպարտության, հավատի և երախտագիտության զգացումներով:

Մայր Հայրենիքի և Սփյուռքի հարաբերությունների պատմության մեջ գրվեց մի նոր փայլուն էջ և դա ապրիլի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ևվիրական ու դարավոր կամարների տակ գումարված Ազգային-Եկեղեցական սրբագումար Ժողովն էր, որը դուրս գալով եկեղեցական բնույթից՝ վերածվեց ազգային-հայրենասիրական մի խանդավառ տոնակատարության, քանզի Լուսավորչի գահին բարձրացրեց 131-րդ արժանավոր Գահակալին ու Հային՝ նրան ավանդելով պատմական մի հրամայագիր՝ բարեզարդել, պայծառացնել ու պանծացնել Հայ Եկեղեցին ի փառս Հավատի ու Հայրենյաց...

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄՓՈՓ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը (աշխարհիկ անվամբ՝ Նշան Սարգսյան) ծնվել է 1932 թվականի օգոստոսի 27-ին Քեսաբում (Սիրիա)։ Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ուսումնասիրաց միացյալ վարժարանում, որից հետո ուսումնառությունը շարունակել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում (1946 թ. հոկտեմբեր—1952 թ. հունիս)։ Այստեղ էլ, 1949 թ. մայիսի 29-ին, ձեռնադրվել է սարկավագ։

1952 թվականի սեպտեմբերի 28-ին, ձեռնադրվելով կուսակրոն քահանա, ապագա կաթողիկոսը, ի հիշատակ հանգուցյալ Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսի, վերակոչվում է Գարեգին աբեղա։ Պաշտպանելով վարդապետական ավարտաճառը (թեման՝ «Հայաստանեայց Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ Հայ Շարականներուն»), 1955 թվականի հունիսի 5-ին ստանում է վարդապետական աստիճան, պաշտոնավարում Դպրեվանքում՝ որպես ուսուցիչ և հսկիչ։ Որոշ ժամանակ անց (1956 թ.) ստանձնում է Դպրեվանքի տեսչի պաշտոնը։

1957—59 թթ. Գարեգին վարդապետն ուսումնառությունը շարունակում է Օքսֆորդի համալսարանում (Անգլիա)։ Երկամյա ուսումնական և ուսումնասիրական շրջանը հաջանավորվում է B.[t] Litt (OXON.) աստիճանով, երբ ներկայացնում է «Քաղկեդոնի ժողովը և Հայ Եկեղեցին» ավարտաճառը (այն 1965 թ. հրատարակվել է Լոնդոնի S. P. C. K. հրատարակչատան կողմից, վերահրատարակվել է Նյու Յորքում, 1976 թ.)։ Ուսումնառության շրջանը հաջանավորվում է տեսչական գործունեությամբ։ Նույն շրջանում Գարեգին վարդապետը գործուն մասնակցություն է ունենում միջեկեղեցական մի շարք համագումարների ու ժողովների՝ որպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ։ Երջանկահիշատակ Խորեն Վեհափառի ընտրությունից հետո (1963 թ. մայիսի 5) նա կազմակերպել է ողբընտիր կաթողիկոսի պաշտոնական այցելությունները՝ Աթենք (Հունաստանի Արքեպիսկոպոսին), Վատիկան (Պողոս Բ Պապին), Լիբա-

րոն (Գալուստ Կյուլպենկյան հիմնարկություն), Լոնդոն (Քենթրբերիի Արքեպիսկոպոսին), Ժնև (Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ), Վենետիկ ու Վիեննա (Միխթարյան միաբանություն):

1955 թվականից ի վեր եղել է միջեկեղեցական կազմակերպությունների ու կառույցների անդամ, կանոնավորապես ներկա է եղել միջկրոնական հանդիպումների: Ծնորհիվ նրա ջանքերի և երջանկահիշատակ Զարեհ Ա Կաթողիկոսի իմաստուն ոնօրինման, 1962 թ. օգոստոսին Կիլիկյան Կաթողիկոսությունը անդամ է դառնում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին (ԵՀԽ): Մասնակցել է ԵՀԽ Նյու Դելիի (Հնդկաստան, 1961 թ.), Ուփսալայի (Շվեդիա, 1968 թ.), Նայրոբիի (Քենիա, 1957 թ.) և Վանկուվերի (Կանադա, 1983 թ.) համագումարներին:

Դիտորդի կարգավիճակով մասնակցել է Վատիկանի երկրորդ ժողովի երեք հաջորդական նիստերին (1963—65 թթ.) և Անգլիկան Եկեղեցու Լամբեթի համաժողովին (1968 թ.): Ուփսալայում (1968 թ.) ընտրվել է ԵՀԽ կենտրոնական և գործադիր հանձնախմբերի անդամ, իսկ Նայրոբիի համագումարում (1975 թ.)՝ խորհրդի փոխատենապետ (1975—83 թթ.): Նշանակալից է նրա դերը Ադիս Աբեբայում արևելյան ուղղափառ դավանակից քույր Եկեղեցիների հոգևոր առաջնորդների համագումարի կազմակերպման գործում: 1963 թ. հունիսի 16-ին, ծնորհիվ ճվիրյալ ծառայության, Խորեն Ա Կաթողիկոսի տնօրինությամբ նրան շնորհվում է Ծայրագույն վարդապետի աստիճան: Եպիսկոպոս է ձեռնադրվել 1964 թ. հունվարի 19-ին, արքեպիսկոպոս՝ 1973 թ. ապրիլի 26-ին: 1963 թ. հիմնել է Հայաստանյայց Եկեղեցվո համալսարանական ուսանողների միությունը (ՀԵՀՄ):

Աստվածաբանության, գրականության, պատմության և մշակույթի թեմաներով դասախոսել է ՀԲԸՄ Դարույի Հակոբյան երկրորդական վարժարանում, Բեյրութի «Համազգայինի» Նշան Փալանջյան ճեմարանի Beirut College for Women-ի (ներկայումս՝ Beirut University College) և Բեյրութի Ամերիկյան համալսարանում (A·U.B), դասախոսություններով հանդես է եկել մի շարք եկեղեցիներում: 1971 թ. փետրվարի 24-ին Գարեգին եպիսկոպոսը ընտրվել է Իրան-Հնդկաստան թեմի առաջնորդ (Նոր Ջուղա, Իսֆահան, Պարսկաստան): Նրա այս առաջնորդական շրջանում ծաղկում է ապրել թեմի հոգևոր-մշակութային կյանքը, որը գործում է եղել երիտասարդության մասնակցությամբ, հիմնվել է թանգարան, կազմակերպվել մատենադարան, կյանքի կոչվել երիտասարդական միություններ, հաստատվել հայագիտական դասընթացներ:

1973 թ. հունիսի 21-ին Գարեգին եպիսկոպոսը նշանակվում է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի (Նյու Յորք) պատվիրակ, մեկ տարի անց ընտրվում առաջնորդ:

1977 թ. մայիսի 22-ին ընտրվում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Խորեն Ա Կաթողիկոսի կենդանության շրջանում գործում Աթոռակից Կաթողիկոս տիտղոսի տակ, իսկ 1983-ից, Խորեն Ա Կաթողիկոսի վախճանվելուց հետո, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո:

Իր գործունեության 18 տարիների ընթացքում Գարեգին Բ Վեհափառը զարկ է տվել ազգային-կրոնական, մշակութային և շինարարական աշխատանքներին: Վեհափառը հաստատեց քրիստոնեական դաստիարակության բաժանմունքը, որն աչքի ընկավ քրիստոնեական առողջ դաստիարակության ծրագրված և հետևողական աշխատանքով: Նրա հատուկ ուշադրության առարկա դարձավ Դպրեվանքը (1977 թ. Անթիլիասից այն

փոխադրվեց Բիկֆայա), որը ընդարձակվեց ու արդիականացվեց՝ նպաստելով աստվածաբանական կազմավորման բարելավմանն ու առաջադիմությանը: Գարեգին Բ Կաթողիկոսը առանձնահատուկ ուշադրություն դարձրեց հրատարակչական գործին. վերջին 18 տարիներին տպագրվել է ավելի քան 350 հատոր աշխատություն: Ներկայումս ավարտին է մոտենում թանգարան-մատենադարանի շենքի շինությունը:

Վեհափառի գահակալության առաջին շուրջ 15 տարիները զուգադիպեցին Լիբանանի պատերազմի դժվարին տարիներին: Նա կիսեց լիբանանահայության տառապանքը՝ թե՛ նյութապես, թե՛ բարոյապես աստար կանգնելով համայնքին՝ չթողնելով, որ այն հուսալքվի: Վերջնի մի քանի տարիներին նա ձեռնարկեց հովվապետական մի շարք այցելություններ, միջեկեղեցական ծիրի մեջ այցելություններ տվեց հոգևոր առաջնորդների, եկեղեցիների, հոգևոր միությունների: Ավարտելով իր այցելությունները, Գարեգին Բ Կաթողիկոսը, որպես ՄԱԵԽ-ի երեք նախագահներից մեկը, ընտրվեց Խորհրդի պատվավոր նախագահ:

Գարեգին Բ Կաթողիկոսը բազմիցս այցելել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (երեք անգամ՝ իր վարդապետության շրջանում և ինը անգամ՝ որպես Կաթողիկոս): 1988 թ. դեկտեմբերի յոթի չարաղետ երկրաշարժից հետո նա եղել է Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողքին՝ բերելով իր եղբայրական սերն ու զորակցությունը:

Գարեգին Բ Կաթողիկոսը «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Նա գրական-աստվածաբանական մարզում բազմաթիվ հոդվածների և հատորների հեղինակ է, որոնք բազմիցս հրատարակվել են տարբեր լեզուներով:

Ապրիլի 4-ին Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովը Գարեգին Բ-ին ընտրեց Ամենայն Հայոց Կաթողիկոս:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ՀԱՏՈՐՆԵՐԸ

«Հայաստանեայց եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ», Անթիլիաս, 1955, 120 էջ, վերահրատարակուած աւելի ընդարձակեալ ձեւով, 1973ին, Նոր Ջուղա, եւ 1994-ին, Անթիլիաս:

„A Brief introduction to Armenian Christian Literature", Faith Press Լոնտոն, 1960, (Անգլերէն, 84 էջ), վերահրատարակուած Նիւ Եորք, 1975ին, ֆրանսերէնով, Փարիզի մէջ, 1964ին:

„The Council of Chalcedon and the Armenian Church", S.P.C.K. Լոնտոն, 1965, վերահրատարակուած Նիւ Եորքի մէջ, 1979ին (264 էջ):

„The Witness of Oriental Orthodox Churches", Անթիլիաս, 1968, (92 էջ), երեք հրատարակութիւն:

„The Armenian Church in Contemporary Times". Նիւ Եորք, 1970, (40 էջ), վերահրատարակուած Քէմպրիճի Համալսարանի տպարանէն;

„Iran and the Armenians“, Թեհրան, 1971, հրատարակուած է նաեւ պարսկերէնով:

„The Armenian Christian Tradition in Iran“, Նոր Ջուղա, Իրան, 1974, ֆրանսերէնով եւ անգլերէնով, (31 էջ):

„Heroic Posterity“, Նիւ Եորք, 1975 (152 էջ):

«Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան», Անթիլիաս, 1979, (174 էջ):

«Հող, Մարդ եւ Գիր», Անթիլիաս, 1983, Բ. հրատարակութիւն՝ Նիւ Եորք, Գ. հրատարակութիւն՝ Անթիլիաս, 1991:

«Ծանի՛ր զքեզ», Անթիլիաս, 1983 (176 էջ):

«Խորհէ՛ եւ մտիր», Անթիլիաս, 1984 (292 էջ):

«Անցեալը անցած չէ...», Անթիլիաս, 1985 (176 էջ):

„The Cross Made of the Cedars of Lebanon“, Անթիլիաս, 1989 (24 էջ):

«Ան-ժամանակը Ժամանակին մէջ», Անթիլիաս, 1989 (184 էջ):

«Հայ Մարդը Հայ Գիրքին դիմաց», Անթիլիաս, 1990 (184 էջ):

„Not Fiction“, Անթիլիաս, 1990 (60 էջ): Թարգմանուած է նաեւ ֆրանսերէնի (Histoir Vécue...) եւ արաբերէնի («Հաքիքա լայսաթ խայալաե») 1992, (48 էջ):

„In Search of Spiritual Life“, Անթիլիաս, 1991 (288 էջ). վերահրատարակուած 1994ին:

«Վասն Հայրենեաց...», Անթիլիաս, 1992 (48 էջ):

«Ես Յաղթեցի Աշխարհին—Յարութիւն եւ Հայութիւն», Անթիլիաս, 1993 (203 էջ):

«1700-ամեակը Նոր Հոգեգալուստ», Անթիլիաս, 1994 (64 էջ):

Փետրուար, 1995
Անթիլիաս:



1995 ԹՎԱԿԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ, ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկյան
Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարք Գազանճյան
Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյան
Տ. Գևել արքեպիսկոպոս Ճերեճյան
Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյան
Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյան
Տ. Շահե արքեպիսկոպոս Ածեմյան
Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյան
Տ. Շահան արքեպիսկոպոս Սվաճյան
Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյան
Տ. Գյուտ արքեպիսկոպոս Նագգաշյան
Տ. Արսեն արքեպիսկոպոս Պերպերյան
Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյան
Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայտարյան
Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյան
Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյան
Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան
Տ. Եղիշե արքեպիսկոպոս Կիզիրյան
Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյան
Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյան
Տ. Նորվան եպիսկոպոս Ջաքարյան
Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյան
Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան
Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան
Տ. Անանիա եպիսկոպոս Արապաճյան
Տ. Տաթև արքեպիսկոպոս Ղարիպյան
Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյան
Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյան
Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան

Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյան
Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան
Տ. Գիսակ եպիսկոպոս Մուրատյան
Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան
Տ. Հակոբ եպիսկոպոս Գըլըճյան
Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյան
Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյան
Տ. Գարեգին եպիսկոպոս Պեքճյան
Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյան
Տ. Աբրահամ վարդապետ Մկրտչյան

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ծ. Մամբրե վարդապետ Մարգարյան

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Ակադեմիկոս Գրիգոր Խանջյան
Պրոֆ. Հակոբ Փափազյան
Պրոֆ. Պիոն Հակոբյան
Պրոֆ. Ռաֆայել Պապայան

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Տ. Սուրեն արքեպիսկոպոս Գաթարոյան
Մեթր Խաչիկ Պապիկյան

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Տ. Բարսեղ վարդապետ Գալեմտերյան
Եղիա Տիգրանյան
Ներսես Ներսեսյան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Տ. Պսակ քահանա Թեզենյան
Ժիրայր սարկավագ Պագըրճյան

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Տ. Առաքել վարդապետ Քարամյան
Տ. Համազասպ քահանա Բաբուջյան
Տ. Վարդան քահանա Մկրտչյան

Տ. Ավետիս քահանա Դանիելյան
Տ. Գառնիկ քահանա Կարապետյան
Տ. Կորյուն քահանա Մարտիրոսյան
Տ. Տիրայր քահանա Սահրադյան
Տ. Հակոբ քահանա Երանոսյան
Տ. Տաթև քահանա Աբրահամյան
Տ. Թադեոս քահանա Ավագյան
Տ. Վահան քահանա Արամյան
Տ. Նորայր քահանա Բաղդասարյան
Տ. Բարսեղ քահանա Ղազարյան
Գուրգեն Միքայելի Գեղամյան
Ռուդիկ Սահակի Մարկոսյան
Արամ Կարապետի Բարլեզիզյան
Տարիել Կարապետի Բարսեղյան
Հայրապետ Կարապետի Գալստյան
Միքայել Վախտանգի Գրիգորյան
Էդուարդ Գրիգորի Բաղդասարյան
Ռուբեն Սահակի Բարսեղյան
Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյան
Ռոմեն Սուրենի Ջուլհակյան
Աշոտ Ոսկանյան
Վիլեն Պարույրի Հակոբյան
Սոս Արտաշեսի Սարգսյան
Վոլոդյա Համբարձումի Հովհաննիսյան
Սեն Սուրենի Արևշատյան
Ռուբեն Կառլենի Միրզախանյան
Լևոն Կորյունի Եզեկյան
Ազատ Արշակյան
Արտաշես Հովհաննիսյան
Մերուժան Սարգսի Տեր-Գուլանյան
Սիմոն Տիգրանի Հախումյան
Հենրիկ Միսակի Ավետիսյան
Գեորգի Վասպուրականի Գուլքանյան
Արևշատ Ավագյան
Համլետ Սերգեյի Թամազյան
Գոհարիկ Աղաբեկի Ենոքյան
Ալեքսան Սիմոնի Անդրիասյան
Բաղդասար Հայրապետի Արզումանյան
Կամո Հակոբի Տեր-Պետրոսյան
Վրեժ Վարանցովի Մարկոսյան
Ներսես Հրանտի Միրաքյան
Տաճատ Մելիքի Վարդանյան
Գրիգոր Հակոբի Գրիգորյան
Շոթա Վարդանյան
Աշոտ Մովսեսի Ղազարյան
Ջոնրիդ Հովսեփի Հակոբյան
Սվետլանա Սարգսի Պետրոսյան
Միքայել Գրիգորի Բադիրյան

Սերգեյ Ալեքսանդրի Համբարձումյան
Օհան Գեղամի Պետրոսյան
Արա Մկրտչի Պողոշյան
Վլադիկ Ռուբենի Ներսիսյան
Անդրեյ Մանուկի Ղազարյան
Ռուբեն Վաչագանի Հայրապետյան
Վահագն Գրիգորյան
Գրիգոր Վարդանի Անդրեասյան
Արամ Ջավենի Սարգսյան
Արտաշ Եղիշի Մկրտչյան
Անդրանիկ Վրեժի Արշակյան
Աշոտ Արմենակի Ջաղարյան
Ռաֆիկ Նահապետի Սամսոնյան
Վաչագան Մկրտչի Պողոսյան
Լևոն Ռազմիկի Հայրապետյան
Տիգրան Մակարի Պետրոսյան
Ջորիկ Ջավենի Մարգարյան
Արմեն Արծրունու Խաչատրյան
Հովհաննես Արգամի Աբրահամյան
Համլետ Արտավազդի Բադալյան
Վռամ Հրանտի Մադոյան
Սերգեյ Հրաչի Խաչատրյան
Տիգրան Ռազմիկի Գաբրիելյան
Հրաչիկ Վլադիմիրի Հովսեփյան
Վանուշ Ցոլակի Առաքելյան
Էդիկ Սալանի Միսակյան
Երվանդ Դերենիկի Աղվանյան
Վահագն Վոլոդյայի Հակոբյան
Միշա Միլիտոնի Կարապետյան
Հակոբ Վալոդի Հակոբյան
Վազգեն Համայակի Հովհաննիսյան
Աշոտ Մելիքի Մկրտչյան
Գարեգին Կարոյի Խաչատրյան
Ջուլիետա Հակոբի Հակոբյան
Ջավեն Կարապետի Բադալյան
Միխայիլ Վարուժանի Բեգոյան
Հայկ Հրայրի Բադալյան
Էդիկ Տաճատի Դիլանյան
Աբով Խորենի Պետրոսյան
Հովհաննես Սերգեյի Հովհաննիսյան
Յուրիկ Ստեփանոսի Հովսեփյան
Ֆրունզիկ Վարուժանի Բեգոյան
Ռուդիկ Հրաչիկի Ղուկասյան
Սիմա Լևոնի Խաչինյան
Աշոտ Հայրիկի Աբրահամյան
Վլադիկ Փոխանի Մարտիրոսյան
Գրետա Հայկի Մարտիրոսյան
Մարտին Ժորայի Մովսիսյան

Վալերի Հարությունյան
Մանյա Գեորգի Ղազարյան
Մաուլենա Հարությունյան
Հակոբ Սարգսյան
Գագիկ Արծվիկի Միխիթարյան

ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

Մարտին Ղևոնդի Թադևոսյան
Սուրեն Վանյայի Սահակյան
Հովիկ Բաբկենի Պետրոսյան
Տ. Շիրակ քահանա Առաքելյան
Վարդգես Լևոնի Համբարձումյան
Մկրտիչ Հարությունի Խաչատրյան
Համլիկ Լևոնի Եղիազարյան
Հակոբ Խաչատուրի Մեղրիկյան
Տ. Մեռոն քահանա Ադամյան
Մարտին Լևոնի Ասատրյան
Գևորգ Նորայրի Նազարեթյան
Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյան
Վարազդատ Կարապետի Պետրոսյան
Սամվել Ագունի Սաղաթելյան
Յուրա Հարությունի Հովհաննիսյան
Արտուշ Վովայի Մկրտչյան
Համբարձում Աղասու Մաթևոսյան
Կառլեն Վանոյի Թումանյան
Տ. Ավետիք աբեղա Սողոմոնյան
Տ. Օհան քահանա Լուսարարյան
Տ. Նորայր քահանա Գյուլանջյան
Արծրուն Աշոտի Խաչատրյան
Ռաֆիկ Հայկի Եդոյան
Բորիկ Բաբկենի Միխիթարյան
Սամվել Լևոնի Բաբլանյան
Էդիկ Աղվանի Մովսիսյան
Բրալիկ Արշակի Ջաղինյան
Սամվել Գուրգենի Սելիմյան
Աշոտ Եղսաբեկի Զաքարյան
Լևոն Պետրոսի Փաշինյան
Աշոտ Շահազիզի Մելիքյան

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ

Ջեմմա Անանյան
Տ. Հրայր քահանա Բեջանյան
Արծրունի Սահակյան
Լևոն Հովիվյան

Գուրում Խաչիկյան
Արտաշես Կիրակոսյան
Ռուբեն Մարգարյան
Յուրա Ավանյան
Ժոզեֆ Ավետիսյան

ՍՓՈՒՆՅԱՑ ԹԵՄ

Տ. Եսայի քահանա Աբելյան
Տ. Նարեկ քահանա Ամիրյան
Արտաշես Հարությունյան
Սևադա Զաքարյան
Սուրեն Աբրահամյան
Գենադի Դավթյան
Աշոտ Թովմասյան
Ավետիք Ավետիսյան
Դավիթ Մաթևոսյան
Տ. Մարտիրոս քահանա Ավետիսյան

ԱՐՑԱԽԻ ԹԵՄ

Տ. Վրթանես վարդապետ Աբրահամյան
Տ. Մեսրոբ քահանա Արամյան
Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյան
Կարեն սարկավագ Ապրեսյան
Գրետա Ծեքյան
Վարդան Հակոբյան
Գառնիկ Իսրայելյան
Միքայել Խաչատրյան
Մաքսիմ Հովհաննիսյան

ՎՐԱՍՏԱՆԻ ԹԵՄ

Ռուզաննա Արտաշեսի Մելքումյան
Ալբերտ Վաչիկի Ավետիսյան
Ռոբերտ Արտաշեսի Համբարձումյան
Վալերի Ռաֆիկի Ասլանյան
Հենրիկ Սարգսի Մուրադյան
Վան Վաղարշակի Բայբուրթյան
Վալերա Ավետիքի Գրիգորյան

Ախալքալաք

Տ. Շմավոն քահանա Սողոյան
Ռոբերտ Փայլակի Կիրակոսյան

Ախալցխա

Տ. Ռուբեն քահանա Սողոյան
Արամ Լուկաշի Սիմոնյան

Բոգդանովկա

Մելս Մարտիրոսի Բդոյան

Սևծովյան շրջան

Գևորգ Սերգեյի Ավագով
Էդվարդ Հմայակի Մուսայելյան
Գեորգի Գեորգիի Տաբակյան
Գրիգոր Արտուշի Վարդանյան

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄ

Տ. Նաթան ծ. վարդապետ Հովհաննիսյան
Տ. Երեմիա քահանա Մակիյան
Սամվել Լիպարիտի Տիգրանյան
Արտաշես Արտավազդի Ավագյան
Անուշավան Սուրենի Դանելյան
Սիմոն Դարչոյի Գուլքանյան
Վանուշ Արամի Կարապետյան
Սուրեն Գրիգորի Սահակյան
Տ. Եզրաս աբեղա Ներսիսյան
Ռաֆայել Արտյոմի Սարգսյան
Լևոն Գևորգի Սարգսյան
Վլադիմիր Նապոլեոնի Ամատունի
Տ. Կարապետ քահանա Մոլեկյան
Նիկոլայ Ստեփանի Չուվարան
Օլեգ Աշոտի Օհանյան
Տ. Պողոս քահանա Տերտերյան
Վրեժ Վազգենի Ճաղարյան
Տ. Թադեոս քահանա Հայբարյան
Սանդուխտ Ալեքսանի Կոչերգինա
Լուսեղեն Խաչեղբայրի Ջուբարյան
Տ. Եզնիկ ծ. վարդապետ Պետրոսյան
Տ. Պետրոս քահանա Բաղրամյան
Նիկոլայ Հայկազի Քոչյան
Մկրտիչ Աշոտի Կեսյան
Վլադիմիր Աշոտի Տերտերյան
Տ. Մակար քահանա Տերտերյան
Տ. Կոմիտաս քահանա Հարությունյան
Նիկոլայ Արամի Իսպիրյան

Տ. Տաթև քահանա Հարությունյան
Տ. Հարություն քահանա Բայադյան
Ռաֆիկ Մարգարյան
Լյովա Ծատուրյան
Տ. Ղևոնդ ավ. քահանա Աղաջանյան
Ազատ Սերոբի Խաչատրյան
Արթուր Ավետիսյան
Տ. Մոմիկ քահանա Գդլյան
Տ. Արամ քահանա Հունանյան
Վալերի Միխայիլի Գրիգորյան
Ռաֆայել Գրիգորի Իսախանյան
Վիկտոր Ջավենի Հակոբյան
Տ. Սարգիս քահանա Պողոսյան
Յուրա Դավիթի Սարկիսով
Տ. Կոմիտաս քահանա Խաչատուրյան
Հովհաննես Խաչատուրի Վարոյան
Պետրոս Վախթանգի Մկրտիչյան
Գեորգի Գրիգորի Հայրապետյան
Տ. Հովհաննես քահանա Սողբաթյան
Վադիմ Խորենի Զաքարյան
Արմեն Ռուբենի Գասպարյանց
Ալեքսանդր Վիկտորի Ավագյան
Սերգո Վոլոդյայի Թորոսյան
Լիդիա Լևոնի Պողոսյան-Սամկովիչ
Մեսրոպ Անդրանիկի Ջախոյան
Սուրեն Հարությունի Հարությունյան
Լեոն Արշակի Օնիկով
Տատյանա Օվանեսովա
Ստանիսլավ Պետրոսի Բազգոյան
Յուրիկ Խաչիկի Եղիազարյան
Ստեփան Պետրոսի Ստեփանյան
Լիանա Ալեքսանի Ալեքսանյան
Գարեգին Սարգսի Բաբոյան
Շուշանիկ Կարապետի Սիմավոնյան
Երվանդ Խաչիկի Խաչքինյան
Լուսեղեն Մարտիրոսի Գադզիյան
Գարիկ Նիկոլայի Նավասարդյան
Գեորգի Արամի Սաֆարյան
Սլավիկ Ամյան
Արմեն Սարգսի Միհթարյան
Հովհաննես Մկրտչի Մարգարյան
Թամարա Դավիդի Ագամիրովա
Ֆրունզե Վարդանի Խազարյան
Ռաֆայել Հայկի Մկրտչյան
Վարդգես Արամի Բաբայան
Միխայիլ Վիկտորի Խաչատուրյան
Վլադիկ Մեսրոպի Հարությունյան
Տ. Մովսես աբեղա Մովսիսյան

Սերգեյ Կոդբազյան
Օլեգ Սուրենի Մելիք-Սարկիսով
Ռոբերտ Սարգսի Բաբլոյան
Ստեփան Տեր-Հովհաննիսյան
Թորիկ Օլեգի Կոչինյան
Վահան Մամիկոնի Գևորգյան
Ոսկի Խաչիկի Արուտյունովա
Սլավիկ Մկրտիչով
Հմայակ Մարտիրոսյան
Օձիկ Էփրիկյան

ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ԹԵՄ

Կարապետ Սեթյան
Անդրանիկ Գասպարյան

Հնդկաստան

Հովսեփ Նազարեթի Սեֆերյան

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՇՎԵԴԻԱՅԻ

Ավստրիա

Դր. Արմենակ Յություճյան
Տ. Սարգիս քահանա Մելքոնյան

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԹԵՄ

Գեորգ Գարակյոզյան
Հուան Գարլոս Մերտինյան
Ճորճ Էտուարդո Վարդպարոնյան
Սամուել Մարկոսյան

ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԹԵՄ

Կարպիս Պոյաճյան

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԹԵՄ

Տ. Սիոն վարդապետ Ադամյան

ԿԱՆԱԴԱՅԻ ԹԵՄ

Տ. Արարատ վարդապետ Գալթագճյան
Դոկտ. Արթո Պաամագճյան
Դոկտ. Ժիրայր Բեւտերյան
Վահե Քեթլի

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ

Էդուարդ Չափյան
Դոկտ. Կարո Կարիպյան
Վինսընթ Կյուրահյան
Գեորգ Հովնանյան
Դոկտ. Տենիս Փափազյան
Ճուլիա Աշըգյան
Ճան Ամպոյան
Տ. Արտեն ավ. քահանա Աշճյան
Տ. Տաճատ ավ. քահանա Դավիթյան
Հայկ Տատուրյան
Քրոզպի Կոշկարյան
Տ. Գառնիկ ավ. քահանա Հալլաճյան
Ճան Հոփլամազյան
Դոկտ. Րաֆֆի Հովհաննիսյան
Զավեն Գասպարյան
Տ. Մամբրե ավ. քահանա Գուզույան
Ճորճ Մարիֆյան
Ռոզ Մեքենյան
Տ. Հայկազուն ծ. վարդապետ Նաճարյան
Հարրի Թերզյան
Տին Շահինյան
Տ. Պարետ ծ. վարդապետ Երեցյան
Ասպետ Զաքարյան
Զավեն Տատեքյան

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ

Տ. Մեսրոպ քահանա Սարաֆյան
Տ. Սասուն վարդապետ Զմրուխտյան
Տ. Եղիա քահանա Հայրապետյան
Տ. Տաթև քահանա Թաթուլյան
Վարդգես Պարսամ
Րապըրթ Էմմանուել Պարսամ
Ճան Ճորճ Յալտըզյան
Ճան Մարթին Պոզաճյան
Արմեն Համբար
Կերի Արա Լյուլեճյան

Էլըն Եղիա սարկավագ Ճանտյան
Դոկտ. Արա սարկավագ Ավագյան
Արաքսի Գալֆայան-Մեներեանտյան
Ստեփան սարկավագ Ադամյան
Րիչըրտ Ավետիս Հակոբյան
Արամ Բատ Ճորճորյան
Հ. Էվերեթ Պերպերյան
Չարլըզ Ճ. Թադեոսյան
Ալպըրթ Գալճյան
Գրիգոր Կրեկ Կարապետյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԹԵՄ

Անդրանիկ Մեսրոպյան

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԹԵՄ

Նորայր Թորիկյան

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹԵՄ

Տ. Հակոբ քահանա Գյոկչյան

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԹԵՄ

Սարգիս Խաչատուրյան

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԹԵՄ

Ալեն Ուկնատ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տ. Մեսրոպ ավ. քահանա Ժամկոչյան
Սարգիս Պետոյան
Կարպիս Ռոժե Ջրբաշյան
Րաֆֆի Նոել Պագըրճյան
Գեղամ Թորոսյան
Կապրիել Համազասպ Մումճյան
Ժագ Գուսինյան
Մանուել Տեյիրմենճյան

ՌՈՆ-ԱԼՓԻ (ԼԻՈՆ) ՇՐՋԱՆ—ՄԻՋԻՆ ՖՐԱՆՍԻԱ

Արման Պահատուրյան

Ռոպեր Ռուբեն Տոնիկյան
Ժան Մանուկ Ստեփանյան

Բելգիա

Անդրանիկ Գազարյան

Իտալիա (Միլան)

Տ. Սարգիս քահանա Սարգիսյան

Հոլանդիա

Հրանդ Վարդան Կելիճի

Ալբանիա

Ծովասար Չախմախյան

Հարավային Ֆրանսիա (Մարսել)

Կարո Հոսեփյան
Մեսրոպ Էքմեքճյան
Խաչիկ Յըլմազյան
Աբրահամ Կարապետյան

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԹԵՄ

Տ. Զարեհ ծ. վարդապետ Պարոնյան





ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՅՈՒՐԵՐԻ ՑԱՆԿ

1. **ՊՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ**	— Ն. Ս. ՇԸՆՈՒԴԱ ԵՐՐՈՐԴ ՊԱՊ ԱՄԲԱ ԲԻՇՈՑ ԵՊ. ՍՐԱՊԻՈՆ ԵՊ.
2. **ԵԹՈՎՊԻԱՅԻ ՈՒՂՂԱՓ. ԵԿ.**	— Ն. Ս. ԱԲՈՒՆԱ ՊԱՈՒԼՈՍ ՊԱՏ- ՐԻԱՐՔ ՄԱԿԱՐԻՈՍ ԱՐՔԵՊ. ԳԱՐԻՄԱ ԱՐՔԵՊ. ՄԱՐԿՈՍ ՎՐԴՊՏ.
3. **ՀՆԴԻԿ ՄԱԼԱԲԱՐ ՈՒՂՂԱՓ. ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿ.**	— Ն. Ս. ՄՈՐԱՆ ՄԱՐ ԲԱՍԵԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈ- ՂԻԿՈՍ
4. **ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓ. ԵԿ.**	— ԱԹԱՆԱՍԻՈՍ ԱՐՔԵՊ., ԼԻԲԱ- ՆԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ
5. **ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ (ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ)**	— ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԴԱՄԱՍՔԻՆՈՒՍ
6. **ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿ.**	— ԿԱՐԴԻՆԱԼ ՔԱՍԻԴԻ, ՔՐԻՍ- ՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅ- ՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱ- ԳԱՀ ԱՐՔԵՊ. ՊՈԼ ԳՈԲԵԼ, ՊԱՊԱ- ԿԱՆ ՆՎԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՄՈՆՍԻՆՅՈՐ ԿԼԱՈՒԴԻՈ ԳՈՒ- ՋԵՐՈՏԻ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԿԸՐ- ՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՅՐ ԲԵՐՆԱՐ ԴՅՈՒ ԲԱՆՔ, ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԻՈՒԹ. ՀԱՅՐԱՊԵՏԿ. ԽՈՐՀՐԴԻ ԱՆ- ԴԱՄ

7. **ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓ. ԵԿ.** — ՄԻՆՍԿԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՖԻԼԱՐԵՏ, ՍԻՆՈԴԻ ԱՆԴԱՄ

8. **ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒՂՂԱՓ. ԵԿ.** — ՍՈՒԽՈՒՄԻ ԵՎ ԱԲԽԱԶԻԱՅԻ ԱՐՔԵՊ. ԴԱՆԻԻԼ
ՎԱՍԻԼԻ ՍԱՐԿ. ԿՈԲԱԽԻԶԵ

9. **ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՈՒՂՂԱՓ. ԵԿ.** — ՆԻՖՈՆ ԵՊ., ԱՌԱՋՆՈՐԴ ՍԼՈՋԻԱՅԻ

10. **ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՈՒՂՂԱՓ. ԵԿ.** — ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԽՐԻՍՈՒՍՏՈՄՈՒ
ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՍՈՒՍՏՈՄՈՒ

11. **ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ** — ԵՊ. ՋՈՆ ԴԵՆԻ

12. **ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ** — Ն. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊԵՏՐՈՍ 18-ՐԴ ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ
ՄԱՆՈՒԵԼ ԵՊ. ԲԱԹԱՔՅԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻ ՕԳՆԱԿԱՆ ՊԵՏՐՈՍ ԵՊ. ԹԱՒՄՈՒՆԻ, ԵԳԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ՄՈՆՍԻՆՅՈՐ ՆՇԱՆ ՔԱՐԱՔԵՀՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՓՈԽԱՆՈՐԴ
ՀԱՅՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՒՍՅԱՆ, ԽՄԲԱԳՐԱՊԵՏ «ՄԱՍԻՍ» ՊԱՏՏՈՆԱԹԵՐԹԻ
ՀԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԵՅՐՈՒՋՅԱՆ, ՋՄՄԱՒՒ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՏԵՍՈՒՉ

13. **ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿ.** — ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՐՋՅԱՆ
ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ԿԱՌԼ ԱՎԱԳՅԱՆ

14. **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՎԵՏ. ԵԿ.** — ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ԿԼԱՈՒՍ ԾՎԱՐՑ

15. **ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ** — ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ԴՈԿՏ. ՈՒԵԼԻ ԱՐԻԱ ՌԱՋԱ, ՓՈԽԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՏԻԿ. ՓԻՐԻ-ՍԻՄՈՆՅԱՆ, ԳՈՐԾԱԴԻՐ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

16. **ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ** — ՋԵՐԵՄԱՅԱ ԵՊ., ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

17. **ՊՐՈ ՕՐԻԵՆԹԵ (ՎԻԵՆՆԱ)** — ՆԱԽԱԳԱՀ ԱԼԲԵՐՏ ԾՏԻՐՆԵՄԱՆ

18. **ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊ.** — ՍՈՓՀԱՆԻ ՆԻԱ, ԻԻՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ԽՈՋԱԹՈԼԻՍԼԱՄԻ ՎԱՂ ՄՈՒՍԼԻՄԻՆ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1995 թ. ապրիլի 3-ին հայոց լույս հավատի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Ազգային-Եկեղեցական սրբագումար Ժողովը: Աշխարհասփյուռ հայության պատգամավորները հավաքվեցին վերանկախացյալ Հայաստանում՝ մեկ կամք և մեկ հոգի դարձած ընտրելու առաքելահիմն և լուսավարչահաստատ գահի 131-րդ գահակալին:

Ապրիլի 3-ի առավոտյան ժամը 9-ին ավտոբուսները Երևանից Էջմիածին են հասցնում աշխարհի տարբեր կողմերից եկած պատգամավորներին: Ժողովի նախընթաց օրերին, մոտ մեկ շաբաթ, «Զվարթնոց»-ում իջնող հնքնաթիռները տարբեր աշխարհամասերից բերում էին նրանց: Նույն կերպ, սակայն ցավից կծկվելով, հայությունը ի մի էր հավաքվել նաև ամիսներ առաջ դեպ երկնային արքայություն ճանապարհելու երջանկահիշատակ Վազգեն Առաջինին, իսկ հիմա եկել էին սգո քողը վերցնելու Լուսավորչի Աթոռից ու հավաստելու, թե անսասան, աներեր ու ամուր է Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, և նորընտիր Հայրապետի շնորհաբաշխ Աջի և կաթողիկոսական գավազանի ներքո է միաձույլ մի ամբողջություն դառնում համայն հայությունը:

Մինչ պատգամավորների գալը, Մայր Աթոռի տարածքում հավաքվել էին հայրենի, սփյուռքահայ և աշխարհի բազմաթիվ լրատվական միջոցների ներկայացուցիչները՝ լուսաբանելու ժողովի ընթացքը: Նրանց կրծքին փակցված հավատարմագրերի վրա նշված լրատվական միջոցների անվանումների համադրումով կարելի էր կազմել լրագրական աշխարհի խճանկարը, և այդ աշխարհում խճանկարի յուրաքանչյուր գույնի առաջին էջը մի քանի օր շարունակ բացվում էր Մայր Աթոռից ստացված տեղեկատվությամբ:

Լրագրողներից բացի այստեղ էին հավաքվել նաև մեր Եկեղեցու գավակները Էջմիածնից, Երևանից և Հայաստանի տարբեր շրջաններից՝ ի մոտո հետևելու ժողովի ընթացքին, որպե առաջ իմանալու ընտրության արդյունքները և առաջիններից մեկը արժանանալու նորընտիր Հայրապետի օրհնությանը: Նրանց դեմքերից ասես ջնջվել էր առօրյա հոգսերի և մտածումների դրոշմը ու փոխարենը կար միայն մեկ սպասում՝ ո՞վ է լինելու «Ընտրեալդ յԱստուծոյ»: Մեր ժողովրդին դարեր շարունակ ապրեցնող ու ոգի և ուժ ներարկող ազգային յուրահատկություն է սա. համազգային վճռորոշ պահերին մեկդի թողնել առօրյա մտահոգությունները և ապրել անանձնական, համայնական հոգսերով: Ինչպես Մեծարենցը կասեր՝ «Տուր ինձի Տեր ուրախություն անանձնական»: Եվ խմբված ժողովուրդը, թողած



Մեկնում Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռից



Ժամանում Մայր Հայրենիք



ԱԵԺ-ի ընթացքում



ULbd-h nUpwqfnuL

տնային հոգս ու ցավ, այստեղ է հավաքվել ապրելու բերկրանքը անանձնական այդ ուրախության:

Ազգային-Եկեղեցական Ժողովը սկսվեց Մայր տաճարում մատուցված սուրբ և անմահ Պատարագով: Պատարագեց ու քարոզեց ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ . Խաժակ արք. Պարսամյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ աշխարհական պատգամավորների երդման արարողություն՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի երդմնեցուցչությամբ, որի ընթացքում պատգամավորները երդվեցին՝ իրենց ընտրությունը կատարել մաքուր և անխարդախ սրտով, ի մտի ունենալով բացառապես Հայ Եկեղեցու պայծառությունը և ծորոգությունը, որից հետո բոլոր պատգամավորները Ս. Հաղորդություն ստացան: Մայր Աթոռում ամեն օր առես թևածում էր շունչը ծորոգ հանգուցյալ Վազգեն Առաջինի, և հավարտ Սուրբ Պատարագի երջանկահիշատակ Հայրապետի շիրմի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Ժամը 11-ին Վեհարանում սկսվեց Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորների գրանցումը: Գրանցվեցին 398 պատգամավորներ, որից հետո, ժամը 14.30-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Ժողովի բացումը Կ. Պոլսո Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արք. Գազանճյանի աղոթքով: Ժողովական ընթացիկ հարցերի լուծումից հետո ժողովասրահ մուտք գործեցին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արք. Մանուկյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Հայրապետը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ ուղեկցությամբ պետական ավագանիի:

Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսն իր ողջույնի խոսքից հետո ձայնը տվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, ապա Դիվանի քարտուղարությանը հանձնվեցին ԼՂՀ ղեկավարության շնորհավորագրերը:

Այնուհետև ժողովին իր խոսքն ուղղեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառը:

Ժողովի կանոնակարգի նախագիծը կետ առ կետ ընթերցեց Տ. Խաժակ արք. Պարսամյանը, ապա ընտրվեց ժողովի Դիվանը, որով էլ ավարտվեց առաջին նիստը:

Հաջորդ օրը, առավոտյան, սկսվեց երկրորդ նիստը, որի ընթացքում նախ կազմվեցին աշխատանքային հանձնախմբերը, ապա լսվեց Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի հաշվետու զեկուցումը՝ Կաթողիկոսական Տեղապահության իր վեցամսյա գործունեության վերաբերյալ: Ժողովն այն ընդունեց «երախտագիտական զգացումով և շնորհակալությամբ»:

Տեղապահի զեկույցից հետո պատգամավորները դիմեցին դեպի Մայր տաճար, ուր գաղտնի քվեարկության ընթացքում Իջման Սուրբ Սեղանի առջև մնալով քվեաթերթիկի և իրենց խղճի հետ, համաձայն նախորդ որը տված երդման, պետք է ընտրեին 131-րդ գահակալին:

Առաջին քվեարկությունից հետո ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո — 111 ձայն

բ) Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյան — 9 ձայն

գ) Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյան — 3 ձայն
դ) Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան — 2 ձայն
ե) Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան — 37 ձայն
զ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան — 123 ձայն
է) Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան — 42 ձայն
ը) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան — 61 ձայն

Ըստ Կաթողիկոսության ընտրության հաստատված կանոնի, երկրորդ քվեարկության համար ընտրվեցին առավելագույն քվե ստացած առաջին երեք թեկնածուները:

Չնայած մաղվող անձրևին և աստիճանաբար իր թևերը փռող երեկոյին, Մայր Աթոռի շուրջը հավաքված ժողովուրդը ցրվելու փոխարեն ոռայել էր ստվարացել, քանի որ մոտենում էր այն պահը, երբ Մայր տաճարի դռնից դուրս էր ելնելու նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ավարտվում է վերստին ժամեր տևած քվեարկությունը և քվեների հաշվումը, որի ընթացքում ձայները բաշխվում են հետևյալ կերպ.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ — 186 ձայն
բ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան — 145 ձայն
գ) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան — 61 ձայն

Համաձայն կանոնակարգի հետագա ընտրությունը պետք է ընթանար Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի և Արաբատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի միջև, սակայն Գարեգին սրբազանը, ցուցաբերելով որդիական ակնածանք Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսի անձի հանդեպ, դիմելով սրբագումար ժողովին ասաց. «Ինձ թվում է, այսօր պետք է ավարտենք այս ընտրությունները: Իմ կողմից ես ուզում եմ շնորհավորել Վեհափառ Հորը, որպես նորընտիր Հայրապետ, Ամենայն Հայոց Կաթողիկոս»:

Եվ ցնծագին ողողանջեցին զանգերը՝ ավետելով ընտրությունը Հայոց Ընդհանրական Մայր Աթոռի նոր Գահակալի: Վեհափառը Իջման Սուրբ Սեղանի առջև հաստատելով հավատարմության իր ուխտը Էջմիածնի նախամեծար և գերագահ Աթոռին, Ամենաբարձյալ Տիրոջը դիմեց սաղմոսերգուի խոսքերով. «Տուր զօրութիւն ծառայի քո»: Ապա բացվեցին Մայր տաճարի դռները, և նորընտիր Հայրապետը հայրական իր օրհնությունը պարգևեց ժողովրդին: Տաճարից ընտրության լուրը նախ տարածվեց Էջմիածնում՝ մարդկանց հոգիների ցնծության թարգմանը դարձնելով հրավառությունից շառագունած երկինքը, ապա հասավ Երևան և տարածվեց ողջ աշխարհով մեկ՝ ավետելու մեր ժողովրդի տարագիր զավակներին, թե ընտրվեց նոր Հովվապետը:

Տակավին դեռևս չէր իջել ցնծության առաջին ալիքը, երբ նորընտիր Կաթողիկոսին որդիական Իր խոնարհումը բերեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Ապրիլի 5-ի առավոտյան չորրորդ և վերջին նիստը նախագահում էր Գարեգին Վեհափառը: Ամենայն Հայոց Հայրապետը համագումարի բացման իր աղոթքից հետո ընթերցեց մի հատված Մատթեոսի Ավետարանից (Մատթ. ԻԵ 31–46) և, մեկնաբանելով Սուրբ Գրքի այդ հատվածը, ներ-

կաներին տվեց իր հայրական հորդորները: Կանոնակարգային հարցերի քննարկումից հետո ամփոփելով ժողովը, Նորին Սուրբ Օծությունն իր խոհերը և մտածումները ներկայացրեց մեր Եկեղեցու առաջիկա ծրագրումների վերաբերյալ, լսեց պատգամավորների առաջարկները և Ազգային-Եկեղեցական Ժողովը փակեց շնորհակալական խոսքով ու Հայրապետական օրհնությամբ և աղոթքով:

Այս ժողովում մեկ անգամ ևս հավաստվեց Հայ Եկեղեցու հոգևոր միասնությունը: Հանձինս Մայր Աթոռում հավաքված պատգամավորների, իրար շաղկապվեց ողջ հայությունը: Վեհարանի դահլիճում պատգամավորների նստելու տեղերը նշված էր ըստ երկրների, և այդ երկրների թվարկմամբ ասես ամբողջանում է աշխարհի քաղաքական քարտեզը: Նայելով երկրները ցույց տվող այդ ցուցանակներին, մտածում ես, թե ուր ասես չի հասել հայը և ուր հասել է, իր ազգային-եկեղեցական կառույցն է ստեղծել, որոնց ներկայացուցիչները հիմա ի մի են հավաքվել և բարեպատեհ հնարավորություն ունեն հաղորդակցվելու, տեղեկանալու գաղութահայ հոգևորին ու խնդիրներին: Պատահական չէ, որ ծանոթները իրար ողջունելուց հետո հարցնում էին, թե ինչ կա Ձեր գաղութում, իսկ իրար ծանոթանալիս՝ անունից հետո հարցնում երկիրը:

Ճակատագրի բերումով տարբեր են այն երկրները, ուր բնակվում են նրանք, սակայն մեկն է հայրենիքը, ուր դեպ իրեն ձգող և միավորող փարոսի նման ճառագում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Այսօր առավել պայծառ և հաստատուն է կենսատու այս փարոսի լույսը, որի հավաստումն էր և այս ժողովը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Ա. ՆԻՍՏ

(3 ապրիլ 1995)

1995 թվականի ապրիլի 3-ին ամենայն հայոց հավատքի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ: Պատարագեց ու քարոզեց ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը: Պատարագի ընթացքում տեղի ունեցավ աշխարհական պատգամավորների երդման արարողություն՝ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի երդմնեցուցչությամբ: Երդման արարողությունից հետո բոլոր պատգամավորները Ս. Հաղորդություն ստացան: Հավարտ Սուրբ Պատարագի երջանկահիշատակ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի շիրմի մոտ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն:

Ժամը 11-ին Վեհարանում սկսվեց Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորների գրանցումը: Գրանցվեցին 398 պատգամավորներ:

Ժամը 14.30-ին Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Ժողովի բացումը: Ժողովը աղոթքով բացեց Կ. Պոլսո Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արք. Գազանճյանը, ապա տեղեկացրեց, որ, մինչև ժողովի դիվանի ընտրությունը, դիվանի աշխատանքները ժամանակավորապես կատարելու են Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետն ու ատենադպիրը:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի բարի գալուստ մաղթելով պատգամավորներին, Սրբազան Պատրիարքը խոսքը տվեց Ժողովի գրասենյակի տնօրեն Տ. Վաչե արք. Հովսեփյանին: Սրբազան Հայրը Ժողովին տեղեկություն տվեց գրասենյակի կատարած աշխատանքների մասին և, հանուն ժողովականների, շնորհակալություն հայտնեց Ժողովի հրավիրման աշխատանքներին մասնակցած բոլոր անձանց:

Ստուգիչ հանձնախմբի ատենապետ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը հանձնախմբի անունից ներկայացրեց արձանագրության արդյունքները, որի համաձայն ընտրված 421 պատգամավորներից ներկա են 398-ը: Ապա Տ. Վաչե արքեպիսկոպոսը կատարեց պատգամավորների ստուգումը:

Ստուգումից հետո ժողովասրահ մուտք գործեցին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արք. Մանուկյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Հայրապետը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ փոխ-

նախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը, ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Կարեն Բաբուրյանը, ՀՀ Ներքին գործոց նախարար Վանո Սիրադեղյանը, ՀՀ Կառավարության աղբնթեր կրոնից գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատար Լազար Սուջյանը, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանը:

Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսն իր ողջույնի խոսքից հետո ձայն տվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին: Դիվանի քարտուղարությանը հանձնվեցին ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Կարեն Բաբուրյանի և ԼՂՀ վարչապետ Լեռնարդ Պետրոսյանի շնորհավորագրերը, որոնք կցված են սույն արձանագրությանը:

Այնուհետև ձայնը տրվեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ին:

Ժողովի կանոնակարգի քննարկման համար խոսքը տրվեց Տ. Խաժակ արք. Պարսամյանին: Սրբազանը կետ առ կետ ընթերցեց կանոնակարգի նախագիծը, որի շուրջ տեղի ունեցավ մտքերի փոխանակում: Վերջին հոդվածի շուրջ, որի համաձայն «Ազգային-Եկեղեցական Ժողովը. նորընտիր Կաթողիկոսին առաջարկում է նշանակել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին՝ մինչև Սահմանադրության ընդունումը», ծավալվեց բուռն բանավեճ: Մի շարք պատգամավորներ առաջարկեցին կանոնակարգի այդ կետը փոխարինել այն բանաձևումով, որ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները ընտրվում են Ազգային-Եկեղեցական Ժողովի կողմից: Ի վերջո որոշվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր անդամների ընտրությունը կատարել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունից հետո:

Ստուգիչ հանձնախմբի թվակազմին վերաբերող հոդվածի շուրջ ծավալված մտքերի փոխանակումից հետո առաջարկվեց նախապես 7 հոգուց բաղկացած հանձնախմբի կազմը համալրել ևս 4 անդամով: Ժողովը 242 ձայնով ընդունեց այդ առաջարկը: Ստուգիչ հանձնախմբի նորընտիր անդամներ դարձան Աբրահամ վարդապետ Մկրտչյանը, տիարք Վանուշ Կապրապետյանը, Մարտին Թադևոսյանը և Սուրեն Սահակյանը:

Ապա, որոշ բարեփոխություններից հետո, ամբողջապես ընդունվեց Ազգային-Եկեղեցական Ժողովի կանոնակարգը: Պատգամավոր Խաչիկ Պապիկյանը առաջարկեց կատարել Դիվանի ընտրություն: Առաջարկը երկրորդվեց: Ձայների մեծամասնությամբ առաջարկն ընդունվեց: Ներկայացվեցին Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջարկած թեկնածուների անունները:

Ա աստիճանի՝ Տարիել Բարսեղյան, Րաֆֆի Հովհաննիսյան:

Բ աստիճանի՝ Ներսես արք. Պոզապալյան, Վլադիմիր Հովհաննիսյան

Ա աստիճանի՝ Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան, Սասուն վրդ. Զըմրուխտյան

Բ աստիճանի՝ Անանիա եպս. Արաբաջյան, Արծրուն Սահակյան:

Ապա տեղի ունեցավ քվեարկություն: Քվեարկությունից հետո ձայները բաշխվեցին հետևյալ կերպ՝

Տարիել Բարսեղյան՝ 237, Րաֆֆի Հովհաննիսյան՝ 92 ձայն,

Ներսես արք. Պոզապալյան՝ 177, Վլադիմիր Հովհաննիսյան՝ 165 ձայն,

Հայկազուն ծ. վրդ. Նաջարյան՝ 229, Սասուն վրդ. Զմրուխտյան՝ 101 ձայն,

Անանիա եպս. Արաբաջյան՝ 220, Արծրուն Սահակյան՝ 115 ձայն:

Այսպիսով Ա. ատենապետ ընտրվեց Տարիել Բարսեղյանը, Ա. ատենադպիր՝ Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, Բ. ատենապետ՝ Ներսես արք. Պոզապալյանը, իսկ Բ. ատենադպիր՝ Անանիա եպս. Արաբաջյանը:

Նորակազմ դիվանը փոխարինեց առժամյա դիվանին և անցավ իր պարտականությունների կատարմանը:

Նորակազմ դիվանը որոշեց Ազգային-Եկեղեցական Ժողովի Բ նիստը սկսել հաջորդ օրը, առավոտյան ժամը 9.30-ին:

Երեկոյան ժամը 18.30-ին Ազգային-Եկեղեցական Ժողովի Ա. նիստը եզրափակիչ աղոթքով ավարտեց իր աշխատանքները:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԺԱՄՅԱ ԴԻՎԱՆԻ

ՆԱԽԱԳԱՀ՝

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Կաթողիկոսական Տեղապահ

ԱՏԵՆԱՊԵՏ՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆ
Պատրիարք Հայոց Կ. Պոլսո

ԱՏԵՆԱԴՊԻՐ՝

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Բ ՆԻՍՏ
(Երեքշաբթի, 4 ապրիլի 1995 թ.)

Ազգային-Եկեղեցական Ժողովի Բ նիստը սկսվեց առավոտյան ժամը 9.00-ին: Նիստը բացվեց Ժողովի նախագահ Կաթողիկոսական Տեղապահ, Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի աղոթքով: Այնուհետև տեղի ունեցավ պատգամավորների հաշվառում: Ներկա էին 400 պատգամավորներ, որոնցով և հաստատվեց ժողովի քվորումը:

Ապա Ժողովի ատենապետը ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսական ընտրության թեկնածու ութ բարձրաստիճան հոգևորականների անունները (Նախորդ երեկոյան, երկու Ամենապատիվ Պատրիարքները՝ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Պատրիարք Հայոց Երուսաղեմի, և Տ. Կարեգին արքեպիսկոպոս Գազանճյանը, Պատրիարք Հայոց Կոստանդնու-



Դեմի ընտրություն



ԱԵԺ-ի պատգամավորների երդման արարողություն

Առաջին քվեարկության արդյունքներն էին.
ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո—111 ձայն
բ) Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյան—9 ձայն
գ) Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյան—3 ձայն
դ) Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան—2 ձայն
ե) Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան—37 ձայն
զ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան—123 ձայն
է) Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյան—42 ձայն
ը) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան—61 ձայն:

Կաթողիկոսական ընտրության երկրորդ քվեարկության համար, համաձայն հաստատված կանոնի, երեք առավելագույն քվե ստացողներն էին հետևյալները.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը
բ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը
գ) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը:

Գ ՆԻՍՏ

Ընդմիջումից հետո, կեսօրվա ժամը 15-ին, Ազգային-Եկեղեցական ժողովի Գ նիստով սկսվեց ընտրության երկրորդ փուլը, հավարտ որի ընտրողների ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ—186 ձայն
բ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան—145 ձայն
գ) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան—61 ձայն:

Երկրորդ ընտրության ժամանակ անվավեր համարվեցին 5 քվեներ: Ըստ ընտրական կանոնակարգի՝ հետագա ընտրությունը տեղի պիտի ունենար Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի և Արաբատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի միջև: Վերջինս, սակայն, ցուցաբերելով որդիական ակնածանք Տ. Տ. Գարեգին Կաթողիկոսի անձի նկատմամբ, ազնվորեն հրաժարվեց հետագա ընտրապայքարից՝ հայտարարելով հնքնաբացարկ:

Այսպիսով, առանց հետագա քվեարկության, ներկա պատգամավորների ցնծության և ծափահարությունների ներքո ազգիս 131-րդ Կաթողիկոս ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիո և այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն (Հետայսու՝ Գարեգին Ա):

Ընդունելով Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր դասի և Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորների շնորհավորանքները, նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսը տվեց նրանց իր առաջին օրհնությունը և հայրական պատգամները: Այսպիսով Գ նիստը իր ավարտը գտավ:

Այնուհետև, Մայր տաճարի զանգերի ղողանջի ներքո, եկեղեցական



Հոգեհանգիստ հանգուցյալ Հայրապետի շիրմին



ԱԵԺ-ի բացումը աղոթքով

Աթոռը ղեկավարելու իր փորձը ցույց է տվել, որ որևէ հանձնախմբի կամ խորհրդի ընտրություն կատարելուց առաջ հարկ է նշանակել նախ նշանակման կոմիտե (nomination committee), այն պատճառով, որ մենք դեռևս չենք ճանաչում այն անձանց, որոնք ընտրվելու են որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր անդամներ: Նրանց արժանիքները, ընդունակությունները իմանալու համար է անհրաժեշտ ժամանակ: Ուստի, ինչպես Վեհափառ Հայրապետը հայտնեց, խորհրդակցելու է Ամենապատիվ Պատրիարք Հայրերի հետ, նշանակելու համար Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմը մինչև նոր Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարումը, որ տեղի է ունենալու երկու տարի հետո:

Տ. Տ. Գարեգին Ա-ի սույն մտածումը առաջարկի ձևով Ժողովին ներկայացրեց Տ. Շահե արքեպիսկոպոս Ածեմյանը: Այն երկրորդվեց Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանի կողմից: Առաջարկն անցավ միաձայն:

Խոսելով Հայ Եկեղեցու ապագա գործունեության մասին, Նորին Սուրբ Օծությունն ասաց, որ մեր առաջին նպատակը պիտի լինի Հայաստանում որպես պետական կրոն Քրիստոնեության հաստատման 1700-ամյակին նախապատրաստվելը: Աշխարհում ոչ մի պետություն, ոչ մի Եկեղեցի դեռևս այսպիսի մարտահրավեր չի ուղղել: Դա մեծ պատիվ և պատասխանատվություն է մեր Եկեղեցու համար: Շատ Եկեղեցիներ ու կազմակերպություններ այսօր՝ 2000-ամյակի ավարտին և 3000-ամյակի շեմին, տևապես մտածում են, թե ինչպես թարմացնեն, բարոյապես առողջացնեն իրենց ներքին կյանքը: Մենք նույնպես պարտավորություն ունենք ամենայն լրջությամբ զբաղվելու այդ աշխատանքներով:

Տ. Տ. Գարեգին Ա-ն հայտնեց, որ անցած տարի, 1994-ին, ինքը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Ամենապատիվ Պատրիարքները, հանգուցյալ Հայրապետի հետ, ծրագրել էին կազմել մի հանձնախումբ, որը պիտի զբաղվեր 1700-ամյակին նվիրված աշխատանքներով: Այս առթիվ կառավարության կողմից նույնպես նշանակվել է 24 հոգուց բաղկացած մի հանձնախումբ:

Փոքր Ասիայի այս տարածքում հայ ժողովրդի կողմից քրիստոնեական իր հավատքի և մշակույթի պահպանումը համազոր է մի հրաշքի, ասաց Նորին Սուրբ Օծությունը: Տ. Տ. Գարեգին Ա-ն, միաժամանակ չափազանց կարևոր համարեց Հայ Եկեղեցին ուժեղացնել ներքնապես հայ հավատացյալներին հաղորդ դարձնելու համար քրիստոնեական ճշմարտությանը, Ավետարանի պատգամներին, բավարարելու նրանց հոգևոր պահանջները:

Մեր Եկեղեցին, ըստ Հայոց Հայրապետի, պիտի վերստին այնքան կենսունակություն ստանա, որ չթույլատրի օտար քարոզիչներին գալ այստեղ ու լցնել մեր հոգևոր դատարկությունը: Պետք չէ այս առթիվ մեղադրել որևէ մեկին, այլ՝ լծվել աշխատանքի: Եվ այս գործում շատ անելիքներ ունի Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը: Նոր սերնդի պատրաստության հարցը, ըստ Նորին Սուրբ Օծության, ամենակարևոր հարցերից մեկն է: Հոգևոր ճեմարանը սիրտն է Հայ Եկեղեցու հոգևոր հաստատությունների: Նախկինում Գևորգյան ճեմարանը հիացմունքի առարկա էր մեզ համար: Այսօր, հարց է տալիս Վեհափառ Հայրապետը, ինչպե՞ս պիտի ճանաչենք հոգևոր ճեմարանը, եթե ոչ այն մարդկանցով, ովքեր իրենց կրթությամբ, պատրաստականությամբ և հոգևոր զորությամբ պիտի ծառայեն այնտեղ:

Նորին Սուրբ Օծությունը ոչ պակաս կարևոր է համարում նաև հայրենիքի զորացման համար ծառայելու մեր պատրաստակամության հար-

ցը: Մինչ օտար Եկեղեցիները քարոզում են, որ Եկեղեցին և ազգը տարբեր բաներ են, Հայ Եկեղեցու պարագային Եկեղեցին և ազգը անբաժան են: «Ես չեմ մոռանա,—ասում է Վեհափառը,—երբ փոքր ժամանակ մեր հայրենի գյուղի դաշտերի մեջ պարզում էի իմ փոքրիկ ափերը և արտասանում. «Ազատն Աստված այն օրից...»: Այժմ եկել է այդ ազատությունը: Այսօր ունենք մեր անկախ ու ազատ պետությունը: Ունենք մեր Եկեղեցին: Ամուր պահենք այն: Դրա լավագույն առհավատչյան այսօր Համահայկական Հիմնադրամի առկայությունն է, և մեր պարտականությունը պետք է լինի զորավիգ կանգնել դրան, այն արժեվորել հայրենաշինությամբ»:

Վերջին հարցը, որին անդրադարձավ Վեհափառ Հայրապետը, տնտեսական հարցն էր: Նախկին Ազգային-Եկեղեցական Ժողովները միշտ էլ մտահոգ են եղել Եկեղեցու տնտեսական կացությամբ: Տ. Տ. Գարեգին Ա-ն նախ իր շնորհակալություններն է հայտնում Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարքին իր հաշվետու զեկույցի համար և ասում, որ Եկեղեցին այժմ պարտավոր է անցնել տնտեսական նոր քաղաքականության: Կամավոր նվիրատվությունները Նորին Սրբությունը համարում է գեղեցիկ մի երևույթ, որը սակայն չի կարող տնտեսական քաղաքականության հիմք դառնալ: Եկեղեցին պիտի հիմնվի մնայուն ֆոնդերի հաստատման վրա, ֆոնդեր, որոնք հնարավորություն կտան տոկուն կռվաններ ունենալու: Եկեղեցուն այլևս բավարար չեն լումաները, ինչպես «Լուսավորչի լուման» և այլ նվիրատվություններ: Դրանք շատ օգտակար են, սակայն Եկեղեցին, թեմերը պետք է գտնեն այնպիսի հավելյալ միջոցներ, որոնք հպարտության զգացում կտան մեզ՝ մեր կատարած աշխատանքների դիմաց:

Հայաստանյայց Եկեղեցու բարեկարգությունը, ըստ Վեհափառի, պետք է լինի մեր մտածողության անեռակետը: Պետք է այնպես բարեկարգել Եկեղեցին, որ այն դառնա մի ուժ, հայ ազգի շենության և բարեկարգության ճանապարհին:

Հավարտ Հայ Եկեղեցու այսօրվա վիճակին վերաբերող իր մտածումների, Վեհափառ Հայրապետը ներկա պատգամավորներին հրավիրեց հանդես գալ իրենց առաջարկներով և դիտողություններով՝ իր ներքին խոստանալով ժամանակի ընթացքում հնարավորին չափով լուծելու դրանք:

Եղան բազմաթիվ թելադրանքներ, որոնցից ամենակարևորները ներկայացնում ենք ստորև.

ա) Շիրակի թեմ—Թելադրում ենք, որ այս Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները մինչև Եկեղեցական նոր Սահմանադրության ընդունումը (երկու տարի հետո) պահեն իրենց պատգամավորների հանգամանքը:

բ) Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան—Հայ Եկեղեցուց ներս կատարել ծեսի բարեկարգություն և այժմեականացնել այն:

գ) Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյանի թելադրությունները.

1) Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները այցելեն Ծիծեռնակաբերդ՝ Մեծ եղեռնի 80-րդ տարեդարձի առթիվ զոհվածներին հարգանքի տուրք մատուցելու.

2) Դրականորեն լուծել Հայ Եկեղեցու միության հարցը.

3) Հաստատել Սահմանադրություն և մոտ ժամանակներս հրավիրել Եպիսկոպոսաց Ժողով:

դ) Գուգարաց թեմի պատգամավորները թելադրեցին.

1) Կաթողիկոսական ընտրությունների ժամանակ պատգամավորների միջև ստեղծել հավասարազորություն՝ անկախ թեմի մեծ կամ փոքր լինելուց:

2) Յուրաքանչյուր երկու-երեք տարին մեկ հրավիրել Ազգային-Եկեղեցական Ժողով:

3) Կաթողիկոսության կառավարման տարիք համարել 75-ը.

4) Ժողովրդի աչքին հոգևորականի վարկը բարձրացնելու նպատակով Մայր Աթոռի տարածքում մի հուշակոթող կանգնեցնել բռնատիրության տարիներին զոհված հայ հոգևորականների հիշատակին:

ե) Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյան—

1) Ստեղծել առաջարկներ բերող հանձնախումբ.

2) Դադարեցնել Ազգային-Եկեղեցական Ժողով հրավիրելու նախկին կանոնակարգը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատել նոր կանոնակարգ.

3) Ինքնաբուխ ցվիրատվության կոչ հղել աշխարհի հայությանը և Ազգային-Եկեղեցական Ժողովին.

4) Վերանայել, անհրաժեշտության դեպքում, բոլոր ուղերձները և արձանագրությունները, որոնք տարբեր առիթներով ուղղվել են տարբեր մարդկանց:

զ) Գերաշնորհ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալեոզյան—Սրբացնել 1915 թվականի Եղեռնի բոլոր զոհերին:

է) Ռուսաստանի թեմ—Քրիստոնեության հաստատումից 1700-ամյակի առթիվ ստեղծել դրամական ֆոնդ:

ը) Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյան—Կազմակերպել հավաքական և առանձին հանդիպումներ Վեհափառ Հայրապետի և թեմական առաջնորդների միջև:

թ) Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյան—

1) Կատարել որոշ բարեփոխություններ կուսակրոնության ասպարեզում.

2) Հանգիստ թողնել 1915 թ. հայ նահատակների հիշատակը և չսրբացնել նրանց: Եվ, ընդհակառակը, քաղաքական նպատակներից ելնելով, հեռագրեր ուղարկել աշխարհի շատ երկրներ՝ ճանաչել տալու համար ցեղասպանությունը:

ժ) Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Տիար Հակոբ Փափազյան—Բարձրացնել հոգևոր ճեմարանի ուսման մակարդակը՝ հասցնելով այն գիտական աստիճանի:

ժա) Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը թելադրեց—

1) Մայր Աթոռին վերադարձնել վանքապատկան և բռնագրավված բոլոր հողերը.

2) Բարելավել Մայր Աթոռի միաբանների տնտեսական վիճակը:

ժբ) Արթո Պասմաճյան (Կանադա)—Սրբացնել Տ. Կոմիտաս վարդապետին:

ժգ) Տիար Սարգիս Պետոյան (Ֆրանսիա)—Ստեղծել Ս. Էջմիածնի ֆոնդ:

ժդ) Տ. Մամբրե ավագ քհն. Կուզույանը խնդրանքով դիմեց ներքնևոր Վեհափառ Հայրապետին՝ կիսելու իր մտածումները Եկեղեցու միասնության վերաբերյալ:

ժե) ԱՄՆ-ի Արևելյան թեմից Դին Շահինյանը արեց հետևյալ թելադրությունները.

1) Ամուսնացյալ քահանաները կարողանան դառնալ կամ ընտրվել թեմակալ առաջնորդներ.

2) Ամուսնացյալ քահանաները կարողանան դառնալ եպիսկոպոս.

3) Արժանավոր ամուրի անձերը առանց կուսակրոնության ուխտ կատարելու դառնան քահանա՝ հետագայում ամուսնանալու թույլտվությամբ.

4) Կանանց սարկավագ լինելու թույլտվության առացում:

ժզ) Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյան—Հանդիսավորապես նշել հոգևոր ճեմարանի վերաբացման 50-ամյակը:

ժէ) Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյան—Տ. Խորեն Ա Մուրադբեկյան երջանկահիշատակ Կաթողիկոսի աճյունը Ս. Գայանե վանքից տեղափոխել Մայրավանք:

ժը) Տիար Ժոզեֆ Ավետիսյան (Արարատյան թեմ)—Ստեղծել հայ եկեղեցիների կառուցման և վերանորոգման ֆոնդ՝ արդեն այդ առիթով գոյություն ունեցող հիմնադրամի վրա:

ժթ) Տիկին Սվետլանա Պետրոսյան (Արարատյան թեմ)—

1) Լուսավորության նախարարության հետ համաձայնեցնելով՝ հանրակրթական դպրոցներում պարտադիր դարձնել կրոնական առարկաների դասավանդումը:

2) Ամուսնական ակտեր կատարել միայն Եկեղեցու միջոցով:

Այս և ուրիշ առաջարկներից հետո զեկուցումով հանդես եկավ Գևահատանքի Հանձնախմբի անդամ Տիար Ռաֆայել Պապայանը: Հավարտ նրա զեկուցման Ս. Պետերբուրգի հայ համայնքի պատգամավորները 131-րդ Կաթողիկոսի ընտրության առիթով Նորին Սուրբ Օծությանը նվիրեցին իրենց պատվերով պատրաստված 131 արծաթե հուշամեդալներ: Նրանք հրավիրեցին Նորին Սուրբ Օծությանը այցելել Ս. Պետերբուրգ:

Իր պատասխան խոսքում Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը խոստացավ գրավոր կերպով պատասխանել բոլոր այն հարցերին և թելադրություններին, որ արվել էին պատգամավորների կողմից:

Ապա Վեհափառ Հայրապետը շեշտեց Հայ Եկեղեցու կողմից Համաշխարհային Էկումենիկ շարժմանը ակտիվորեն մասնակցելու կարևորությունը և անցավ իր շնորհակալական խոսքին:

Նորին Սուրբ Օծությունը շնորհակալություն հայտնեց նախ՝ Ամենապատիվ երկու Պատրիարք Հայրերին, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանին և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանին՝ Ազգային-Եկեղեցական ժողովը բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար, հայրենի պետության ներկայացուցիչներին, Էջմիածնի քաղաքապետարանին, հանրության ներկայացուցիչներին, մամուլին, Մայր Աթոռի մատակարարման բաժնին, Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորներին և ժողովի Դիվանին:

Ազգային-Եկեղեցական ժողովը փակվեց Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությամբ և աղոթքով:

Ազգային-Եկեղեցական ժողովի Դիվանը ևս շնորհավորեց Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս Գարեգին Ա-ին և ցանկացավ հաջողություններ իր սուրբ առաքելության ճանապարհին:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՎԱՆ

ՆԱԽԱԳԱՀ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
Նորընտիր Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ա. ԱՏԵՆԱՊԵՏ՝

ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Բ ԱՏԵՆԱՊԵՏ՝

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

Ա ԱՏԵՆԱԴՊԻՐ՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԶԱՐՅԱՆ

Բ ԱՏԵՆԱԴՊԻՐ՝

ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱԶՅԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Ամենապատիվ Տեր,

Խորին երախտագիտության զգացումով պատիվ ունեցանք ստանալու Ձեր հրավերը՝ այցելել Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, մասնակցելու սույն թվականի ապրիլի 3—8-ին տեղի ունենալիք՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ազգային-Եկեղեցական Ժողովին, որը, ինչպես իրավամբ նշում եք, ունի կրոնական և ազգային պատմական մեծ նշանակություն:

Ի դեմս Ձեզ շնորհավորելով Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորներին, Ամենայն Հայոց 131-րդ Ընդհանրական Կաթողիկոսի առաջիկա ընտրությունների առթիվ, այն վստահությունն ունենք, որ Աստծո կամոք և Հայ Առաքելական Եկեղեցու բազմադարյա ավանդույթների ուժով այս անգամ ևս Ս. Լուսավորչի գահին կբազմի արժանավորագույնը:

Ցավ ի սիրտ, Ձեզ քաջահայտ իրողությունների բերումով հարկադրված ենք մեզ զրկել այդ բերկրառիթ արարողությանը մասնակցելու պատվից, ինչի համար խոնարհաբար հայցում ենք, հանձին Ձեր, Ազգային-Եկեղեցական Ժողովի ներողամտությունը:

Խորին հարգանոք՝

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

Ստեփանակերտ,
1 ապրիլի 1995 թ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Պատմական աննախադեպ ժամանակաշրջան ապրող մեր ժողովրդի կյանքում կարևորագույն երևույթ է 1995 թվականի ապրիլի 3—8-ը տեղի ունենալիք կրոնական և ազգային պատմական մեծ նշանակություն ունեցող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ազգային-Եկեղեցական ժողովը, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ:

Այս օրերին համայն հայության համակ ուշադրությունը սևեռված է Սուրբ Էջմիածնին:

Արցախահայությունը հույս է հայտնում, որ Ազգային-Եկեղեցական ժողովը և Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոսի ընտրությունը նոր ազդակ կհանդիսանա հայության տարբեր հատվածների միասնության, Սիյուռք-Հայրենիքի կապերի ամրապնդման, մեր ժողովրդի ազգային իղձերի իրականացման ճանապարհին:

Հարգանքներով՝

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Կ. ԲԱԲՈՒՐՅԱՆ

Ստեփանակերտ,
4 ապրիլի 1995 թ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Ամենապատիվ Տեր,

Մեծապես շոյված ենք ստանալով Ձեր հրավերը՝ մեր մասնակցությունը բերելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ազգային-Եկեղեցական Ժողովին:

Թույլ տվեք մեր շնորհավորանքը հղել Ամենայն Հայոց 131-րդ Հայրապետի առաջիկա ընտրությունների առթիվ և հույս հայտնել, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի նախաշեմին Ամենայն Հայոց Կաթողիկոս կընտրվի արժանիներից արժանին:

Ափսոսանքով տեղյակ ենք պահում, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում անհետաձգելի լուծում պահանջող խնդիրների ստիպմամբ ի զորու չենք ներկա գտնվել, արդարև, կրոնական և ազգային պատմական մեծ նշանակություն ունեցող Ազգային-Եկեղեցական Ժողովին:

Խորին հարգանոք՝

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ՝

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ստեփանակերտ,
1 ապրիլի 1995 թ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Սիրելի պատգամավորներ Ազգային-Եկեղեցական Ժողովին, բացառիկ հաճույք է, որ մեր ազգը այս առիթն ունի գումարելու հանուն Հայաստանեայց Եկեղեցիին և առաջին անգամն է, որ անկախ պետության մը հովանիի ներքև Հայաստանեայց Եկեղեցվո Ազգային-Եկեղեցական Ժողովը կգումարվի: Առաջին անգամն է, որ ուղղակի Հանրապետության նախագահին հրավեր ուղղված է՝ բացման այս առաջին նիստին ներկա լինելու և իր բարի գալուստի խոսքը կատարելու: Առաջին անգամն է, որ պետության նախագահը ընդունած է այդ հրավերը, և այս մենք կատարեցինք ոչ միայն վստահության հավատքով, որ մեր հայրենի հողին մեջ մեր պետությունը գիտե և կճանչնա իր ժողովուրդին հոգեկան արժեքները, հոգիին կյանքին անհրաժեշտությունը և հետևաբար ոչ միայն հովանավորն է մեր հողին, այլ հովանավորն է նաև մեր հոգևոր ժառանգության: Հրավիրած էինք նաև Արցախի Հանրապետության ներկայացուցիչները: Նախ կուզեմ շնորհակալություն հայտնել մեր հայրենի պետության, որ Ամենայն Հայոց Հայրապետի թաղման, հուղարկավորության արարողություններուն, ինչպես նաև բացառիկ Ազգային-Եկեղեցական Ժողովին գումարման առիթով ոչ միայն իրենց հովանավորությունը, աջակցությունը, այլև կազմակերպչական աշխատանքներուն մեջ իրենց նախանձախնդրությունը, իրենց ներդրումը և պետական մակարդակով վայելուչ կարգադրության համար իրենց օժանդակությունը ցուցաբերեցին: Այսօր մենք հրավիրած ենք պատրոն նախագահը՝ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, և իր ընկերակցին՝ Գագիկ Հարությունյանը, վարչապետ Հայաստանի Հանրապետության Հրանտ Բագրատյանը, նախագահ խորհրդարանի Բաբկեն Արարքցյանը, ինչպես նաև Հայաստանի կառավարության առընթեր կրոնական գործերի պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատար Լազար Սուջյանը և «Հայաս-

տան» Համահայկական Հիմնադրամի տնօրենը՝ տիկին Մանուշակ Պետրոսյանը, Արցախի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահը՝ Ռոբերտ Քոչարյանը, հրավիրված էին վարչապետ Լեռնարդ Պետրոսյանը և նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանի Կարեն Բաբուրյանը, որ ներկա է և մեզի արդեն հայտնեց Ղարաբաղի Հանրապետության բարի մաղթանքները:

Ինձի համար հաճույք է, պատիվ է մասնավոր երախտագիտության հրավիրելու Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը՝ իր բարի գալուստի խոսքը ընելու:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Վեհափառ Տեր, սրբազան և հոգեշնորհ հայրեր, Ազգային-Եկեղեցական ժողովի մեծարգո պատգամավորներ,

Խորին հարգանքի և երախտագիտության որդիական տուրքը մատուցելով Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի լուսավոր հիշատակին, այսօր դուք գումարվել եք մասնակիցը դառնալու Եկեղեցու և ազգային կյանքի պատմական իրադարձության, որը վերջին վեց հարյուր տարիների ընթացքում առաջին անգամ տեղի է ունենում հայոց անկախ պետականության գոյության պայմաններում: Այս հանգամանքը, երբ Ազգային-Եկեղեցական ժողովի աննախադեպ ներկայացուցչականությունը ինքնին արդեն ամենապերճախոս ապացույցն է այն կարևորության, որով դրոշմված է ձեր սուրբ առաքելությունը: Ազգային-Եկեղեցական ժողովը տեղի է ունենում նորանկախ հայոց պետականության ամրապնդման լուսեփայլ ներշնչող մթնոլորտում: Չնայած Հայաստանին բաժին ընկած դաժան փորձություններին և անհաղթահարելի թվացող դժվարություններին, մեր ժողովրդի դրսևորած յուրօրինակ տոկունության, համբերության, աշխատասիրության, մարտունակության և բարձր պետական մտածողության շնորհիվ հանրապետությունը դուրս եկավ ճգնաժամային իրավիճակից՝ թևակոխելով պետականության ամրապնդման, Արցախյան խնդրի քաղաքական լուծման, տնտեսության կայունացման և զարգացման պատասխանատու հանգրվանը:

Այսօր մենք ամենայն հպարտությամբ և արժանապատվությամբ կարող ենք ազդարարել՝ Հայաստանը ամենակայուն, ամենաժողովրդավարական և ամենաազատական պետություն է նախկին խորհրդային պետությունների շարքում: Հայաստանն այդ նույն շարքում նաև միակ պետությունն է, որտեղ կասեցված են տնտեսության անկումը և դրամի արժեզրկումը, որտեղ իրականացվում են համակարգված տնտեսական բարեփոխումներ, որոնց շնորհիվ արդեն դրսևորվում են նաև տնտեսական աճի հուսադրող միտումներ: Հայաստանն իր հավասարակշռված արտաքին քաղաքականությամբ, միջազգային կազմակերպություններում ներդրած կառուցողական ջանքերի և բազմաթիվ երկրների հետ հաստատած փոխշահավետ հարաբերությունների շնորհիվ, ո՛չ միայն կարողացավ հաղթահարել քաղաքական և տնտեսական ճգնաժամային երևույթները, այլև դրա-



ԱԵԺ-ում ելույթ է ունենում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը



Հաշվիչ հանձնախումբը հաշվում է քվեները

կանորեն ամրապնդել ազգային անվտանգությունը: Այս տեսակետից մենք այսօր շատ ավելի ապահով ենք, քան անկախության ձեռք բերման սկզբնական շրջանում: Ավելի, քան երբևէ ամուր, ապահով և հզոր է նաև հերոսական Արցախը, որի իղձերի վերջնական իրականացումը կախված է միայն ու միայն ողջ հայ ժողովրդի միասնական կամքի ու կորովի անմնացորդ դրսևորումից: Այս ամենը թույլ են տալիս ամենայն պատասխանատվությամբ հայտարարել, թե՛ ապահովական, թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական տեսակետներից մեր բոլոր դժվարությունները արդեն մնացել են հետևում, իսկ առջևում թեև դեռ մեզ սպասում է տքնաջան աշխատանք, բայց հստակ ճանապարհ և կանխատեսելի հեռանկար: Ուստի միանգամայն վստահ ենք, որ այս ոգևորիչ պայմաններում գումարված Ազգային-Եկեղեցական Ժողովը, լիովին համահունչ դառնալով ներկա մթնոլորտին, պատվով կկատարի իր առջև կանգնած պատասխանատու խնդիրը, որը, պատմական հանգամանքների բերումով, ակնհայտորեն վաղուց դուրս է եկել զուտ եկեղեցական սահմաններից՝ վերածվելով հիրավի համազգային, հիրավի բախտորոշ խնդրի: Վաղը Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն գահին բազմելու է Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոսը, որի ընտրության պատիվն ու պատասխանատվությունը վիճակված է ձեզ:

Ձեզնից կասկածում, որ դուք վեր կկանգնեք մանր ու երկրորդական խմբակային շահադիտություններից, քարացած հարաբերությունների ավանդական դիրքորոշումներից՝ առաջնորդվելով բացառաբար ձեր խղճի թելադրանքով և Հայ Առաքելական Եկեղեցու առջև կանգնած գերխնդրի, նրա միասնության վերականգնման անհրաժեշտության գիտակցությամբ:

Պատմությունը բացառիկ պատեհություն է ընձեռել՝ ձեռնարկելու Եկեղեցու միասնության վերականգնման համազգային գործը: Եվ ես կարծում եմ, որ Ազգային-Եկեղեցական Ժողովը չի կորցնի այս պատեհությունը: Այլապես սերունդները մեզ չեն ների: Ես ուզում եմ այժմ մի փոքր հրաժարվել դիվանագիտական լեզվից և ձեզ հետ խոսել պարզ մարդկային լեզվով: Եկեք ընդունենք, որ այն իրավիճակը, որ գոյություն ունի մեր Եկեղեցում, ես նկատի ունեմ նրա երկփեղկվածությունը, ազգային խայտառակություն է: Եվ ես չեմ ընդունում ո՛չ մի արդարացում, ո՛չ մի պատճառաբանություն: Բոլոր նրանք, ովքեր նպաստել են այդ պառակտմանը, արդարացում չունեն: Ես չեմ ընդունում այն հիմքերը, որոնք պատճառ դարձան այդ պառակտմանը: Ես չեմ ընդունում, որ Կրեմլի կամ ԿԳԲ-ի գործակալ դիտվող Էջմիածնական Եկեղեցին ավելի վատ է ծառայել մեր ժողովրդին, քան Կիլիկիո Աթոռը: Պարզապես հայ ժողովուրդը ինչպես անցյալում, այս անգամ էլ դարձել է գերտերությունների խաղալիքը և ծառայել սառը պատերազմի նպատակներին: Այսօր ունենալով հնարավորություն առանց օտարի թելադրանքի, առաջին անգամ լուծելու մեր հարցերը ինքնուրույնաբար, լուծելու մեր Եկեղեցու առջև կանգնած այս գերագույն խնդիրը, որը ինձ հիշեցնում է Գրիգոր Տաթևացու, Թովմա Մեծոփեցու մեծագործությունը, որոնք խավարամիտ շրջաններում այնքան լայնախոհություն, այնքան ազգային մտածողություն ունեցան, որ հաղթահարելով մեծագույն դժվարություններ, կաշառելով օտար տիրակալների, լուծեցին գերագույն ազգային խնդիր, շնորհիվ նաև մի հայրենասեր իշխանի՝ Ռոստոմ Օրբելյանի նվիրատվությանը, որ փաստորեն հիմք դարձավ այսօրվա Հայաստանի, ահա նույն խնդիրն է կանգնած այսօր մեր ժողովրդի առջև

և մեր սերունդների առջև: Մեր սերունդը՝ մենք ձեզ հետ միասին, վերանվաճեցինք մեր անկախ պետականությունը, մեր սերունդը ազատագրեց Լեռնային Ղարաբաղը, և մեր սերնդի պարտքն է վերականգնել Հայ Եկեղեցու միասնականությունը:

Ես հավատում եմ ձեր ողջախոհությանն ու լայնախոհությանը և սրտանց հաջողություն մաղթում ձեր աշխատանքին: Շնորհակալություն:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Սիրելի հոգևոր եղբայրներ, վեհմաշուք, հարգարժան, սիրելի նախագահ, հարգարժան ներկայացուցիչներ հայոց պետականության ավագանիին, Ղարաբաղի մեր թանկագին Հանրապետության ներկայացուցչին և բոլոր ներկայացուցիչներուդ՝ հոգևորական թե աշխարհական, որոնք Մայր Հայաստանի հողեն, Արցախեն և արտասահմանի բոլոր երկրներեն այստեղ հավաքված եք այսօր գերագույն սրբազան պարտականության մը կատարումին համար, պարտականություն, որ կապված է ամեն մեկուս խղճին և մեր ապագայի պատմության կերտումի հրամայականին:

Եղբայրներ, քույրեր, ես այս պահուն հուզված եմ ոչ թե անձնական պատճառով, այլ վերհիշումովը այն պատմական պահին, երբ այստեղ՝ Սուրբ Էջմիածնին մեջ ճիշտ հիսուն տարիներ առաջ՝ 1945-ին, Կիլիկիայի Աթոռեն եկավ Էջմիածնի զավակ Գարեգին Ա Հովսեփյանց Կաթողիկոսը և ինքը բերավ իր ամբողջական մասնակցությունը և զորակցությունը, եղբայրակցությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսության: Ես կարդացել եմ ատենագրությունները և այսօր փառք կուտամ Աստուծո և խոնարհական սրտով կծնրադրենք առջևդ. փառք քեզ, Տեր, որ ուրիշ Գարեգինի մը շատ ավելի նվաստ արժեքով, քան մեծանուն Գարեգին Հովսեփյանցին տվիր այդ պատիվը այստեղ ըլլալու և միասնության խորհրդանիշին ձայնը հանդիսանալու այս պատկառելի և պատմականորեն նշանակալից ժողովին մեջ:

Եղբայրներ և քույրեր, ժամանակները կփոխվին: Բեռլինի պատերը ինկան, երկաթե վարագույրը խորտակվեցավ, քսան տարվան բանտարկյալը հանրապետության նախագահ դարձավ, Միացյալ Ազգերուն Կազմակերպության մուտքին նորանկախ պետություններու դրոշներով աշխարհը ծաղկազարդվեցավ: Մենք իբրև հայություն գերագույն շրջադարձը ունեցանք մեր Հայաստանի Հանրապետության անկախ պետականության ստեղծումովը, որուն համար քրտինքը մեր Աստուծմե օրհնվեցավ, արյունը մեր հերոսներուն Աստուծմե սրբվեցավ և հոչակվեցավ վերստին քսաներորդ դարուն մեջ հայոց անկախությունը: Մենք այս իրականության դիմաց կերպարանափոխվելու մտածողությունը իբրև պետական ազգ որդեգրելու հարկավորության առջև ենք: Ան, որ չի փոխվի, կնշանակի, որ մարդ ըլլալու հատկանիշներեն ամենեն կարևորներեն մեկեն զրկված է: Ժամանակներու ոգին, ժամանակներու ընթացքը պետք է ըմբռնենք, նշանները կար-

դալ, կըսե Ավետարանը, ձշաձները միության, միասնության, ամբողջականության գարունը կբերեն մեր կյանքին մեջ, և դուք մշակները պիտի ըլլաք այդ գարնան ծաղկումին և մշակումին և պտղաբերումին մեր պատմության մեջ: Իմ խոսքը կփակեմ հիշեցնելով ձեզի երեք պարզ ճշմարտություններ. այսօր այնպես, ինչպես ես կզգամ հոգիիս խորության մեջ և կհավատամ, դուք ալ կզգաք, չորս աչքեր կան, որ մեզի կնայեն՝ **առաջինը** երկինքեն Աստուծո աչքը, Արագածի լեռեն կախված անպարագ Լուսավորչի աստղի մեջ: Ինչպե՞ս մեր աչքերը պիտի հանդիպին Աստուծո աչքին և անոր մեջ ժպիտ պիտի տեսնե՞ն՝ ի վկայություն մեր հավատարիմ գործունեությանը Աստուծո կամքի: **Երկրորդ աչքը** մեր հայ ժողովուրդի աչքն է՝ բացված Մայր Հայրենիքեն, Արցախեն և արտասահմանի բոլոր երկիրներեն: Կրնամ երևակայել սա պահուն, թե ինչպես բազմամիլիոն աչքեր դեպի Սուրբ Էջմիածին են ուղղված և առանց ֆիզիկական աչքերու ճառագայթի հոգեկան ճառագայթումով ձեզի կնային, ինձի կնային, ճախագահին կնային և կըսեն՝ կատարեցեք ձեր խղճի պարտքը: **Երրորդ աչքը** օտար աշխարհին աչքն է, որ բացված է մեր վրա: Այսօրվան դարն այլևս կըղգիացած դարը չէ: Դեռ ասկե հինգ վայրկյան առաջ, կամ ավելի ճիշտը երկու ժամ առաջ էր, բայց ինձի այդպես թվեցավ, ներողամիտ կըլլաք, երկու ժամ առաջ ֆրանսացի թղթակիցը եկավ, ի՞նչ գործ ուներ մեզմով զբաղվելու: Աշխարհը միջազգայնացել կերպարանք է չգեցած: Իրարմե կախում ունեցող ազգերու մեկ ընկերակցություն է, ընտանիք է: Կատարելապես անկախ, իրարմե անջատ ազգեր գոյություն չունին այլևս: Եվ օտար Եկեղեցիներ, օտար ազգեր, որոնք հայության հետ իսկական աղերս ունին, անոնց աչքերը կնային ձեզի: **Եվ վերջապես չորրորդ** ու վերջին աչքը, որ ես այսօր կտեսնեմ, մեր նոր սերունդի, գալիք սերունդի, Հայաստանի ու հայ ժողովուրդի ապագան կերտող սերունդի աչքերն են, որ ուղղված են ձեր վրա: Եկեք այս խորունկ ապրումով, այսպիսի ընդհանրական մտահոգություններով, այսպիսի լայնախոհ, հեռատես և ամբողջապարփակ ըմբռնումով մոտենանք այսօր մեր պարտականությանց և, ինչպես ըսավ հարգելի, սիրելի պարոն նախագահը, վերանանք անցյալեն ժառանգված մասնակի, տեղական կամ այլ մտածումներեն: Ամբողջ ազգ, ամբողջ հայրենիք, ամբողջ եկեղեցի՝ ա՛յս տեսիլքով առաջնորդվինք և վստահ եղեք, եղբայրներ և քույրեր, այստեղեն երբ դուրս ելլեք, եթե Աստուծո ժպիտին հանդիպիք, եթե մեր հայերու ուրախության արցունքին հանդիպիք, ես կապահովեմ ձեզ, որ ապագայի սերունդներուն օրհնանքին պիտի արժանանաք: Ահավասիկ այս մտքով այժմ կամփոփվիմ և կըսեմ ձեր բոլորիդ անունով, Շնորհալիի աղոթքին բառերով.

«Իմաստութիւն Հօր Հիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհիլ, զբարիս խօսել, զբարիս գործել յամենայն ժամ ի չար խորհրդոց, ի բանից և ի գործոց փրկեա զիս, փրկեա զմեզ. ամէն»:





ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Ամենապատիվ Սրբազան եղբարք, սիրեցյալ սրբազան եղբայրակիցներ, մեկ րոպե իմ խոսքը ձեզի ուղղելե առաջ, թույլ տվեք ինձ, որ դառնամ դեպի այն սրբատեղին, ուր Աստված իջավ Իր Միածին Որդվույն մեջեն և օրհնեց մեր հայրենիքը, մեր հողը: Թույլ տվեք ինձի առաջին պարտքս համարել Իջման Սուրբ Սեղանին համբույրս որպես ուխտի ավիրականագույն պահը այս կյանքիս: (Համբուրեց Իջման սեղանը և դառնալով ժողովականներին՝ շարունակեց իր խոսքը):

«Տուր զօրութիւն ծառայի Քո, կեցոյ զորդի աղախնոյ Քո եւ արա առ իս նշան բարութեան»: Սաղմոսերգուին այս բառերով ես կբանամ իմ շընորհակալությունս երբ առաջին անգամ ընդունելով Իր կամքովը և Իր ժողովրդին ընտրությամբը կկոչվիմ այս բարձրագույն և ծանրագույն պարտավորության: **«Տուր զօրութիւն ծառայի Քո»:** Գիտեմ, ես ինքզինքս լավ կճանչնամ: Տկար եմ ես այս մեծ, «անբերելի ծանրության» համար, ինչպես կըսե Նարեկացին, բայց «Տուր զօրութիւն ծառայի Քո և արա առ իս նշան բարութեան»:

Եվ, սիրեցյալ եղբայրներ հոգևոր, գործակիցներ աշխարհական, տիկիններ և օրիորդներ, ես առաջին հերթին մարդկային բառերով անուարագելի և անհուն շնորհակալություն կհայտնեմ ձեզ բոլորիդ, որ երկար խորհրդակցություններե, թերևս երբեմն հոգեկան ներքին մղձավանջներե ետքը, եկաք այս եզրակացության և զիս բերիք որպես նոր գահակալ Լուսավորչահիմն Մայր Աթոռո:

Սրբազան եղբայր՝ Կաթողիկոսական Տեղապահ Մայր Աթոռո: Ես քաջ գիտեմ, թե դուք անցնող յոթ ամիսներու ընթացքին ինչքան քաջությամբ, տոկունությամբ և լայնախոհ համբերությամբ տարիք այս ծանր բեռը, որպեսզի 130-րդ և 131-րդ Կաթողիկոսներուն կապը ըլլաք դուք: Այսօր եղբայրական ամենայն քաղցր սիրով իմ շնորհակալությունները կհայտնեմ Ձեզ և ի խորոց սրտի կմաղթեմ, որ Երուսաղեմի Առաքելական Սուրբ Աթոռը ծաղկի Ձեր գահակալության երկար տարիներուն և դառնա մեր Եկեղեցվո հոգեկան անուցման և զորացման կարևորագույն աղբյուրներեն մեկը:

Հոգևոր եղբայրներ Գերագույն Հոգևոր Խորհուրդի՝ ատենապետությամբ մեր սիրելի Գարեգին Պատրիարքին Կ. Պոլսո և մասնակցությամբ եպիսկոպոսաց և աշխարհականաց դասուն, ձեզ ևս կհայտնեմ իմ խորին շնորհակալությունը:

Շնորհակալության և գնահատանքի ջերմագին խոսքերս կուղղեմ Երևանի Հայրապետական Առաջնորդության Կաթողիկոսական Փոխանորդ և իմ սիրեցյալ կրտսեր եղբոր, անվանակից եղբոր՝ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանին կուզեմ, որ ինչպես միշտ զգացած է ասկե առաջ, անգամ մը ևս զգա, որ մեծ եղբայր մը ունի այստեղ, և իր մեջ կտեսնեմ ամենամոտիկ գործակիցներեն մեկը առաջիկա տարիներու ընթացքին:

Ես այս առիթով կուզեմ նաև շնորհակալություններս հայտնել բոլոր անոնց, որոնք հատուկ աշխատանք տարին և որոնց մասին ես վաղը իմ խոսքս կուղղեմ հարգարժան և պատկառելի Ազգային-Եկեղեցական Համագումարին: Ասով չվերջացավ ձեր գործը:

Չեմ կրնար այստեղ իմ սրտագին շնորհակալության, մաղթանքի, գնահատանքի խոսքը չուղղել մեր նորանկախացյալ Հայաստանի Հանրապետության, անոր վեհմաշուք նախագահին, բոլոր պետական ավագանիին, բոլոր սպասավորներուն պետական և բոլոր մեր ժողովուրդի զավակներուն հայրենի և արտասահմանյան:

Եվ վերջապես, երբ այժմ այս ծանր լուծին տակ կմտնեմ, իմ սիրո խոսքը ուղղեմ նաև այն Կաթողիկոսության, որուն 18 տարիներ ծառայեցի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության գահին վրա: Իմ մաղթանքս է և ջանքս է, որ միշտ այդ միասնականության և գործակցության, մեկ Եկեղեցիի գաղափարին տակ և դրոշին՝ խաչին ներքև հառաջ երթալու կամքը ավիրագործվի և շարունակե:

Եվ այժմ կուզեմ որ բոլորդ ալ լսեք որպես Ազգային-Եկեղեցական Ժողովի պատասխանատու անդամներ, պատգամավորներ՝ եկեղեցական թե աշխարհական, իմ առաջին «Պահպանիչը» մեր հայրերու դարավոր ապրումներով օծուն այն աղոթքը, զոր ամեն հավատացյալի համար կըսենք.

«Եւ վասն Սուրբ Խաչի Քո պատուականի, Տէր, ընկալ զաղաչանս մեր եւ կեցոյ զմեզ»:

«Սուրբ խաչիս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ, Ամենակալ Տէր Աստուած մեր կեցոյ եւ ողորմեայ»:

«Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր, պահեա՛, պահպանեա՛ զազգս հայոց, զԵկեղեցիս Հայաստանեայց, զհայրենիքս մեր զՀայաստան աշխարհն եւ զամենայն հայ զաւակունս Քո ցրուեալս ի վերայ երկրի ի ծագս աշխարհի. Տէր, անսասան պահեա՛ զնուիրապետական Աթոռս մեր, զՄայր Աթոռն Սուրբ Էջմիածնի, զՄիաբանութիւն սորին եւ զամենայն կազմակերպութիւնս եւ զհաստատութիւնս Մայր Աթոռոյս. օրհնեա՛, Տէր, եւ զկաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, զՊատրիարքութիւնն Երուսաղէմի եւ զՊատրիարքութիւնն Կոստանդնուպոլսոյ եւ զամենայն թեթիւն, շնորհեա՛ անդորրութիւն եւ բարգաւաճում հայրենեացս մերոց, վասն փառացդ քոց ընդ հովանեաւ Սուրբ եւ պատուական Խաչիդ Քո ի խաղաղութեան. փրկեա՛, Տէր, յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն, արժանաւորեա՛ եւ յաւիտեանս յաւիտենից, Ամէն»:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Մեր հառաջիկայի գործունեության հորիզոնի վրա առաջին հիմնական մեր անելիքը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պաշտոնական հիմնադրության կամ քրիստոնեական կրոնի պետական ճանաչման 1700-ամյակի կազմակերպումի գործն է: Բոլորդ էլ տեղյակ եք, որ նման պատիվ և միանգամայն նման դրական մարտահրավեր աշխարհումս ոչ մի ազգ չունի, բայց միայն մեր ժողովուրդը: Մոտենում է 2000-ամյակի ավարտը և սկսելու է 3000-ամյակը: Աշխարհումս Եկեղեցիներ, պետություններ, միջազգային կազմակերպություններ արդեն իսկ ծրագրում են մեծածավալ տարողությամբ այնպիսի ձեռնարկներ կազմակերպել, որոնք մարդկության և քրիստոնեական Եկեղեցու վերստին առողջացման, բարոյական մաքրության կամ հառաջադիմության ձգտումներով են առաջնորդվում: Եթե մենք միջազգային մամուլին հետևում ենք, տեսնում ենք, որ մարդիկ, ազգեր, պետություններ, Եկեղեցիներ, կրոններ, միջազգային կազմակերպություններ մտածում են, թե ինչ ձևով, ինչ հաշվետվությամբ կարող են փակել 2000-ամյակը և ինչ հեռանկարներով կարող են բացել 3000-ամյակը: Այս բոլոր ազգերի շարքում միայն մեր ազգն է, որ 2001 թվին կարող է տոնել 1700-ամյակ, որովհետև աշխարհումս ճանաչվել ենք քրիստոնեական հավատքը որպես առաջին պետական ազգային կրոնք հոչակած ազգը: Ուրիշ խոսքով՝ մենք պետք է բացառիկ կարևորությամբ և համազգային անխտրական ոգով ու ծրագրյալ արդիական մեթոդներով համակարգյալ գործնական աշխատանքի ըմբռնողությամբ լծվենք գործի:

Աստված հոգին լուսավորի մեկ անգամ ևս Վազգեն Առաջին Հայրապետին: Անցնող տարի Մայիսին նա հրավիրեց Մեզ Ս. Էջմիածին որպես Կիլիկիո Կաթողիկոս, հրավիրեց Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքներին: Մենք այստեղ երկու օրերի ընթացքում խորհրդակցություններ ունեցանք, այդ երկու օրերի ընթացքում մենք որոշ ծրագրումներ, ավելի ճիշտը ծրագրի ուղղություններ ճշտեցինք և հանձնախումբ կազմելու, մե՛կ հանձնախումբ բոլոր Ամիրապետական Աթոռների մասնակցությամբ և ոչ թե ունէ մեկ Ամիրապետական Աթոռ իր սեփական ծրագիրը մշակելու և գործադրելու նպատակով, այլ մեկ մարմին. այդ մեկ մարմնի միջոցավ պետք է կազմակերպվի ամբողջ աշխատանքը, այսինքն՝ կենտրոնական մարմին 1700-ամյակին: Մեր առաջին գործը պիտի լինի, որ այդ հանձնախումբի անդամները նշանակվեն և գործի լծվեն:

Ես ուրախությամբ տեղեկացա և բարձր գնահատանքով ողջունում եմ մեր հայրենի պետության այն որոշումը, որով 24 հոգիներից բաղկացած կենտրոնական մարմին է գոյացրել և այդ մարմնին միջոցավ աշխատանք է տարվել և տարվում է գործակցաբար Եկեղեցու հետ: Ուրիշ խոսքով՝ խորհրդակցաբար միշտ Սուրբ Էջմիածնի հետ, որի կողմից ներկա են գտնվել ներկայացուցիչներ պետության կողմից նշանակված 1700-ամյակի աշխատանքների ծրագրումի համար. արդեն մի շարք աշխատանքներ տարվել են, ծրագիրներից որոշ մասը գործնական հունի մեջ է մտել:

Բարեկամներ, այստեղ ժամանակը չէ անշուշտ ինձի համար և ոչ էլ դուք ժամանակ ունեք մանրամասնությունների մեջ մտնելու, բայց չէ կարելի այս հիմնական և եզակի առիթը փախցնել: Ամբողջ Միջին Արևելքում, Փոքր Ասիայի այս ծայրամասում, Կովկասի այս տարածաշրջանում ինչպե՞ս պատահել է, որ մեր հայրերը կարողացել են այդ քրիստոնեական հավատքը «ղայիմ» բռնել, (թույլ տվեք ինձի այդ բառը), ամուր պահել և ոչ թե միայն պահել, պահպանել իմաստով, այլ ստեղծագործությամբ հառաջ տանել, զարգացնել: Երբ մարդ պտտվում է Հայաստանի չորս կողմերը և տեսնում է կղզիների վրա, լեռնալանջերին, ձորերում այն եկեղեցիները, որ կառուցվել են, երբ մարդ մտնում է Մաշտոցյան Մատենադարանը և տեսնում է ձեռագրերը, երբ մարդ պտտվում է Հայոց գերեզմանատները և տեսնում է խաչքարերը, իբր կարդում է մեր մատենագրությունը, տեսնում է մեր մանրանկարչությունը, լսում է մեր երաժշտությունը, այս ամբողջ քրիստոնեական մշակույթը, հարց է տալիս. ի՞նչ ձևով, ի՞նչ արժանիքով, ի՞նչ կարողություններով, ի՞նչ պայմաններով, ի՞նչ միջոցներով մենք այս բոլորն իրագործեցինք: Սա մեր ժողովրդի գիտակցությանը մեջ պետք է թափանցի ներկա, ապրող և գալիք սերունդներին: Ես եղել եմ Ամերիկայում, երբ Ամերիկան տոնեց իր 200-ամյակը: Դրանից տարիներ առաջ մեր Երևանը տոնել էր իր 2750-ամյակը: Դուք չեք կարող պատկերացնել, թե ամերիկյան ազգի համար ի՜նչ մեծ հոգեկան, բարոյական, ազգային բարեփոխություն առաջ եկավ այդ 200-ամյակի առիթով, երբ 7000 ծրագիրներ մշակվել էին. ես տեսել եմ այդ 7000 ծրագիրների չորս հատորները. էդ 7000 ծրագիրները բոլորն էլ իրողապես գործադրվեցին, որպեսզի ամբողջ 200 տարվան ժառանգությունը չդառնա սոսկ հիշողություն, այլ լինի մղիչ ուժ, ներշնչող զորություն, ներկայումս ապրվող և ապագային ապրվելիք կյանքի համար:

Անցյալը, երբ լեցուն է՝ նորին, ներկային համար դառնում է մեծ ուժականություն: Պետք է, որ մենք, 2000-րդ տարին չհասած, մեր աշխատանքները կատարենք և շատ ավելի մեծ տարողությամբ պետք է անենք, որովհետև մի սովորական իրադարձություն չէ, որ նշելու ենք, այլ 1700-ամյակ ենք տոնելու: Ինձ վիճակվել է բախտավորությունը Վազգեն երջանկահիշատակ Կաթողիկոսին հետ գտնվել նաև Ռուսիայում, Մոսկվայում, մեր քույր Ռուս Եկեղեցու 1000-ամյակի տոնակատարության: Այնտեղ տեսա, թե ի՜նչ մեծ նորոգում եղավ այդ երևույթը, այդ դեպքը ռուսական մեծ օրթոդոքս Եկեղեցու համար:

Հետևաբար 1700-ամյակի տոնակատարությունը պետք է լինի մեր գործունեության առաջին դաշտերից մեկը:

Երկրորդն է մեր Եկեղեցու ներքին ուժեղացումը, հոգևոր արժեքների, քրիստոնեական ճշմարտությունների, Ավետարանական պատգամների, մեր հայրերի Աստվածաբանական, կրոնական գաղափարներին, ապրումներին

փոխանցումը մեր ժողովուրդին, նրա այսօրվա ձգտումներին և կարիքներին պատասխան տալու մեր հարկավորությունը: Այստեղ բոլորս ծանոթ ենք այն իրողությանը, որ 70 տարիները կրոնական տեսակետից որքան ծանր տարիներ են եղել մեր երկրում՝ Հայաստանում և ընդհանրապես նախկին սովետական շրջանում: Ես անցյալի մասին խոսք չունեմ ասելիք: Մի սքանչելի ճշմարտություն կա այն խոսքին մեջ, որ ասել է աշխարհի իմաստուններից մեկը՝ «Աստվածն անգամ պատմությունը չի կարող փոխել»: Այդ պատմությունն ապրված է: Այդ մասին դատաստան անել, այդ մասին երկարորեն խոսել անհրաժեշտ չէ այժմ: Հիմա կարգախոսն այն է, որ մեր Եկեղեցին վերստին այնպիսի կենսունակություն պետք է ստանա մեր ժողովրդի կյանքի մեջ, որ այլևս մեր ժողովուրդն ինքն իրեն մեր Եկեղեցու պաշտոնյաներից լքված չզգա, որպեսզի օտար քարոզիչներ չգան և պարապը լեցնելու համար ապազգայնացուցիչ, իմ ըմբռնումով՝ հակաքրիստոնեական, քրիստոնեական անունին տակ այսպես պիտակված գաղափարաբանություններ կամ հերետիկոսություններ չտարածեն մեր ժողովուրդին մեջ: Նրանց մասին ճառ խոսել, նրանց մասին դատապարտական խոսք ասել, դա չի բավարարի մեզ, դա պատվաբեր էլ չէ մեզ համար: Մենք պետք է լծվենք դրական աշխատանքի և դրա համար մենք պետք ունենք ուժականության, մարդուժի:

Այդ ինձ կբերի այն հիմնական իրողության, որ մեր գործունեության երրորդ բնագավառն է լինելու: Որպեսզի մեր գործունեության այս երկրորդ դաշտը պտղաբեր լինի՝ երրորդն անհրաժեշտ է: Դա մեր հոգևորականության՝ ևո՛ր սերնդի պատրաստության անհետաձգելի գործն է: Ես ամբողջ կյանքումս եղել եմ հոգևոր ճեմարանի ուսուցիչ: Դպրեվանք ենք ասում Կիլիկյան Աթոռի մեջ, Ժառանգավորաց վարժարան ենք ասում Երուսաղեմին մեջ. Հոգևոր Ճեմարանը **սիրտն** է Ամենայն Հայոց Կաթողիկոսության, ինչպես դա ասում ենք մենք Կիլիկյան դպրեվանքին համար: Հիասուն անգամ, Աստվածորդի լինելով, Աստվածային ուժով գործելու ատեն մարդի՛կ ընտրեց, մարդոցմո՛վ գործեց, 12 առաքյալները, նրանց հետևողները. ես ի՞նչ կարող եմ անել անհատապես: Մի կյանք ունեմ, այդ կյանքն եմ տվել: Ինչ որ Աստված է տվել, դա կուտամ, բայց դա ի՞նչ արժի առանց հոգևորական նոր սերունդի պատրաստության, աջակցության և այնպիսի հեռանկարային գաղափարով աշխատանքին, որ սնուցված լինի Ավետարանի և մեր հայրերի ոգով: Ես մեծ հիացումով եմ հետևել Գևորգյան Ճեմարանի պատմությանը: Ինձ համար ներշնչող ուսուցիչ է եղել Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը: Առանց նրան տեսած լինելու, առանց նրան լսած լինելու մի ուրիշ դեմք՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի գրքերը ինձ համար եղել են կազմավորիչ գրքեր՝ լինին նրա քարոզները, լինին նրա գիտական ուսումնասիրությունները: Եվ այսօր ինչպե՞ս պիտի ճանաչվի Սուրբ Էջմիածինը, ինչպե՞ս պիտի ճանաչվեն մեր նվիրապետական մյուս Աթոռները, միայն անցյալը հիշեցնող նվաճումների հիշատակո՞վ, թե՝ ևո՛ր մարդերով, դեմքերով, որոնք կարողանան տիրապետել իրենց հոգու զորությամբը, հավատքը տարածել մեր ժողովրդի մեջ ամեն բանից առաջ իրենց անձնական կյանքի օրինակովը, իրենց ուսումովը արդի աշխարհի ըմբռնումներին համաձայն քրիստոնեությունը բացատրելու, տարածելու իրենց արվեստով: Դա պատրաստության գործ է և դրա համար իմ եղբայրներից խնդրում եմ, որ իրենց մտքի և հոգու, աղոթքի և գործի ալաց-

քը դարձնեն դեպի Հոգևոր Ճեմարանը, դեպի նոր հոգևորականության պատրաստումը:

Ես չեմ ուզեր տարածվիլ այն մյուս հեռանկարների վրա, որոնք նշել եմ այստեղ՝ իմ նոթատետրում և որոնց մասին հետո ես կգործեմ: Բայց չեմ կարող զեղչել իմ այդ ցանկիցը այն չորրորդը, որ մեր հայրենիքի զորակցության մեր պարտականությունն է: Մեր Եկեղեցին շաղախվել է հայ կյանքին մեջ: Օտար մարդկանց երբ լսեք, օտար աստվածաբանների գաղափարներին երբ ուզեք հաղորդ դառնալ, անոնք ասում են, որ կրոնք և ազգ իրարից տարբեր են: Ես քրիստոնեական իմ ըմբռնումով ասում եմ, որ դա սխալ է, որովհետև որտե՞ղ պիտի գործի Աստված. մարդկա՛նց մեջ պիտի գործի: Մարդիկը ազգերից են բաղկացել: Այսօր Անգլիկան մեծ Եկեղեցին ազգային Եկեղեցի է: Եկեղեցին ժողովրդի, ազգի կազմավորման ընթացքին մեջ կազմավորիչ դեր է խաղացել: Ինչու է գտել Մեսրոպ Մաշտոցը մեր գիրը. առաջին և ամեն բանից վեր՝ Աստվածաշունչը թարգմանելու համար: Խորհրդային շրջանի մեր գիտնականներից շատերը մոռանում էին այդ մեկը և ասում էին, որ նա գիրը գտել է Հայաստանը փրկելու համար: Բնականորեն սա ճիշտ է. բայց այս իր գործի բնական արդյունքն ու բարիքն է եղել՝ իր ժողովրդին սեփական ազգային դիմագիծ տալ իր այբուբենով: Դրանով ազգային մեծ նշանակություն ունի այդ դեպքը: Մեր Եկեղեցիին ո՞ր էջը բանաս ու չտեսնաս այնտեղ ազգը: Եվ այսօր մեր ազգը եկել է այնպիսի մի հանգրվանի, որ անկախ, ազատ պետության հանգրվանն է, որ մենք քանի-քանի տասնամյակներ, եթե ոչ հարյուրամյակներ երազել էինք: Ես չեմ կարող մոռանալ, եղբայրներ, այն պահը, երբ մանուկ էի իմ հայրենի գյուղին մեջ և երբ մենք բացում էինք մեր ձեռքերը, տարածում էինք մեր թևերը և ասում էինք.

«Ազատն Աստված այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել
Իմ հողանյութ շինվածքին
Կենդանություն պարգևել,
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզոր թևերով
Ազատություն գրկեցի...»:

Այդ ազատությունը եկել է, անկախությունը եկել է: Աստծուն փառք տանք, բայց մենք արժեցնենք Աստուծո այդ շնորհքը: Ոչ մի պետություն աշխարհումս կարող է կատարյալ լինել, ոչ մի անձ կարող է կատարյալ լինել. բայց հենց այս մեր պետությունն է, և մենք պետք է, որ մեր բոլոր ուժերովը նրան զորավիգ կանգնենք. պատմության դիմաց ենք կանգնել և գալիք սերունդների դիմաց. թող մարդիկ չասեն մեզ, թե այս բոլորը պատահեցին «վասն մեղաց մերոց»: Գիտեք մեր պատմաբանների այդ նշանավոր խոսքը, որով հաճախ ասում են, որ այս աղետը պատահեց մեզ վասն մեղաց մերոց: Եվ գիտնականներից շատերն ասում են սա միջնադարյան քրիստոնեական ոչխարամտության գաղափարաբանության արտահայտություն է: Տնտեսական պատճառներ կան, քաղաքական պատճառներ կան մեր պատմությունը բացատրող: Դա ճիշտ է: Բայց ո՛չ ամբողջությամբ: Մեր ազգի չարիքներից շատերը եկել են իսկապես «վասն

մեղաց մերոց», մեր ունեցած թերություններից, մեր ունեցած ներքին հակառակություններից, մեր դրսևորած ճղճիմություններից և ընդհանրականը երկրորդականին ու մասնականին զոհելու մեր փորձությունից: Այսօր այս պետություն ունենք: Եկեք դրան ուժ լինենք իբրև Եկեղեցի:

Այդ աշխատանքի գլխավորագույն միջոցներից մեկը «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամն է: Եվ կխորհեմ մեր հանրապետության նախագահը իմաստությամբ վարվեց, երբ այդ մարմինը ուզեց կազմել, Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին դիմեց, որպեսզի նրանք անդամ լինեն Կենտրոնական հոգաբարձության ժողովին, և մենք եղանք, մնացինք ու կմնանք զորավիգ «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին: Ճիշտ է, դժվարություններ կան, ինչպես կասի ժողովուրդը՝ «ծուռ նստենք՝ շիտակ խոսենք»: Կարող են այստեղ-այնտեղ թյուրիմացություններ լինել, այս մարդը վիրավորվել, այն կազմակերպությունը թերևս դժվարություն ունենա, բայց պետք է համահայկական նկարագրով, «ՀԱՅԱՍՏԱՆ» անունով մկրտված այդ Հիմնադրամը արժեցնենք հայրենաշինության համար: Ես հիշում եմ, սրբազան եղբայրներիցս շատերն էլ հիշում են, որ երբ այս գաղափարն առաջարկվեց, հրապարակ դրվեց, այն ատեն Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իմ անմոռանալի նախորդը պիտի ասեմ այժմ, Վազգեն Առաջին Կաթողիկոսը, գաղափար ունեցավ եպիսկոպոսաց հետ խորհրդակցության ընթացքին եկեղեցուն վստահել այդ Հիմնադրամի գործը: Եկեղեցին չէր կարող իր ուժերովը ամբողջ այդ բեռը վերցնել: Բայց իր ամբողջական և անվերապահ մասնակցությունը բերեց, բերում է և բերելու է «ՀԱՅԱՍՏԱՆ» Հիմնադրամին:

Վերջապես ես կուզեի իմ խոսքին հինգերորդ կետին անդրադառնալ, որովհետև այստեղ ոչինչ լսեցի, հուսամ քիչ ետքը կարող եմ լսել և ուրախ կլինեմ լսելու, տնտեսական հարցի մասին: Նախորդ ժողովների ատենագրությունները կարդացի: Ազգային-Եկեղեցական ժողովների ընթացքում միշտ տրվել է Մայր Աթոռի տնտեսական կացության պատկերը և եղել են հարկ եղած վերլուծումները: Բնականորեն այստեղ ժամանակ չունենք մանրամասնություններով զբաղվելու: Ամենապատիվ Տեր Թորգոմ Պատրիարքն իր զեկույցի մեջ, այդ ընդարձակ տեղեկագրում արդեն որոշ տվյալներ հաղորդել է այդ մասին: Շատ շնորհակալ եմ իր արած այդ աշխատանքի համար: Զգիտեմ, հետագային նոր կազմվելիք Գերագույն Հոգևոր Խորհրդին հետ կնստենք, կծրագրենք, թե ինչ պետք է անենք՝ տնտեսական միջոցներ ձեռք բերելու համար: Բայց, սիրելի եղբայրներ, որտեղից էլ որ գալիս եք, ուզում եմ ձեզ իմ մեկ մտածումը փոխանցել այստեղ մտերմորեն տեղի ունեցող խոսակցության այս շրջանակում: Մենք պարտավոր ենք որդեգրել տնտեսական մի նոր քաղաքականություն: Այդ պիտի լինի այն մտքով և նպատակով, որ Մայր Աթոռը դրվի ապահով հիմքերի վրա և մնայուն եկամուտների միջոցներով հառաջ տանի իր գործը: Կախում ունենալ կամավոր ներքրումներից, պատահական ներքրումներից, անկեղծ և իսկապես ազնիվ մեծ բարերարների ներքրումներից՝ դա աքանչելի երևույթ է, մեր ժողովուրդի կամավոր մասնակցության գեղեցիկ արտահայտություն է, բայց դա չի կարող լինել մնայուն քաղաքականություն տնտեսական տեսակետով և պետք է որ մենք նստենք Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ, և դուք էլ ինչ գաղափարներ որ ունենաք, մանավանդ ձրանք, ովքեր գալիս են այնպիսի երկրներից, որտեղ տնտեսական այդ երևույթներն ավելի զարգացյալ վի-

ճակին մեջն են, մենք լծվենք **մնայուն ֆոնդերի** հիմնադրման, այնպիսի ֆոնդեր, հիմնադրամներ, որոնց եկամուտը, շահարկումը մեզ համար կարող է տալ տոկուն կռվաններ, կարող է հայթայթել ապահով միջոցներ այն գործերն անելու, որոնց առաջ կգտնվի մեր Եկեղեցին և հատկապես Մայր Աթոռը: Ներքին թեմեր, արտաքին թեմեր, յուրաքանչյուրն իր պարտականությունը պարտավոր է կատարել ոչ թե միայն «Լուսավորչի լուման»-ի ձևով: Դա աքանչելի գաղափար է: Ամենաբարի Այրի կնոջ լուման այդ կամավոր, ինքնաբուխ կերպով կատարված ողիրատվությունը Հիսուսի գնահատանքին է արժանացել ամենայն բարձր աստիճանին: Բայց մենք լումաները նկատելով իբրև բարեպաշտության արտահայտություն, նրանց կողքին պետք է գտնենք այնպիսի միջոցներ, որ թեմերն իրենք իրենց մասնակից զգան իրենց Մայր Աթոռի, իրենց հոգևոր տան տնտեսական առողջ հիմքերի վրա դրման մարզում և նրա գործունեության բարվոք ընթացման և ատոք պտղավորման համար:

Ահավասիկ մի քանի մտածումներ, որոնք ես ցանկացա ձեզ հետ բաժանել այս առաջին խոսքումս և այս կարճ ժամանակում: Եթե երբեք դուք ունենաք գաղափարներ այս բոլորի մասին, խնդրում եմ այդ գաղափարներն արտահայտեք մեկ հիմնական առաջադրանքով. ինչպե՞ս անել, որ բարեկարգվի Հայոց Եկեղեցին: Այս իմ վերջին խոսքն է.

Բարեկարգություն Հայաստանյայց Եկեղեցվո պետք է լինի մեր հեռանկետը, անեռակետը, նշանակետը, ինչ կուզեք, ասեք: Եվ բարեկարգություն կնշանակե Երուսաղեմի նախկին Պատրիարքներից Թորգոմ Գուշակյան պայծառիմաստ մեծ Պատրիարքի բացատրությամբ **բարվոք պահպանումը այն կարգին, որ կյանք է, ոչ թե միայն կառույց,** այսինքն՝ Եկեղեցին բարեկարգել այնպես, որ նա դառնա աքանչելի մեկ ուժ, գործուն ներկայություն և կենսունակ ներգործություն մեր ժողովրդի կարիքին համար: Թող իմ այս առաջին խոսքին վերջին բառերը լինին **«աշխատենք վասն շինութեան և բարեկարգութեան Եկեղեցւոյս Հայաստանեայց և ազգիս հայոց»:**



Առաջին շնորհավորանքը



Ազգային Եկեղեցական Ժողովին մասնակցած պատգամավորների խմբանկար

ՆԱԽԱԳԱՀ Լ.ԵՎ.ՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՒՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Վեհափառ Տեր, ես ցանկանում եմ իմ, իմ իշխանության և մեր ողջ ժողովրդի անունից շնորհավորել Ձեզ այս պատվավոր և միաժամանակ չափազանց պատասխանատու ընտրության առթիվ: Ես համոզված եմ, որ մեր Եկեղեցին, Ազգային-Եկեղեցական Ժողովը կատարեց ճիշտ ընտրություն, և անգամ նրանք, ովքեր կասկածներ ունեին, վստահ եմ, որ շատ շուտով իրենք էլ կհամոզվեն դրանում: Վեհափառ Տեր, ես չեմ կասկածում, որ Դուք Ձեր ողջ կարողությունն ու եռանդը, Ձեր ողջ հոգին կներդնեք Հայոց Եկեղեցու բարգավաճման և հայ ժողովրդի լուսավոր ապագայի կերտման գործին: Եվ ես, կարծում եմ, իրավունք ունեմ Ձեր անունից հավատալու, որ Դուք, որպես հայ ժողովրդի հոգևոր հովիվ, ես, որպես Հայաստանի նախագահ, ձեռք-ձեռքի տված պիտի մեր գլուխը մատաղ անենք այս ժողովրդին:

ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ ԸՆԾՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Մեծահարգ նախագահ պրն. Լևոն Տեր-Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հարգելի նախագահ պրն. Բաբկեն Արարքցյան, հարգելի փոխնախագահ պրն. Գագիկ Հարությունյան, սիրելի նախարարներ, պետական ներկայացուցիչներ, հոգևոր եղբայրներ.

Ընտրութենեն ետքը, Իջման Սուրբ Սեղանի առջև կատարած ուխտեն հետո, այնտեղ զգացված սրտով առ Աստված և առ ժողովուրդն ուղղած խոսքերես հետո, այս պահը ես կնկատեմ ամենեն կարևոր պահերեն մեկը այսօրվան դեպքին, երբ Հայոց Հանրապետության Նախագահը իր ավագանիով կուգա շնորհավորել նորընտիր Կաթողիկոսը Ամենայն Հայոց, ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Ես այսօր ոչինչ կրնամ ըսել պատմական այն նշանակությանը մասին, որուն համար ինքը՝ վսեմաշուք Նախագահը, արտահայտվեցավ Ազգային-Եկեղեցական ժողովի բացման հանդիսավոր նիստին: Բայց հայոց պատմությունը որոշ աստիճանով կարդացած ըլլալով, ինքզինքս այդ պատմության հետ հաղորդ զգալու ապրումով ես այսօր կ'ըսեմ՝ պատմական հարազատ ուղիին շարունակման ճամփուն մեջն ենք մենք, երբ պետություն և Եկեղեցի կողք-կողքի են կանգնում ու կգործեն վասն մեկ ազգի, վասն մեկ հայրենիքի, Աստուծո Սուրբ Կրոնին՝ Ավետարանին քարոզած ճշմարտություններուն հիման վրա և մեր հայ ժողովուրդի առողջ, ազգային գիտակցության և արժանապատվության բարձր ըմբռնումով: Հետևաբար ես կշնորհավորեմ Ձեզ Ձեր այս բարձր ու ազնիվ մտածման համար և իմ բոլոր հոգևոր եղբայրներուս անունով, Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռին անունով Ձեզի կհայտնեմ իմ ջերմագին շնորհակալությունները, որ այսօր դուք օրինակելի և հայոց պատմության վայել արարք մը կատարեցիք, ձեր առաջին այցելությունը տալով նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Կուզեմ Ձեզ վստահացնել, պրն. Նախագահ, որ այս Կաթողիկոսին ալ առաջին այցելությունը ուրիշ տեղ չի կրնար ըլլալ, բայց միայն Ձեզի՝ Հայաստանի մեր անկախ պետության Նախագահին և առհասարակ պետության կառույցին:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապրիլի 5-ին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ին: Վեհափառ Հայրապետը, ինչպես և խոստացել էր, իր առաջին պաշտոնական այցելությունը կատարեց ՀՀ նախագահի նստավայր:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հայ Եկեղեցու նվիրապետական բոլոր Աթոռների ներկայացուցիչները:

Նախագահի մամուլի ծառայությունից տեղեկացրին, որ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, շնորհավորելով Գարեգին Ա-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ, հաջողություն է մաղթել Նրան և հավաստիացրել, որ Վեհափառը կարող է վստահաբար ակնկալել պետության աջակցությունը բոլոր ազգաշահ ձեռնարկումներում՝ ուղղված Հայ Եկեղեցու զարթոնքին, Հայ Եկեղեցու միավորմանը:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար, իր հերթին հավաստիացրել է, որ Հայ Եկեղեցին վճռականորեն զորավիգ կլինի բոլոր այն աշխատանքներին, որոնց լծված է մեր պետությունը՝ հանուն հայրենիքի վերականգնման ու հայ ժողովրդի իղձերի իրականացման:

Ընդունելությանը ներկա էին ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ նախագահի խորհրդականները, ՀՀ նախագահի աշխատակազմի ծառայությունների ղեկավարները:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ապրիլի 10-ին ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությանը, որը գլխավորում էր խորհրդարանի նախագահության անդամ Նիա Սոբհանին։

Պրն. Սոբհանին իր և ձեռկացների անունից շնորհավորանքի ջերմ խոսքեր ուղղեց Գործընկեր Կաթողիկոսին և հույս հայտնեց, որ այսուհետև էլ ավելի կամրապնդվեն հարևան երկու ժողովուրդների հոգևոր և տնտեսական կապերը։ Մեծաճարտ հյուրը Գարեգին Վեհափառին հանձնեց Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Ռուհանիջահիի ողջույնի ուղերձ։ Ողջույնի ուղերձ հանձնվեց նաև Իրանի հայոց թեմի առաջնորդ Սրսուկ արքեպիսկոպոս Մահունյանի անունից։

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց ջերմ մաղթանքների և ուղերձների համար ու իր ձերքին հավատիացրեց, որ այսուհետև հայ և պարսիկ ժողովուրդների կյանքում կրացվի բարեկամության մի նոր էջ։ Կրոնների տարբերությունը երբեք չպետք է խոչընդոտի հարևան ժողովուրդների երկխոսությանը, ընդգծեց Նորին Սուրբ Օծությունը։

Պատվիրակության կազմում էին Հայաստանում Իրանի արտակարգ և լիազոր դեսպան Համիդռեզա Նիքբար Էսֆահանին, ԻԻՀ խորհրդարանի անդամ Վարդան Վարդանյանը և արտգործնախարարության ձերկայացուցիչ Ջավադ Քուչդյանը։

ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

«Ցնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ
հանդերձ փրկութեան եւ ուրախութեան,
իբրեւ փեսայի եդ ինձ պսակ,
եւ իբրեւ հարսն զարդու զարդարեաց զիս»:
(ԵՍԱՅԻ ԿԱ)

Մարդկության պատմության սկզբնավորումից ի վեր Աստված ժամանակ առ ժամանակ իջել է Երկնային Աթոռից, փարվել և առաջնորդել մարդկությանն Իր սրբազան ճանապարհներով զանազան եղանակներով ու կերպով՝ երբեմն նշաններով և երբեմն ուղղակի թանձրացյալ միջամտություններով: Եվ այս տնօրինության կատարելությունն ու լրումը եղավ տիեզերքի Արարչի ու Տիրակալի մարդանալու խոնարհությունը, երբ Հայր Աստված, անճառելի սիրո թելադրանքով, Իր Միածին Որդուն պարգևեց մարդուն որպես անարատ և անապական զոհ, Ում արյան հեղումը «ի խնդիր մոլորեալ ոչխարին» դեպի երկիր մխիթարության և ուժավորության կոչեց շնորհաբաշխ Սուրբ Հոգուն՝ հաստատելով հարաժամ շարունակվող Իր փրկական առաքելության իրավատեր Մի, Ընդհանրական, Առաքելական, Սուրբ Եկեղեցին: Եվ այդ ՍԻՐԸ, ԱՐՅԱՆ շիթերն ու ՇՆՈՐՀԱՑ ծավալումը հասան մինչև աշխարհի հյուսիսային կողմերը, հալեցրեցին հեթանոսական սառույցը, ի փոխան որի բարձրացավ ու հաստատվեց հավիտենական Հույսն ու Լույսը՝ Հիսուս Քրիստոս: Այն Սքանչացումը վիճակվեց նախ Հայաստան աշխարհին՝ Թադեոս և Բարթողիմեոս երկու ընտրյալ ու սրբազան առաքյալների նահատակության գնով, որ և ժամանակներ հետո «զնոցին սրբոց առաքելոց զկարգի պաշտամանն պակասութին՝ եկից մեծն Գրիգորիոս՝ ճշմարիտ խոստովանողն Քրիստոսի և Լուսավորիչն ազ-

գիս մերոյ, որ և զպակասութիւն չարչարանաց Միածնին ելից ի մարմնի իւրում բազմաչարչար նահատակութեամբն և քրտնաջան բազմամեայ քաջութեամբ»։ Առաքյալների ու Մեծն Սուրբի ընդխառնված ոտնահետքերի ձայնը և հոգու տրոփյունը ծնունդ տվեց Հայաստանյայց Եկեղեցի զավակին, որ Իր հայրերի կանչը ուղիղ կերպով փոխանցեց ու ավանդեց սերունդներին։ Հայոց երկրում սերմանվեց Տիրոջ հունդը, որ և Իր իսկ հրացայտ էջքի օծումով հաստատվեց ու ամրապնդվեց որպես պարիսպ հավատո և սուր՝ ընդդեմ բռնության չարյաց։ Սակայն այսօր կարծես թե դատարկվել ու թափուր էր մնացել Աթոռն Հայաստանյայց. չկար այլևս Առաքելահաջորդ Հայոց 130-րդ Գահակալը՝ Վազգեն Վեհափառը, և այրիացած Գահը սպասում էր ի նոր տիրոջը։

1995 թ. ապրիլ 9։ Հայաստանյայց Եկեղեցու Տոնացույցը մեր առջև պատկերավորում է այն իրողությունը, երբ աշխարհի Տերն ու Թագավորը խոնարհության գերագույն օրինակով «նստեալ ի յէշ և յաւանակ», փառաբանվելով մուտք է գործում Երուսաղեմ և «ծերքն ոստովք ձիթենեօք և տղայք ոստովք արմաւենեօք, և երամ երամ դասուքն աղաղակէին. ՈՎՍԱՆՆԱ, ՕՐՀՆԵԱԼ ԵԿԵԱԼ Ի ՅԱՆՈՒՆՆ ՏԵԱՌՆ»։

Ծաղկազարդի այս օրը կրկին էր ուրախությունը մեզ համար, քանզի Ծաղկազարդով Հայաստանյայց Եկեղեցին Ծաղկազարդվեց, Սուրբ Էջմիածնի զանգակները, միաձուլված ժողովրդի սրտի աղաղակներին, ավետում էին նոր Հայրապետի մուտքը Մայր Աթոռ. «Ովսաննա, Օրհնեալ եկեալ ի յանունն Տեառն»։ Նորընտիր Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, առընթերակայությամբ Երուսաղեմի և Կ. Պոլսո Սրբազան Պատրիարքների, «յօրինակ Մովսիսի», ամպհովանու պահպանության ներքո առաջնորդում էր իր ժողովրդին դեպի Նոր Երուսաղեմ՝ Սուրբ Էջմիածնի Մայր տաճար, որտեղ պիտի «յօրինակ Տեառն Յիսուսի Քրիստոսի» հռչակվեր «Եպիսկոպոսապետ Սրբոյ Կաթողիկէ Եկեղեցւոյ՝ արթուն վերադիտող և քարոզ ճշմարտութեան ուղղափառ հաւատոյ»։

Վեհափառի քայլերթը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Գահից դեպի Ս. Էջմիածին նորովի վերարծարծումն էր Տերունական «նստեալ ի յէշ և յաւանակ» անհասանելի խորհրդի։ Այս իմաստով ևս Հայաստանյայց Եկեղեցին Ծաղկազարդվեց, որ Հարության հաղթական և կենդանացնող շնչով առլեցուն պիտի արժանանա «Նոր Հոգեգալուստի», Պայծառակերպված ու Վարդավառված Վերափոխման սրբազան ու առաքելահիմն երկնաշավղով խոնարհաբար վայելչությամբ պիտի կրի Տիրոջ արյամբ գնված Ի՛ր Սուրբ Խաչը, հաղորդվելու համար Բեթղեհեմի խոնարհ մսուրի Սրբազնասուրբ Ծննդյանը և Հորդանանի փրփրածուփ ալիքներում Տիրոջ Հոգեկիր Մկրտությանը։

Հրնթացս պատարագի Վեհափառն ընթերցում է իր ուխտագիրը, ըստ որի խոստացավ և ուխտեց «Բարձրելոյն առաջնորդել ազգիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան Քրիստոսական կրօնից, ըստ մերոյս Եկեղեցւոյ դաւանութեան և ըստ Հայրապետական կարգաց ու կանոնաց Աստուածպաշտութեան, անստերիւր և անխոտոր ընթանալով յամենայնի ընդ լուսաշաւիղ հետս գնացից արժանաժառանգ յաջորդաց Սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի զգաշաւոր պահպանութեամբ Մայր Աթոռոյս Հայաստանեայցս»։ Ուխտագրի ընթերցումից հետո Հայաստանյայց Եկեղեցու տասներկու եպիսկոպոսների «զձեռս իւրեանց եդեալ ի վերայ գլխոյ Ընտրելոյն» և որպես



Գահակալության պատարագի հանդիսավոր թափոր



Քոյր եկեղեցիների ներկայացուցիչները գահակալութեան արարողի ընթացքում

աղոթք ու մաղթանք ասացին. «Մեք դնեմք ձեռս ի վերայ, և ամենեքեան աղօթս արարէ՛ք զի արժանաւոր լիցի սա գիշխանութիւն Առաքելական Աթոռոյս անարատ պահել առաջի Աստուծոյ»: Ապա որպես Ամենայն Հայոց Հայրապետ, Վեհափառն անդրանիկ պատգամը տվեց իր հավատացյալ հոտին:

Արժան է հիշատակել, որ սրբազան պատարագի ընթացքին Հայ Եկեղեցու հետ մեկ Տիրոջ ու դավանանքի հաղորդության ունենալու միասնականության ուխտը վերանորոգեցին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների Հովվապետները, որպես Քրիստոսավանդ պատգամների ուղղափառ հետևողներ ու ջատագովներ:

Սուրբ պատարագին և գահակալության արարողությանը ներկա էր նաև ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր ողջ ավագանիով, ներկա էին նաև բոլոր Եկեղեցիների Հայրապետներ ու ներկայացուցիչներ, ովքեր հայ հավատացյալի հետ, իբրև մեկ սիրտ ու մեկ հոգի, աղոթում էին Ամենակարող Աստծուն՝ ասելով. «Եւ արդ աղաչեմք զքեզ, Տէ՛ր բարերար, ընկալ զպաղատանս մեր ամենեցուն՝ ժողովելոցս ի տաճարի փառաց անուանդ Քո ...Տո՛ւր սմա զառաքելական և զհայրապետական շնորհս, զօրացո՛ զսա ի գործս բարիս, կալ առաջի քո անարատ փառօք և անսայթաք գնացիւք յամենայն ճանապարհս արդարութեան՝ ըստ կամաց Քոց սրբոց և բարեսիրաց, զի արժանի լիցի յաւիտենական կենացն՝ ընդ ամենայն սուրբս Քո»: Ամեն:

ՔԱՐՈԶ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

«Տէր հովուեացէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի»
(ՍԱՂՄՈՍ)

Փառք և գոհութիւն Քեզ Տէր, Հայր երկնաւոր, որ մարմնաւոր և հոգևոր ծննդեանս առաջին օրերէն արևու լոյսին պէս ընծայեցիր Քու ամենալոյս ներկայութիւնը հոգիիս մէջ և Քու ամենազօր ոյժը ողջ կեանքիս մէջ: Եւ ահա այսօր կոչեցիր զիս, նուաստ ծառայս, Քու հայ ժողովուրդիդ զաւակներուն ընտրութեան մէջէն հոգևոր սպասաւորութեան այս բարձրագոյն և սրբազնագոյն հանգրուանին, որուն մէջ եղած **պատիւը՝** որպէս քու շնորհքիդ ճառագայթումը՝ ծանրագոյն **պարտքով** միայն վճարելի և արժևորելի պատիւ մըն է: Ոևէ մարդ էակի նման, ինձի համար ևս անկարելի պարտք մըն է այդ, սոսկ մարդկային սահմանաւոր կարողութիւններով և միջոցներով իրագործելի: Առանց Քու զօրութեանդ ներգործութեան, ինչպէս ոչինչ կրցած եմ ընել անցնող քառասնամեայ հոգևորական սպասաւորութեանս ընթացքին, այսօր ևս կը զգամ որ ոչինչ պիտի կրնամ ընել Քու ճշմարտաբարբառ խօսքերուդ հնամաձայն որով ըսիր. **«Առանց իմ ոչինչ կարէք առնել»** (ՅՈՎՀ. ԺԵ 5):

Ահա քառասուներեք տարիներ շարունակ, աբեղայական ձեռնադրութենէս ասդին կրեցի Քու լուծը, առի խաչդ ուսերուս և քալեցի քու ետևէդ: Լուծդ ծանր եղաւ իմ կեանքին մէջ. ուսերս տկար էին, բայց խաչիդ զօրութիւնը, որ երկու անուն ունի **սէր** և **զոհողութիւն,** թեթևացուց բեռը, զայն դարձնելով **«քաղցր»** և **«փոքրոգի»** (ՄԱՏԹ. ԺԱ 30): Եթէ մնացած ըլլայի առանձին՝ պիտի տարուէի ըսելու Քու Միածին Որդւոյդ բառերով. **«Տէր, անցո յինէն զբաժակս զայս»:** Բայց պիտի չվարանէի անմիջապէս աւելցընելու. **«բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու կամիս»** (ՄԱՐԿ. ԺԴ 36): Քու կամքդ կամքիս առաջնորդ՝ անցայ աբեղայութեան, վարդապետութեան, եպիսկոպոսութեան հանգրուաններէն. հասցուցիր զիս մինչև Կաթողիկոսութեան լիագոյն և գերագոյն աստիճանը: Տասնութ տարիներ Կաթողիկոսութեան այդ լուծը շալկեցի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահին վրայ. և այժմ առաւել բարձր պատասխանատուութեամբ զայն



Գահակալության պատարագի ընթացքում
(Լեւոն Տեր-Պետրոսյան, Ռոբերտ Քոչարյան, Բաբկեն Առարքցյան,
Վրաստանի խորհրդարանի խոսնակ Վախթանգ Գուգուաձե)



Ուխտագիրը կարդալու պահը

պիտի կրեմ Լուսաւորչակառոյց այս սրբազնագոյն Գահին վրայ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռին ի Ս. Էջմիածին:

Հոգևոր սպասաւորութեան այս ճանապարհորդութեանս ծայրագոյն այս հանգրուանին, այս սրբազնասուրբ խորանին վրայ հայցեմ ի քէն Տէր Աստուած իմ. **«տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո և արա առ իս նշան բարութեան»** (ՍԱՂՄ. ԺԵ 16): Քու զօրութիւնդ իմ մէջս հեղ մը ևս զգալով Գահակալութեան այս ճուիրական պահուն, կը կրկնեմ բառերը Սաղմոսերգու արքային. **«Տէր հովուեացէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի»** (Սաղմ. ԻԳ 1):

* * *

Ծառայութեան այս ընդարձակագոյն դաշտին մէջ մտնելու սա վճռական պահուն, սրտի պարտք կը զգամ հեղ մը ևս ձայնս վերառաքել առ Բարձրեալն Աստուած և խնդրել իրմէ որ ի լոյս փառաց իւրոց և երկնաւէտ երանական խաղաղութեան մէջ հանգչեցնէ իմ նախորդին՝ անմոռանալի Վազգէն Ա. Կաթողիկոսի բարի հոգին և ի հաճոյս իւր ընդունի անոր բազմաբեղուն վաստակը Իր Հայաստանեան այգւոյն մէջ:

* * *

Սիրելիք,

Վստահաբար բոլորդ կ'անդրադառնաք որ Ազգային-Եկեղեցական Ժողովով կատարուած Կաթողիկոսական այս ընտրութիւնը իրապատուկ, բացառիկ կարգի նշանակութիւն ունի: Ի. դարու մէջ առաջին անգամ ըլլալով է որ ան կատարուեցաւ—և այժմ Գահակալութեան այս հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ—մեր վերանկախացեալ հայրենիքի նոր Հանրապետութեան օրով: Եօթանասուն տարիներու բռնատիրական կարգերէն ազատագրուած Հայաստանի անկախ պայմաններու, ժողովրդավարական նորահաստատ կարգերու ներքև կ'ապրի մեր ժողովուրդը: Մեր արդի պատմութեան այս վճռադրոշմ, շրջադարձային նշանակութիւն ունեցող հանգրուանին, մեր Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, որուն առաջին սպասաւորի պաշտօնը վստահեցաք ինձի, կոչուած է հրամայական և փրկաւէտ կարևորութիւն ունեցող դերակատարութեան: Իր աստուածատուր և քրիստոսաւանդ առաքելութեան ու պատմական ժառանգութեան հիմնական տուեալներէն առաջնորդուած՝ ան կոչուած է Ս. Աւետարանին և մեր հայրերու սրբազան աւանդութեան աղբիւրէն նոր, մաքուր և առատ ջուր հոսեցնելու մեր ժողովուրդի կեանքին մէջ: Քրիստոսով սկսրուած և Աւետարանով աւանդուած ճշմարտութիւնները, կեանքի բարոյական սկզբունքները, հոգևոր արժէքները հարկ է որ առուգակից մեր հայրենիքի և ողջ հայութեան կեանքի անդաստանին մէջ, ոռոգումի, հոգևոր մշակութեան բարիքները ընծայելով մեր ժողովուրդին: Առանց Աւետարանին՝ տկար է մեր ազգը: Առանց մեր հայրերու սուրբ ժառանգութեան վերակենդանացման՝ ժժգոյն կը դառնայ մեր ժողովուրդի դիմագիծն ու նկարագիրը:

Ա՛յս է պատմութեան դասը: Ա՛յս են մեր ժողովուրդի կարիքն ու պահանջքը: Կը հաւատամ նաև որ ա՛յս է մեր պետութեան սպասումը: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, աստուածնակառոյց և քրիստոսահաստատ այս հոգեւոնը, Աստուծոյ օգնութեամբ և ձեր բոլորի նուիրաբերմամբ, պէտք է

դառնայ քրիստոնէական հոգեւնուցումի առատահոս և կենդանարար աղբիւր:

Մեզի ընծայուած աքանչելի առիթ մը ունինք—Քրիստոնէութեան որպէս պետական կրօն հռչակման կամ մեր Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակը: Ինչպէս այլուրեք ըսած եմ, հարկ է որ ան հրաշակերպուի որպէս Նոր Հոգեգալուստ մեր ժողովուրդի կեանքին մէջ ի Մայր Հայրենիք և յարտասահման: Վերանորոգման հոսանքի մը պէտք է վերածուի ան, որով առաւել ևս պիտի ծաղկի ողջ հայութեան կեանքը ի սպաս Աստուծոյ և համայն մարդկութեան:

Մեր Եկեղեցին է՛ ևսև շաղախ ազգային միութեան և անուցիչ ու ամրապնդիչ ոյժ՝ մեր զօրութենականութեան: Եթէ արթուն ենք և խորհայեցաց՝ չենք կրնար չտեսնել որ «ժամանակի նշանները» միութեան և միասնականութեան, համերաշխութեան և համերաշխ ու ներդաշնակ համագործակցութեան հրամայականին առջև կը դնեն մեզ բոլորս անխտիր: Մեր Եկեղեցին կը դառնայ ներքնապէս աւելի կենսալից և իր գործունէութեամբը աւելի բարերար երբ կը գործէ որպէս մէկ Եկեղեցի, ընդ գլխաւորութեամբ և հովանաւորութեամբ Ամենայն Հայոց Ընդհանրական Կաթողիկոսութեան, զոր ողջ հայ ժողովուրդը կը դասնի որպէս Մայր Աթոռ: Ներկայ աշխարհի նոր դրուածքը և հայութեան կեանքի այժմեան կացութիւնը ուրիշ բան չեն թելադրեր մեզի բայց միայն ամրապնդում Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ միութեան: Նոր էջ բացուած է մարդկութեան կեանքին մէջ: Նոր էջ բացուած է հայութեան կեանքին մէջ: Նոր էջ չի կրնար չբացուիլ Հայց. Եկեղեցւոյ կեանքին մէջ: Հակադրութեանց և հակամարտութեանց էջը փակուած պէտք է նկատել: Միութեան էջն է այժմ բացուած և մեր բոլորի հասարակաց պարտաւորութիւնն է այդ էջը լեցնել Խորենացիի բացատրութեամբ՝ «գործովք արութեան», այսինքն՝ այնպիսի միասնական և մեծագործական արարքներով որոնց մէջէն Հայց. Եկեղեցւոյ միութիւնը և զօրութիւնը շողան անաւտուեր, արեւուն լոյսին պէս պայծառ:

* * *

Սիրելի՛ք,

Քսաներորդ դարը մեր պատմութեան մէջ բացուեցաւ սև թուականով մը՝ 1915ի Ապրիլեան եղեռնով, որ մահուան ստուերը տարածեց մեր երկրին ու ժողովուրդին վրայ: Եւ այս տարի համազգային տարողութեամբ ու դրուատելի հաւատարմութեամբ և միասնականութեան դրոշին տակ անիա կը նշենք, այս նոյն Ապրիլ ամսուն, հայութեան դէմ գործուած ցեղասպանութեան 80-ամեակը, թէ՛ պետական, թէ՛ եկեղեցական և թէ՛ ժողովրդական մակարդակներու վրայ: Վստահաբար այդ ոգեկոչումը պիտի դառնայ վերածնութեան նոր ազդակ մը ողջ հայութեան համար:

Փառք, հազար փառք, որ այս նոյն քսաներորդ դարը մեր պատմութեան մէջ կը փակուի շքեղագոյն և պայծառագոյն դրուագով մը, որուն անունն է Ազատ Անկախ Հայաստան, ինքնիշխան ու գերիշխան պետութիւն: Դարերու երազն էր որ անիա կեանք առաւ, մարմին զգեցաւ: Դարերու հորիզոնին վրայ դիտուած՝ առաջին անգամն է որ հայոց անկախ պետութեան մը նախագահը իր պետական աւագանիով ներկայ կը գտնուի Կաթողիկոսական Գահակալութեան մը արարողութեան: Կը հաւատամ որ օրէ օր հաստատունութիւն և զարգացում արձանագրող մեր պետութիւնը առա-

ւել ևս զօրացեալ ուժականութեամբ պիտի մուտք գործէ երրորդ հազարամեակին մէջ, շարունակելու համար իր ստեղծագործ երթը դէպի ապագայ:

Այս հիմնական և սխրալի իրողութիւնը մեզ հարկադրաբար նոր մտածողութեան և նոր վերաբերումներու կ'առաջնորդէ: Այլևս կոչուած ենք որպէս պետական ազգ մտածելու և ըստ այնմ ապրելու և գործելու: Այլևս չենք—և չենք կրնար ըլլալ—այն ինչ որ էինք երէկ: Օտար լուծի և ոյժի տուրք տուող ժողովուրդ էինք, մեր իսկ սեփական հայրենի հողի վրայ: Համայնքներ էինք աշխարհի չորս ծագերուն վրայ տարածուած, արտասահմանեան կեանքի պայմաններու ներքև: Այժմ անկախացեալ հայրենիք ենք և պետականացեալ ժողովուրդ ինքնական, ինքնիշխան և ժողովրդավար: Ժամանակն է որ փոխուինք, բարեփոխուի'նք, գիտնանք արժէքը հայրենիքին և հայրենի պետութեան: Այլևս Սփիւռք չենք: Այո' Սփիւռք ունինք, և' պիտի ունենանք: Արտասահմանի հայութիւնը մեծ կարևորութիւն ունի ողջ հայութեան և Մայր Հայրենիքին համար: Միլիոնաւոր հայեր կ'ապրին հայրենիքէն արտասահմանեալ իրավիճակի մէջ: Անոնք հաւատարիմ և շինարար քաղաքացիներն են իրենց ապրած երկիրներուն և այնպէս ալ պիտի մնան: Իրենց կեանքի յատուկ պայմաններն ու կարիքները ունին, որոնց համար հերոսական ջանք կը թափեն առոյգ և կենսունակ պահելու իրենց ինքնութիւնը: Բայց անոնք չեն մոռնար երբեք որ իրենց հայրենի տունը Հայաստանն է և չեն կրնար մասնակից չդառնալ հայրենիքի վերականգնումի և վերաշինութեան արբազան գործին: Աշխարհագրական հեռաւորութիւնները, քաղաքական տարբերութիւնները, մշակութային և կենցաղային այլազանութիւնները չեն կրնար վնաս բերել, արտի, մտքի, հոգիի, ճակատագրի միութեան, եթէ հաղորդութիւնը ըլլայ շարունակական և խոհական, միշտ փոխադարձ հասկացողութեան ոգիով զըսպանակուած:

Ես, այսպէս ասած, Սփիւռքի զաւակ եմ: Ես հայրենիքի մէջ չեմ ծնած: Բայց հայրենիքը իմ մէջս է ծնած: Ծնած է այն օրէն երբ հայոց լեզուն հնչած է ականջներուս մօրս օրօրոցի երգերով, երբ Ա. Բ. Գ.-ը բացուած է աչքերուս դիմաց դպրոցական գրատախտակներուն վրայէն, երբ հայոց մատեանները դարձած են յարաբուխ կենսաւիշ ու մատներուս հետ խառնուած մելան...: Ահա այսօր եկած եմ հայրենիք որպէս հարազատ տուն, ուր կը զգամ այնպէս որ կարծես երբեք անկէ բաժնուած չէի...:

Այո', եղբայրներ և քոյրեր, պէտք է ոսկեկամուրջ նետել ընդմէջ հայրենիքին և արտասահմանին: Մենք պէտք է մնանք մէ'կ մեր հոգևոր աշխարհագրութեան որպէս բնակիչ, ազգային մէկ պատկանելիութեան ներքին զգացումովը տոգորուած: Ահա այս գիտակցութեամբ պէտք է բոլորս մասնակից դառնանք մեր հայրենիքի պետութեան ամրացման ու զօրացման և մեր ժողովուրդին կեանքի պայմաններու զարգացման:

Այդ նոյն ըմբռնողութեամբ է որ Հայց. Եկեղեցին պիտի կատարէ իր ազգային դերը, որովհետև ան պնքակտելիօրէն շաղախուած է ողջ հայոց պատմութեան և ճակատագրին հետ:

Այդ նոյն հասկացողութեամբ է որ մեր Եկեղեցին պիտի շարունակէ զօրավիգ կանգնիլ Արցախի մեր հարազատ եղբայրներուն և քոյրերուն, անոնց հերոսական մաքառումին մէջ, ի պաշտպանութիւն անոնց արդար իրաւունքներուն: Արցախի հարցը ոչ մէկ կրօնական նկարագիր և տարողութիւն ունի: Մենք մեր երջանկայիշատակ նախորդին նման ջատագովը

եղած ենք, և կը մնանք, այն գաղափարին որ խաղաղ միջոցներով և անկեղծ խորհրդակցութեան ու բանակցութեան եղանակներով պէտք է լուծուի Արցախի ժողովուրդին դատը մարդկային իրաւանց և ինքնորոշման արդար սկզբունքներու հիման վրայ:

* * *

Մեր խօսքի աւարտին պարտք կը զգանք մեր խոր շնորհակալութիւնները և գնահատանքը յայտնել քրիստոնէական քոյր Եկեղեցիներու և միջեկեղեցական կազմակերպութիւններու պետերուն և ներկայացուցիչներուն, որոնք Մեր Գահակալութեան արարողութիւնը հարստացուցին իրենց ներկայութեամբը, աղօթքներովը, և գրաւոր թէ բանաւոր բարեմաղթութիւններովը:

Մեր գնահատանքի խօսքը բոլոր պետութիւններու ներկայացուցիչներուն և դիւանագէտներուն, որոնք իրենց ներկայութեամբը պատուեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և մեր հայրենի պետութիւնը:

Ջերմօրէն կ'ողջունենք մեր Ս. Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռները՝

— Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որուն Միաբանութեան անդամը եղած ենք Մեր ձեռնադրութեան օրէն մինչև այսօր և Մեր ամբողջական մասնակցութիւնը բերած անոր հոգևոր և ազգային սպասաւորութեանը:

— Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռը իր Գահակալով և գինուորեալ Միաբանութեամբ և պատմական առաքելութեամբ:

— Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւնը իր Գահակալով, հոգևորական դասով և հաւատացեալ ժողովուրդով:

Մեր Հայրական սիրոյ ողջոյնները մեր Մայր Աթոռի Միաբան բոլոր եպիսկոպոսներուն, Թեմերու Առաջնորդներուն, հոգևորական դասուն՝ վարդապետաց և քահանայից և սարկաւագաց, Թեմական Ազգային Ժողովականներուն և համայն հաւատացեալ ժողովրդեան, ի մայր հայրենիք և ի սփիւռս աշխարհի:

Սիրոյ, շնորհակալութեան և գնահատանքի Մեր խօսքը կ'ուղղենք մեր Հայրենի Հանրապետութեան Վսեմաշուք Նախագահին՝ Մեծ. Լեւոն Տէր-Պետրոսեանին և պետական ատենապետին, խորհրդարանին, կառավարութեանը, նախարարական կազմին և պետական ամբողջ համակարգին: Բարձրօրէն կը գնահատենք իրենց սէրն ու յարգանքը հանդէպ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ:

Թող Աստուծոյ ամենատես Աչքն ու ամենազօր Աջը հովանի և պահապան ըլլան մեր համայն հայ հաւատացեալ ժողովրդեան վրայ ի Մայր Հայրենիք և յարտասահման:

«Տէր հովուեացէ զիս և ինձ ոչ պակասեացի»:

Աղօթեցէք որ Աստուած հովուէ Զիս, որպէսզի ես ալ կարենամ հովուել ձեզ **«ի վայրի դալարուջ և առ ջուրս հանգստեան»** վասն փառացն Աստուծոյ, վասն խաղաղութեան և բարօրութեան աշխարհի, վասն պայծառութեան Ս. Եկեղեցւոյս և վասն շինութեան և բարեկարգութեան ազգիս հայոց. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
9 Ապրիլ 1995



Վեհափառ Հայրապետին ընդունելության է Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի նախագահության անդամ Նիա Սոթիանին



Վեհափառ Հայրապետին շնորհավորում է ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը



Վեհարանի գահասրահում նորընտիր Վեհափառին շնորհավորում են
ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն ու ՀՀ Գեղ-ի նախագահ Ը. Աղաբեկյանը



Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Ն. Ս. Ամբա Շընուդա Գ.-ը
իր խոսքն արտասանելիս

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՏՐՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՄԱՐՋԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, մեծարգո հյուրեր, այսօր հիրավի պատմական օր է Անկախ Հայոց Պետության և ողջ հայ ժողովրդի համար, որովհետև Գարեգին Առաջին Վեհափառ Հայրապետի ընտրությունը, ես կարծում եմ, խորհրդանշական ընտրություն է, համազգային ընտրություն, Աստվածային ընտրություն: Այսօր տոն է, ազգային ցնծություն, և ես ուզում եմ մեր ողջ ժողովրդի անունից, Վեհափառ Տեր, Ձեզ ցանկանալ երկար, բեղմնավոր, եկեղեցաշեն ու ազգանվեր գործունեություն, Ձեզ մաղթել քաջառողջություն, արևշատություն: Այս գեղեցիկ առիթով ես ունեմ կատարելու մի չափազանց հաճելի պարտականություն, Ձեզ, Վեհափառ Տեր, շնորհելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և հանձնելու Հայաստանի Հանրապետության անձնագիրը: Եվս մեկ պարտականություն. ես ուզում եմ մեր ժողովրդի անունից խորին շնորհակալություն հայտնել նաև Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկյանին, որը յոթ ամիս գլխավորեց մեր Եկեղեցին, կազմակերպեց Ազգային-Եկեղեցական ժողովը և հասցրեց ահա այսպիսի Աստվածային ընտրության: Նույն առիթով Պատրիարք Սրբազանին շնորհվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կարգավիճակ:

ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ Ն. Ս. ՇՆՈՒԴԱ Գ-Ի ԽՈՍՔԸ

Որպես Ղպտի Եկեղեցու Կաթողիկոս և Պապ, ես ի սրտե շնորհավորում եմ Ձորընտիր Կաթողիկոս Գարեգին Առաջինին, ում գահակալությանը ներկա եղանք այս օրերին և համատեղ աղոթեցինք: Կաթողիկոս Գարեգին Սարգսյանը ձվիրված հոգևորական է: Ես նրա հետ առաջին ան-

գամ ծանոթացա, երբ ինքը ղեկավարում էր Միջին Արևելքի Աստվածաբանական վարժարանները: Ես նրան ճանաչեցի նաև որպես Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Խորհրդի նախագահներից մեկը: Նա գիտական կարողություններով օժտված անձ է և լավ ղեկավար: Այս բացառիկ առիթով ես նրան ողջունում եմ գալազան:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն, հոգևոր հայրեր և շատ պատվական հայ ժողովուրդ. ինձ համար բացառիկ ուրախություն է այս պահին յուրահատուկ առիթով ներկա գտնվել ձեր կողքին: Սուրբ Երրորդության անունը՝ Հայր Աստված, Որդի Սուրբ Աստված և Հոգի Սուրբ Աստված, թող փառավորյալ լինի այս փառավոր առիթով: Մաղթելով Ամենայն Հայոց ընդհանուր Կաթողիկոսին քաջառողջություն, անսասան հովվություն և անպսակ սեր առ հարազատ ժողովուրդը՝ ես Նորին Սուրբ Օծությանը ողջույնի եմ գալազան:

ԵԹՈՎՊԻԱՅԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԱԲՈՒՆԱ ՊԱՈՒԼՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոս,
Ազգային-Եկեղեցական ժողովի հարգարժան անդամներ,
Թանկագին եղբայրներ,

Ուրախության խոր զգացումով է, որ շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը, իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ձեր գահակալության առթիվ, ինչպես նաև մեր հայկական քույր Եկեղեցուն: Ես երջանիկ եմ բերելու Ձեզ ջերմագին, եղբայրական ողջույններ համայն Եթովպիայի 40 միլիոն ժողովրդի և մեր պատմական Թեոսահեդո Ուղղափառ Եկեղեցու անունից: Մենք անչափ ուրախ ենք, որ գտնվում ենք Հայաստանում, մի երկիր՝ հին քաղաքակրթությամբ և հպարտ ժողովրդով, որտեղ Նոյան տապանը 7-րդ ամսին, 17-րդ օրը, նստեց Արարատ լեռան վրա (Ծննդոց Թ 4):

Այս պատմական և փառաշուք առիթով ես մեծ ուրախությամբ ուզում եմ կանգ առնել այն բարեկամության և եղբայրական կապի վրա, որ գոյություն է ունեցել մեր երկու քույր Եկեղեցիների միջև տարբեր դարերում: Այդ բարեկամությունը եղել է ոչ միայն կրոնական գետնի վրա: Պատմական փաստերը վկայում են, որ շատ հայեր ապրել ու աշխատել են Եթովպիայում՝ վայելելով մեր ժողովրդի սերն ու հարգանքը դեռևս 150 տարի առաջ, երբ գահակալում էր Մենելիք Բ կայսրը: Հակառակ որոշ կրոնական հալածանքներին, հայերն ազատորեն մասնակցել են մեր երկրի հասարակական գործերին և ներգրավվել արվեստի և առևտրի մեջ: Նրանք նկատելի ներդրում են կատարել երկրի գեղարվեստական և տնտեսական գործերում՝ ոմանք նույնիսկ անձնական բարձր մակարդակով: Հայերի և եթովպացիների միջև եղած բարեկամությունն այնքան սերտ ու մտերմիկ է եղել, որ փոխադարձ սեր և հարգանք է զարգացել նրանց միջև:

Ձերդ Սրբություն, քանի որ Ձեզ է վստահվել այս սրբազան և բարձր դիրքն այսօր, մենք զգում ենք, որ ծանր պատասխանատվություն է ընկնում Ձեզ վրա: Մենք այն համոզումն ունենք, սակայն, որ Դուք Ձեր կա-



Հնդիկ Մալաբար Ուղղափառ Եկեղեցու Կաթողիկոս Ն. Ս. Մոռան Մար Բասիլիոս
Մար Թոմա Բ-ն իր խոսքն արտասանելիս



Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Ն. Ս. Աբունա Պաուլոսը իր խոսքն արտասանելիս

րողությամբ և իմաստությամբ, Ձեր հեռատեսությամբ, ոգևորությամբ և խելամտությամբ հաջողության կհասնեք: Մենք աղոթում ենք մեր Փրկիչ և Տեր Հիսուս Քրիստոսին, որ Ձեզ ուժ ու տոկունություն տա և իր անսահման իմաստությամբ առաջնորդի Ձեզ՝ ի կատար ածելու Ձեր սուրբ պարտականությունները: Այս դեպքում ես կուզենայի վստահեցնել Ձեզ, որ մենք կանգնած ենք Ձեր կողքին և պատրաստ ենք համագործակցել Հայ Եկեղեցու հետ մեր ընդհանուր նպատակների իրականացման համար՝ առաջ մղելով մեր ուղղափառ առաքելությունը և ներմանելով Տիրոջ խոսքը: Այսպես վարվելով, կարծում եմ, հարմար և վայելուչ կլինի, որ մենք հետևենք մեր Եկեղեցու սուրբ հայրերի անձնական օրինակին: Նրանք, իսկապես, ցուցաբերեցին անխախտ հավատարմություն դեպի հավատը, առաքինություն և նկարագրի ամրություն: Մենք մեր ամբողջ կորովով և գործերով ջանք պիտի թափենք հանուն խաղաղության: Եկեղեցին ինքը պիտի լինի խաղաղության պատվար: Խաղաղությունը պետք է իշխի քույր Եկեղեցիների միջև: Եկեղեցիների պետերը առաջնահերթ պարտականություն ունեն փոխադարձ հասկացողություն, համաձայնություն և խաղաղություն հաստատելու Եկեղեցիների միջև: Մենք մեծ ցավով և անձկությամբ ենք նշում, որ Քրիստոսի թշնամիները բազմաթիվ են և աղմկարար: Նրանք հարձակվում են քրիստոնեության, մարդասիրական իդեալների, արժեքների և քաղաքակրթության վրա, որոնք մեծ դժվարությամբ ստեղծվել են 2000 տարիների ընթացքում:

Որպեսզի այսօր Եկեղեցիներն ու նրանց առաջնորդները հասնեն համագործակցության և ցանկալի միության, կարիք ունեն խորհրդակցության և երկխոսությունների վերակենդանացման, ինչպիսին տեղի ունեցավ 1960 թ. ոչ-քաղկեդոնական Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև: Ես կարծում եմ, որ մենք, իբրև Եկեղեցու պետեր, չպետք է գայթակղվենք իշխելասիրությամբ և մրցակցությամբ, չպետք է հրապուրվենք գոռոզամտության անպատշաճ զգացումներով: Ընդհակառակը, մեզ պետք է առաջնորդեն համեստություն ու համերաշխության ոգին:

Ճշմարիտ հարգանքն ու հոգատարությունը միմյանց նկատմամբ, ներկապակցվածությունը ու ուժը պիտի օգնեն մեզ՝ զորացնելու միությունը Եկեղեցիների միջև: Ոգեշնչված ավետարանական խոսքերով, որ «Ատված սեր է... եթե Ատված այնքան սիրեց մեզ, մենք նույնպես պարտավոր ենք սիրել միմյանց» (Ա Հովհ. Դ 8—11):

Եվ, վերջապես, ես ցանկանում եմ մի անգամ ևս հայտնել մեր ուրախությունը նոր Հայաստանի անկախության առթիվ, Հայ Եկեղեցու համերաշխության առթիվ և Մեր եղբայր Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա-ի գահակալության առթիվ:

Հայ Եկեղեցու Ծայրագույն Պատրիարքին և Ամենայն Հայոց Կաթողիկոսին մաղթում եմ մեծագույն հաջողություններ, քաջառողջություն և երջանկություն:

Թող մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսը օրհնի այս ազգին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությանը, և Սուրբ Հոգու շնորհը մնա բոլորիս հետ, ամեն:

ԿՈՒՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ՕՐԹՈԴՈՔՍ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԴԱՄԱՍԿԻՆՈՍԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն, իբրև ներկայացուցիչ Տիեզերական Պատրիարք Բարդողիմեոսի և իր Աթոռի ու Սուրբ Սինոդի, հուզումով ու յուրահատուկ հրճվանքով եմ մասնակցում Հայ Եկեղեցու Հովվապետի գահակալության շքեղ արարողություններին, որով Եկեղեցու հիմնադիրն ու տերն իր առաջնորդներով լուսավորում է Հայ Եկեղեցին և աշխարհով մեկ սփռված հայ ազգը, քանզի այսպիսի քահանայապետ էր մեզ պետք, նմանօրինակ Քրիստոսի, թրծված իր ժողովրդի պայքարում, վկայված Քրիստոսի Ավետարանի ծառայության մեջ: Նորին Սրբությունը, ուղղափառության մեծ հայրերին հաղորդակից լինելով և ժամանակակից աշխարհում ուղղափառ հավատքի վկայության պայքարով, ցույց է տվել իր փայլուն դեմքն իբրև օրինակ աստվածաբան Հայրապետի, որ միացնում է Աստվածաբանությունը զոհասեղանին՝ Եկեղեցու մարմնի շինության համար: Կոստանդնուպոլսի Մայր Եկեղեցին գնահատում է Հայ Եկեղեցու եպիսկոպոսական դասի ոգեկան հաղթանակը և առաքելական ծառայության շարունակականությունը: Հայ Եկեղեցին դարեր շարունակ մասնակից եղավ աշխարհում ուղղափառության վկայության ընդհանուր պայքարին: Մեր երկրում օրթոդոքս և ուղղափառ Եկեղեցիների միջև պաշտոնական աստվածաբանական երկխոսության հարուստ պտուղները ցույց տվեցին մեր ընդհանուր հաստատակամությունը հավատքի առաքելական ուղղափառության հանդեպ և առաջնորդում են մեզ դեպի ընդհանուր բաժակ, ուր և մեր ուրախությունը կատարյալ կլինի: Ձերդ Սրբություն, շուրջ երեսուն տարի հետևում եմ Ձեր փայլուն աստվածաբանական վաստակին և Ձեր եկեղեցական ծառայության շրջահայեցությանն իբրև ուղղափառ և համանախագահ մեր Եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսության խառն հանձնաժողովի, անհրաժեշտություն եմ զգում գոհունակություն հայտնել Ձեր անձնական նպաստի համար այդ գործում, Ձեր աստվածաբանական հաստատակամությանը, որի շնորհիվ մեր բարի գործերի միջոցով փառաբանվում է Սուրբ Երրորդությունը և սպասարկվում ժամանակակից մարդը: Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու այս պատմական և բարձրագույն Աթոռից շարունակ դեպի մոտիկներ և հեռուներ պիտի ճառագայթի հոգեկան ուժը ուղղափառ հավատքի, որպեսզի հովվեք Ձեր բարեպաշտ ժողովրդին և վկայեք ուղղափառությունն աշխարհում:

Նորին Սրբություն Տ. Տ. Բարդողիմեոսը իմ միջոցով մատուցում է Ձերդ Սրբությանը հովվապետական ծառայության և իշխանության խորհրդանիշները՝ պանակեն և հայրապետական գավազանը, և մաղթում երկար հովվապետություն: Երկար տարիներ Ձեզ, Վեհափառ Հայրապետ:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՍԻԴԻի ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն, ինձ համար մեծ և բացառիկ պատիվ է ներկայացնել Սրբազան Պապին Ձեր գահակալության այսօրը: Ես Ձեզ եմ փոխանցում Նորին Սրբազնության բարեմաղթանքները: Մենք շատ մխի-



Վեհափառ Հայրապետին ընդունելության է տիեզերական պատրիարքության ներկայացուցիչ միտրոպոլիտ Դամասկինոսը



Վեհափառ Հայրապետին ընդունելության է Ասորի Ուղղափառ Եկեղեցու արքեպիսկոպոս Աբանասիոսը



Վեհափառ Հայրապետին ընդունելության է հրավիրում Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ կարդինալ Կասիդին



Վեհափառ Հայրապետին ծնորհավորում է Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ եպիսկոպոս Ջոն Դենիսը



Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Ֆիլարետը



Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Հունաստանի Ուղղափառ Եկեղեցու միտրոպոլիտ Խրիսուստոմուսը



Վեհափառ Հայրապետին օծնորհավորում է Վրաց Ուղղափառ Եկեղեցու
ներկայացուցիչ Դանիել արքեպիսկոպոսը



Վեհափառ Հայրապետին օծնորհավորում է Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Նիֆոն եպիսկոպոսը

թարված ենք զգում Ձեր գահակալությամբ և Ձեր ընտրությամբ, որովհետև անցյալում մենք համատեղ գործակցել ենք եկեղեցական զանազան մակարդակներում: Նորին Սուրբ Օծություն, Դուք պիտի առաջնորդեք Հայաստանյայց Եկեղեցին աշխարհի չորս ծագերում: Մենք աշխարհի զանազան քաղաքներում կողք-կողքի ունենք Կաթոլիկ և Հայաստանյայց Եկեղեցիներ: Միասին համագործակցել ենք և պետք է շարունակենք միմյանց օգտակար լինել՝ որպես վկաներ և առաքյալներ Քրիստոսի Սուրբ Ավետարանի: Նորին Սուրբ Օծություն, վստահեցնում ենք, որ Կաթոլիկ Եկեղեցին այսուհետ ևս համագործակցելու է ձեզ հետ՝ հաստատելու համար քրիստոնյա Եկեղեցու միությունը: Մենք աղոթում ենք, որպեսզի Ամենակալն Աստված Ձեզ և Ձեր բոլոր հոգևորականներին շնորհի Իր օրհնությունները, ևս Ձեզ ենք փոխանցում Նորին Սրբազնություն Պապի գերագույն աղոթքներն ու մտահոգությունները, ինչպես ևս գործակցությունը ձեզ և Ձեզ հետ: Ես Ձեզ արդեն փոխանցեցի Նորին Սրբազնության գրավոր պատգամը (Կարդինալ Կասիդին, ի գիտություն ընթերցողների, Պապի գրավոր ևամակը հանձնեց Վեհափառին և ևս մի խաչ ևվիրել էր ևախորդ օրը Վեհափառի գրասենյակում (Տես աստ. Էջ 95):

ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԱԼԵՔՍԵՅ Բ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԻՆՍԿԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ՓԻԼԱՐԵՏԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն, թույլ տվեք փոխանցել Ձեզ Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսեյ Երկրորդի ողջույնի խոսքերը: Այս ուղերձով հղում եմ Ձեզ ջերմ սիրո և եղբայրության խոսքեր, որ Հայ Եկեղեցու հանդեպ տածում է Ռուս Ուղղափառ Եկեղեցին: Ինչպես Ձեր Նախորդի՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին Կաթողիկոսի ժամանակ, այնպես էլ Ձեր գահակալության շրջանին ռուս Եկեղեցին հավատում է, որ մենք քույր Եկեղեցիներ ենք, և մեր բարեկամությունը պիտի թևածի Արարատի կատարներում: Ռուս Եկեղեցին և նրա Պատրիարքը սպասում են Ձեր այցելությանը Ուղղափառ Եկեղեցի: Ընդունեցեք այս պաճականն և խաչը, որոնք կզարդարեն Ձեր կաթողիկոսական կուրծքը: Երկար-երկար տարիներ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Թույլ տվեք փոխանցել Ձեզ Համայն Վրաստանի Պատրիարք և Կաթողիկոս Իլիա Երկրորդի շնորհավորանքները: Ձերդ Սուրբ Օծություն, ի Քրիստոս եղբայր, սրտի անհուն ուրախությամբ իմացանք Ձեր ընտրության մասին որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք: Խոսելով մեր երկու Եկեղեցիների փոխհարաբերության մասին, ուզում եմ ասել, որ մեր նախորդները շատ լուսավոր էջեր են գրել մեր երկու Եկեղեցիների և ժողովուրդների միջև: Հանուն վրաց ժողովրդի, հանուն Վրաց Ուղղափառ Եկեղեցու, Ձերդ Սուրբ Օծություն, ի սրտե շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր գահակալության տոնի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ երկար տարիների կյանք, բարեհաջող աշխատանքներ և հայ ժողովրդին՝ բարգավաճում: Եղբայրական սիրով ի Քրիստոս Իլիա Երկրորդ Կաթողի-

կոս Համայն Վրաստանի: Ձերդ Սուրբ Օծություն, խնդրում եմ ընդունեք այս նվերը Համայն Վրաց Կաթողիկոս Իլիա Երկրորդից: Վրացական Կառավարության անունից Ձեզ սրբանկար կհանձնի Վրաց խորհրդարանի խոսնակ պարոն Վախթանգ Գոգուաձեն:

ՎԱԽԹԱՆԳ ԳՈԳՈՒԱՁԵ

Թույլ տվեք, հանուն վրաց կառավարության, Էդուարդ Շևարդնաձեի և խորհրդարանի անունից Ձեզ նվիրել այս սրբանկարը՝ ցանկանալով Ձեզ հաջողություն և մեր ժողովուրդներին՝ հաղթանակ:

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՆԻԱ ՍՈՒՀԱՆԻԻ ԽՈՍՔԸ

Ես, որպես Իրանի Իսլամական Հանրապետության ներկայացուցիչ, Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարության, կառավարության և Իրանի ժողովրդի կողմից իմ արտագին շնորհավորանքներն եմ ուղղում հայ ժողովրդին, Հայաստանի Պետությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինին Վեհափառի ընտրության առթիվ: Շատ ուրախ եմ, որ հաջողվեց մեզ ներկա գտնվել այսօրվա այսքան հոգեպարար և տպավորիչ կրոնական արարողություններին, մասնավորաբար այսօրվա արարողությունները, որոնք խիստ տպավորիչ և հոգեպարար էին: Իրանի Իսլամական Հանրապետությունը միշտ նայում է Հայաստանի Հանրապետությանը որպես բարեկամի և լավ հարևան երկրի: Դա արտացոլվում է Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարության և պատասխանատուների բոլոր արտահայտություններում, ովքեր ցանկանում և բարեմաղթում են, որ Հայաստանի Հանրապետությունը բարգավաճի ու զարգանա օրավուր: Մենք երբեք չենք զլացել որևէ համագործակցության ծրագրեր կազմել այս ասպարեզներում: Իրանի Իսլամական Հանրապետությունը միշտ նկատի է առնում այն կարևոր կետը, որ Աստվածային կրոնների մեջ եղած կամրջող և իրար միացնող գաղափարներն ու տեսակետները շատ ավելին են, քան կրոնն իրարից զատող և զանազանող դրվածքները և տեսակետները: Հետևաբար այն կարծիքին է, թե պետք է քայլեր կատարել աստվածային մեծ կրոններին հետևող ժողովուրդների միության համար: Մեր երկրում Ձեր կրոնակից հայ հայրենակիցներն իրենց մուսուլման եղբայրների կողքին ապրում են երջանիկ և բարվոք կյանքով, մասնակցում երկրի նվաճումներին, օգտվում բոլոր իրավունքներից: Իրանահայությունը իր կարևոր և ազդեցիկ դերն է ունեցել Իրանի իսլամական հեղափոխության հաջողության գործում: Հետագա տարիներին ևս իր դերը միշտ դրական և փայլուն է եղել բոլոր ասպարեզներում: Ես տեղին եմ համարում կրկին անգամ, նաև իրանահայության կողմից, հատուկ շնորհավորանքներ հղել Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Վեհափառի ընտրության առթիվ և շնորհավորել նրան որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Իհարկե, գրավոր պատգամով մեր երկրի Իսլամական Հանրապետության հարգարժան նախագահի շնորհավորանքի պատգամը կտրվի Վեհափառին: Շնորհակալություն:



Վեհափառ Հայրապետին օծորհավորում է Վրաստանի խորհրդարանի նախագահ Վախթանգ Գոգուաձեն



Վեհափառ Հայրապետին շնորհավորում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության անունից Խաչիկ Դաւիկեանը

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԹԵՈԿՏԻՍՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆԻՖՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու կողմից շնորհավորում եմ Նորին Սուրբ Օծությանը և այդ առթիվ ընվիրում մի արբապատկեր, ուր պատկերված են կոստանդինն ու իր ևահատակված զավակները:

ԱՆՏԻՈՔԻ ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՔԱ Ա ԻՎԱՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱԹԱՆԱՍԻՈՍ ԵՓՐԵՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոս, Հայաստանի Հանրապետության ևախագահ մեծարգո Լևոն Տեր-Պետրոսյան, գերաշնորհ սրբազան հայրեր և հարգելի հյուրեր ու ներկաներ, ևախ և առաջ փոխանցում եմ Ձեզ Նորին Սրբություն Տ. Տ. Իգնատիոս Զաքա Երկրորդ Կաթողիկոսի բարեմաղթանքներն ու ողջույնները: Անտիոքի, Մերձավոր Արևելքի, Սիրիայի Եկեղեցու Հոգևոր Գերագույն խորհրդի և համայն Սիրիայի ժողովրդի անունով, բոլորս աղոթելով Աստծուն, ցանկանում ենք ևորընտիր Կաթողիկոսին հաջողություն իր հոգեվոր առաքելության մեջ, խնդրում ենք Հիսուս Քրիստոսից, որ իր կոնքերը լցնի աստվածային շնորհներով, ինչպես ևան ևույն հավատքով ու դավանությամբ միմյանց կապված մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ և քույր Եկեղեցուն և համայն ժողովրդին, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, կմաղթենք հառաջադիմություն բոլոր մակարդակների վրա: Մի զարմացեք, սիրելի ներկաներ, որ Սիրիայի մի եպիսկոպոս ձեր գեղեցիկ լեզվով խոսում է ձեզ հետ, որովհետև մորս մեծ հայրը հայ է եղել, և մայրս, որ այսօր իննսուն տարեկան է, միշտ հետս հայերեն է խոսում: Առավել հավատքի միության մեջ միացնում է հողը և ազգականությունը, որովհետև միասին ապրեցինք և միասին չարչարվեցինք: Ահավասիկ ձեզ հետ հայերեն եմ խոսում, բայց Սիրիայի գրերով, ևույն գրերը, որ ձեր ևախահայրերը գործածեցին մոտավորապես 400 տարի, մինչև որ Սուրբ Հայրերը՝ Մեսրոպ և Դանիել, արարեցին Այբբենգիմը, որ հիմա գործածում ենք: Վերջացնելով մեր խոսքը, կմաղթեմ ձեր բոլորին հաջողություն, հառաջադիմություն և Աստուծո օրհնությունը և ևորընտիր Կաթողիկոսի մաղթանքները, աղոթքները և խնդրանքները մեր բոլորի հետ լինեն. ամեն:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. ԳԵՐԾ. ՍԵՐԱՖԻՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԽՐԻՍՏՈՒՍՏՈՄՈՒՍԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն, Հունաստանի արքեպիսկոպոս Սերաֆիմը և Հունաստանի Սուրբ Սինոդը սիրով ընդունեց Ձեր հրավերը՝ մասնակցելու Հայ Եկեղեցու Կաթողիկոսի գահակալությանը: Սա ոչ միայն պաշտոնական, այլև սրտագին ներկայություն է, սա Հունաստանի հոգևորականության իրական մասնակցություն է այս պատմական պահին Հայ Եկեղեցու համար: Մեր Եկեղեցու ներկայությունն այստեղ իրական է, որովհետև մեկ

անգամ ևս հաստատվում է երկու Եկեղեցիների միատեղ և համատեղ հավատքի առկայությունը: Մեր երկու Եկեղեցիները, բաժանումից հետո, ունեցան իրենց ճանապարհները, սակայն նրանք միշտ փորձեցին միասին վերամիավորվել: Մեր երկու Եկեղեցիների հոգևորականներն ամենուր, ուր որ գտնվել են օտար աշխարհներում, միշտ համագործակցել են միմյանց հետ, որպեսզի կարողանան համատեղ լուծել այն խնդիրները, որոնք առաջացել են օտար երկրների մեջ: Աստվածաբանորեն և պատմականորեն լինելով բաժանված միմյանցից, այդ խնդիրները սակայն չհանգարեցին մեր երկու Եկեղեցիների հոգևորականներին, որպեսզի նրանք կարողանան սիրով ու ջերմությամբ գործակցել միմյանց հետ: Հաստատի Եկեղեցու ներկայությունն այստեղ ոչ թե ձևական է, այլ իրական: Ինչպես գիտեք, մեր երկու Եկեղեցիների հոգևորականների համար ընդհանուր դաշտ են եղել Սինովյան ափերը և երկու Եկեղեցիներն էլ գործել են այնտեղ: Այնտեղ նաև համատեղ արտահայտվել են երկու Եկեղեցիների թե՛ ուրախությունները, թե՛ տխրությունները, որն արտահայտվեց նրանով, որ այդ երկրամասում միասին ապրել են ինչպես հունական, այնպես էլ հայկական Եկեղեցիների զավակները: Ցավով եմ հիշում Մեծ եղեռնը, երբ նահատակվեց հայ ժողովուրդը, մի ժողովուրդ, որի նահատակությանը, սակայն, ոչ մի արձագանք չտրվեց Արևմտյան պետությունների կողմից: 1915 թվականի Մեծ եղեռնը հետագայում եղավ նախօրինակը հունական ցեղասպանության Փոքր Ասիայում: Արևմուտքի այս լռությունը պատճառ դարձավ, որպեսզի վերանա քրիստոնեությունը Փոքր Ասիայում, և այժմ մենք այս երկրամասում գտնվում ենք դժվարին պայմաններում: Այն ընդհանուր ճանապարհը, որ ունեցել են մեր երկու ժողովուրդները և Եկեղեցիները, մեզ պարտավորեցնում է, որպեսզի մենք այսօր կարողանանք միացնել մեր ուժերը՝ երկու Եկեղեցիների և ժողովուրդների համար: Այս իրականությունն ավելի շոշափելի կլինի երկու Եկեղեցիների միացումով, որը կարող է կատարվել շնորհիվ աստվածաբանական երկխոսության, որ կատարվում է վերջին տարիների ընթացքում մեր երկու Եկեղեցիների կողմից: Իբրև վառ օրինակ մեր Եկեղեցիների բարեկամության, Հունաստանի Եկեղեցին մատուցում է Ձեզ պանակե, որն արտահայտություն է Աստվածամոր տանջանքի: Այն ցավը, որ զգաց Քրիստոսի մայրը, շարունակվում է նաև Հայ Եկեղեցում: Հետևաբար պանակեի հետ միասին մատուցում ենք Ձեզ նաև մի խաչ, որը խորհրդանշում է ոչ միայն Քրիստոսի, այլև Հայ Եկեղեցու չարչարանքը հատկապես այսօր, անկախ Հայաստանի վերահաստատմամբ, երբ Եկեղեցու առջև բացվում են նոր հորիզոններ: Հունաստանի Եկեղեցու և հույն ժողովրդի կողմից շնորհավորում ենք Ձեզ և մաղթում երկար տարիներ:

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. ԳԵՐԾ. ՋՈՐՋ ԿԱՐԵՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՋՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԵՆԻՍԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն, ես խոսում եմ հանուն Քենթրբերիի Արքեպիսկոպոսի և Ձեզ եմ բերում իր բարեմաղթանքները: Ձեր և մեր Եկեղեցիները երկար տարիների բարեկամական կապեր ունեն: Մեզանից յուրաքանչյուրի համար Եկեղեցին սեփական ազգն է, ուստի մասնավորաբար շեշտում ենք մեր ժողովրդի հոգևոր կյանքը՝ նրան առաջնորդելով ի Քրիս-



Վեհափառ Հայրապետին ընդունելության ժամանակ է Հայ Կաթոլիկ Եկեղեցու Կաթողիկոս-Պատրիարք Ն. Ս. Հովհաննես-Պետրոս ԺԴ-ն



Վեհափառ Հայրապետին ընդունելության է Հայ Ավետարանական Եկեղեցու վերապատվելի Հովհաննես Գարջյանը

տոս: Մեզանից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ սի սփյուռք: Նորին Սուրբ Օծություն, ինչպես մյուս հոգևորականները, այնպես էլ Դուք Ձեր աստվածաբանական ուսումն ստացել եք Անգլիայում: Մենք Ձեզ ընկատում ենք մեր մտերիմ բարեկամը: Հուսանք, որ Դուք էլ մեզ կնկատեք Ձեր բարեկամը: Մինչ Դուք թե՛ Ձեր և թե՛ Ձեր ազգի կյանքում կբացեք Ձեր եկեղեցու նոր էջը, մենք Ձեզ խոստանում ենք մեր սիրտը, մեր աղոթքը: Հուսանք, որ մի օր, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, կայցելեք Անգլիայի Քենթրբերիի Արքեպիսկոպոսին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ՋԵՐԵՄԱՅԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Եվրոպայի Եկեղեցիների Խորհրդի անունից շնորհավորում ենք Ձերդ Սուրբ Օծությանը, ցանկանում կրկին անգամ հիշեցնել, որ այսօր Ծաղկազարդ է, և Քրիստոս հենց Ծաղկազարդին հաղթականորեն մուտք գործեց Երուսաղեմ: Դուք նույնպես այսօր հաղթականորեն եք սկսում Ձեր առաքելությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուց ներս: Ինչպես Քրիստոս, Դուք էլ շարունակեք ծառայել Հայաստանյայց Եկեղեցուն՝ խաչվեք և սակայն հարություն առեք Քրիստոսով: Ես անձամբ ներկայացնում եմ Եվրոպայի բոլոր Եկեղեցիները՝ լինեն նրանք բողոքական, կաթոլիկ կամ անգլիկան: Հետևաբար նաև Ձեզ եմ փոխանցում նրանց բարեմաղթանքներն ու շնորհավորանքի ջերմ խոսքերը:

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ Ն. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն Գարեգին Առաջին Վեհափառ Կաթողիկոս Ամենայն Հայոց, հոգևոր եղբայրներ, ազգային պատգամավորներ, հարգելի հյուրեր և բարեկամներ, յոթ ամիս առաջ քայլերս ուղղեցի դեպի Սուրբ Էջմիածին՝ մեր թանկագին բարեկամի անշնչացած մարմինը հողին հանձնելու, մասնակցելու երջանկահիշատակ Վազգեն Առաջինի հուղարկավորությանը, մի Հայրապետ, որ շուրջ քառասուն տարի դժվարագույն պայմաններում կարողացավ հովվել իր ժողովրդին՝ հարազատ ազգի կողմից անմահ անուն ժառանգելով: Յոթ ամիս հետո քայլերս անհա դարձյալ ուղղում եմ դեպի Սուրբ Էջմիածին, բայց այս անգամ խնդակցելու վաղեմի բարեկամիս հետ, մասնակցելու Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության հանդիսավոր արարողություններին՝ իմ եպիսկոպոսների, կղերի և հայ կաթողիկե հավատացքի անունից: Ձեր այս բարձրացումը, Վեհափառ Տեր, ստիպում է երկու ծանր հանձնարարությունների տակ դնել Ձեզ, որոնք կամենում եմ արտահայտել երկու մաղթանքի ձևով. առաջին մաղթանք՝ Ձեր կաթողիկոսության շրջանին Հայոց Եկեղեցին թող դարմանի իր սպիները, Հայոց Եկեղեցին վերականգնի իր միությունը, լինի մի՝ իշխանությամբ, մի՝ հոգիների արտակցությամբ, ինչպես որ մի է դավանանքով: Երկրորդ մաղթանք՝ Աստված, որ Իր անքննին խորհրդով Ձեզ Սիյուռքի հայերից ընտրելով, բազմեցրեց Էջմիածնի Սուրբ Աթոռին, կամեցավ Ձեզ դարձնել հոգևոր

կամուրջ հայրենիքի և Սփյուռքի մարդկանց միջև: Եղեք միասնականության պայծառ ծիածանը, որպեսզի միմյանց կամարեք հայության զույգ թևերը, որոնք մրրկավ էին բաժանված: Վեհափառ Տեր, անցյալի դժվար հոլովույթների պատճառով ամեն կաթողիկոս թե՛ հայրապետություն էր և թե՛ պետություն հայ ազգի համար: Հայաստանի ներկա անկախացումով և հայկենի պետության հրաշափառ վերականգնումով Դուք պիտի կարողանաք Ձեր ուսերից վար առնել պետության և Ձեր ակամա պաշտոնը ու լի ու լի ստանձնել հայրապետական առաքելությունը՝ հարազատ ժողովրդի հոգում վերակենդանացնելու համար մեր հայրերի սուրբ հավատքը, որի կարիքն այնքան զգում է նա: Վեհափառ Տեր, Ձեր հայրապետության է վիճակվելու 2001 թվականին տոնախմբել հայոց դարձի 1700-ամյակը: Այս անկրկնելի ու վսեմաշուք տարեդարձն արժանավորապես տոնելը ինչպիսի՛ պատիվ, միանգամայն ի՛նչ դժվարին հանձնառություն է Ձեր կողմից, քանզի Ձեզ են ուղղված լինելու աշխարհի միլիոնավոր մարդկանց աչքերը: Կարիքը պիտի ունենանք թե՛ Աստուծո, թե՛ ազգի և Հայաստանյայց Եկեղեցու ամբողջական աջակցության: Ընդունեցեք նաև մեր համեստ մասնակցությունն այս ընդհանուր համաշարժին: Ձեր գահակալության սրբազան առիթով մի անգամ ևս նորոգում ենք մեր տրամադրելիությունը՝ գործակցելու Ձեզ հետ, ինչպես որ ուխտել ենք պահպանել մեր հայրերի պետության անքակտելի համատեղությունը բոլոր ժամանակներում և ամենուր: Վեհափառ Տեր, անցյալ օրը, սիրալիր տեսակցության ընթացքում, մեր համեստ ձվերը՝ մատանին, արդեն ընծայեցիք Ձեզ:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ԿՂԱՌՈՒՍ ՇՎԱՐՑԻ ԽՈՍՔԸ

Նորին Սուրբ Օծություն, ես Ձեզ բերել եմ Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու օրհնություններն ու շնորհավորանքները: Գերմանիայում մենք քաջատեղյակ ենք Ձեր ժողովրդի դժվարին ու ծանր պայմաններին: Միայն Հովհաննես Լեփսիուսը չէր, Ֆրանց Վերֆել ևս մեզ ներկայացրեց Ձեր ժողովրդի ապրելակերպի դժվար պայմանները: Ունենալով այդ գիտակցությունը, բողոքեցինք նաև այսօրվա թրքական կառավարության մոտ՝ նկատի ունենալով, որ թրքահայ պատգամավորները չկարողացան ներկա գտնվել այս կարևոր և շատ մեծ ժողովին՝ չբերելով իրենց մասնակցությունը: Մենք գիտենք Ձեր ժողովրդի բոլոր տանջանքները, ծանոթ ենք այդ ժողովրդին, բայց անհրաժեշտ է նայել նաև ապագային: Եկեք միասին նայենք դեպի հայ ժողովրդի ապագային և բարեկարգությանը: Մեր ցանկությունն է Ձեզ օգնել այս բարեկարգության պահին: Մեր ամենամեծ ցանկությունն է շարունակել 1988 թվականի երկրաշարժից հետո կատարած օգնությունը: Մենք ցանկանում ենք ոչ միայն նյութապես օգնել, այլև գիտությամբ: Երկու շաբաթ առաջ արդեն երեք ուսանող Մայր Աթոռից մեկնեցին Գերմանիա՝ Աստվածաբանական ուսում ստանալու համար: Մենք ցանկանում ենք, որ այս կապերն է՛լ ավելի զորանան, և Դուք Գերմանիա ուսանելու ուղարկեք նաև ճեմարանի ուրիշ սաներ, ովքեր մեզ մոտ Աստվածաբանական գիտություն կստանան և կվերադառնան Մայր Աթոռ: Մենք ցանկանում ենք, որ Սուրբ Հոգու օրհնությունները լինեն Ձեր մշտական ուղեկիցներն այսօրվա դժվարին ճանապարհներում: Աստված թող օգնի



Վեհափառ Հայրապետին ընդունելության է Գերմանական Ավետարանական Եկեղեցու անունից Գրաուս Շվարցը



Վեհափառ Հայրապետին ընդունելության է ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ դոկտ. Վեզլի Արիառաժան

Ձեր առաքելությանը: Մենք աղոթում ենք Ձեր և Ձեր ժողովրդի բարօրության համար:

ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՐՋՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Ինձ համար մեծ պատիվ եմ ընկատում մեր համայնքի և Եկեղեցիների բարեմաղթությունները փոխանցել Ձեզ՝ այս նոր դաշտում ղեկավարությունն ստանձնելու առիթով: Մեր ճամփաները զուգահեռաբար են ընթացել: Տարիների ընթացքում մենք միասին ենք քայլել եկեղեցական, կրթական, ազգային ձեռնարկների մեջ և տարբեր մակարդակներով: Մեզ համար պատիվ է եղել Ձեզ հետ համագործակցելը, Ձեր հովանավորությունն ու աջակցությունը վայելելը: Հիմա այս առիթով եք սկսում Ձեր գործակցությունը հայրենի հողի վրա, ուր Ձեր ծառայությունը պիտի մատուցեք համայն հայությանը: Հուսով ենք, որ դարձյալ մեր Եկեղեցիները ինչպես Սիյուրքում, այնպես էլ այստեղ՝ հայրենիքում, միասին պիտի քայլեն, հետևաբար Ձեզ կմաղթեմ զորություն, իմաստություն, Աստուծո շնորհքը և բարի երթ, Վեհափառ Տեր:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՄԵԹՐ ՊԱՊԻԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, հանուն Կիլիկիո Սուրբ Աթոռի, անոր կենտրոնական վարչության և զանազան մարմիններուն, թույլ տվեք, որ հայտնենք մեր ուրախությունը, մեր սիրտերու ցնծությունը Ձեր այս նոր ասպարեզի, Հայաստանի ժողովուրդի և Հայաստանյայց Եկեղեցվո այս նոր հանգրվանի համար: Վեհափառ Տեր, մենք այդ երջանիկ մարդիկն ենք, որ 14 տարի տևական օր մը, այո, օր մը վերջ, ոչ գիշեր կամ ցերեկ, վայելեցինք Ձեր հոգածությունը, վայելեցինք Ձեր ներկայությունը և այսօր ուրախ ենք և քիչ մըն ալ տխուր, որ կբաժնվինք, բայց կընծայենք Ձեր անբիծ կենցաղը, Ձեր ոգու անհուն առաքինությունները, կընծայենք, որ մատաղ ըլլան Հայաստանի և Հայաստանյայց Սուրբ Եկեղեցիին: Վեհափառ Տեր, Դուք շատ բան լսեցիք, մենք միայն պիտի մաղթենք, որ Էջմիածնի Սուրբ Աթոռը Ձեր օրոք տեսնե նորանոր նվաճումներ, նոր Հայաստանի նվիրյալ ժողովուրդը վերստին գտնե այն բոլոր արժանիքները, որ կուգան քրիստոնեական հավատքեն: Մենք վստահ ենք, Վեհափառ Տեր, որ Ձեր ներկայությամբ նաև ձեռք-ձեռքի տված մեր Հայաստան ազատ, անկախ Հանրապետության և անոր նախագահին, անոր կառավարության անդամներուն և ընդհանրապես մեր հայ ժողովուրդին ձեռք-ձեռքի տված Դուք նոր ոսկե էջ պիտի բանաք մեր Եկեղեցվո, մեր ազգին, որպեսզի մնանք մեկ ժողովուրդ, մեկ ազգ և մեկ հայրենիք Ձեր և բոլորի հոգածությամբ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Հաւքրապետութեան հարգելի ձախագահ, սիրեցեալ եղբայրներ ի Քրիստոս և հարազատ արյունակից հայրենակիցներ,

Բնականորեն ես իմ պաշտոնական խոսքն այսօր Սուրբ բեմեն կարդացի, փոխանցեցի իմ ժողովրդին՝ ուխտս կատարելու վայրկյանեն անմիջապես ետք: Այստեղ մենք հավաքված ենք և այս սեղանը ես կկոչեմ սիրո ճաշ՝ ագապե: Ինչպես քրիստոնյաները կընեին ժամանակին, երբ որ պատարագ կընեին, պատարագեն ետք կերակուրը կբերեին և միասնաբար կբաշխեին: Ատոր անունն է ագապե: Այսօր այդ սիրո ճաշի շուրջը մենք արտակցեցանք խոսքով, խոսակցությամբ, ձեռքները սեղմելով, իրարու աչքերի մեջ նայելով և մեր միությունը, ամբողջականությունը այս պահուն մեջ անգամ մը ևս վերաձորոգելով: Իմ խորին շնորհակալությունը անգամ մը ևս կհայտնեմ մեր սիրելի պարոն նախագահին՝ իր ներկայությանը համար այստեղ: Ես քաջ գիտեմ, թե որքան ծանր պարտավորության տակ կգտնըվի, թե ինչքան զբաղումներ կպահեն զինքը իր գրասենյակին մեջ, որ այսքան ժամ տրամադրեց, ես կնկատեմ անիկա սիրո գեղում մը մեր Եկեղեցիի, Սուրբ Էջմածնի, Ամենայն Հայոց Կաթողիկոսության և մեր ժողովուրդի հանդեպ:

Սիրելիներ, ես այսօր պաշտոնական խոսք չպիտի ըսեմ, բայց մեկ բան պիտի ըսեմ: Շատ խոսեցանք, կբավե, լծվինք գործի: Փողոցներում խոսվեցավ, թերթերուն մեջ գրվեցավ, տուներուն մեջ խոսվեցավ, շուկաներուն մեջ խոսվեցավ, խոսվեցավ: Հիմա օն, հառաջ, դեպի գործ: Եվ այս գործին մեջեն միայն մեկ սկզբունք պետք է ընդունինք այսօր: Թող ատիկա ըլլա իմ նվերը ձեզի և ատիկա թող ըլլա ձեր նվերը ինձի: Ես կյանքիս մեջ մեկ սկզբունք մը այնպես առողջ գտած եմ, որ կյանքիս մյուս բոլոր սկզբունքները անով անուցված են: Զատորոշենք ընդհանրականը մասնավորեն, էականը՝ երկրորդականեն, ճղճիմ-ճղճիմ, պստիկ-պստիկ բաներով մեր կյանքը չթունավորենք: Հորիզոն ունենալ, տեսիլք ունենալ, գաղափար ունենալ և հանձնառություն, նվիրում, զոհողություն: Խոսքը գնում է, ցորենն է մնում՝ մեկ խոսքով ատվերը կերթա, լույսը կմնա: Ես կուզեմ, որ մենք իբրև ազգ այլևս վարժվենք ճղճիմ-ճղճիմ, մանրուք հարցերով այնպես չսպառել մեր ուժերը, որոնց պետք ունինք մենք ստեղծագործորեն նոր բաներ ստեղծելու համար և մեր հայրերու ժառանգը ճոխացնելու համար մեր ժողովուրդը: Աշխատանքը սուրբ է և արբաբար, Աստուծո անեծքը գան և սիրելի բարեկամներ Հայաստանի պետության կառավարության մեջ, իմ քարոզս ամեն տեղ, կյանքիս հետ միասին պիտի ըլլա գործի լծելմար: Այս է իմ խոսքը այս երեկոյին: Հետևաբար, հարգելի պարոն նախաօրինություն է: Աստված մարդը անիծեց, ըսավ՝ ճակտիդ քրտինքով պիտի ուտես քու հացդ, և ատիկա եղավ մարդուն օրինություն: Մի կտոր հաց առվի ափին իշխանական ճաշ է ինձի, երբ հոգիով քու շահածդ է, քու քրտինքդ կա ատոր մեջ: Մենք աշխատանքի պետք ունինք, գործի պետք ունինք, ուրեմն վերջ խոսքին չեմ ըսեր, թե բոլորովին՝ պիտի խոսինք անպայման ,բայց նվազում խոսքի և առատացում գործի, տեղատվություն խոսքի՝ մակընթացություն գործի. այս թող ըլլա մեր այսօրվա նշանաբանը:



Շնորհակալական խոսք է ասում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը



Վեհափառ Հայրապետը Մայր Եկեղեցիների հովվապետերի եւ ներկայացուցիչների հետ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(16 Ապրիլ 1995 թ.)

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԾՈՒՆԶԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ

«Այսօր և մեք զուարճացեալք
պայծառասցուք տօնիւս.
Ընդ հաշտութեանն Աստուծոյ
Միմեանց արկցուք գիրկս սիրով
Եւ միաբան գոչեսցուք.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց».

(Շարական)

Ի՜նչ խորիմաստ և յանկուցիչ պատկեր է շարականագիր հայ վարդապետին այս գեղանկարային բնորոշումը Հարութեան տօնին նշանակութեան և մեր կեանքի մէջ առաջացուցած հոգեկան վիճակին: Զատկի տօնին ներգործութեամբը մենք պայծառանում ենք և գերազանցօրէն երջանկանում: Միմեանց հետ ողջագուրում ենք սիրալիր հոգով, իրար աչքերի մէջ ենք նայում, նրանց մէջ ժպիտ ենք տեսնում որպէս բերկրանքի ճառագայթում, իրար ձեռքերն ենք սեղմում քրիստոնէական հաւատի և համերաշխութեան զգացումների զօրութեամբը, և միաձայն գոչելիս ասում ենք միմեանց.

«Քրիստոս յարեա՜ւ ի մեռելոց».

Ես չեմ կարող պատկերացնել ուրիշ աւելի հարազատ եղանակ ողջունելու համար Յարութեան աւետիսը մեր կեանքում: Որովհետև Քրիստոսի յարութեան դէպքի պանծացումը տալիս է մեզ այն մեծ գաղափարը որ Քրիստոս յաղթել է մահուան, որը մարդկանց համար նկատում էր մեծագոյն չարիքը: Քրիստոս մեր առաջ բացում է յաւիտենական կեանքի ճանա-

պարհը: Իր յարութեամբը մեզ ներշնչում է այն հաւատքը թէ՝ կեանքը գերեզմանով վերջ չի գտնի, թէ՝ հոգևոր կեանքը նիւթական գոյութեան օրինաչափութիւններից վեր է մնում: Ոյժ է տալիս մեզ կեանքն ապրելու անմահութեան յոյսի զօրութեամբը: Այլապէս կեանքն ապրել մի օր մեռնելու և փճանալու համար՝ դա անիմաստ գոյութեան կը վերածի մեր ապրելու ընթացքը:

Թէ Քրիստոս ինչպէս յարութիւն առաւ, մարդկանցից ոչ ոք չէ կարող հասկանալ և բացատրել: Նոյնիսկ Յիսուսի առաքեալները և ամբողջ սրտով և հոգով Նրան առաջին հաւատացողները չէին կարողացել ըմբռնել թափուր գերեզմանը...: Բայց տեսան իրենց Տէրը յարուցեալ: Զգացին Նրա մշտակեցդան և յաւիտենական ներկայութիւնը իրենց մէջ: Յարութեան իրականութիւնն ու զօրութիւնը ներթափանցեց նրանց գոյութեանը և ողջ կեանքին մէջ և հոգեկան արիութեամբ զինեց նրանց: Երէկուայ երկչոտ առաքեալները, Յիսուսից խոյս տուող, նոյնիսկ Նրան ուրացող աշակերտները կերպարանափոխուեցին, հոգեկան մի անկարագրելի զօրութիւն ստացան, դարձան անվախ, համարձակախօս, մահն իսկ արհամարհելու աստիճան:

Յիսուսի հետևողները ուրիշ ի՞նչ ոյժ ունէին Քրիստոսի հաւատը կարենալ տարածելու համար: Ոչ գահ ունէին և ոչ մական, ոչ զէնք և ոչ բանակ, ոչ գիտութիւն և ոչ հեղինակութիւն, միայն և միայն իրենց հաւատքը յարութեան վրայ: Իրենց վարդապետը յաղթել էր մահուան. իրենք այլևս չէին վախենում ո՛չ սրից և ո՛չ նիզակից, ո՛չ կայսրից և ո՛չ հռոմէական կրկէսների գազաններից: Յարութեան հաւատքի անդիմադրելի ոյժով նրանք կարողացան Պաղեստինում ծագում առած քրիստոնէական կրօնը տարածել ողջ աշխարհում և բոլոր ազգերին՝ առանց գոյնի խտրութեան:

* * *

Այդ հաւատքի առաջին օրրաններից մէկը հանդիսացաւ մեր Հայաստան աշխարհը: Յարութեան գաղափարը միախառնուեց մեր ժողովրդի համոզումներին և ապրումներին, շաղախեց մեր բարոյական ուժականութիւնը և դարբնեց մեր տոկունութիւնը:

Մահը ինք իրեն կարծեց մօտիկ հայ ժողովրդին. քանի-քանի՜ անգամներ համատարած տարողութեամբ նա փորձեց մանգաղել մեզ և մեր Հայկեան տունը, մայր հայրենիքը վերածել գերեզմանատան...: Բայց յարութեան յոյսով լիցքաւորուած մեր ժողովրդի զաւակները խափանեցին մահը իրենց ստեղծագործական կեանքի յաւիտենական զօրութեամբը, և կարծես միանալով Պօղոս Առաքեալին ասացին. «Ո՞ւր է մահ յաղթութիւնդ»: Այո՛, Հայաստանը անթիւ մահեր տուեց, բայց ինք մահ չտեսաւ, որովհետև հայ ժողովուրդը իր ողջ գոյութեամբը հաւատաց Յարութեան»: Նա հաւատաց որ Յիսուս «մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»: Նա հաւատաց և իր կարգին ինքն էլ ասաց «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»:

Ահա թէ ի՛նչ պատճառով ես այնպէս եմ զգում որ մենք՝ հայերս՝ իրաւունք ունենք անփոխարինելի և անգերազանցելի բերկրանքով ողջունելու Քրիստոսի Յարութեան տօնը: Մենք մեր հայրենի հողի վրայ, և ահա շուրջ



Ջաւկական պատարագի հանդիսաւոր թափոր



Հոգեհանգստյան աղոթք Ծիծեռնակաբերդում



Վեհափառ Հայրապետը Զատկական Խաղքի պահին



Վեհափառ Հայրապետը ընդունում է Մինսկի
եւ Բելոռուսի միտրոպոլիտ Ֆիլարետին

երկու հազարամեակներ տևողութեամբ, ապրել ենք և ապրում ենք յարութեան հրաշքը: Եթէ հաշտուած լինէինք մահուան գաղափարին հետ՝ վաղուց դադարած կը լինէինք կեանքից և մեր երկիրը վերածուած կը լինէր խաչքարերի երկրի, և մեր գոյութիւնը վերածուած կը լինէր յուշարձանային մեռելութեան...:

Ներկայ դարի սկզբին, 1915 թուի Ապրիլեան ահաւորագոյն եղեռնը եկաւ և աւելի քան մէկ և կէս միլիոն հայեր ջնջեց ու տարաւ և հողի վերածեց, մեր սեփական հողերից մեզ դուրս պոկեց և աշխարհով մէկ ցրիւ տուեց: 80 տարիներ ետք մենք ահա կանգնել ենք ողջ աշխարհին դիմաց և ասում ենք.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Յարեաւ և ազգն Հայոց
Փառք Յարութեան քո Տէր»:

Յարութեան շունչը ուժեղ ներգործութեամբ մեզ վերստին այցելեց այս վերջին տարիներին և մենք «նորափետուր զարդարեալ» վերստին սկսեցինք ազատութեան շնչով ապրել մեր կեանքը անկախ Հայաստանի Հանրապետութեան գոյաւումով և օրից օր զօրացումով:

Մի՛ մոռանաք, որ Յարութեան տօնը ծիսականօրէն կը համընկնի այն տօնին որ եբրայեցի ժողովուրդը կը կոչէր պասքա (պասեք) և որով նրանք կը նշէին իրենց ազատագրումը գերութիւնից, իրենց անցքը գերութեան երկրից դէպի աւետեաց երկիրը: Քրիստոնէական ըմբռնողութեամբ՝ Յիսուսի յարութիւնը ազատագրումն է մարդ էակին մեղքի և մահուան գերութիւնից: Մեր մարդկային ազատութիւնը և ազգային իրաւունքը կաշկանդող ոյժից դուրս եկանք և մեր աւետեաց երկրում սկսեցինք վերստին մեր ազատական շնչաւորութեան կշռոյթովը ապրել:

Ինձ համար մանաւանդ բերկրանքի բացառիկ և աննախընթաց օր է այս օրը, որովհետև առաջին անգամ է որ ես իմ կեանքում Ջաւոիկ եմ տօնում իմ ազատ, անկախ հայրենիքում, իմ հայրենաբնակ ժողովրդի հետ, Յարութեան ձայնին արձագանք եմ տալիս Յարութեան հայկազեան այս «անլռելի զանգակատնից», որի հիմքը դրեց յարուցեալ Փրկիչը Ինք Իր էջքովն ի Հայաստան և որի սկզբնաւորնչ ղօղանջն գալիս է Իրենից, Իր բառերից. «Ես յաղթեցի աշխարհի»:

Ահա այս սրբաշունչ և հոգեբարբառ Մայր Աթոռից ողջունում եմ մեր համայն հայ ժողովրդին ի Մայր Հայրենիք և ի չորս ծագս աշխարհի: Լսեցէ՛ք զաւակունք Ս. Լուսաւորչի, լսեցէ՛ք Յարութեան ձայնը ձեր հոգևոր մայր տնից՝ Ս. Էջմիածնից: Նոր շունչ է ծաւալուել ձեր վերանկախացեալ հայրենիքում: Այդ շնչով կենսաւորուեցէք և նորոգուեցէք: Շարականագիր վարդապետին ձայնակցենք.

«Այսօր գերազուարճ հոգով
Պայծառանանք այս տօնի շնորհիւ

Աստծու առաջ հաշտ սրտով
Միմեանց ողջագուրենք և
Միաձայն բարբառով գոչենք

Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

«Ճո՛րիք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան. Ամէն»:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ջերդ Սրբություն,

Ուրախությամբ հղում եմ Ձեզ իմ անկեղծ շնորհավորանքները Ձեր ընտրության և գահակալության առթիվ՝ որպես Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց: Թող Սուրբ Երրորդությունը պահպանի Ձեզ և պողառատ դարձնի Ձեր առաքելությունը հովվապետական Ձեր նոր պաշտոնում: Ուզում եմ նաև հայտնել Ձեզ, թե Հռոմի Եկեղեցին մտածումով և ջերմեռանդ աղոթքով ի սրտե մասնակցում է այն հոգևոր ցնծությանը, որով համակված պետք է լինեն այս պահին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավատացյալները: Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր զավակներին ուղարկում եմ նույնպես իմ սրտագին ողջույնը, խնդրում եմ Աստծուն, որ նրանց տևապես հավատարիմ պահի իրենց քրիստոնեական ինքնությանը:

Այս տոնական օրը Ձեր հարգարժան նախորդի՝ Նորին Սրբություն Վազգեն Ա-ի օրհնությամբ լեցուն հիշատակը ներկա է իմ աղոթքի մեջ: Ես չեմ մոռացել, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հռոմեական Կաթողիկե Եկեղեցու հարաբերությունները մի նոր ընթացք ստացան, երբ Հայ Եկեղեցին որոշեց դիտորդներ ուղարկել Վատիկանի Բ Ժողովին: Այդ մերձեցումը առավել ևս սերտացավ երջանկահիշատակ Կաթողիկոսի պատմական այցելությամբ Հռոմ, Պողոս Զ Պապին, 1970 թ. մայիս ամսին: Հանդիպում, որի ընթացքում նրանք միասին ստորագրեցին մի կարևոր համատեղ հայտարարություն: Այդ ժամանակից ի վեր մեր երկու Եկեղեցիների պատվիրակությունները բնավ չեն դադարել այցելություններ փոխանակել՝ ամրապնդելու համար միության այն կապերը, որոնք մի օր պետք է ի մի բերեն մեզ՝ Հաղորդության նույն սեղանի շուրջ:

Սպասելով այդ ժամանակին, որը, հուսով ենք, մոտ է, իմ վառ ցանկությունն է (վստահ եմ նաև՝ Ձերը) ոչ միայն պահպանել մեր Եկեղեցիների միջև գոյություն ունեցող այդ լավ հարաբերությունները, այլև սերտացնել դրանք և գործակցել առավել եռանդուն կերպով: **Գալիք երրորդ հազարամյակը** խորագիրը կրող իմ առաքելական թղթի մեջ՝ ուղղված Կա-

թողիկե Եկեղեցու եպիսկոպոսական դասին, կղերին և հավատացյալներին, 2000 թվականի հոբելյանի նախապատրաստության կապակցությամբ ես ցանկանում եմ հայտնել, որ երկրորդ հազարամյակի վախճանին քրիստոնյաները կկարողանան ներկայանալ աշխարհին եթե ոչ ամբողջապես միացած, գոնե միմյանց ավելի մոտեցած (հմմտ. հմր. 34):

Եվ որպեսզի «տարբեր դավանությունների պատկանող բոլոր քրիստոնյաների միջև միությունը զարգանա մինչև ամբողջական Հաղորդության հասնելը», ես իմ բաղձանքն եմ արտահայտել, «որ Հոբելյանը լավագույն առիթ հանդիսանա արդյունավետ կերպով համագործակցելու ամեն ինչում, որ մեզ միացնում է, որը բնականաբար ավելի կարևոր է, քան այն, ինչ մեզ բաժանում է: Այս հեռանկարով ինչքան լավ կլիներ, որ հարգելով հանդերձ տարբեր Եկեղեցիների և եկեղեցական համայնքների ծրագրերը, մենք կարողանայինք հասնել էկումենիկ ծրագրերի մշակմանը նախապատրաստելու և իրականացնելու համար Հոբելյանը: Այդպիսով Հոբելյանն ավելի ազդեցիկ ու տպավորիչ կլինի և աշխարհի առաջ կվկայի Քրիստոսի բոլոր հետևորդների աներեր կամքը՝ հնարավորին չափ շուտ իրականացնել Եկեղեցիների ամբողջական միությունը այն վստահությամբ, որ «Աստուծո համար անկարելի ոչինչ չկա» (հմր. 16):

Հայր Աստուծո «զորության» մասին այդ վստահությունը իր ցայտուն արտահայտությունն է գտնում Սուրբ Զատկին նրա Միածին Որդու Հարությամբ. մահը պարտվեց և կուլ գնաց Քրիստոսի հաղթանակին (հմմտ. Ա Կոր. 15, 54): Այս եղելությունը իր ուժեղ ազդեցությունն էր թողել Քրիստոսի աշակերտների վրա մոտ քսան դար առաջ, և այդ օրից ի վեր ոչ ոք չի կարողացել այն ջնջել: Այսօր միշտ այդպիսին է մեր հավատը, այդպիսին է մեր հույսը, այդպիսին է մեր ուրախության աղբյուրը, զատկական այն ուրախության, որ տրված է մեզ, որը միասնաբար հռչակում ենք աշխարհի դիմաց. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ալելուիա»:

Այս զգացումներով և Աստուծո Հոգու արտակարգ զորության մասին վերանորոգված վստահությամբ է, որ հայտնում եմ Ձեզ, սիրելի Եղբայր ի Քրիստոս, իմ խոր և եղբայրական սիրո հավաստիքը:

ՀՈՎՀԱՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ

Վատիկան, 5 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ուրախությամբ տեղեկացանք Ձերդ Սրբության ընտրության մասին որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Սուրբ քաղաք Երուսաղեմից հղում եք Ձեզ սրտագին շնորհավորանքներ՝ կենարար Փրկչի գերեզմանից վերադարձելով մեր աղոթքները՝ զորացնելու համար Ձերդ Սրբության հոգևոր



Վեհափառ Հայրապետը ընդունում է Հովհաննես-Պողոս Բ-ի ներկայացուցիչ կարդինալ Կասիդիին



Վեհափառ Հայրապետը հայ կաթոլիկ եկեղեցու
պատրիարք Հովհաննես-Պետրոս ԺԸ-ի եւ նրա շրջանի անդամների հետ

բարձր առաքելությունը՝ ի ծառայություն Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսական Աթոռի:

Սիրով ի Քրիստոս՝

ԴԻՈԴՈՐՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀՈՒՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

Երուսաղեմ,
16 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Հայաստան, Էջմիածին

Ջերդ Սրբություն,

Հոգեկան մեծ բերկրանքով տեղեկացանք, որ Դուք ընտրվել եք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահակալ: Վրաստանի Ուղղափառ Եկեղեցու և իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Ձեզ այս պատմական իրադարձության առթիվ:

Հույս ենք հայտնում, որ եղբայրական և բարեկամական այն հարաբերությունները, որ գոյություն ունեն մեր երկու ժողովուրդների միջև, առավել կամրապնդվեն և կզարգանան:

Ջերդ Սրբություն, ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և հովվապետական բեղուն գործունեություն:

Բազում երջանիկ տարիներ ենք ցանկանում նաև Հայ Առաքելական Եկեղեցուն, իսկ Հայոց պետությանը՝ խաղաղություն և հետագա բարգավաճում:

Եղբայրական սիրով ողջագուրում եմ Ձեզ՝

ԻԼԻԱ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

Թբիլիսի, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, Կաթողիկոսարան

Այն պահին, երբ Դուք ստանձնում եք Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդի կարևորագույն պարտականությունը, ես միանում եմ Ձեր հա-

մայնքի հոգևոր ցնծությանը և իմ աղոթքի մեջ հայցում Աստուծո հովանավորությունը Ձեզ վստահված այդ պատասխանատու պաշտոնում:

Ընդունեցեք իմ ակնածալից սիրո հավաստիքը ի Քրիստոս:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԺԱՆ-ԼՅՈՒԻ ՏՈՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վատիկան, 4 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, Կաթողիկոսարան

Ձերդ Սրբություն,

Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկյանից հաճույքով տեղեկացանք որ Ձերդ Սրբությունը Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից ընտրվել է՝ ստանձնելու Հայ Առաքելական Եկեղեցու Ծայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծանր և պատասխանատու պաշտոնը: Այս առթիվ խնդրում եմ ընդունել իմ և Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Խորհրդի ու նրա անդամ Եկեղեցիների ողջ աշխատակազմի սրտագին շնորհավորանքներն ու աղոթքները: Մենք միշտ պատրաստ ենք մատուցելու մեր ծառայությունը Ձերդ Սրբությանը և հուսով ենք, որ ի մոտո ի վիճակի կլինենք անձամբ բերելու Ձեզ մեր շնորհավորանքները:

Ինչպես բոլոր քրիստոնյաները, այնպես էլ մենք ուրախ ենք հաստատելու Ձեր ընտրության պատմական և դրական արդյունքը: Էջմիածնի Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի միավորումը օրհնություն է համայն հայության և էկումենիկ շարժման համար: Մեր Խորհուրդը հպարտ է հաստատելու, որ Դուք եղել եք և միշտ կմնաք մեր Խորհրդի պատվավոր նախագահներից մեկը:

Խնդրում ենք մեր այս ողջույնները կիսել Տեղապահ Սրբազանի և Ազգային-Եկեղեցական Խորհրդի հետ: Թող Աստված օրհնի և զորացնի Ձեզ, որպեսզի Ձեզ հատուկ շնորհներով կարողանաք կրել հովվապետական և էկումենիկ այն ծանր պատասխանատվությունը, որ Դուք այժմ ստանձնել եք:

Խաղաղությամբ ի Քրիստոս՝

ԴՈԿՏ. ՌԻԱԴ ԺԱՐԾՈՒՐ
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Լիմասոլ (Կիպրոս),
10 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Մարոնիտ Եկեղեցու, նրա կղերի և հավատացյալների անունից միանում եմ Ձերդ Սրբությանը խոր գոհունակության զգացումով: Բարեխնամող Աստված, որ կանչում է, կապահովի նաև հաջողության միջոցները:

Միշտ Ձեզ հետ՝ սրտով և մտքով:

ՆԱՍՐԱԼԼԱՀ-ՊԻԵՌ ԿԱՐԴԻՆԱԼ ՍՖԵՅՐ
ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

Բկերկե—Լիբանան, 10 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Ընդունեք իմ անկեղծ շնորհավորանքներն ու մաղթանքները Ձեր ընտրության առթիվ՝ որպես Ծայրագույն Պատրիարք Հայոց փառավոր Հայրապետության: Առ Աստված իմ խոնարհ աղոթքները Ձեզ հետ են և աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի հետ: Թող Աստված օգնական լինի Ձեզ Ձեր պատմական մեծ առաքելության ճանապարհին՝ վասն խաղաղության, միության, սիրո և արդարության:

Սրտանց ողջագուրում եմ Ձեզ:

ՊԱՐԹԵՆԻՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

11 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Հարգարժան և շատ սիրելի Եղբայր,

Այն պահին, երբ ես պատրաստվում էի Ձերդ Սրբությանը հղելու զատկական իմ բարեմաղթանքները, ուրախությամբ իմացա Ձեր ընտրության մասին՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Էջմիածնի գահին:

Սրտանց շնորհավորում եմ և զաւակական իմ համբույրի և աղոթքների հետ խնդրում եմ ընդունել հաջողության իմ բարի մաղթանքները Ձեր նոր և բարձր պաշտոնում՝ ի ծառայություն Հայ Եկեղեցու:

Ձեր եղբայր ի Քրիստոս՝

ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄ
ՀՈՒՅՆ-ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ,
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔ

Դամասկոս, 7 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Բուլղարիայի Օրթոդոքս Եկեղեցու Սուրբ Սինոդի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ Ձեր ընտրության և գահակալության առթիվ: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և երկար տարիների բեղմնավոր աշխատանք՝ Քրիստոսի բարի հավատի տարածման և խորացման համար Ձեր հավատացյալ հոտի մեջ:

ՄԱՔՍԻՄ
ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Սոֆիա, 12 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Մեծ ուրախությամբ և գոհունակությամբ տեղեկացանք Ձեր ընտրության մասին՝ որպես Հայ Առաքելական Եկեղեցու գահակալ: Շնորհավորում ենք Ձեզ մեր սիրելի Հայ Եկեղեցու ողջ հոգևոր դասի հետ միասին:

Մեր եղբայրությունը աղոթում է, որ Սուրբ Հոգին առաջնորդի Ձեզ Ձեր նոր հանձնառության մեջ: Թող Աստված Ձեզ շնորհի երկար քաջառողջ կյանք:

Ձեր եղբայր՝

ԻԳՆԱՏԻՈՍ Դ ՀԱՋԻՄ

Դամասկոս, 10 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ

Սուրբ Էջմիածին, Հայաստան

Ձեր պատգամից ուրախությամբ տեղեկացանք, որ Մեր սիրեցյալ եղբայր և բարեկամ Մեծի Տաճն Կիլիկիո Նորին Սրբություն Գարեգին Երկրորդը բարձրացել է հոգևոր նոր աստիճանի՝ դառնալով Հայ Առաքելական Եկեղեցու 131-րդ Ծայրագույն Պատրիարքն ու Կաթողիկոսը Ամենայն Հայոց: Ազգային-Եկեղեցական ժողովի միջոցով Սուրբ Հոգին գտավ Ս. Լուսավորչի գահի համար արժանավոր և ճիշտ անձը, որն օժտված է ճկիրտությամբ, հմտությամբ և կրթական ու վարչական գործերի մեջ բարձր կարողությամբ:

Նորին Սրբության գահակալական հանդիսությունների առթիվ Մենք լիազորել ենք Լիբանանի մեր առաջնորդ Մար Աթանասիոս Պաուլոս Բարսում Արքեպիսկոպոսին՝ ներկայացնելու Մեր անձը:

Ի սրտե շնորհավորում ենք մեր առաքելական քույր Եկեղեցու նորընտիր Կաթողիկոսին, Ազգային-Եկեղեցական ժողովի անդամներին և հավատացյալներին: Թող նորընտիր Հայրապետը դառնա օրհնություն հայոց մեծ ազգին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Աղոթքներով և բարի մաղթանքներով՝

ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՔԱ Ա ԻՎԱՍ

ՍԻՐԻԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՊԵՏ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

Դամասկոս, 8 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբության ընտրությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահին, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, մեր սիրտը լցնում է ուրախությամբ, հույսով և հպարտությամբ:

Այս առիթով ներկայացնում ենք Ձեզ եղբայրական սրտագին շնորհավորանքներ՝ մաղթելով Ձերդ Սրբությանը, Հայ Եկեղեցուն և նրա հավատացյալներին աստվածային օրհնություններ, շնորհներ, երջանկություն, բարօրություն:

ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ
ԱՆՏԻՈՔԻ ԱՍՈՐԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԱՏՐԻԱՐՔ

* * *

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Սբ. Էջմիածին—Հայաստան

Ի սրտե շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը Ձեր արժանավոր ընտրության առթիվ՝ որպես համայն հայության Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս և որպես հաջորդը երջանկահիշատակ Վազգեն Առաջին Կաթողիկոսի:

Աղոթում ենք, որ Աստված զորացնի Ձեզ Ձեր նոր բարձր պարտականությունների կատարման ճանապարհին և օրհնի Ձեր ծառայությունը՝ ի նպաստ հարգարժան Հայ Եկեղեցու և նրա բարեպաշտ ժողովրդի:

Եղբայրական սիրով ցանկանում ենք Ձեզ հաջողություն՝ Ձեր նոր առաքելության մեջ:

ՍԵՐԱՖԻՄ
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Աթենք, 7 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

Էջմիածին—Հայաստան

Փարիզի Եկեղեցու և իմ կողմից շնորհակալություն Ձեր ընտրության և առաջիկա գահակալության մասին ստացված բարի լուրի համար:

Գոհություն Աստծուն այդ ընտրության համար: Թող օրհնյալ լինի մեր Տերը իր հաստատած մեկ և անբաժանելի Եկեղեցու համար: Թող քահանայապետությունը մի քայլ ևս առաջ մղի Եկեղեցին դեպի ճշմարտություն, եղբայրություն և այնքան ցանկալի միություն:

Թույլ տվեք մասնակցել այս առթիվ Հայ Եկեղեցու ուրախությանը:

Վստահ եղեք իմ և Փարիզի մեր Եկեղեցու հոգևորականների աղոթքներին, այս օրերին, երբ Փրկչի կողմից Ձեզ վստահվում է նման մի պատասխանատու պաշտոն:

ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵ
ՓԱՐԻԶԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Փարիզ, 8 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Ընդունեցեք իմ շնորհավորանքները Ձեր ընտրության առթիվ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Թող Ամենազորն Աստված առաջնորդի և օրհնի Ձեզ, երբ այժմ Դուք ստանձնում եք ղեկավարությունը ողջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու:

Վստահեցնում եմ Ձերդ Սրբությանը, որ իմ աղոթքները ուղեկցելու են Ձեզ Ձեր բարօր առաքելության ճանապարհին:

Ինչպես մեր սովորություն է ասել, ցանկանում եմ Ձեզ «Բազում տարիներ»:

Եղբայրաբար ի Քրիստոս՝

ԿԱՐԴԻՆԱԼ Օ'ՔՈՆԸՐ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ

Նյու Յորք, 6 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբությանն ենք ներկայացնում Մեր ջերմ շնորհավորանքները, Մեր աղոթքների հետ միասին, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Երուսաղեմից Մեր եղբայրական աղոթքներով լավագույն ապագայի հույս ենք ներշնչում հայ ժողովրդին և Եկեղեցուն: Թող հարուցյալ Քրիստոսը և նրա իմաստության ոգին լինի Ձեզ հետ:

ԿԱՐԴԻՆԱԼ ՄԻՇԵԼ ՍԱԲԲԱՀ

Երուսաղեմ, 7 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձեր ընտրության կապակցությամբ հղում եմ Ձեզ իմ անկեղծ բարեմաղթությունները, շնորհավորանքներն ու Աստուծո օրհնությունը: Վստահ եմ, որ Հայ Եկեղեցու Ծայրագույն Պատրիարքը խաղաղություն և երջանկություն կբերի Հայոց Առաքելական Եկեղեցուն: Հուսով եմ, վերստին կհանդիպենք միմյանց:

ԿԱՐԴԻՆԱԼ ԿՅՈՆԻԳ

Վիեննա, 8 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ես բաժանում եմ հայ ժողովրդի ցնծությունը՝ Սուրբ Էջմիածնում Ձեր գահակալության առթիվ, և հղում իմ սրտագին շնորհավորանքները՝ աղոթելով Ձեզ վստահված վեհ առաքելության հաջողության, խաղաղության և հայ ժողովրդի բարօրության համար:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՇԻԿ ՍԻԼՎԵՍՏՐԻՆԻ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ

Վատիկան, 6 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայաստան, Էջմիածին

Սրտանց շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռի գահակալ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Թող Աստված բազմապատկի Ձեր ուժերը առաջիկա Ձեր բարձր ծառայության ճանապարհին՝ ի փառս Աստուծո և ի բարօրություն ձեր Եկեղեցու և ձեր ժողովրդի:

Հավատում ենք, որ Ձերդ Սրբությունը ամեն կերպ կամրապնդի և կզարգացնի մեր երկու Եկեղեցիների միջև գոյություն ունեցող ավանդական եղբայրական կապերը:

Սիրով ի Քրիստոս՝

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԿԻՐԻԼ
ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ

Մոսկվա, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՀ, Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ընդունեցեք իմ սրտագին շնորհավորանքները՝ Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռի գահակալ ընտրվելու առթիվ:

Ցանկանում եմ Ձեզ Աստուծո օգնականությունը Ձեր բարձր առաքելության ճանապարհին:

Ակնածանքով ու սիրով՝

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՅՈՒՎԵՆԱԼԻ

Մոսկվա, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա

Հայաստան, Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Հույս ենք հայտնում, որ Ձեր ընտրությունը կնպաստի Ուկրաինա-

կան Ուղղափառ Եկեղեցու և Կիևի Պատրիարքության հետ եղբայրական հարաբերությունների հաստատումանը և կամրապնդի բարեկամությունը հայ և ուկրաինացի ժողովուրդների միջև:

Աղոթում ենք, որ Աստված օգնական լինի Ձեզ՝ Հայ Առաքելական Եկեղեցուն և համայն հայ ժողովրդին ծառայելու Ձեր բարձր առաքելության մեջ:

Սիրով ի Քրիստոս՝

ՖԻԼԱՐԵՏ
ԿԻԵՎԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

Կիև, 8 ապրիլի 1995 թ.

* * *

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի իմ բոլոր գործակիցների և էկումենիկ (տիեզերական) համայնքի անունից ցանկանում եմ արտահայտել մեր ուրախությունը Ձեր գահակալության առթիվ, որպես 131-րդ Կաթողիկոս Էջմիածնի Սբ. Աթոռի: Ձեր ընտրությունը կարևոր մի իրադարձություն է հայ ժողովրդի վերջին շրջանի պատմության մեջ: Այսպիսով նրանք վերագտնում են իրենց հարազատ ոգեկանությունն ու մշակութային ինքնությունը:

Հայ Եկեղեցին եղել է տեսանելի խորհրդանշանը հայ ժողովրդի միության և գոյատևման: Հուսով ենք, որ Ձեր ընտրությունը կլինի կարևոր մի անկյունադարձ և Ձեր հովվապետական առաքելությունը առիթ կհանդիսանա պատմական դժբախտ եղելությունների պատճառով արմատախիլ եղած ողջ սփյուռքահայությունը համախմբելու իբրև մեկ հոտ:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահին Ձեր բարձրանալը հատուկ իմաստ ունի էկումենիկ շարժման համար: Հայ Եկեղեցու մասնակցությունն ու նրա ծառայությունը էկումենիկ շարժմանը նպաստել է քրիստոնյաների հասարակաց երթին դեպի գլխավոր նպատակ՝ Եկեղեցիների տեսանելի միությունը: Մենք վստահ ենք, որ մեր համագործակցությունը կշարունակվի և կաճի Ձեր առաջնորդության ներքո:

Թող Աստված օրհնի Հայ Եկեղեցին ու նրա ժողովրդին և Ձերդ Սրբությանը պարգևի ուժ, կարողություն և առողջություն՝ ծառայելու համար Քրիստոսի Եկեղեցուն ի Հայաստան:

Ակնածանքով Ձեր՝

ԿՈՆՐԱԴ ՌԱՅՋԵՐ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

Ժնև, 5 ապրիլի 1995 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ջերդ Սրբություն,

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի ամումից ցանկանում եմ հղել Ձեզ իմ անկեղծ շնորհավորանքները Ձեր ընտրության առթիվ՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Ձեր Եկեղեցին ակտիվորեն ներգրավված է եղել էկումենիկ շարժման մեջ, մասնավորապես Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի աշխատանքներում: Մենք հուսով ենք, որ ավելի խոր և ծավալուն կլինեն մեր հարաբերությունները ու գործակցությունը Ձեր հովանավորության ներքո, առաջիկա տարիներին:

Երջանիկ ենք, որ մեր Կոնֆերանսի փոխնախագահ միտրոպոլիտ Երեմիան՝ Տիեզերական Պատրիարքության ներկայացուցիչը, որ հաստատված է Ֆրանսիայում, կներկայացնի ԵԵԿ-ն Ձեր գահակալության հանդիսությանը: Վստահ ենք, որ այս առթիվ նա իր անձնական ողջույնների հետ կբերի նաև ԵԵԿ-ի բարի մաղթանքները:

Թող Բարին Աստված օրհնի Ձեզ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

Աղոթում ենք, որ Ամենաբարձրյալը իր Որդու շնորհներով զորավիգ կանգնի Ձերդ Սրբությանը: Թող զատկական այս փառավոր շրջանը, երբ մենք տոնում ենք մեր Փրկչի հրաշափառ Հարությունը, որպես մնայուն հիշողություն տևապես ուղեկցի Ձեզ Ձեր առաջիկա գործունեության ճանապարհին:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԺԱՆ ՖԻՇԵՐ
ԵԵԿ-ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ժնև, 5 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սուրբ Էջմիածին—Հայաստան

Մեծ ուրախությամբ տեղեկացանք Ձեր ընտրության մասին: Մեր հուսալի աղոթքները Ձեզ հետ են, որպեսզի հաջողությամբ առաջնորդեք Մայր Եկեղեցին և նրա ժողովրդին:

ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ՆԱԽԿԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Լոնդոն, 5 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ջերդ Սրբություն,

Մենք ուրախ ենք Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրության առթիվ:

Մենք հղում ենք Ձեզ մեր աղոթքները և հայտնում մեր պատրաստակամությունը՝ աջակցելու Ձեզ, որպեսզի շարունակեք Ձեր եպիսկոպոսական առաքելությունը՝ ի ծառայություն Քրիստոսի Եկեղեցուն: Թող Սուրբ Հոգին լցնի Ձեզ շնորհներով, արիությամբ և ուրախությամբ:

Մեր մաղթանքն է, որ Դուք հավատարմությամբ հոգեպես սնեք և հոգ տանեք Ձեր խնամքին վստահված Քրիստոսի բանավոր հոտը:

Թող Ամենազոր Աստուծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու օրհնությունը, բարեգթությունն ու շնորհը լինի Ձեզ վրա և մնա Ձեզ հետ հավիտյանս. ամեն:

Հավատարմությամբ Ձեր՝

ԷԴՄՈՆԴ Լ. ԲՐԱՈՒՆԻՆԳ
ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ
ԱՄՆ-Ի ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

Նյու Յորք, 4 մայիսի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստան

Ջերդ Սրբություն,

Մեր ընդհանուր բարեկամներ՝ Վերապատվելի դոկտ. Մանվել Ճինպաշյանից և Վերապատվելի Լյուսին Ակկադից մեծ հաճույքով և գոհունակությամբ տեղեկացա, որ Դուք ընտրվել եք Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ես հիշում եմ մեր հանդիպումը Ձեզ հետ Բեյրութում մոտ երկու տարի առաջ: Եվ այժմ ուզում եմ հավաստիացնել Ձեզ, որ աշխարհում Ս. Գրոց Միացյալ Ընկերության բոլոր անդամները աղոթում են Ձեզ վստահված բարձր առաքելության հաջողության համար:

Աստուծո խոսքը թանկ է մեր բոլորի համար, և Դուք կարող եք վստահ լինել, որ Միացյալ Աստվածաշնչային Ընկերությունը պատրաստ է օգնելու Ձեզ Ձեր բոլոր ձեռնարկումներում, որպեսզի Աստուծո խոսքը լինի կենդանի խոսք և դառնա իրականություն բոլոր հավատացյալների կյանքում:

Մենք աղոթող ենք Ձեզ համար, երբ այժմ Դուք ստանձնում եք այս նոր և պատասխանատու պաշտոնը:

Անկեղծորեն Ձեր՝

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ԴՈԿՏ. ՋՈՆ Դ. ԷՐԻԿՍՈՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ
ՄԻԱՑՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Անգլիա, 11 ապրիլի 1995 թ.

ԱՌ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Ի լուր Ձեր արժանավայել ընտրութեան իբրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, գահակալելու ինքնին Ս. Լուսաւորչի Աթոռին, անսահման հրճուանքով կը փութամ ներկայացնելու իմ եւ բովանդակ Միխիթարեան Միաբանութեան իրաքանչիւր միանձնի սրտագին մաղթանքները:

Գոհութիւն Ամենակալին, որ երջանկայիշատակ եւ անմոռանալի Վազգէն Ա Վեհ Հայրապետին, Ձերդ Հայրութիւնն է որ կը յաջորդէ, բարձր պահելու համար Մայր Հայրենիքի Կաթողիկոսական Աթոռի հմայքը համայն աշխարհի դիմաց, եւ դեռ աւելի, եօթանասուն տարուան համայնավարութենէ վերջ վերածաղկող Հայաստանի քրիստոնէական վերելքին նախախնամական առաջնորդը դառնալու:

Չենք կրնար նաեւ չյիշել Ձեր միշտ ցուցաբերած բարեացական ու հայրական վերաբերումը Միխիթարեան Միաբանութեան հանդէպ ու կըրկնապատիկ մեր ուրախութեան եւ շնորհաւորութիւններուն չմիացնել նաեւ մեր սրտագին ու երախտապարտ շնորհակալութիւնները:

Մեր առ Աստուած փառաբանական աղօթքներուն՝ պիտի կցենք այսուհետեւ նաեւ վառ իղձեր Ձերդ Վեհափառ Տէրութեան համար, հայցելով յարատեւօրէն Սուրբ Հոգւոյն աստուածային լոյսերուն հետ, հաստատ առողջութիւն ու կորով, որպէսզի շատ երկար տարիներ, ի գլուխ համայն Առաքելական Եկեղեցւոյդ Հայաստանեայց, հովուէք անսասան մեր ժողովուրդը, Արարատի ստորոտէն մինչեւ ի սփիւռս աշխարհի:

Ամենախորին մեծարանքով՝

Հ. ԳԷՈՐԳ ՎՐԴ. ՊԱԼԵԱՆ
ԸՆԴՀ. ԱԲԲԱՀԱՅՐ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Վենետիկ, 5 մայիսի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Ուրախութեամբ կ'ողջունենք Ձեր ընտրութիւնը Լուսաւորչի արբազան Գահին վրայ, իբրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Մեր ժողովուրդի համար բացառիկ կարեւորութիւն ներկայացնող, պատմական այս անկիւնադարձին՝ կրօնական եւ ազգային գարթօնքի մեծ արշալոյսին՝ Ձեր հոգեւոր զաւակները, նորանկախ հայրենիքի թէ համա-

տարած Սփիւռքի մէջ, մեծագոյն ակնկալութիւններով իրենց աչքերը Ձեզի սեւեռած են յուսալից: Վստահ ենք, որ Ձեր աստուածատուր ձիրքերով, Ձեր կեանքի փորձառութեամբ եւ աշխատանքի անխոնջ կորովով պիտի արդարացնէք մեր բոլորի յոյսերը՝ Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ բանալով փառահեղ նոր էջ մը: Կը յուսանք, որ Ձեր անձին մէջ պիտի իրականանայ մեր ժողովուրդի մեծ իղձը՝ Հայ Եկեղեցւոյ իրական եւ ամբողջական միութիւնը:

Ջերմօրէն կը մաղթենք, որ Ձեր անձնուէր եւ փորձ ղեկավարութեան տակ շուտով զարգանա հոյլ մը կոչումո՛վ հոգեւորականներու, թրծուած Սահակներու եւ Մեսրոպներու, Նարեկացիներու եւ Շնորհալիներու հոգիով եւ ուսմանական բարձր մակարդակով, որովհետեւ այդ է գրաւականը մեր ժողովուրդի հոգեւոր վերածնունդին:

Այս առթիւ թոյլ տուէք արտայայտելու նաեւ անձնական ցանկութիւն մը: Իբրեւ հայ կաթողիկէ հոգեւորական եւ մանաւանդ իբրեւ Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան մէկ թեւին՝ իմ ջերմագոյն իղձս է, որ շուտով գայ նաեւ օրը Հայ Առաքելական եւ Հայ Կաթողիկէ Եկեղեցիներու միութեան: Ես կը հաւատամ, թէ կարելի է այդ՝ փոխադարձ անկեղծ մերձեցումով:

Մինչ այդ՝ ինձի հետ՝ միաբանակից մեր բոլոր Հայրերը կը շնորհաւորեն Ձեր ընտրութիւնը, մաղթելով Ձեզի աստուածային առատ շնորհքներու հետ՝ նաեւ երկար կեանք եւ քաջառողջութիւն, իրականացնելու համար Ձեր բոլոր աստուածահաճոյ եւ եկեղեցաշէն առաջադրութիւնները:

Աղօթակից միութեամբ, խոնարհ ծառայ՝

Հ. ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԳՈՃԱՆԵԱՆ
ԸՆԴՀ. ԱԲԲԱՀԱՅՐ
ՎԻԵՆ. ՄԽԻԹ. ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Վիեննա, 17 ապրիլի 1995 թ.

ՕՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Շնորհավորում եմ Ձեզ Հայ Առաքելական Եկեղեցու Ծայրագույն Պատրիարք ընտրվելու կապակցությամբ:

Հուսով եմ, որ Ձեր գործունեությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահին կնպաստի մեր բարեկամ հայ ժողովրդի համախմբմանը, Հայկական անկախ պետության տնտեսության վերածննդին և Կովկասում խաղաղության հաստատման գործին:

Խորին հարգանքներով՝

ԼԵՈՆԻԴ ԿՈՒՉՄԱ
ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Կիև, 21 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ,

Ձերդ Սրբություն.

Թույլ տվեք շնորհավորել Ձեզ, հոգևոր բարձրագույն աստիճանի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առիթով, ինչը անվիճելի վկայություն է Ձեր հոգևոր հեղինակության, որ Դուք ձեռք եք բերել աստվածահաճո ասպարեզում:

Հնագույն Հայկական Առաքելական Եկեղեցին միշտ օգնել է ժողովրդին պատվով դիմագրավել ամենաճաձանր փորձություններին, ծառայել է նրա

համախմբվածությանը, օժանդակել է մշակույթի զարգացմանը, պահպանել է ազգի ոգին և հավատը:

Հայաստանի և Վրաստանի հավատակից ժողովուրդները, որոնց եղբայրությունը սկիզբ է առնում առասպելական ժամանակներից, միշտ կանգնած են եղել կողք-կողքի և դժբախտության պահին նեցուկ հանդիսացել միմյանց: Թող Հավատի սուրբ անհրաժեշտությունը և պատմական ընդհանուր ավանդույթները մեր հոգևոր և աշխարհիկ գործերում այսուհետև էլ լուսավորեն միասնության և փոխօգնության օրհնյալ գաղափարը:

Խորին հարգանոք՝

ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵ

9 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Էջմիածին—Հայաստան

Ձեր ընտրությունը, որպես Հայ Առաքելական Եկեղեցու գահակալ, ապացույց է Ձեր մարդկային արժանիքների, ինչպես նաև Ձեր բարոյական և հոգևոր բարձր հատկությունների ճկատմամբ դրսևորված վստահության՝ առաջնորդելու համար հայ հավատացյալների մեծ համայնքը:

Լիբանանյան ժողովրդի անունից և անձամբ իմ անունից հղում եմ Ձեզ իմ ջերմ շնորհավորանքները և հաջողության մաղթանքները Ձեր ապագա ծառայության ճանապարհին:

ԷԼԻԱՍ ՀՐԱՒՈՒԻ
ՆԱԽԱԳԱՀ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Բեյրութ, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ՀԱՆՈՒՆ ԲԱՐԵԳՈՒԹ ԵՎ ԳԹԱԾ ԱՍՏԾՈ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ցանկանում եմ սրտի խորքից հղել Ձեզ իմ շնորհավորանքը՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրության առթիվ:

Հոգևոր արժեքները և կապը Բարձրյալ Աստծո հետ հիմքն են մարդու վեհ զգացման, Աստծուն մոտենալը գերագույն վեհություն է, և այս ուղղությամբ հավատացյալներին առաջնորդելը հոգևոր շատ պատասխանատու պարտականություն է, որ հանձնված է կրոնական պետերին;

Հուսով եմ, որ Ձեր առաջնորդությամբ և Ձեր տված բարի խորհուրդներով հոգևոր և մշակութային կապերը երկու բարեկամ և հարևան ժողովուրդների՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև, կամրապնդվեն ավելի, քան անցյալում:

Հայցում եմ Բարձրյալ Աստծուց քաջառողջություն և երջանկություն Ձեզ և փառք ու բարօրություն հայության համար:

ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Թեհրան, 9 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Անկեղծորեն և բարի զգացումներով շնորհավորում ենք Ձեզ Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր հավատացյալների Հովվապետի աստիճան ընտրվելու առիթով:

Դարերի ընթացքում գոյություն է ունեցել հոգևոր սերտ կապ մեր ժողովուրդների միջև, որոնց համար քրիստոնեության ընդունումը դարձավ կարևորագույն պատմական իրադարձություն: Հույս եմ հայտնում, Ձերդ Սրբություն, որ Հովվապետական բարձր պաշտոնին Ձեր կոչվելով այդ հոգևոր կապը չի թուլանա, այլ առավել ևս կամրանա:

Ցանկանում եմ Ձեզ լիակատար հաջողություն Ձեր առաջիկա աշխատանքներում՝ ի բարօրություն ձեր Եկեղեցու և հասարակության, հանուն մեր ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման և փոխշահավետ համագործակցության:

ԻՎԱՆ ՌԻԲԿԻՆ
ՌԴ ՊԵՏԴՈՒՄԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա, 7 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ կաթողիկոսական գահակալության և ի փառս Աստծո, հանուն խաղաղության և Հայաստանյայց Եկեղեցու ու Հա-

յաստանի ժողովրդի բարգավաճման Ձեր ծառայությունն սկսելու առթիվ:

Անկեղծորեն մաղթում եմ Ձեզ մեծ հաջողություններ Ձեր ազնիվ, անձնվեր գործունեության մեջ:

Խորին հարգանքով՝

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՎԼԱԴԻՄԻՐ ՇՈՒՄԵՅԿՈ

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Մեծապես ուրախացանք Ձեր ընտրությամբ, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց Ս. Էջմիածնի Աթոռին ի Հայաստան:

Անձնապես և հանուն Լիբանանի Երեսփոխանական ժողովի, Ձերդ Սրբության ենք ներկայացնում Մեր բարի ցանկությունները՝ հայ ժողովրդին մաղթելով առաջադիմություն Ձեր գահակալության ներքո: Հավաստիացնում ենք Ձեզ լիբանանցի և հայ ժողովուրդների բարեկամական սերտ հարաբերությունների ամրապնդման մասին:

ՆԵԲԻՀ ԲԸՐՐԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
Բեյրութ, 8 ապրիլի 1955 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Մեծագույն հաճույքով շնորհավորում եմ Ձեզ Ազգային-Եկեղեցական ժողովի ընտրությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատասխանատու պաշտոնն ստանձնելու առթիվ:

Հայ համայնքի հոգևոր բարգավաճմանը երկար տարիներ Ձեր նվիրվածությունը հանգեցրեց հավատի այս արտահայտությանը Ձեր միաբանության կողմից: Ընտրելով Ձեզ այս բարձր պաշտոնին, համազգային ժողովը ճանաչեց անհրաժեշտություն այն աշխատանքի, որ Դուք կատարելու եք ի նպաստ Եկեղեցու, և ես վստահ եմ, որ ձեր ողջ համայնքը կզորանա

և կքաջալերվի Ձեր պաշտոնավարությամբ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ընդունեցեք իմ լավագույն մաղթանքները:

ԺԱՆ ԿՐԵՏԻԵՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Ապրիլ 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Ձեր ընտրության առթիվ, որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պետ, ցանկանում եմ ուղղել Ձեզ իմ անկեղծ շնորհավորանքները՝ մաղթելով բարեհաջող ծառայություն Ձեր ժողովրդին և ամբողջ մարդկությանը:

Վստահ եմ, որ Ձեր ընտրությունը կնպաստի Հայաստանի և Լիբանանի հարաբերությունների էլ ավելի սերտացմանն ու զորացմանը:

Ձերդ Սրբություն, մաղթում եմ Ձեզ քաջառողջություն և երջանկություն:

Անկեղծորեն՝

ՌԱՖԻԿ ՀԱՐԻՐԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Բեյրութ, 5 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Հայաստան, Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Քրիստոսի Հարության ուրախալի և լուսավոր տոնի օրը վրաց ժողովրդի և իմ անունից ուղղում եմ Ձեզ սրտագին շնորհավորանքներ՝ մաղթելով երջանկություն, առողջություն և լիակատար հաջողություն Ձեր ապավաճառական գործունեության մեջ:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ շնորհավորել Ձեզ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Հարգանքներով՝

ՕԹԱՐ ՊԱՅԱՅԻԱ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Թբիլիսի, 23 ապրիլի 1995 թ.

* * *

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կը շնորհաւորեմ Ձեզ, որ 4 Ապրիլ 1995 թուի ընտրութեան՝ բովանդակ աշխարհի Հայ հաւատացեալ վստահութեան արժանացած և ընտրուած էք Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Կը հաւատամ, որ Ձեր նոր պաշտօնին մէջ, Ձեր առաջարկ և մաղթանքները պիտի չզլանաք շրջանի հանդուրժողութեան, հանգիստի և բարօրութեան կարօտ ժողովուրդներէն, որպէսզի անոնք հասնին իրենց որոնած սիրոյ, եղբայրութեան և խաղաղութեան: Կը շնորհաւորեմ Ձեզ:

ՄԷՀՄԷՏ ՆՈՒՐԻ ԵԼԻՄԱՋ
ԿՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱԳԱՀ

29 Մայիսի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Հղում եմ սրտագին շնորհավորանքներս Հայ Առաքելական Ազգային Եկեղեցու Հոգևոր Պետի գահին Ձեր ընտրության առթիվ:

Այս սուրբ առիթով իմ տիկինը՝ Էլիզաբեթը, և ես միանում ենք աշխարհով մեկ Ձեզ ուղղված բարի ցանկություններին՝ աղոթելով և մաղթելով, որ Աստված Ձեզ շնորհի քաջառողջություն և հաջողություն՝ քրիստոնեական Եկեղեցու միությանը նպաստող Ձեր առաջնորդության ճանապարհին:

Անկեղծորեն՝

ՌՈԲԵՐՏ ԴՈԼ
ԱՄՆ ՍԵՆԱՏԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ

5 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սուրբ Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Գրում եմ անձնապես իմ և «Միջազգային Քրիստոնեական Համերաշխություն» կազմակերպության անունից՝ բերելու Ձեզ իմ ջերմ շնորհավորանքները Ձեր ընտրության առթիվ՝ որպես Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոս:

Ցավում եմ այս շնորհավորանքների և բարեմաղթությունների ուշացման համար: Ձեր ընտրությունը զուգադիպեց Չինաստան իմ այցելության օրերին, և ես միայն վերջերս տեղեկացա ընտրության արդյունքի մասին:

Հայաստանի ժողովուրդը տևապես մեր աղոթքների մեջ է եղել այս կարևոր իրադարձության առթիվ: Ես ուզում եմ վստահեցնել Ձեզ, որ մեր աղոթքները շարունակվում են նաև այժմ, երբ Դուք կանգնած եք նոր պատասխանատվությունների առաջ, որոնք առնչված են Ձեր սուրբ ծառայությանը:

Օգտագործում եմ այս առիթը՝ Ձեզ ներկայացնելու իմ խոր ակնածանքի ու սիրո զգացումները ձեր Եկեղեցու և այն բազում քրիստոնյա հայերի հանդեպ, որոնց հանդիպելու առանձնաշնորհումն ունեցա Արցախում՝ մոայլ և դժվարին օրերին: Մեր մեջ մեծացավ հիացումը նրանց հավատի, արիության, բազում շնորհների վեհանձնության, նրանց քրիստոնեական սիրո ներշնչող վկայության հանդեպ, նույնիսկ երբ նրանք կանգնած էին մեծ տառապանքների առաջ: Ամեն անգամ, երբ ես առիթ եմ ունենում խոսելու նրանց մասին այլ երկրների քրիստոնյա լայն հասարակության առջև, գտնում եմ, որ նրանց վկայությունը ներշնչում է ոչ միայն ինձ, որ առանձնաշնորհումն եմ ունեցել հանդիպելու նրանց, այլ նաև ուրիշներին, որոնց ուղղել եմ իմ խոսքը:

Գիտեմ, որ Միջազգային Քրիստոնեական Համերաշխության իմ բոլոր գործակիցները միանում են ինձ իմ այս պատգամի, շնորհավորանքների և գալիք տարիների համար իմ ամենաբարի մաղթանքների մեջ:

Անկեղծորեն Ձեր՝

ԲԱՐՈՆՈՒՀԻ ՔԵՐՈԼԻՆ ԿՈՔՍ

Լոնդոն, Լորդերի պալատ, 20 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Երևանում Միացյալ Նահանգների դեսպանատան իմ պաշտոնակիցների կողմից հղում եմ ջերմ շնորհավորանքներ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրության առթիվ: Ինձ համար հատուկ պատիվ է ներ-

կայացնել Միացյալ Նահանգները Հայաստանում այս պատմական պահին, երբ աշխարհի չորս կողմերից եկած պատգամավորները հավաքվել են Ս. Էջմիածնում, ազատ և անկախ Հայաստանում՝ ընտրելու հայության 131-րդ Կաթողիկոսին:

Իմ աղոթքները Ձեզ հետ են այս պահին, երբ Դուք երկյուղածությամբ ստանձնում եք ձեր պատասխանատու պաշտոնն՝ առաջնորդելու համար Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռը ձեր հազարամյակում:

Անկեղծորեն՝

ՀԱՐԻ ԳԻԼՄՈՐ
ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ

Երևան, 5 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սբ. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Մեծ պատիվ եմ համարում հղելու Ձեզ իմ ջերմագին շնորհավորանքները Ամենայն Հայոց Հայրապետության գահին Ձեր ընտրման առթիվ:

Ցանկանում եմ հղել նաև Ձերդ Սրբությանը սրտագին մաղթանքներ Ձեր բարձր առաքելության հաջողության համար:

Ընդունեցեք, Ձերդ Սրբություն, իմ խորին հարգանաց հավաստիքը:

ՅԱԿՈԲՈՍ Ժ. ՍՊԵՑԻՈՍ
ՀՀ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ

Երևան, 5 ապրիլի 1995 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

1995 թվականի ապրիլի 4-ը հիրավի դարձավ պատմական պահ համայն աշխարհի հայության համար: Պատմական, քանզի ի լուսավորություն և հպարտություն համայն հայության, վեց դարերի մշուշի խորքից կրկին Սուրբ Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական հովվապետական գոհին Ամենայն Հայոց Կաթողիկոսը բազմում է խորին խորհրդով՝ իր անկախությունը վերակերտած Հայաստանի Հանրապետությունում:

Վեհափառ Տեր.

Որդիական մեծագույն ակնածանքի դրսևորում ընդունեք մեր ջերմ բարեմաղթությունները և շնորհավորանքներն այդ պատվավոր և միաժամանակ չափազանց պատասխանատու ընտրության կապակցությամբ:

Անսասանություն՝ Աստծո կամոք հիմնադրված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Ձեր ավիրապետական հովվապետությամբ՝ մեր ողջ ժողովրդին:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ճշանակալի այս ընտրության առթիվ շնորհավորում է համայն հայությանը, համոզմունք հայտնելով, որ Գարեգին Ա Վեհափառ Հոր գահակալությունը կնշանավորվի Հայ Առաքելական Եկեղեցու միաբանությամբ, հայրենիքի հզորացման ավիրումով, մեր ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքի վերածնունդով և շինարարական մեծագույն ձեռնարկումներով:

Խորին հարգանքով՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԲԱԲԿԵՆ ԱՐԱՐՔՅԱՆ

Երևան,
5 ապրիլի 1995 թ.

ՇԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Էջմիածնի Կաթողիկոսարան

Ձերդ Սուրբ Օծություն Տեր, ջերմագին շնորհավորում ենք Ձեզ Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահի 131-րդ գահակալ ընտրվելու կապակցությամբ:

Օրթալի Հակոբ (Լոս Անջելես)
Ֆեսճյան Սուրեն (ԱՄՆ)



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

«Ա՜Խ, ԻՆՉՊԵ՞Ս, Ո՞ՆՑ ՄՈՌԱՆԱԼ...»

Ողբամ մեռելոց,
Բեկանեմ շանթեր
Կոչեմ ապրողաց...

«Ես եկել էի, որ այստեղ լռեմ, ես եկել էի, որ չոքեմ ծունկի, քարանամ այստեղ առանց արցունքի...»,—թերևս վաղուց արդեն այս խոսքերը դադարել են հեղինակի սեփականն իսկ լինելուց, մեկ անգամ և ընդմիշտ գրանցվել համասփյուռ հայության հոգու մատյաններում, դարձել մորմոք ու կարոտ, վիշտ ու քարացած արտասուք: Արդեն քանի՜ տարի մարդկային սրտին անծանոթ մի զգացում ստվերի պես հետևում է հային, հետևում քուն թե արթմնի և, որպես անթեղված հավատամք, ամեն ապրիլի վերընձյուղվում է, վերափոխվում սուրբ հիշատակի ու խոնարհության օրվա, երախտիքի հավերժահուր տուրքի:

Ահա այդ վեհ գիտակցումով ապրիլի 8-ին Ամենայն Հայոց ազգընտիր Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջինը, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորները, քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ համատեղ, Ծիծեռնակաբերդի վեհ բարձունքում կրկին անգամ խոնարհվեցին սուրբ նահատակաց հոգիների հուրն ատ երկինք տանող հավերժական կրակի բոց լեզուների շշուկ ու մորմոք դարձած լռության առջև:

Տերունական աղոթքից և հոգեհանգստի արարողությունից հետո սրտի խոսք է ասում Ամենայն Հայոց ընդգնիր Վեհափառը, որի շնորհիվ ամեն մի ունկնդիր մեկ անգամ ևս մտովի վեր է բարձրացնում պատմության ևն ու թանձր վարագույրը, մինչև սուլթան Համիդ ու երիտթուրքեր, մինչև կեղևաց ու մահու դաժան մաքառում, մինչև Դեր-Զոր... Եվ հնչում է



Դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքը



Հոգեհանգստյան աղոթք Մայր Աթոռում

հայոց մշտանորոգ ու «անլռելի զանգակատունը», հնչում զանգակների պարզ ու վճիտ ղողանջների պես, դառնում բյուր-բյուրավոր ևահատակների անմեղ հոգիների փրկության կենդանի պատարագ, ևսև ցասման ու վրեժի փոքրիկ մարտակոչ: Հնչում է... քանզի եղել է 1915-ը, կա Դեր-Զորը՝ հողեղեն և ջրեղեն գերեզմանոցն այն, որն ամփոփում է ավազի հետ խառնըված, բայց դեռ «կենդանի» ևշխարները հայի, և դեռ իր արնագույն ջրերի մասին է պատմում Եփրատը:

ԽՈՍՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԸ

Սիրեցյալ եղբայրներ ի Քրիստոս և Որդիք Հայկազյան ցեղին, հարգարժան հոգևորական և աշխարհական պատգամավորներ Ազգային-Եկեղեցական Ժողովի, վստահ եմ այս պահը յուրաքանչյուրիս կյանքին մեջ պիտի արձանագրվի որպես յուրահատուկ նշանակություն ունեցող մի էջ: Ես կողջունեմ այն որոշումը անգամ մը ևս այստեղ Ազգային-Եկեղեցական Ժողովին, որով ուզեցին ժողովի ավարտին և գահակալության ևախօրյակին գալ այստեղ, ծնրադրել ևահատակաց հիշատակին առջև, հարգանք ընծայել ևնոց ամեն հիշատակին և ունկնդիր դառնալ ևնոց անբարբառ պատգամին: Այսօր, եղբայրներ և քույրեր, եկած ենք ժամադրության մեր ևահատակներուն հետ և եկած ենք, որովհետև ևսև այս տարին ութսունամյակն է ամեն հիշատակին:

Հայ ժողովրդին ներկա կյանքին մեջ ամենուրեք՝ ի Հայաստան, յԱրցախ և ի սփյուռս աշխարհի ութսունամյակը բարձրակետ թվական պիտի դառնա որպես միազանգումի տարի մեր ազգի և Եկեղեցվո միության և զորության, հավատարմության ևնոց անժամանցելի իրավունքի ձայնին և որպես վերանորոգման տարի ամբողջ հայ ազգիս համար: Ես երախտապարտ եմ Աստուծո, որ այս ութսունամյակին տեղի կունենա իմ կաթողիկոսական ընտրությունը և գահակալությունը: Փառք քեզ, Աստված, որ այս մեծ պատվին արժանի ըրիր:

Եղբայրներ և քույրեր, ութսունամյակին առաջին օրերը ես Դեր-Զոր ևնցուցի: Յոթը հունվարի գացի Դեր-Զոր ևնապատը, գացի ձեռքերս ևգամ մը ևս խառնեցի Դեր-Զորի ևնապատի ավազներուն մեջ և այս իմ դողդոջ ձեռքերուս դպաև հողին տակեն դուրս եկող ևոր աճյունները, մասունքները մեր ևահատակներուն: Չեք կարող երևակայել կյանքի այդ պահը, երբ խորը փորած ատենս այս ձեռքերուս դպավ գանգը հայ մանուկի մը և ոսկորներ ևոր շուրջ: Եղբայրներ, այս էր իրականությունը ութսուն տարիներ առաջ: Եկած ենք այսօր ոչ թե իրենց հարգանքին համար, Աստված սիրեք, հարգած են և պիտի հարգեք, հավատամ: Եկած ենք իրենցմե ուժ առնելու, ևահատակության ոգին մեր կյանքին խառնելու համար, եկած ենք զոհողության գերագույն դասը սորվելու համար: Եկած ենք խաչին երկրպագելու, խաչյալ Հիսուսին հետ մեր ևահատակներու պատկերը այս խաչին վրա տեսնելու համար:

Եղբայրներ, քսաներորդ դարու այս վերջին տասնամյակին, ես կհավատամ, որ իբրև վերանորոգյալ ազգի գավակներ, այլևս սուգի, կոծի, ցավի, ինքզինքնիս միշտ ջարդված, հալածված ազգ ըլլալու պատկերեն դուրս պիտի բերենք: Միշտ խոսեցնաք, միշտ գրեցինք՝ ջարդեցին մեզի, հալածեցին մեզի, հողին հետ խառնեցին մեզի: Ահավասիկ, քանի այլևս պիտի

փոխվի մեր հայացքը մահեն դեպի կյանք: Այս է ճշմարտությունը ութսունամյակին: Եվ ես կավարտեմ իմ խոսքը՝ ըսելու համար, որ մենք պիտի հավատարիմ մնանք այդ ոգիին և եթե երբեք քսաներորդ դարը սկսավ սև թվականով, ահավասիկ պիտի վերջանա պայծառ լույսով, Հայաստանի Պետության անկախության հռչակումովը և մեզ բոլորիս ամոր շուրջը միասնական ոգիով իբրև Եկեղեցի և ժողովուրդ համախմբվելու գաղափարովը, վճռականությամբ: Այս թող ըլլա այսօր Ծիծեռնակաբերդի հուշարձանեն՝ անլռելի այս զանգակատունեն, մեր սրտված դասը, որպեսզի ճահճատակները օրհնեն մեզ և երկինքեն, երբ ճայիկ այժմ Հայաստանի և ամբողջ Սփյուռքի բոլոր երկիրներեն հավաքված այս համախմբումին, պիտի լսեն ու խորհին. «Մենք իզուր չմեռանք: Մեր մահը կյանք արժեցուցեց և այժմ շարունակեցեք այդ կյանքը իրրև վերածնյալ ազգ, պետություն»: Ամեն:

* * *

Հրաժեշտից առաջ ամենքն ասես մտովի առ Աստված են հղում իրենց աղոթք-խնդրանքը, որը, եթե թղթին հանձնելիս լիներին, գուցե հենց այսպիսին լիներ. «Ողջո՜ւյն քեզ, Աստվա՛ծ, Արարիչ երկնի և երկրի, կենաց Աղբյուր, գթության Հայր, արդար Դատավոր, Հայր Ամենակալ, հայացքդ գեթ այսօր արևի՛ր մեզ վրա, որպեսզի այն դառնա լո՜ւյս մեր մտքերում, հո՜ւյս՝ մեր սրտերում, հավա՜տք մեր հոգիներում, սե՜ր՝ մեր կյանքում:

Մեր կյանքը կապեցինք Քեզ, ո՛վ Հիսուս Քրիստոս՝ Որդի Աստուծո, Վարդապետ Բարի, Հովիվ Քաջ: Մեր հողը ոռոգեցինք նահատակների, մարտիրոսների արյունով, մեր քարերը սրբատաշեցինք, որպեսզի նրանց վրա քանդակենք Ավետարանիդ սրբախոս բառերը, Արարատահմման երկնահայաց գմբեթներով բազում եկեղեցիներ ու վանքեր կառուցեցինք: Ավետարանդ «Հայր» և Եկեղեցիդ «Մայր» կոչեցինք, հավատքդ մեր մաշկի գույնին խառնեցինք...: Հայցում ենք Քեզնից, ով Քաջ Հովիվ, արոտավայր Հայաստանդ ազատիր բռնագրավիչներից, որ լերկ խոպանը ծածկելու համար փուշ են սերմանում (եթե իհարկե սերմանել գիտեն):

Իմաստության, արիության հոգին ապրեցրու մեր նոր զավակների սրտերում, կենդանի նահատակության գիտակցությամբ ներգործիր նրանց մեջ Ապրիլյան նահատակների զոհաբերման շունչը, որպեսզի կարողանան հասնել մեր իղձ-երազին, պատմության ժառանգությանը, նահատակների կտակին, որը մեր ցեղի իրավունքն է, աստվածային արդարության ու աստվածապարգև ազատության տուրքը տառապակոծ, խաչապաշտ ու խաչչարչար ժողովրդիդ. Ամեն»:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ



Վեհափառ Հայրապետը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի
եւ ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանի հետ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ
ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 80-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

Սիրեցեալ զաւակունք Հայոց Սուրբ Եկեղեցւոյ և որդիք Հայկազնեայք.

Սուրբ Յարութեան տօնի յաջորդող Մեռելոցի օրն է այսօր: Հայաստանեայց Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սրբադրոշմ վեհավայրից ենք ուղղում Մեր խօսքը հայ ժողովրդի բոլոր զաւակներիդ ուր էլ լինէք, Մայր Հայրենիքում, Արցախում կամ արտասահմանում:

Երէկ Զատիկ էր. գերազանց ցնծութեան օր, մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի Յարութեամբը մահուան վրայ տարուած յաղթանակի պատճառած հոգեկան բերկրանքովը զեղուն:

Յառաջիկայ երկուշաբթի Ապրիլ 24 է. 1915 թուի Ապրիլեան եղեռնի մեր նահատակների յիշատակի ոգեկոչման և պանծացման օր: Այս տարի մանաւանդ, Մեծ եղեռնի 80-ամեակի հանգրուանի առաջ ենք կանգնած, ինչ որ իւրայատուկ և բացառիկ նշանակութիւն ունի մեր վերաբերմունքի համար հանդէպ հայութեան դէմ գործուած ցեղասպանութեան և նրան զոհ գնացած մեր անմոռանալի և անմահ նահատակներին, առաւել քան մէկ և կէս միլիոն զոհերին:

Այս բոլորի միջից ի յայտ եկող և մեր մտասևեռումի առարկայ դառնալիք երևոյթը կեանքի և մահուան իրաղութիւնն է: Ապրիլեան եղեռնի օրերին Օսմանեան կայսրութեան ժառանգորդ Իթթիհատական Թուրքիան մահուան սև ուրուականը փորձեց տարածել ողջ հայութեան վրայ, մեր Հայաստան աշխարհից ի սպառ արմատախիլ անելու համար մեր ժողովրդին և վերջակէտ դնելու հայ ազգի գոյութեան: Ցեղասպանութեան առաջին ոճրային արարքն էր, որ այսպէս կատարում էր քսաներորդ դարի սկզբին ողջ մարդկութեան կեանքում:

Շատեր, անհատներ, ազգեր և պետութիւններ, խորհեցին որ հայութեան բնաջնջումը իրականացել էր և գերեզմանի քարը դրուել՝ հայ ժողովրդի գոյութեան վրայ:

Բայց յարութեան զօրութիւնը մի անգամ ևս վերյայտնուեց. մահապիւռ ջարդերից դուրս եկաւ մեր ազգը ու նոր կեանքով սկսեց տրոփել նրա սիրտը: Համաշխարհային Առաջին պատերազմի աւարտին 1918 թուին Սարտարապատեան հերոսական ոգով տարուած գոյապայքարը պսակուեց Հայաստանի մի կարևոր մասի ազատագրումովը և Անկախ Հանրապետութեան հռչակումովը Մայիսի 28-ին:

Ճիշդ է, որ կարճ տևեց այդ անկախութիւնը: Խեղդուեց հայութեան ազատութիւնը: Բայց ազատութեան և անկախութեան, ազգային ինքնիշխան գոյութեան կամքը մնաց տոկուն և առողջ: Եվ ահա հօթանասուն տարիներ յետոյ, երբ միջազգային դէպքերն և կացութիւնները տարբեր ընթացք ունեցան, այդ կամքը վերստին պոռթկաց մեր Մայր Հայրենիքում այս անգամ Ղարաբաղեան ազատատենչ շնչով, և պսակուեց Հայաստանի անկախ Հանրապետութեան հռչակումով ու եռագոյն դրօշի վերստին ծածանումով 1991 թուի Սեպտեմբերի 21-ին:

Արտասահմանում ապրող հայութիւնը իր ազգային-եկեղեցական կեանքով, իր կրթական ու մշակութային օճախներով և իր ազգային քաղաքական կազմակերպութիւններով 1915-ի ցեղասպանութիւնից դուրս եկաւ վերապրումի և հայկական ազգային ինքնութեան պահպանումի յարատևողական սխրալի ջանքերով, միշտ ինք իրեն հաղորդ պահելով Հայաստանի ժողովրդին հետ և հայ ազգի իրաւունքների ձայնը մշտաբարբառ հնչեցնելով ողջ աշխարհում:

* * *

Ներկայումս մենք գտնւում ենք նոր, յուսալից և նպատակասլաց իրադրութեան առջև: Ամենէն մեծ, կենտրոնական, անկիւնադարձային նշանակութիւն ունեցող իրականութիւնը մեր Մայր Հայրենիքի անկախ Հանրապետութիւնն է, որի հռչակման, ամրացման և զօրացման համար անգնահատելի զոհողութիւններ են մատուցուել և մատուցւում հայրենի նորակազմ պետութեան և մեր ժողովրդի զաւակների կողմից, անխտիր: Կերպարանափոխւում է մեր կեանքը թէ՛ հայրենիքում և թէ՛ արտասահմանում:

Ապրիլեան եղեռնի 80-ամեակը մեզ առաջնորդում է դէպի մի հիմնական գաղափարական, որի իրականացումը մեր կեանքում մեր բոլորի սրբազան պարտքն է: Այդ հրամայականն ու իտէալը մեր կեանքով ու աշխատանքով արտայայտելի միութիւնն է ու միասնական գործելակերպը: Մեր զօրութեան աղբիւրն է այս, մեր բոլորի նշանաբանը, լինի դա Եկեղեցում, լինի հայրենիքում, լինի արտասահմանում: Ժամն է համատեղման: Պահն է ներդաշնակ գործունէութեան մէկ Եկեղեցի, մէկ հայրենիք, մէկ պետութիւն կարգախօսի ներքև:

Սիրելիք, Ապրիլեան եղեռնի ցեղասպանութեան օրերին մեր թշնամին ո՛չ մի զատորոշում չդրեց մեր ժողովրդի զաւակների միջև: Ո՛չ դաւանաբանական, ո՛չ գաղափարաբանական և ո՛չ դասակարգային խտրութիւն դրուեց մահուան գործադրման մէջ: Մահը միացրեց բոլոր հայերին: Այժմ ժամանակն է որ կեանքը մեզ միացնի Հայկեան յարութեան այս նոր առաւօտին:

Այդ միութեան զօրութեամբ է որ մենք կարող կը լինենք մեր ազգի դէմ գործուած ցեղասպանութեան անարդարութիւնը ճանաչել տալ ողջ աշ-

խարհին և արդարութեան մեր իրաւունքը, որպէս սուրբ կտակ մեր նահատակներին, ընդունել տալ բոլոր ազգերին:

* * *

Ապրիլեան եղեռնի մեր նահատակները իրենց ողջ գոյութեամբը հաւատացին և հետևեցին այն ճշմարտութեան որ Քրիստոս Իր կեանքով և խօսքով փոխանցեց ողջ մարդկութեանը. «Մի՛ երկնչիք յայնցանէ որք սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել» (ՄԱՏԹ. Ժ 28): Ոգին է կենդանարար: Ներկայումս մենք կոչուած ենք այդ ոգին պահելու առողջ և գործօն՝ մեր ողջ կեանքում: Այդ ոգին ուրիշ միջոց չունի իրեն արտայայտելու, բայց միայն միացեա՛լ ջանքերով և զոհաբերակա՛ն գործնական եղանակներով: Հայրենասիրութեան փորձաքարը հայրենաշինութիւնն է:

Լսեցէ՛ք այս ձայնը Ս. Էջմիածնից, ձեր բոլորի Մայր եղող Աթոռից: Այստեղ շինուեց «լուսոյ խորանը», «այստեղից ծագեց մեզ համար լոյսը ի Հայաստան աշխարհի»: Այդ լոյսը մէկ է մեզ համար ուր էլ մենք լինենք:

Մեր Եկեղեցու Նուիրապետական բոլոր Աթոռներով, Հայաստանում և արտաշխարհում տարածուած բոլոր եկեղեցական թեմերով և ազգային, քաղաքական և այլ կարգի կազմակերպութիւններով բոլորուենք մեր Անկախ Հանրապետութեան շուրջ, որպէսզի առաւել ևս ուժգնութեամբ ապրենք յարութեան նորաբոյր շունչը մեր ողջ ազգի կեանքում, որպէսզի, առաւել հարազատութեամբ զգանք նահատակների անմահ, կենսատու և միազանգիչ ոգին վասն փառաց Աստուծոյ, վասն ծառայութեան հանուր մարդկութեան և վասն յաւերժութեան ազգիս հայոց. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
17 Ապրիլ 1995



«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ»-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Ապրիլի 21—23-ը Գիտությունների Ազգային Ակադեմիայի ճիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայոց Մեծ եղեռնի ութսունամյակին ձվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի և Ջորյան ինստիտուտի համատեղ կազմակերպած «Ցեղասպանության հարցեր» եռօրյա գիտաժողովը, որին մասնակցում էին գիտնականներ 16 երկրներից: Բացման իր խոսքում Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ասաց, թե «ցեղասպանությունը զուտ քաղաքական ծրագիր էր՝ թելադրված Օսմանյան կայսրության կոնկրետ պետական շահերից», և համակողմանի վերլուծությամբ ներկայացրեց այն գործոնները, որոնք հանգեցրին այդ ծրագրի հղացմանը և իրագործմանը:

Այս գիտաժողովում ոչ միայն ոգեկոչվեց հիշատակը մեր սուրբ նահատակների և մեկ անգամ ևս վերահմաստավորվեց մեր ազգային ցավը, այլև հայոց ցեղասպանությունը քննվեց արդի աշխարհում տեղի ունեցող պատերազմների և քաղաքական հակամարտությունների ընդհանուր համատեքստում: Զուգադրական-համեմատական եղանակով ցույց տրվեցին այն ընդհանրությունները, որոնք կան 20-րդ դարում տեղի ունեցած ցեղասպանությունների միջև: Գիտաժողովը կարևորեց պարզելը քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյա-հոգեբանական և ազգային-ռասսայական այն գործոնների, որոնք հանգեցնում են ցեղասպանության, և շեշտվեց, որ նման քննության հիման վրա կատարված եզրահանգումները, ունենալով գիտական մեծ կարևորություն, միաժամանակ կնպաստեն մարդկության դեմ գործվելիք նոր ոճիրների կանխմանը:

Գիտաժողովի մասնակիցներին օրհնության իր խոսքը բերեց և ելույթ ունեցավ նաև Վեհափառ Հայրապետը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ»-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ (Ապրիլ 21—23, 1995, Երևան)

Յանուն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ և Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռի՝ Ս. Էջմիածնի՝ հայրական ջերմ սիրով և խոր գնահատանքի զգացումով կ'ողջունենք Ձեզ՝ Վեհմաշուք Նախագահ Հայաստանի Հանրապետութեան, յարգարժան անդամներ Հայոց ցեղասպանութեան 80-ամեակին նուիրուած Միջոցառումների Կազմակերպման պետական Յանձնաժողովի և Հայագիտական Հետազօտութիւնների ու Վաւերագրման Ջօրեան Ինստիտուտի, և սիրելի գիտնականներ և գիտնականուհիներ, երբ այսպէս համախմբուած էք մեր վերանկախացեալ հայրենիքի մայրաքաղաք Երևանի մէջ և առարկայական քննարկման ու խորհրդածութեան առարկայ կը դարձնէք մեր արդի պատմութեան ամենէն ծանրակշիռ դէպքերէն մէկը՝ Համաշխարհային Առաջին պատերազմին, յատկապէս 1915 թուականին հայութեան դէմ գործուած ցեղասպանութիւնը:

Մենք կը գնահատենք նաև կազմակերպիչ Յանձնախումբին այն մօտեցումը, որով ասոնք հայութեան դէմ Երիտթուրքերի կողմէ գործադրուած ցեղասպանական արարքը այս գիտաժողովին մէջ կը դիտեն առհասարակ ցեղասպանութեան ընդհանուր երևոյթի շրջագծին մէջ ներառնելով նաև ուրիշ ազգերու դէմ գործուած նման արարքներ: Այս ընթացումով՝ գիտաժողովը կը զգենու իսկապէս միջազգային նկարագիր, տարողութիւն և արժէք:

Մեզի համար անձնապէս նշանակալից կը նկատենք այն իրողութիւնը որ իբրև նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ս. Էջմիածնի Մայր տաճարէն դուրս Մեր առաջին հրապարակային ելոյթը կ'ունենանք ա՛յս առիթով, ինչ որ գոհունակութեան բացառիկ առիթ մըն է Մեզ համար, որովհետև Մենք այս գիտաժողովին մէջ կը տեսնենք նահատակներու ոգիին և կտակին հանդէպ հաւատարմութեան վերաբերում և մեր պատմութիւնը ճշմարտօրէն ըմբռնելու նախանձախնդրութիւն:

Դուք գիտնականներ էք, ցեղասպանութեան երևոյթին քննարկման նուիրուած մասնագէտներ, ձեր առաքելութիւնն է ի յայտ բերել և առարկայական ճշգրիտ ու տոկուն տուեալներով լուսարձակի տակ դնել հայոց դէմ գործուած ցեղասպանութեան պատմական իրողութեան այլազան երեսները և լուսաբանել անոնց ընկերացող ընկերաբանական, իրաւաբանական և լայն իմաստով՝ քաղաքական ու գաղափարաբանական հանգամանքներն ու հարցերը: Ձեր կոչումն ու նպատակն է որոնել և ի լոյս բերել **ճշմարտութիւնը:**

Որպէս Եկեղեցի՝ Մենք կ'ողջունենք ձեր աշխատանքը, որովհետև էապէս և խորապէս ճշմարտութեան նախանձախնդիր քարոզողն ու մեծագոյն ջատագովն է եղած Եկեղեցւոյ հիմնադիրը՝ Ինք Քրիստոս: Յովհաննու Աւետարանին մէջ կը կարդանք Իր խօսքերը.— **«Եւ ճանիջիք զճշմարտութիւնն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ»** (Յովհ. Ը: 32): Այո՛, ճշմարտութեան ժխտումը կամ մերժումը ծանր բեռ է ոչ թէ միայն մերժուածին վրայ, այլ և մերժողին: Ճշմարտութիւնը կրնայ վարագուրուիլ, կրնայ խեղդուիլ, բայց ո՛չ խափանուիլ կամ կորսուիլ: Դուք գիտնականներդ ճշ-

մարտութեան առաքեալներ եղէք, ինչպէս կ'ըսէ նոյն Առաքեալ-Աւետարանիչը. **«Գործակիցք լիցուք ճշմարտութեանն»** (Գ. Յովհ. 8):

Եկեղեցին յոյսին ջահն է, կեանքին օճախը, յարութեան կոչնակը: Ո՛չ մահուան ողբերգակը և ո՛չ ալ գերեզմանին պահակը: Ահա ութսուն տարիներ շարունակ, անխափան և աննահանջ հետևողականութեամբ Հայոց Եկեղեցին իր աղօթքներով, ոգեկոչական արարողութիւններով և իր քարոզութիւններով կենդանի պահեց ցեղասպանութեան զոհ գացած առաւել քան մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակն ու կոտակը, միշտ վառ պահելով յոյսին լոյսը հայ ժողովուրդի հոգիին, կեանքին և տեսլականին մէջ: Միանգամայն ողջ քրիստոնեայ աշխարհին և մարդկային իրաւանց շրջագծին մէջ միջազգային, միջ-եկեղեցական կազմակերպութիւններու մօտ ան եղաւ յուշարարը և բանբերը ցեղասպանութեան ճանաչումին:

Կը յիշեմ, երէկուան պէս, երբ ճիշտ քսան տարիներ առաջ (1975) և ճիշտ այս օրը (24 Ապրիլ), մեր Եկեղեցին Նիւ Եորքին մէջ նշեց հայկական ցեղասպանութեան 60-ամեակը, Ապրիլեան Մեծ եղեռնի վկաներէն դեսպան Հէնրի Մորկընթոյի (Henri Morgenthau) թոռնուհին՝ հռչակաւոր պատմաբան Պարպարա Թաքման (Barbara Tuchman) կանգնեցաւ վեց հազար վերապրող հայերու դիմաց Մէտիսընը Սքուէր Կարտընի սրահին մէջ և ըսաւ. **«Փարիզի խաղաղութեան Համաժողովին ձեր ներկայացուցիչը բանաստեղծ Աւետիս Ահարոնեան ըսաւ թէ նահատակներու մարմինները՝ «հողին ընդերքէն կ'աղաղակեն», տենչալով ապահովութիւնը անկախ օճախի մը: Իրենք (նահատակները) զայն չտեսան. միայն գիտցան որ ան կ'ապրի ձեր մէջ և ձեր ինքնութեան հայկականութեան պահպանումին մէջ, որ ինքզինք ամուր պէտք է պահէ որպէսզի պատրաստ ըլլաք պատմութեան բախտորոշ մէկ դարձուածքին»:**

Եթէ ինք՝ Պարպարա Թաքման այսօր ողջ ըլար՝ պիտի զգար որ ոչ միայն **պատմաբան** մըն էր ինք, այլ նաև **մարգարէ** մը, որովհետև ահա եկաւ այդ բախտորոշ դարձուածքը և հայ ժողովուրդը արթուն, պատրաստ և արի գտնուեցաւ վերստեղծելու իր անկախութիւնը, իր ինքնուրոյն և գերիշխան պետականութեամբ:

Եւ ի՞նչ սրտապնդիչ երևոյթ որ ահա այդ անկախ պետականութեամբ ապրող մեր հայրենիքին մէջ է, մեր Հանրապետութեան Նախագահի հովանիին ներքև և պետական աւագանիին ներկայութեան, որ տեղի կ'ունենայ իր տեսակին մէջ եզակի այս գիտաժողովը:

Մեր Սուրբ Եկեղեցին կ'ողջունէ զայն և կը յուսայ որ ճշմարտութեան լուսաբանումով դուք նպաստած կ'ըլլաք արդարութեան և խաղաղութեան նուիրական դատին և մեծ ծառայութիւն մատուցած՝ մեր հայ ժողովրդին:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ ԱՍՎԱԾ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆԱՆՔԻ ԽՈՍՔԸ

Սիրելի պարոն նախագահ և թանկագին հայրենակիցներ:

Ինձ համար այս պահը կաթողիկոսական պարտավորության սկսման այս շրջանին յուրահատուկ տեղ և նշանակություն ունի իմ կյանքին և առաքելության մեջ: Առաջին անգամն է, որ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս պիտի օրհնեմ տուն մը, որ տուն չէ մեր ապրողներուս համար, այլ պիտի ըլլա տունը ներշնչողական հիշատակին մեր նահատակներուն: Մենք այս տունը պիտի գանք, այնտեղեն ներշնչվելու համար նահատակության այն սքանչելի գաղափարովը, որ ազգերը մեծցնող գաղափարներեն ամենեն ուժգիններեն մեկն է:

Այսօր բնականորեն ես կանդրադառնամ, ձեզի հետ միասին, որ Հայաստանը շատ թանգարաններ ունի, գանձատուներ ունի, տուն-թանգարաններով հարուստ է, ինքը թանգարան մըն է. բայց, այս թանգարանը իրեն հատուկ մասնավոր նշանակությունը ունի, իր տեսակին մեջ եզակի է: Հայկական Մեծ եղեռնի հիսունամյակին կանգնեցրինք Ծիծեռնակաբերդի հուշարձանը. ահավասիկ 80-ամյակին կհիմնենք այս թանգարանը: Ես այստեղ կօրհնեմ ձեր ձեռնարկը, կգնահատեմ ձեր բոլորի ջանքերը, գաղափարը հղացողներուն և զայն գործադրողներուն, բարերարներուն և աշխատողներուն:

Կուզեմ, որ այս տունը այլևս դառնա մեզ համար մի նոր «անլռելի զանգակատուն»՝ բերելու բոլորիս և գալիք սերունդներուն ձայնն անմահության, մահվան մեջեն կյանքին հաղթելու ուղին բանալ մեր առջև, մեկ խոսքով՝ մեր ժողովուրդի կենսափիլիսոփայության նոր էջ մը դառնա ան: Մենք մահվան կպատասխանենք կյանքով, ավերման կպատասխանենք վերաշինությամբ, կործանման կպատասխանենք կառուցումով: Այս է հայուն ճակտին գիրը: Այդ գիրին նո՛ր փայլ պետք է ավելցնե այս թանգարանը:

Բացման այս առիթով մտածեցի, թե ի՛նչ կրնամ ընծայել այս թանգարանին: Մտածեցի, որ Դեր-Զորի անապատի ավազներեն պոկված, ավազներու մեջեն փրկված նշխար մը՝ հայ նահատակի մը ոսկորը, բայց ոսկոր ըլլալեն անդին մասունք մը բերեմ, այն մասունքը, որ հիսուն տարի աղոթքով օծվեցավ և խնկվեցավ Անթիլիասի մեր Կաթողիկոսարանի հուշարձան-մատռան մեջ: Այժմ զայն ամենայն խոնարհությամբ և առ Աստված շնորհակալությամբ և երախտագիտությամբ կընծայեմ նահատակաց այս թանգարանին: Կուզեմ, որ ան գետեղվի այնպիսի տեղ մը, որ անցնող այստեղեն մահվան մասին չմտածե, այլ՝ կյանքին և մեր հայրենիքի ծաղկումի մասին:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ

Հավատացյալ և հավատարիմ հայորդիք:

Այս օրը՝ 24 ապրիլ, տարվան 365 օրերուն մեջ ամենեն հոգեկից, հոգեվոր և ազգային ապրումներով հորդուն, գեղուն օրերից մեկն է: Ամեն մեկ հայու հոգիին մեջ այսօր կկատարվի այնպիսի շրջադարձ մը, մտածողության և զգացումի այնպիսի պահ մը, որ ամեն օրվան հատուկ պահ չէ: Եզակի օր մըն է այսօր: Ահավասիկ առավոտուն ձեր բոլորի ականջով և մեր հաւրապետության վսեմաշուք նախագահին հետ միասին գացինք և ծաղկեպսակ զետեղեցինք Ծիծեռնակաբերդի հուշարձանին առջև որպես հարգանքի արտահայտություն, սիրո կապվածություն այն գաղափարին, այն հավատքին և այն ապրումներուն, որոնց համար իրենց կյանքը տվին մեկ և կես միլիոն հայեր: Զեզի նման նույն արյունը ունեցող, նույն անունը կրող, նույն անցյալը բաժանող և նույն կյանքի իրավունքին տեր կանգնող ավելի քան մեկ և կես միլիոն հայեր այսօր դարձել են կենսագիր վկաներ:

Այս տարի, ութսունամյակին առիթով, մեր Հայաստանի պետության որոշմամբ և հատուկ հանձնաժողովի կազմակերպական ջանքերով, առաջին անգամ ըլլալով, Հայաստանի Մայր Հողին վրա թանգարան մը բացվեցավ, որուն մեջ մշտաբարբառ պիտի ապրին մեր ճահատակները և Հայաստանի բազում թանգարաններուն մեջ եզակի վկայարան մըն է այս թանգարանը ինձ համար և պետք է լինի ձեր բոլորի համար: Եթե մեկը ուզեր ճշգրիտ բնորոշումով նկարագրել այդ թանգարանին իմաստը, **թանգարան** բառեն ավելի հայերեն լեզվին մեջ **վկայարան** բառն էր, որ մենք պետք է ընտրեինք այդ հաստատության համար: Տեղ մը, ուր վկաները կխոսին, վկայությամբ կխոսին և մեր կյանքին մեջ ներգործություն կկատարեն ամեն անգամ, երբ այդ թանգարանին մեջ ոտք կդնենք: Ահավասիկ երեք օրեն ի վեր քաղաքամայր Երևանին մեջ հատուկ գիտաժողով կգումարվի՝ հայ ժողովուրդի և նաև միջազգային կարծիքը սևեռելու համար մեր ժողովուրդի կրած այդ մեծագույն չարիքին՝ 20-րդ դարու Ապրիլյան եղեռնին՝ ղեցասպանությանը: Օտար երկրներեն օտարազգի գիտնականներ, պատ-

մաբաններ համախմբվեցան այստեղ, և դուք բոլորդ ալ հետաստացույցի, ձայնասփյուռի, մամուլի միջոցավ լսեցիք, թե ի՞նչ գաղափարներ արտահայտվեցան, ի՞նչ հետաքրքրներ բացվեցան, ի՞նչ ճշտումներ կատարվեցան, մեկ խոսքով՝ երեք օրերե ի վեր ամբողջ հայությունը Մայր Հայրենիքի մեջ կապրի մեր ճահճատակներուն հիշատակին կշռույթովը: Անով կարծեք կշնչենք, անով կարծեք կտրոփենք:

Այսօր եկեղեցիին մեջ Սուրբ Պատարագի մատուցմամբ և քիչ ետքը հուշարձանին առջև հոգեհանգստյան արարողության կատարմամբ մենք կրոնական ապրումներու մեջեն պիտի ճայինք, թե ի՞նչ ենք մենք, ո՞վ ենք մենք ճահճատակներու հայելիին մեջ: Ատոր համար ես այսօր ընտրեցի այն խոսքը Սուրբ Գիրքեն, որուն հաճախ մենք անդրադառնալու առիթը չենք ունենար: Եբրայեցվոց թուղթին հեղինակը իր թուղթի 12-րդ գլուխի առաջին համարին մեջ կգրե. «Այսուհետեւ եւ մեք որ այսչափ շուրջ զմեզ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեցուք եւ զմեղս կարեւորս, համբերութեամբ ընթացուք ի պատերազմն որ առաջի կայ մեզ. հայեցուք ի զօրագլուխն հաւատոց եւ ի կատարիչն Յիսուս»: Առաքյալը կըսե. «Մենք, որ մեր շուրջը համախմբված ունենք հսկա բազմություն մը վկաներու, մարտիրոսներու, մեր կյանքի, նկարագրի, ապրումներու մեջեն դուրս շպրտենք այդ ամբարտավանությունը, հպարտությունը և բոլոր այն մեղքերը, որոնք կկաշկանդեն մեզ: Տոկունությամբ, համբերությամբ, հարատևությամբ քայլենք այն պատերազմի մեջեն, որ մեր առջև կա և միշտ նայենք հավատքի զորագլխին և կատարիչին՝ Հիսուս Քրիստոսին»: Ի՜նչ խորունկ բառեր են այս բառերը իմացողին համար, խորհրդածել գիտցող անհատին համար:

* * *

Եղբայրներ, քույրեր, առավոտուն, երբ մեր աչքերն այսօր արևու լույսեն ավելի կնային այն մյուս լույս աչքերուն, որոնք երկինքեն մեզի կնային, այդ աչքերուն մեջ մենք կտեսնենք անմահության, կյանքին, գաղափարին և ապրումին հավերժության հաղթանակը: Հարուցյալ Հիսուսի համար ասվել է. **«մահվամբ զմահ կոխեաց»** (իր մահովը մահը խափանեց), ես այսօր թույլ եմ տալիս ինձ ասելու այս սրբազնագույն բեմից, որ մահվամբն ճահճատակաց՝ կոխվեց հայության մահը, արգիլվեց հայության մահը և անոնց հաղթանակը այն է, որ մենք ապրեցինք: Իրենք գնացին, բայց չկորան: Եթե կորած լինեին, մենք ինչո՞ւ ենք հուշարձան սարքում, ինչո՞ւ ենք պատարագ անում, ինչո՞ւ ենք անոնց հիշատակը մեր մեջ հավերժորեն ապրեցնում: Դա կնշանակի, որ անոնք չեն կորել, մարմինները գնացել են հողին, խառնվել են ավազին Դեր-Զորի, բայց մարդը մարմնից, ֆիզիկական գոյությունից վեր էակ է, և ճահճատակները այդ անմահության վկաներն են:

Այսօր ես ուզում եմ երկու բառով միայն ձեզ բոլորիդ՝ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքի չորս տարածքում, այնտեղ, ուր հայեր կապրեն, հրավիրել ու ասել. եկեք, եղբայրներ, մենք մեր հոգիների մեջ նայենք, մեր նայվածքները հավաքենք դրսից, ուրիշների վրա նետված իրենց վիճակից և մեր հոգիների մեջ սևեռինք: Այս օրը բյուրեղացման, հոգեկան մաքրացման օրն է, մեր սայթաքումներին դեմ ընդվզելու օրն է, մեղքին, հանցան-

քին, թերիին, չարին դեմ ըմբոստանալու ժամն է: Եվ փոխարենը մեր մեջ տոկունության, հավատքի ջրդեղումի, ոռոգման, զորացման պահն է: Ունենք մեղքեր, շատ ունենք, ո՞ր մարդը չունե, բայց կարևորն այն է, որ ոչ թե մեղք չունենանք,—դա մարդկայնորեն անկարելի է,—այլ մեղքին դեմ ընդվզելու կամքը ունենանք և բյուրեղանանք: Ամբարտավանությունը, մենք զմեզ ամեն մեկից վեր նկատելու հոգեբանությունը կկաշկանդի մեզ: Մենք պետք է լինենք խոնարհ Աստուծո առաջ, վկաների առաջ, սրբերի առաջ: Խոնարհաբար ընդունենք մեր հանցանքները, մեր թերացումները և՛ իբրև մարդ, և՛ իբրև հայ, հանդեպ ուրիշին, հանդեպ Եկեղեցուն, հանդեպ հայրենիքին: Եթե մի մարդ, ով էլ լինի դա, իր պարտականությունը զլանում է հայրենիքի հանդեպ, մեղք է գործում: Նա, ով որ պարտականությունը զլանում է Աստուծո հանդեպ, մեղք է գործում: Մենք պետք է հոգեբանորեն սրբագրվենք, որովհետև մեզ նայում են նահատակները: Երբ դուք քայլեք, զգաք, որ մեծ մարդիկ ձեզ դիտում են, ձեր քայլերը շտկում եք: Այսօր մենք քայլում ենք նահատակների՛ հայվածքի լուսարձակի ներքև: Հետևաբար, եկեք հոգեկան վերանորոգմամբ վերստին մեր ինքնության քրիստոնեական, մաքուր, հայկական, հարազատ, առաքինի ինքնության մեջ վերականգնվենք: Թող նահատակները լինեն այսօրվան հաղորդությունը ձեզ բոլորիդ: Իրենց կյանքը տալու քաջությունը պետք է բոլորիս համար դաս դառնա, այսինքն՝ անդրադառնանք, որ եթե իրենք իրենց կյանքը տվին, իրենց արյունը թափեցին, մենք այսօր մեր քրտինքը պիտի թափենք՝ հայրենիքի շինության և մեր ժողովրդի բարձրացման համար: Եթե պահանջվի՝ նաև մեր արյունն էլ կտանք վասն կենացն ազգիս և վասն կենացն հայրենյաց: Հեղուկը, որ ամենեն թանկն է աշխարհիս մեջ, երկու անուն ունի և երկու տարրերից է բաղկացած: Մեկ հեղուկին անունն է **արյուն,** և մյուս հեղուկին անունն է **քրտինք:** Կենդանի՛ նահատակության, կենդանի՛ վկայությամբ, ապրելո՛վ արժեցնել հերոսությունը, կյանքո՛վ արժեցնել այն հերոսությունը, որ մեր նահատակներն իրենց մահովը արժեցուցին՝ ի գին իրենց արյան: Մենք կյանքին ենք կոչվել, կյանքով մահվան ենք պատասխանում և փչացման՝ վերստեղծմամբ: Թող այս լինի ձեր ճանապարհը:

Հետևաբար նայենք զոլագլուխին՝ Հիսուսին Քրիստոսին: Հավատքի զորագլուխին նայենք և համբերությամբ երթանք այն կյանքին մեջ, որ պատերազմն է չարին դեմ, հաղթանակով դուրս գանք, կյանքի մեջեն հաղթանակով, ինչպես մեր նահատակները հաղթական դուրս եկան իրենց մահվան մեջեն:

Թող Աստված ձեր մեջ այս գիտակցությունն ամրացնի և մեր ազգը վերանորոգվի, պայծառանա հոգով և նայի ապագային Աստուծո աչքերով և մեր նահատակների նայվածքով, հավիտյանս հավիտենից, ամեն:



829 ՏԱՐԻ ԱՆՑ

ՀՌՈՄԿԼԱՅԵՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

17 ապրիլ 1166 Ծաղկազարդի Կիրակի էր և Հռոմկլայի Կաթողիկոսարանը կթնդար ուրախությամբ, այդ օրը տեղի կունենար գահակալությունը Հայ Եկեղեցու ամենաերկարակյաց Հայրապետին՝ Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոսի հաջորդին: Արդարև, Գրիգորը, որը 53 տարիներ կաթողիկոսություն վարելեն ետո Հռոմկլայի մեջ հրավիրած էր Ազգային եկեղեցական ժողով, որպեսզի ընտրվի իր հաջորդը, որը ան ձ մը պիտի չըլլար, քան իր իսկ հարազատ եղբայրը՝ Ներսես Կլայեցին, այլապես հռչականուն իբրև Ս. Ներսես Շնորհալի: Անշուշտ, Գրիգոր Պահլավունին հաճախ և քանիցս ջանացած էր համոզել իր եղբայրը, որպեսզի ընդունի Հայրապետությունը, սակայն Ներսես Կլայեցին միշտ էլ մերժած էր, ինչպես ինքն իսկ կասեր՝ իր գահակալության օրվա քարոզի մեջ, թե «նախապես չիրագործվելու պատճառը ոչ թե Գրիգորի Իշխանական կամքը այլ միշտ մեր հրաժարիլն էր մեր անձի տկարության և հոգևոր աղքատության պատճառավ»: Եվ այսպես, Ծաղկազարդի այդ առավոտյան Ներսես Կլայեցին կհաջորդեր «ըստ մարմնո իրեն եղբոր և հոգվո իրեն հայր Գրիգորին» (Ներսես Շնորհալի կթղ., Թուղթ ընդհանրական, Երուսաղեմ, 1871, էջ 270):

Եվ ահա 829 տարիներ հետո դարձյալ Ծաղկազարդի կիրակի առավոտ՝ Կիլիկիո շնորհազարդ Հայրապետը, Տ. Տ. Գարեգին Բ-ն պիտի բարձրանա Սուրբ Էջմիածնի Աթոռը: Այդ օրը, վստահ ենք, որ հոգևոր կերպով Ս. Էջմիածնի մեջ ներկա է հոգելույս Վազգեն Ա. Հայրապետը՝ ուրիշ եր-

կարակյաց մի կաթողիկոս, որ ի սրտե երջանիկ է, կհավատանք, տեսնելով, որ իր հոգեհարազատ կրտսեր եղբայրը՝ Կիլիկիո Գարեգին Կաթողիկոսը կբարձրանա Լուսավորչի գահը, հաջորդելով իրեն: Գուցեև իր թաքուն փափագն էր, որ ահա դարձավ իրականություն, քանի որ Գարեգին Կաթողիկոսը, որին ինքը կնայեր եղբոր և որդու նման, ստանձնում է Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնը: Ահա այսպես, դարերի կամքով մեր Եկեղեցու մեջ կկրկնվի բազում նմանություններով և գեղեցիկ ներշնչումներով հայրապետական մի հաջորդություն:

Մեր սրտագին մաղթանքն է, որ մեր օրերի շնորհալին, Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո, որ իր ընդհանրական հանրապետության և Ս. Էջմիածնի գահին բարձրանալով ստանում է Գարեգին Ա կոչումը, լիովին կկարողանա արդարացնել այն բոլոր սպասելիքները, որոնք կապված են իր անձին, իր աստվածատուր շնորհներուն և իր նախկին հանգամանքին:

Գուցե չափից ավելի կխորանանք պատմության մեջ և պատմության նշանները կարդալու արհեստական ճիգ կգործադրենք, բայց բնական է, երբ խոսքը վերաբերում է Գարեգին Կաթողիկոսի անձին, որը 40 և ավելի տարիներ շարունակ հայոց պատմություն ուսուցանեց իր աշակերտներին, Հայ Եկեղեցու պատմության էջերից ներշնչումի դրվագներ բաժանեց իր շրջապատին, և ի վերջո, բոլորից ավել ինքն ունի պատմության հղացքը և կարող է կարդալ պատմության խորհուրդը:

Այս հիմքի վրա միայն կարելի է ըմբռնել, թե մարտի 29-ին, երբ Գարեգին Կաթողիկոսը դուրս եկավ Անթիլիասի Մայրավանքից, ինչու նախ կանոնական աղոթք արեց Մայր տաճարի մեջ, առանձնակի աղոթք Ապրիլյան նահատակների հուշարձանի մոտ: Եվ դրանից հետո այցելեց Կիլիկիո հանգուցյալ Կաթողիկոսների շիրիմներին, հոգվոց կարդաց նրանց հոգիներին... Նրանցից գուցե ընդմիշտ կհեռանար՝ իր կյանքը կապելու համար Ս. Էջմիածնի Կաթողիկոսներին և նրանց հիշատակին:

Միշտ չէ, որ կաթողիկոս այս ձևով կհրաժարվի Կաթողիկոսական գահ գրավելու և կարելի է ասել, որ այս դեպքը իրոք եզակի է, երբ Հայ Եկեղեցու ներկա համակարգի մեջ, խաղաղ պայմանների ներքո, մի կաթողիկոս թողնում է իր Հայրապետական Աթոռը և հրավիրվում է ստանձնելու մի այլ Կաթողիկոսական Աթոռ: Անշուշտ, մոտավոր թե հեռավոր օրինակներ կարելի է գտնել, օրինակ՝ Զաքարիա Աղթամարցին, որ 1450-ական թվականներին բռնագրավեց Էջմիածնի Աթոռը Գրիգոր Զալալբեկյանից, ավելի ուշ խույս տալու համար Էջմիածնից և Աղթամարի իր Աթոռը վերադառնալու, կամ էլ կարելի է հիշել մեկ ուրիշ եզակի դեմք Հայ Եկեղեցու պատմության մեջ: Երբ Երուսաղեմի մեջ 1649 թվականին ընտրվելով Պատրիարք, 1651-ին Պոլսի Պատրիարք, հետո կարողացավ Հալեպի մեջ օծվել օսմանյան հպատակության տակ գտնվող հայերի Կաթողիկոս:

Ահա մի քանի վարկածներ, որոնք վստահաբար առատ նյութ են տալիս խորհրդածության համար:

Գարեգին Կաթողիկոսի ընտրությունը մանք դիտում են Էջմիածնի գերագույն հաղթանակը պատմության դառը ճակատագրի դեմ: Ինչպես գիտենք, Ս. Էջմիածինը, որ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Հայ Եկեղեցու կենտրոնն էր, շատ շուտով կորցրեց այդ դեղը և, ըստ ընդունված կարծիքի, 484 թվականից ի վեր իր դիրքը գիջել էր տարբեր քաղաքական կենտրոնների՝ նախ մայր հայրենիքի մեջ՝ Դվինից մինչև Անի և Արգինա

և Աղթամար, այնտեղից դեպի հայ կյանքի նոր կենտրոններ՝ Ծամնդավը, Հռոմկլա և Սիս:

Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը 1293 թ. ի վեր հաստատված էր հայոց Կիլիկիո մայրաքաղաքի՝ Սսի մեջ և այնտեղ մնաց 1375-ից հետո, երբ Կիլիկիան հայտնվեց տարբեր ուժերի ազդեցության տակ:

Կարելի է ենթադրել, որ այժմ, երբ Կիլիկիո Աթոռը կորցրեց իր շնորհալի Հայրապետին, հանուն ազգի և Եկեղեցու գերագույն շահերի, պետք է ընտրի իր Կաթողիկոսական Տեղապահը և հավանաբար առաջիկա հոկտեմբերին Գարեգին Բ Կաթողիկոսի հաջորդը, որը հուսով ենք կգործի և կծառայի մեկ ազգ, մեկ հայրենիք և մեկ Եկեղեցի նշանաբանով: Բարի երթ նաև Կիլիկիո ապագա Կաթողիկոսին:

Բայց եկեք այսօր ուրախանանք Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությամբ և մեր շնորհավորանքը, սերն ու հարգանքը մատուցենք մեր ժամանակների ամենաարժանավոր հոգևորականին՝ մտքի, սրտի և հոգու աստվածատուր շնորհներով օժտված Գարեգին Հայրապետին, որը Ս. Էջմիածնի Աթոռին է բազմում անկախ Հայաստանի օրոք:

Համազգային այն սերը և համաժողովրդական այն խանդավառությունը, որի արձագանքները լսվում են Երևանի և Հայաստանի տարածքում, համոզում են մեզ, որ Գարեգին Ա-ն օրվա և ժամանակի մարդն է, որի առաջին հանգրվանը պետք է լինի հայոց դարձի 1700-ամյակը:

Պարագաների բերումով հեռու եմ հայրենիքից և Սուրբ Էջմիածնից: Բայց կիրակի օրը, Ծաղկազարդի զվարթ ու երջանիկ առավոտը իմ աղոթքները պիտի միանան Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի մեջ և շուրջը խռնված հազարավոր հայորդիներին՝ աղոթելու համար Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի երջանիկ և բարեբաստիկ գահակալության համար:

Եվ ո՞վ գիտե, այսուհետ Մայր տաճարի ելքին, երբ խաղաղության և սիրո խորհրդանիշ՝ սպիտակ աղավնիներ պիտի թևածեն դեպի Տրդատի դուռ, մինչև Վեհարան, մինչև Ներսիսյան լիճ և Խրիմյան աստղադիտարան, հազար-հազար շուրթերից պիտի լսվի «Կիլիկիան» և լույսի ու հույսի մի շող պիտի ծավալի հայոց հոգիներում:

Եվ գեղեցիկ միաբանությամբ իրար պիտի միանան Հայաստանն ու Արցախը, մինչև ցանկալի Կիլիկիան՝ մեկ ազգ և մեկ հայրենիք տեսլականով և Լուսավորչի լույս հավատքով:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ. ԱՇՃՅԱՆ

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԸ ԵՎ ԲԱՐԵՐԱՐԸ

Մենք բախտ ունեցանք ականատես և մասնակից լինելու պատմական իրադարձությանը: Ազգային-Եկեղեցական Ժողովը ընտրեց արժանավորներից ամենաարժանավորին, ողջ հայության կողմից ճանաչված և հարգված հոգևորականին՝ Գարեգին Սարգսյանին, որը իր մարդկային եզակի բարեմասնություններով, եկեղեցականի մեծ փորձով ըստ արժանվույն բազմեց Գրիգոր Լուսավորչի գահին, որպես 131-րդ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Վեհափառին սրտանց շնորհավորում է Մատենադարանի ողջ անձնակազմը: Խորապես համոզված եմ, որ այդ շնորհավորանքներին միանում է հայ մտավորականությունը թե՛ Հայրենիքում, թե՛ Սփյուռքում:

Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակիցները վաղուց և մոտիկից ճանաչում են Գարեգին Վեհափառին որպես գիտնականի, որպես բանասեղի և մեր Եկեղեցու պատմությանն ու քրիստոնեական գրականությանը նվիրված ծանրակշիռ աշխատությունների հեղինակի: Բայց քչերը գիտեն նորընտիր Կաթողիկոսին որպես Մատենադարանի ձեռագրերի հավաքածուն հարստացնող ջերմեռանդ նվիրատուի: Տարիներ շարունակ Հայաստան գալիս նա այցելում էր Մատենադարան՝ մի որևէ արժեքավոր ձեռագրով և նոր հրատարակություններով ուրախացնելով մեզ, իսկ վերջին տարիների ընթացքում հանդիսացավ շուրջ քսան ձեռագրերի, հմայիլների և հնատիպ գրքերի նվիրատուն: Օրերս լույս տեսավ Մատենադարանի վաստակաշատ աշխատակից Աս. Մնացականյանի «Հայրեններ» ստվարածավալ ժողովածուն, որի հրատարակման գործում Գարեգին Վեհափառը վճռական դեր խաղաց՝ խորին գոհունակության և շնորհակալության զգացումներով լցնելով բոլոր մատենադարանցիների և, կարծում եմ, բոլոր բանասերների սրտերը մեր երջանկահիշատակ գործընկերոջ աշխատության տպագրության համար:

Ս. Էջմիածնի և Մաշտոցյան Մատենադարանի վաղեմի սերտ համագործակցությունը Գարեգին Վեհափառի գահակալության ընթացքում, հավոմոզված եմ, ավելի են ամրանալու հայոց դարձի 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստման տարիներին: Այս տարիները Գարեգին

Վեհափառի, որպես ձվիրյալ հոգևորականի, աստվածաբանի և գիտնական բանասերի, նոր լիցք են հաղորդելու մեր գիտական կյանքին՝ նպաստակամղելով մեր գիտնականներին լրացնելու հայագիտության, աստվածաբանության և Եկեղեցու պատմության բաց էջերը:

Արևշատություն և քաջառողջություն ազգի և Աստծո ընտրյալին:

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
Մատենադարանի տնօրեն

ԱՐԺԱՆԱՎՈՐ ՀԱՋՈՐԴԸ

Հայոց Եկեղեցու հովվապետների ընտրությունը դարեր ի վեր կարևոր իրադարձություն է հանդիսացել մեր ժողովրդի պատմության համար, նամանավանդ, երբ այն զուգադիպել է դարակազմիկ պատմական նշանակություն ունեցող քաղաքական իրադարձություններին: Այդպիսի ժամանակաշրջան է ներկայումս ապրում Հայաստան աշխարհը. միջազգային քաղաքական ծանր պայմաններում ժողովուրդը ոտքի է կանգնել և ազատ ու անկախ Հայրենիք է կերտում. ուժեղ ու բանիմաց աշխարհիկ իշխանություններին նեցուկ հանդիսացող իմաստուն և գործունյա հոգևոր առաջնորդներ են պետք. այս խնդրի քաջ գիտակցություն էր պատճառ, որ ողջ հայությունը, թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, արտասրոփ սպասում էր մեր Եկեղեցու նոր գահակալի ընտրություններին: Հարկ է նշել, որ երջանկահիշատակ Վազգեն Ա-ն իր 40-ամյա անբասիր ու ազգանվեր գործունեությամբ այնպիսի հեղինակություն ու սեր էր վայելում, որ թվում էր, անկարելի պիտի լիներ նրան արժանավոր փոխարինող ունենալ:

Անցան սպասումի վեց ամիսները. գումարվեց ազգային վեհաժողովը, և ընտրությունները բարեհաջող ավարտվեցին. 1995 թ. ապրիլի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կոչնակները ի լուր աշխարհի ազդարարեցին աստվածահաճո լուրը՝ Լուսավորչի գահի վրա բարձրացավ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, արժանավոր մի հոգևորական, որ իր երկարամյա հոգևոր գործունեության տարիներին արդեն իսկ իրեն դրսևորել է որպես հրաշալի աստվածաբան, հայ դպրության քաջագիտակ, փառավոր բեմբասաց քարոզիչ, հմուտ կազմակերպիչ և բազում այլ բարեմասնությունների տեր անձնավորություն:

Սրտանց շնորհավորում ենք մեր նոր Վեհափառին, ցանկանում քաջառողջություն ու արևշատություն՝ ի փառս մեր ժողովրդի և Միացյալ ու Անկախ Հայրենիքի:

ԲԱԲԿԵՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆ
Հայաստանի մշակույթի վաստակավոր մշակ



ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Կաթողիկոս Ամենայն Հայոց, Վեհափառ,—կոչում է դա, աստիճան, իշխանություն թե պաշտոն, միևնույն է, հայոց մտապատկերում արտահայտում է իբրև բարձրագույն կարգ, կատարելություն, անքննիկ ու անհաս:

Կաթողիկոս ընտրում են: Կաթողիկոս է, որովհետև առավել ձայն է ստացել: Ուրեմն կարող էր և ուրիշը լինել: Բայց հայոց մտապատկերում չկա ուրիշ: Կաթողիկոս նա է, որ է: Ուրիշը չէր կարող, և եթե ուրիշը լիներ, ուրեմն տեղի է ունեցել բռնատիրություն՝ ուզուրպացիա:

Բարձրագույն օծյալի նկատմամբ այդ պատկերացումը կույր հավատ չէ, այլ բարձրագույն վստահություն և նվիրում և զգաստ հավատ: Դա ազգային հայեցողություն է:

Հայ Եկեղեցին միակ հաստատությունն է, որ իր սկզբնավորումից՝ 4-րդ դարից, հարատևել է մեր պատմության մեջ առանց ընդհատման և առանց ընդմիջումի: «Հայոց աշխարհի թագավորությունը ծվեն-ծվեն եղավ, ինչպես մի հնացած ձորձ»,—ասում է 5-րդ դարի պատմիչը: Հետո ծվեններն էլ ծվենվեցին, ժողովուրդը ափովեց աշխարհով մեկ, սեփական երկրի անունը արտահայտվեց օտար որոշիչով. Պարսկահայաստան, Թուրքահայաստան, ապա նաև՝ Ռուսահայաստան: Թուրքահայաստանը հետո սկսեցին կոչել Պատմական Հայաստան, կամ՝ «Երկիր», որ հնչում է որպես կարոտ, կորցրած երազ: Իսկ ժողովուրդը, որ մեկ էր. մեկ ազգ և մեկ լեզու, կոտորակվեց հարյուր ու մեկ անվան. թուրքահայ, ֆրանսահայ, ամերիկահայ և նույնիսկ հայաստանահայ:

Եվ միակ տեղը, ուր հայը հայ է և Հայաստանը՝ Հայաստան իր ամբողջության մեջ, առանց հապավումի և առանց հավելման, Հայաստանյայց Եկեղեցին է, որ խորհրդավորում է ազգը: Դա նման է մայր մեղվի, որ իր շուրջն է հավաքում և պահպանում անփեթակ պարսը, և ինքն էլ մայր է:

Մայր Եկեղեցի:

Իսկ մայրը չի կարող սխալվել իր որդու ընտրության մեջ: Եվ մայրը չսխալվեց: Եկեղեցու գլուխ ընտրվեց լավագույնը՝ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ճիշտ է արդյոք հաշվված կաթողիկոսաշարը՝ 130, թե ոչ: Տասնյոթ դարերի մեջ թերևս մեկը սահել է ազգային հիշողությունից, կամ պատմությունը արժան չի համարել տալու մեկի անունը, կամ ասենք կաթողիկո՞ս էր Հովսեփ Վայոցձորեցին, թե տեղապահ, որ Վարդանի հետ առաջնորդեց հայոց աշխարհազորը Ավարայր և նահատակվեց ու արբացավ, իսկ Հովսեփ Արղությանը, որ ընտրվեց, բայց չգահակալեց, մտնու՞մ է այդ շարքի մեջ, և արդյո՞ք 131-րդն է Գարեգին Ա-ն, դժվար է ասել: Բայց դա ժամանակագրական խնդիր է: Լուսավորչից հետո ով նստել է Լուսավորչի գահին, առաջինն է: Առաջինն է Հուսիկը իր խստակրոն և կամային վարքով, Ներսես Մեծը իր բացառիկ դերով իբրև Եկեղեցու վերաևորոգիչ: «Թագավորն ու դա մի հաշվի են»,—ավանդում է նրա մասին պատմիչը: Լուսավորչից հետո առաջինն է Սահակ Պարթևը՝ հայոց դպրության մեծ սատարող, որ եղավ Թարգմանչաց հայր, Հովհան իմաստասեր Օձնեցին, որ կանոնակարգեց Եկեղեցին և մերժեց ամեն աղանդ և հերձված, Ներսես Կլայեցին, որի վրա Աստծո շնորհ էր իջած և որի համար կոչվեց Շնորհալի, առաջինն էր Ներսես Աշտարակեցին՝ մեծ դիվանագետ և մեծ քաղաքացի, ազգային նվիրյալ, Մկրտիչ Խրիմյանը, որ հայոց հայր էր և այդպես էլ կոչվեց՝ Խրիմյան Հայրիկ, Լուսավորչից հետո առաջինն էր Վազգեն Ա-ն՝ խաղաղաբարո, շինարար և արբակյաց, որ իր ազնվությամբ կարող էր միայն իր հետ համեմատվել, և Գարեգին Ա-ն՝ մատենագետ, գիտնական, գրող, արվեստագետ և հոգևոր, որ հենց առաջին օրից իր խոսքով առինքնեց ժողովրդին:

Լուսավորչից հետո:

Ասում են Արագածի չորս գագաթներին անպարան կախված է Լուսավորչի կանթեղը և վառվում է արցունքով, և նրա լույսը կարող են տեսնել միայն արդարները:

Թող և Գարեգին Ա-ի ժամանակ վառվի Լուսավորչի կանթեղը, բայց ոչ թե արցունքով, այլ ոգու ճառագայթմամբ, և թող նրա լույսը տեսնեն ոչ միայն արդարները, այլև մեղավորները և ավելի շատ՝ մեղավորները, որ արդարանան:

Ամեն:

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



«ՆՐԱ ՀԻՇԱՏԱԿԸ ԻՄ ԱՆՁԻ ՀԵՏ ՄԻԱՇԱՂԱԽԱՒՆ ԱՊՐՈՒՄ Է»

12-րդ դարում Ներսես Շնորհալին երգել է՝

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար...

Երգել է Արարատից հեռու, Կիլիկիայում, բայց Արեգակը տեսել է Հայոց երկնքում: Գրել է Եդեսիայի ողբը, բայց միտքը շեղվել է դեպի Հայաստան.

Ո՞ւր են գահոյք թագաւորի
Վաղարշապատ քո քաղաքի...

Այսօր Վաղարշապատում, Միածնի իջած վայրում հաստատված հոգեվոր առաջնորդը ծնվել ու գործել է Հայաստանից հեռու, բայց իր նախորդների նման՝ հոգով եղել է Հայաստանում: Լրագրողները Տեր Զորում տեսել են, թե ինչպես հազարավոր հայ հավատացյալներ եկել են արյունոտված ավազուտներում հիմնելու իրենց վերածնունդը խորհրդանշող հայկական եկեղեցին: Պատանիները կաթողիկոսի առջև արտասանել են հերոսական բանաստեղծություններ, մեծերը շրջապատել են Առաջնորդին և կամեցել են նրա հետ լուսանկարվել: Լուսանկարը զետեղված է գերմանական «Ցայտ» հանդեսում հետևյալ մակագրությամբ. «Եղեռնից ողջ պըրծածներն ու տարբեր երկրներում ցրվածներն այսօր Բեյրութում իրենց ազգային ինքնության մարմնացումն են տեսնում այնպիսի մի խրոխտ եկեղեցական իշխանավորի մեջ, ինչպիսին է Գարեգին Բ Կաթողիկոսը Բեյրութում»: «Ցայտը» տպագրվում է տարբեր երկրներում, ունի միլիոնավոր ընթերցողներ, որոնց հայտնվում է, որ ծրագրվող եկեղեցու խորանը կա-

ուցելու համար քարերը բերվելու են Հայաստանից: Կաթողիկոսն առանց Հայաստանի քարերի չի պատկերացնում որևէ սուրբ կառույց: Լուսավորչի Աջը նրան բերել էր Հայաստան դեռևս 1968-ին, երբ նա, առաջին անգամը լինելով Հայրենիքում, Մայր տաճարի քարակոփ կամարների տակ արտասանել է. «Սա պահուն, երբ մենք համախմբված ենք Սուրբ Էջմիածնի ավիրական կամարներուն ներքև, կաղոթենք ու կպանծացնենք հիշատակն ու պատգամը Ս. Գրիգոր Լուսավորչին, նույն այս պահուն Լիբանանի ծովափին վրա, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կեդրոնին՝ Անթիլիասի Մայրավանքին մեջ տասնյակ հազարներով հայ ժողովրդի զավակներ ուխտի են եկած Ս. Գրիգոր Լուսավորչի Աջին, կխոնարհին Մեծ Սուրբին հիշատակին, կերկրպագեն անոր նշխարներուն, կհամբուրեն անոր սրբազնասուրբ Աջը և կվերանորոգեն իրենց հավատարմության ուխտը»:

Եվ այսպես, Լուսավորչի Աջը հայ է պահում մեզ Լիբանանում և Հայաստանում, Տեր Զորում ու Ծիծեռնակաբերդում: Եվ ապրում են Աջը պահող ու փառաբանող առաջնորդները: Արժանավոր առաջնորդները համեմատվել են Լուսավորչի հետ: Գրիգոր Մագիստրոսն իր ժամանակակից ու բարեկամ Կաթողիկոսին կոչում է Երկրորդ Լուսավորիչ. «Ո՛վ քահանայապետդ սուրբ և Երկրորդ Լուսավորիչդ Պետրոս»: Պետրոսն անշուշտ Լուսավորիչ չէր, բայց նրա խաչանշան գավազանը մի անգամ հրաշք գործեց: Տրապիզոնում գետն օրհնելիս բյուզանդական կայսր Վասիլի և հույն մեծամեծների աչքի առջև այդ գավազանը շրջեց գետի հոսանքի ուղղությունը և ետ դարձրեց գետը: Դրա համար էլ Կաթողիկոսը կոչվեց Պետրոս Գետադարձ կամ Գետարգել: Գավազանի հրաշքը նշան էր Լուսավորչի հավատի իսկության: Բյուզանդական կայսրը հրաշքը տեսնելով՝ ծպտյալ բարձրացավ Կիլիկիայի Սև լեռը և Հայոց վանքում ընդունեց հայկական դավանանքը: Օտարը համոզվեց Լուսավորչի վարդապետության արդարության մեջ: Այսօր Հայաստանում օտարանում են հայերը, որդեգրվելով խորթ աղանդների: Թո՛ղ Գրիգոր Լուսավորչի Աջը ետ դարձնի հունից շեղված հոսքը, ճշմարիտ հավատի բերի մոլորյալներին: Երեկվա Մեծի Տանն և այսօրվա Ամենայն Հայոց Կաթողիկոսի միացյալ գավազանը թո՛ղ ավելի՛ մերձեցնի, միահյուսի հային Հայաստանում և ոչ—Հայաստանում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իրեն համարում է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա-ի անվանակիցն ու հիշատակակիրը. «Նրա հիշատակը իմ անձի հետ միաշաղախաոն ապրում է եղել հենց ձեռնադրության օրից»:

Գարեգին Հովսեփյանը գիտնական էր, դասական աշխատությունների հեղինակ: Նրա հիշատակակիրը նույնպես գիտնական է: Հովսեփյանի ծրագիրն էր՝ Կիլիկիայի Կաթողիկոսությունը դարձնել նաև գիտության ու մշակույթի կենտրոն. «Եթե կորցրել ենք նյութական Կիլիկիան... կորած չէ և մեր ձեռքն է հոգևոր Կիլիկիո վերակենդանության և բարգավաճման հնարավորությունները... Մենք կամենում ենք, որ նա դառնա կրոնական, եկեղեցական կեդրոնի հետ գիտության, արվեստի և մշակույթի կեդրոն... Մեր Դպրեվանքը լինելու է կեդրոնական հաստատություն»: Աշակերտը հավատարիմ է մնացել ուսուցչին նաև Դպրեվանքի դեպքում: Նա ասում է. «Ես Դպրեվանքով եղա և եմ այսօր ինչ որ եմ»: Նա եղել է Դպրեվանքի սանը, տեսուչը, դասախոսը: Շուրջ քսանամյա կաթողիկոսության ընթացքում հրատարակել է հարյուրավոր գրքեր և «Հասկ» հանդեսը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գիտական աշխատությունների քանակը հասնում է տասնյակների: Նրա գրչին են պատկանում աստվածաբանական, հրապարակախոսական, բանասիրական, մանկավարժական, պատմագիտական բազմաթիվ աշխատություններ, որոնք շարադրվել են հայերենից բացի նաև անգլերեն և ֆրանսերեն:

Անգլերեն առաջին աշխատությունը կոչվում է «Համառոտ ակնարկ հայ քրիստոնեական մատենագրության»: Այն գրվել է Անգլիայում, 1960 թ., երբ երիտասարդ Նշան Սարգսյանն ուսանում էր Օքսֆորդի համալսարանում և արժանանում էր ուշադրության ու գնահատականին նաև այնպիսի մի հեղինակավոր գիտնականի, ինչպիսին էր Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմության» և գրաբարից անգլերենի թարգմանված այլ աշխատությունների հեղինակ Չարլզ Դաուսեթը: Բազմաշնորհ անգլիացին հայագիտությանը պարգևել է նաև որակյալ հայագետներ (Ռոբերտ Թոմսոն, Պիտեր Քաու և այլք), որոնք մեր բանասիրությունն ու լեզվագիտությունը, պատմագիտությունն ու աստվածաբանությունը հարստացրել են միջազգային ասպարեզ հանված մի շարք աշխատություններով:

Ապագա Կաթողիկոսը Օքսֆորդի համալսարանում որպես ատենախոսություն է ներկայացրել «Քաղկեդոնի ժողովը և Հայոց Եկեղեցին» մենագրությունը, որն անգլերեն լեզվով լույս է տեսել բազմիցս (Լոնդոն, 1965, Նյու Յորք, 1975): Սա մնայուն մի երկ է, որում ամփոփված են նյութին վերաբերող ապառիչ տեղեկություններ և ներկայացված են հեղինակի հայթայթած նորություններն ուսումնասիրության առարկայի վերաբերյալ: Եվրոպայի և Ամերիկայի հատկապես աստվածաբանական շրջաններում հայտնի սույն գործը տարբեր լեզուներով գրախոսվել է մի շարք պարբերականներում: Երկրորդ հրատարակությունում հրատարակիչները գետեղել են աշխատության արձագանքները մասնագիտական աշխարհում: Հեղինակը դասվում է այն հայ գիտնականների շարքը, «որոնք իրենց պատմական գանձերը մատչելի են դարձրել Արևմտյան աշխարհին» (Է. Ռ. Հարդի): Մեկ այլ մասնագետ ասում է. «Եպիսկոպոս Սարգսյանը գրում է հաճելիորեն հաշտարար ոճով և կասկած չկա, որ նրա գիրքը մեծապես նպաստելու է պառակտված քրիստոնյաների միջև փոխադարձ հասկացողության առաջընթացին»: Մյուսները գտնում են, որ հեղինակի «հանգամանալի մեկնաբանությունները նպատակ ունեն ուղղելու այն սխալ ընկալումները, որոնք երկար ժամանակ իշխում են Արևմուտքում»: Որոշ ուսումնասիրողներ ժամանակին հայտնել են այն վերամբարձ կարծիքը, թե Հայոց Եկեղեցին Քաղկեդոնի ժողովը մերժել է պարզապես ճիշտ չըմբռնելով նրա դրույթները: Հայտնվել է նաև այն միտքը, համաձայն որի Քաղկեդոնի ժողովին դեմ լինելուն նպաստել են նաև պարսիկները: Ասվել է նաև, թե իբր հատակ տարբերակում չի եղել ժողովի դավանանքի և նեստորականության միջև: Շրջանառության մեջ է դրվել նույնիսկ այն անհեթեթ կարծիքը, որի համաձայն հայոց լեզուն ի վիճակի չի եղել ճշգրիտ վերարտադրելու Քաղկեդոնի ժողովի բանաձևերի խրթին իմաստները: Հմուտ աստվածաբան Գարեգին Սարգսյանը մանրակրկիտ քննության է ենթարկում եղած գրականությունը և վերացնում է թյուրիմացությունները՝ հայրապետական իր կարևոր նպաստը բերելով մեր Եկեղեցու դավանաբանության ճշմարիտ և անխաթար ներկայացմանը:

ԳԵՎՈՐԳ ԱԲԳԱՐՅԱՆ

ՀԱՆՈՒՆ ԱԶԳԻ ՀՊԱՐՏ ԳԱԼԻՔԻ

Ժողովուրդը, որ ազգ էր դարձել վաղնջական ժամանակներում, իր դժվարին ճանապարհներում կերտելով բնիկ հայկական մեծ մշակույթը, Ավարայրով ու մյուս հերոսամարտ-ճակատամարտերով հաստատելով ազատ ապրելու իրավունքը, տեսել դավեր և որոգայթներ, Շահ Աբասյան սև բռնագաղթ, օսմանյան վայրագություններըը, հասնելով 20-րդ դարաշեմին, վերջապես հույսեր փայփայել, թե շուտով վերջ կգտնեն հալածանքները և կապրի լիարյուն կյանքով, որ 20-րդն է լինելու իր ծաղկումի դարը, հանկարծակի ենթարկվեց մի աղետ-ոճիրի, որի անունը նույնքան ահազարհուր է, որքան և էությունը՝ ցեղասպանություն:

Շաչեց սև փոթորիկը և տարավ ազգի կեսը, չորացրեց-խանձեց նրա մտավոր ծաղիկը, ամայացրեց մի շեն ու մարդաշատ երկիր և ամեն ինչ մատնեց մահվանն ու դարավոր թշնամուն: Յոթ տարի տևեց այդ զարհուրելի օրհասը, որը հետո հայոց Մեծ եղեռն պիտի կոչվեր: Եվ վերապրողները իրավունք էին տալու մի նոր հասկացության գոյության, որը Սիյուռք էր կոչվելու:

Սիյուռք՝ իր գյուղերով ու կորուստներով, հուսալքություններով ու հույսերով, ցավերով ու վշտերով, անցյալի ահազարհուր հիշողություններով և ապագա արդարության հավատով:

Սիյուռք՝ թեև ցրված ու բեկված, սակայն միշտ մի մեծ հավաքականության գիտակցությամբ և դա շնորհիվ առաջին հերթին Հայ Եկեղեցու և նրա լուսամիտ ու հայրենանվեր, անձնուրաց հովիվների: Ու այդպես տակավ առ տակավ զորացող հույսով պիտի գար հայությունը՝ հասնելով 1965-ին, ի մի բերելու հիշողությունը, առավել գիտակցաբար այն պարտադրելով անհիշությամբ տառապող աշխարհին:

Այսպես անցավ Մեծ եղեռնի 50-ամյակը, ապա և 60-ամյակը, հետո հերթը հասավ և 70-ամյակին: Սակայն կարող էին այսպես տասնամյակներն իրար հաջորդել, բթանար ցավը և դառնար լոկ հուշ: Դառնար անցյալ, իսկ անցյալը պատմության սեփականություն է և ոչ ավելին: Ահա թե ինչու հարկ էր, որ ցավը վերածվեր նահատակաց Կտակի, դառնար բոլոր ժամանակներինը, հայության էության մի մասնիկը: Այդ կտակը դառնար ճշմարիտ գաղափարաբանություն, ժողովրդի միտքն ու նպատակը մղելու դեպի գալիքը: Այդպես միայն, քանզի 1915-ին կատարվածը սոսկ աղետ չէր, այլ համազգային ողբերգություն, որը շեղել էր մեր պատմության ըն-

թացքը, ազգին զրկել իր համաքական զորությունից ու կեսից, հետագա-յում բազմապատկվելու հնարավորությունից, խլելով նրա պատմական հայրենիքի մեծագույն մասը և պատճառելով մշակութային-հոգևոր-նյութական աներևակայելի կորուստներ: Իսկ այդպիսի ոճիրը չէր կարող ունենալ ժամկետանցություն, չէր կարող ունենալ մոռացում: Ահա թե ինչու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ն, որն այսօր Աստվածային անհասանելի կամոք և ազգի սիրով ու ցանկությամբ Ամենայն Հայոց ազգընտիր Կաթողիկոսն է արդեն որպես Գարեգին Ա, իր կենաց ողջ անդուլ գործունեության առանցքներից մեկն ի նպաստ բերեց Հայոց ցեղասպանության նախ ազգովին գիտակցմանը և ապա՝ միջազգային ճանաչմանը: Իսկ այդ գործունեության բարձրակետը դարձավ 1985-ը, երբ մեծագույն եռանդով ու նվիրյալ ջանքերով նախապատրաստեց 70-ամյակի նշումը Սփյուռքում ու նաև, այո, Մայր հայրենիքում: Եվ իր այդ գործունեությունը որպես բարձրակետ պահպանեց առ այսօր: Այդ հսկայածավալ գործունեության ապացույցները ու վկաները են մնում ազգապահ ուղևորությունները հավատացյալ հոտին տարբեր երկրներ, սրբատառ կոնդակները ու կրակոտ-հայրենաշունչ քարոզները, անդուլ գործունեությունն ու ճառերը, սիրո, գնահատության, աղոթքի ու ցավի խոսքերը վերապրողներից մինչև մանուկները, մաղթանքները, ոգի զորացնող հորդորները: Եվ այդ բոլորը մի բարձր արժանապատվությամբ, որը մերժում է լալկանությունը և ողբաացությունը: Այդ բոլորը մի հպարտ հայտարարությամբ՝ անցյալը անցած չէ: Այո, անցած չէ, քանզի որպես Վեհափառն է վկայում. «Պետք է քար ըլլալ—ո՛չ մարդ և ո՛չ մանավանդ հայ—այս բոլորեն ետք ըսելու համար, թե ցեղասպանությունը պատմություն է...»: Եվ այդ բոլորը ազգային միանության կոչով, քանզի միայն միասնականորեն կարելի է առաջ տանել հայ դատին ի նպաստ խնդիրները:

Ահա թե ինչու 1985 թվականի հունվարի 30-ին սրբատառ կոնդակում, որն ամբողջապես նվիրված էր Մեծ եղեռնի 70-ամյակին, ասվում էր. «Հոգևորապես, բարոյապես, ազգայնորեն առողջ, արթուն, տոկուն ազգ պետք է ըլլանք, քանզի արդար դատ մը ունինք, Ապրիլյան նահատակներեն և իրենց արյան կնիքովը, մեզի փոխանցված որպես սրբազան կտակ»:

Վեհափառն իր իսկ օրինակով էր դա ապացուցում, քանզի արդեն հայտարարել էր հավատացյալ հոտին. «Զուխտս Քո կատարեցից»: Եվ ճանապարհ էր ընկնում այդ ուխտը կատարելու, քանզի հավատամքն էր եղել մշտապես. «Հոգևորականություն, կնշանակե խաչելություն. ան որ խաչը շալկելու քաջությունը չունի, չի կրնար Քրիստոսի աշակերտ և նահատակներու շառավիղ ըլլալ»:

Ու այդպես պիտի ուխտի երթար Տեր Զոր, քայլեր ապագայի տեսիլքով: ճանապարհ ընկներ հերոսների ոգիով, որոնք Մուսա լեռան քաջամարտիկներն էին: Ոգեկոչեր հիշատակը այն հայորդիների, որոնք «պարզ գյուղացիներ էին իմ հայրերուն ու մայրերուն պես, ինծի և ձեզի պես մարդիկ էին, անուսում թերևս, բայց հայության այն պայքարի ոգին՝ Հայկեն ժառանգված ազատության կամքը՝ Բելին չենթարկվելու հայուն ձևը կյանքին, Վարդանյան կամքը, Անդրանիկյան հոգին և մեր ֆեդայիներու ոգին իրենց մեջ կապրեր. կապրեր այնպես, ինչպես արյունն իրենց երակներուն մեջ»: Ահա այս բոլորից հետո էր, որ Վեհափառը պայքարի պատգամ էր տալու: Տալու էր հրացայտ շուրթերով, որպես մի նոր Ղևոնդ Երեց: Իսկ դա բոլորովին նոր պատգամ էր, պայքարի խոսք և մարտնչելու մաղթանք:

Նա մի ձոր կողմից բացահայտեց ճահճատակաց կամքը և ճրանց ձոր պատգամը. «Հայրապետական իմ պատգամս Տեր Զորեն եւոք այլևս իմ պատգամս չէ. պատգամն է Տեր Զորի մեր ճահճատակներուն: Անոնք կըսեն. «Ինկեք, բայց մեզի պես մի իյնաք. Մուսա Տաղի հերոսներուն պես՝ եթե պետք ըլլա, Վանի հերոսներուն պես՝ եթե պետք ըլլա, Շապին Գարահիսարի, Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարա Քիլիսեի—ես չգիտեմ դեռ գալիք ինչ օրերու օրհասական պայքարներու մեջ—հերոսաբար ճահճատակվեցեք և ոչ թե մեզի ճման զոհվեցեք, մորթվեցեք, ջարդվեցեք, յաթաղանվեցեք»:

Եվ այս պատգամից Վեհափառն ածում էր ամենակարևոր եզրակացությունը և ձոր պատգամ տալիս հայությանը, որը մի քանի տարի անց պիտի իրականանար Արցախում. «Այս է Տեր Զորի պատգամը Ձեր բոլորին. քալեցեք այս ուղիով և, հավատացեք, հայության կամքը կհաղթե, որովհետև մենք զիրենք ողբանք և ողբալով գոհանանք, զիրենք հարգած չենք ըլլար»:

Միայն այս ուղու մեջ էր ճա տեսնում Հայ դատի իսկական հետապնդումը և ոչ թե խոսելն ու խոսելով գոհանալը: Կոչ էր անում ընթանալ Մուսա լեռան հերոսների ճանապարհով, քանզի դրա մեջ էր տեսնում մեր պատմության հերոսական տրամաբանությունը: Այդ օրերին հնչող հայրապետական խոսքերը շիկացած էին ու ճան որպես երախտագիտության խոսք էին ուղղվում Արաբական աշխարհի ժողովուրդներին, որոնք Եղեռնի դժնդակ տարիներին օթևան և ապաստան տվեցին հայ ժողովրդի վերապրող բեկորներին: Սիրո և եղբայրության մաղթանք էին ճրանց մարդկայնությանը և անարգանքի խարան էին Թուրքիո ճակատին: Եվ բանաձևումն էին Եղեռնի ընդհանրական բնույթի. «Երբ ցեղասպանություն մը կանտեսվի, ուրիշ ցեղասպանության դուռ կբանա»:

Կոչեմ ապրողաց՝ ճան այս էր իմաստը Վեհափառի քարոզների ու կոչերի, քանզի այդ ճրանք էին, որ պիտի իրագործեին պատգամ-կտակը ճահճատակների:

Դրանք ճան ուխտ էին վառ պահելու Հայոց Եկեղեցու դարավոր ավանդները, մեր ճախնիներից ժառանգած ազգային ճկարագիրը, մեր ոսկեղենիկ լեզուն, հայ ընտանիքի անաղարտությունը և առաջ տանելու ժողովրդի արդար իրավունքների հետապնդման գործը:

Այո, հայ ժողովուրդը միայն իր արդար ձգտումներին կարող է հասնել իր բարձր ճկարագրով, նպատակի հստակությամբ, սիրով և համերաշխությամբ և անցյալը երբեք չմոռանալով: Ահա թե ինչու Վեհափառը չորս հիմնական ճշմարտություններ էր հոչակում որպես գործունեության սկզբունքներ. Եկեղեցի, հայրենիք, լեզու և հայ դատ: Այդպես է, քանզի «Ժողովուրդ մը մեծ կըլլա և անմահ՝ այնքան ատեն, որ անխախտ կպահե երկու սկզբունքներ, առաջին՝ հավատարմություն իր մեռելներուն և երկրորդ՝ հառաջահայաց տեսիլք դեպի գալիք ապագան»:

Այսօրվա Ամենայն Հայոց Հայրապետը մշտապես հավատարիմ է եղել իր դավանանքին և այս տարի ևս Մեծ եղեռնի 80-ամյակի նախօրյակին հայրենիք գալուց առաջ կրկին գնաց Տեր Զոր՝ իր այցը սկսելով ճահճատակաց նշխարներին հավատարմությունը:

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Հոգևոր, գրական-մշակութային գործունեության բեղմնավոր ուղի է անցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ը: Պատահականության բերումով էր, թե ճակատագրի թելադրանքով, կուսակրոն քահանա ձեռնադրելիս Դպրեվանքի շրջանավարտ Նշան Սարգսյանին ընծայվեց նոր վախճանված Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի անունը: Որևէ մեկի մտքով անցնո՞ւմ էր արդյոք, որ երիտասարդ կրոնավորը դառնալու էր նշանավոր հոգևորականի ու հայագետի արժանավոր ժառանգորդը: Բազում շնորհներով օժտված երիտասարդ վարդապետը շատ շուտ զգացնել տվեց իրեն, եռանդուն և նպատակասլաց գործունեությամբ համընդհանուր ճանաչման ու հարգանքի արժանացավ ոչ միայն հայկական, այլև միջեկեղեցական շրջաններում: Միջազգային վիթխարի հեղինակություն վայելող եկեղեցական գործիչ է Հայոց Վեհափառը: Հասարակական-վարչական գործունեությանը զուգընթաց, իր նշանավոր անվանակցի նման, որի կերպարն ու «մշտադալար յիշատակը» մշտապես ուղեկցում են նրան, զբաղվել է գիտական-մանկավարժական գործունեությամբ: Չորս տասնյակից ավելի գրքեր ու գրքույկներ, հարյուրավոր ուսումնասիրություններ ու հոդվածներ, տարբեր լեզուներով անհամար զեկուցումներ ու ելույթներ,— քչերը կարող են հպարտանալ նման վաստակով: Չմոռանանք նրա արգասավոր գործունեության բնորոշ յուրահատկությունը. ուր էլ եղել է Գարեգին Երկրորդը, Դպրեվանքում՝ իբրև տեսուչ ու դասախոս, Իրանում, Հյուսիսային Ամերիկայում՝ իբրև թեմի առաջնորդ, թե Լիբանանում՝ իբրև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, ոչ միայն արարել է ինքը, այլև ստեղծել է աշխատելու, գիտական-մանկավարժական գործունեությամբ զբաղվելու բարենպաստ պայմաններ, հիմնել է գիտական, մշակութային կենտրոններ, միություններ, հայագիտական դասընթացներ, այլ խոսքով՝ աշխատել և ստեղծել է ինքը, աշխատելու և ստեղծելու մղել ուրիշներին:

Մեծ աստվածաբան է Գարեգին Ա-ը, հայ և միջազգային Եկեղեցու պատմության ճանաչված գիտակ: Նրա հետաքրքրությունները ներառում են նաև հայոց պատմության ու մատենագրության, գրականության ու հրապարակախոսության, մշակույթի այլևայլ բնագավառներ: Մի դեպքում իբրև գիտնական-հետազոտող, մի այլ պարագայում՝ իբրև Ավետարանի ճշմարտությունները մատչելի եղանակներով ժողովրդին ուղղող քարոզիչ, հմտորեն օգտագործելով գրողի ու պերճախոսի իր աննուրանալի ձիրքերը, ստեղծում է իր գրքերն ու ուսումնասիրությունները, նաև այս կերպ մշտապես կենդանի և անմիջական պահելով իր կապը ժողովրդի հետ, հաճախ՝ այլալեզու գիտնականների ու հավատացյալների հետ:

Վեհափառի աստվածաբանական լավագույն հետազոտություններից մեկը նվիրված է նշանավոր Քաղկեդոնի ժողովի որոշումների նկատմամբ Հայոց Եկեղեցու դիրքորոշման մանրազնին քննությանը: «Քաղկեդոնի ժողովը և Հայ Եկեղեցին» վերնագրված այս հետազոտությունը, որ Օքսֆորդի համալսարանում երկամյա ուսումնասիրության արդյունքն էր, ավարտաճառը, անգլերենով գրված լինելու և խնդրի սպառիչ պատասխանը ամփոփելու հանգամանքներով դուրս է գալիս Հայ Եկեղեցու պատմության շրջանակից՝ ստանալով միջազգային նշանակություն: Մինչև այսօր էլ աստվածաբանների, ընդհանրապես գիտնականների ուշադրության կենտրոնում է քաղկեդոնականության նկատմամբ Հայ Եկեղեցու վերաբերմունքի խնդիրը: Այս հարցը, սակայն, սովորաբար քննվել է այլ խնդիրների առնչությամբ՝ շատ հաճախ արժանանալով միակողմանի, սխալ, նույնիսկ թյուր ըմբռնումների: Առաջին անգամ հատուկ և ընդարձակ քննության առարկա է դառնում քաղկեդոնականության նկատմամբ Հայ Եկեղեցու դարերի ընթացքում դրսևորած վերաբերմունքը: Գիտնականի հմտությամբ, օգտագործելով հարուստ աղբյուրներ, ամբողջական պատկեր ստանալու համար քննությունը սկսելով հարցի նախապատմությունից՝ գիտնական աստվածաբանը հերքում է հայ և օտարազգի հեղինակների ձախ ու ծուռ ըմբռնումները (իբրև թե պարսիկները հայերին ապակողմնորոշել են, հայերը ի վիճակի չէին հասկանալու Քաղկեդոնի ժողովի որոշումները, կամ նրանց լեզուն չէր կարող արտահայտել աստվածաբանական բարդ ըմբռնումները և այլն), ամբողջացնում նախորդների ձեռքբերումները, հանգում նոր եզրակացությունների: Համոզիչ վերլուծություններով հաստատվում է, որ Քաղկեդոնի ժողովի նկատմամբ Հայ Եկեղեցու առաջնորդները ցուցաբերել են միանգամայն իմաստավորված, ազգի ինքնուրույնության ու հայրենիքի անկախությանը միտված քաղաքականություն:

Բոլորովին վերջերս Բեյրութում հրատարակվեց նրա աստվածաբանական մի ուրիշ աշխատություն՝ «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մէջ» խորագրով, ուր, արդեն, ոչ թե գիտական խստիվ կանոններով, այլ հանրամատչելի շարադրանքով, քանի որ ուղղված է հավատացյալ (առաջին հերթին՝ հայրենաբնակ) լայն հասարակությանը, շարադրվում են Հայոց Եկեղեցու ծառայությունները ազգին ու մարդկությանը: Ընդգծելով հանդերձ «խորհրդային կարգերի եւ համայնավարական գաղափարախոսութեան ճնշիչ ու արգելակիչ» պայմաններում Մայր Եկեղեցու ծավալած ազգօգուտ գործունեությունը, գրքի խնդիրների ու նպատակի մասին «Յառաջաբան»-ում կարդում ենք. «...Պարզ ժողովրդի, մանաւորապէս երիտասարդ սերունդների մօտ ստեղծուել է մի բաց, մի տեսակ ան-գիտութիւն, ան-հաղորդութիւն Հայց. Եկեղեցիով դարեր շարունակ արտայայտուած Քրիստոսի Աւետարանի, քրիստոնէական կրօնի գաղափարների, ճըշմարտութիւնների, բարոյական սկզբունքների, եկեղեցական ծէսերի եւ տօների, դաւանական, վարդապետական կեցուածքների, մեր Եկեղեցու ծառայութիւնների, իրագործած արժէքների եւ ստեղծած աւանդութիւնների, մի խօսքով՝ Հայց. Եկեղեցու պատմական ժառանգութեան նկատմամբ»: Ահա այդ բացն է լրացնում Վեհափառի նոր գիրքը, որն, անտարակույս, կդառնա ուղեցույց գիրք:

Իր բազմաբեղուն գործունեության ընթացքում ունեցած բազում ապրումներ, խորհրդածություններ, մտորումներ, որոնք «օրուան հետ մայրամուտի չյանգեցան», դարձան պատմական, գրական, հրապարակախոսա-

կան Էսսե ու նոթագրություն, քարոզ-խոսք ու հոդված, պատմվածք ու ճամփորդական ուղեգրություն, հուշ ու գրառում, որոնց միավորող ներքին կապը խոր ու անհանգիստ մտահոգությունն է հայրենիքի, հայ մարդու և նրա ստեղծած շքեղ մշակույթի հարատևումի հանդեպ: Ահա թե ինչու պատահական չէր նրանց մի մասի համախմբումը «Հող, մարդ և գիր» խորագրով հատորում: Հայոց պատմության, հայի ճակատագրի, հայ մշակույթի շուրջ «օրուան հետ մայրամուտի» չգնացող այս խոհերը, ո՛ր ժամանակներին էլ վերաբերեն, օժտված են արդիական շնչով ու հնչեղությամբ: Ահա, օրինակ, «Բանալիներ, բանալիներ Մայր Արաքսի» էսսեն. պատմության հավատած մի փաստ՝ Շահ Աբասի մեծ գաղթի ժամանակ ջուղայեցիները եկեղեցիների ու իրենց տների բանալիները ի պահ տվին Մայր Արաքսին, առիթ է տալիս խորունկ մտորումների, իմաստավորված զուգահեռների, որոնք մերօրյա գաղթերն ու տեղահանությունները են հիշեցնում: Կարևորը, սակայն, վերադարձի ու վերածնունդի հավատն է, նախնիների հավատը, որ Վեհափառի շուրթերով փոխանցվում է նոր ժամանակների ջուղայեցիներին.

«Քնացէք հանդարտ, մինչեւ որ օր մը լսէք տէրերուն, իրենց որդւոց, որդւոց որդիներուն ձայները.

«Զարթիք նոր ժողովուրդ»:

Եւ այն ատեն՝

Բանալիներ, բանալիներ Մայր Արաքսի,

Ձեզմով բացուին «դռներն յուսոյ» ազգիս հայոց անջնջելի...»

Ժամանակների այս կապը բնորոշ է Վեհափառ Հայրապետի ստեղծագործություններին:

Նա մշտապես հավատարիմ է իր սկզբունքին՝ «պատմութիւնը անցեալի վերապրեցումն է մեր ներկայի կյանքի անդաստաններուն մէջ»:

Մեծ մանկավարժ է նաև Վեհափառը:

Եթե նույնիսկ շրջանցենք այն պարագան, որ հոգևոր առաջնորդը դեռի ու կոչումի բերումով ուսուցիչ է արդեն, ամբողջ ազգի ուսուցիչ, նեղ մասնագիտական առումով ևս ծանրակշիռ է նրա վաստակը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի Դպրեվանքի սանը տասնամյակներ շարունակ եղել է ուսումնական նույն հաստատության հսկիչ, տեսչի օգնական, տեսուչ, դասախոս, անտարակույս շարունակելու է մնալ նրա հովանավորը: Նրա ջանքերով դպրոցը տեղափոխվեց Պիքֆայա՝ նոր և հարմարավետ մի կառույց: Նորացավ ոչ միայն շենքը, այլև աստվածաբանության ուսուցումն ու կրոնական դաստիարակության մակարդակը. նրա գրչին է պատկանում «Հովուական աստվածաբանութեան ձեռնարկը» (1979):

Հմուտ տեսչի ու մանկավարժի աչքից չէին վրիպում անգամ «մանրուքները»: Վեհափառի ներշնչված ու ներշնչող դասախոսությունների մասին ոգևորությամբ խոսելուց հետո, նրա աշակերտներից մեկը հենց այնպես, ի միջի այլոց, ավելացրեց.

— Հաճախ էր այցելում մեր կացարանները, և վայ նրան, ում տեսներ պառկած կարդալիս...

Բարձրացրեց Դպրեվանքը, ինքն էլ բարձրացավ նրա հետ՝ իրավունք ունենալով հետագայում գրելու՝ «Ես Դպրեվանքով եղա և եմ այսօր ինչ որ եմ»: Եվ եթե այսօր Դպրեվանքը ոչ միայն ուսումնական, այլև գիտական նշանավոր կենտրոն է, մտավորական սերունդների դարբնոց, դրանում

անառարկելիորեն մեծ է Վեհափառի ներդրումը: Այստեղ ևս ևս իր նշանավոր անվանակցի հետևորդն է:

Դպրեվանքում կրթությունն ու դաստիարակությունը առաջ է տարվում մեկ ազգ, մեկ Եկեղեցի սկզբունքով, ահա թե ինչու ուսումնական այս օջախում ձևավորված հոգևորականները հավասարապես ծառայում են և՛ Անթիլիասին, և՛ Էջմիածնին: Ավելին՝ դպրոցի նպատակը միայն հոգևորականներ դաստիարակելը չէ, զգալի թիվ են կազմում նաև աշխարհիկ գործիչները՝ կրթված այնպիսի ոգով, որ կարողանան առաջնորդել ժողովրդին «արդի մարդկային ընկերութեան եւ քաղաքակրթութեան տուեալներու համընթաց եւ՝ միանգամայն զօրացնեն հայակերտութեան շարունակական կենսընթացը Հայ ազգի ինքնօրէն եւ կենսունակ պահպանումին եւ զգացումին նուիրական եւ հրամայական պարտաւորութեան ճամբուն վրայ»:

Ավելի լավ չես ասի:

Համակողմանի հետաքրքրությունները հնարավորություն են տվել Վեհափառին աստվածաբանությունից բացի Բեյրութի և այլ քաղաքների ուսումնական հաստատություններում վարել պատմության, գրականության, հայագիտական այլ բնագավառների վերաբերյալ դասընթացներ: Կարելի է չտարակուսել, որ նույն եռանդով կշարունակի մանկավարժական գործունեությունը Էջմիածնի հոգևոր ճեմարանում և հայրենիքի այլ բուհերում:

ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ

ԵՎՆ ՄԻ ԼՈՒՍԱՒՈՒ ՓԱՌՈՆ

Մեր առաջին Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչից մինչև ներոգ հանգուցյալ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, 130 Կաթողիկոսներ, որպես աստղաբույլ շողշողում են Հայոց երկնակամարում՝ յուրաքանչյուրն իր փայլատակման ուժգնությամբ:

Եկել է ժամանակը, երբ այդ աստղաբույլին պետք է ավելանա ևս մեկը: Ցանկանք և հայցենք առ Ամենակարողն Աստված, որ այդ աստղը լիովին արժանի լինի դասվելու իր նախորդների շարքը:

Եկել է ժամանակը, երբ Հայոց խոնարհված դրոշները պետք է փողփողան հպարտորեն:

Եկել է ժամանակը, երբ մեր ժողովուրդը պետք է ունենա իր նոր և արժանավոր **Հոգևոր Հովիվը:**

Եկել է ժամանակը, երբ մեր իրականությունը՝ Հայոց Աշխարհը, վերջապես պետք է ապրի իր գոյությունը լիարյուն կյանքով:

Այս օրերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը արտակարգ եռուզեռի մեջ է:

Կաթողիկոսական ընտրություններ, գահակալություն...

Այս առթիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը աշխույժ, մտախոհ և արտակարգ անհանգիստներով լի տրամադրություններ է ապրում:

Ո՞վ կնստի Լուսավորչի պատմական ու հավերժական գահին:

Միայն աստվածաշնորհ արժանավորը: Միայն նա, ով իր անձը, իր Էությունը անմնացորդ կնվիրաբերի՝ մեր ժողովրդին սպասվող մակընթացություններով և տեղատվություններով լի գոյության պայքարին, մեր ժողովրդի բարօրությանը և մեր ժողովրդի գոյության հավերժությանը:

Կաթողիկոսական նախորդ ընտրությունները տեղի էին ունեցել ուղիղ չորս տասնամյակ առաջ: Այն ժամանակ Լուսավորչի գահին բազմեց արժանավորներից արժանավորը՝ երջանկահիշատակ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որը բոլորանվեր Էությամբ նպաստեց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու ծաղկմանը, զարգացմանը և բարգավաճմանը:

Կաթողիկոսը է՛ և մնո՛ւմ է ընդմիշտ մեր ժողովրդի համար յուրօրինակ մի սրբություն: Իսկ Վազգեն Ա Կաթողիկոսը ապրեց ու փայլատակեց ինչպես ասուպ և իր լայնահուն լուսատու ուղեծիրը հավերժ թողեց համայն հայությանը:

Վերջապես, չորս տասնամյակներ հետո, սույն թվականի ապրիլի 4-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և համայն հայության սգո շրջանից հետո, երբ խոնարհված էին մեր դրոշները, կրկին իր լիարյուն կյանքի հունի մեջ մտավ համայն հայությունը, և նորից հպարտորեն փողփողացին Ս. Էջմիածնի և ողջ հայ ժողովրդի դրոշները: Այդ օրը Ամենայն Հայոց Կաթողիկոս հռչակվեց և Ս. Էջմիածնի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի պատմական գահին բազմեց Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը՝ վերակոչվելով **Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց:** Կրկին Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ունեցավ իր արժանավորագույն Հոգևոր Հովիվը՝ օժտված հարուստ առաքինություններով և բազմափորձ ու լավագույն արժանիքներով:

Բուռն կրքերից առաջացած փոթորիկը հանդարտվեց և խաղաղվեց:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայոց Աշխարհի երկնակամարն իր մռայլ, հոգեխռով ամպամածությունից զտվեց և վերածվեց վառ հույսերով և հուսալի սպասելիքներով լի կապույտ, ջինջ մի անծայրածիր հորիզոնի: Կիլիկյան պատմական Հայաստանի Կաթողիկոսական Աթոռի փայլատակող մի աստղ եկավ վերջապես միանալու և միաձուլվելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արեգակնափայլ աստղին՝ միատեղ և մեկընդմիշտ լուսատու փարոս ու անշեղ ուղեցույց հանդիսանալու՝ դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոս տանող իղձերի երանելի մեր ուղու:

«Մենք պետք է ձեռք-ձեռքի տված մեր գլուխները մատաղ անենք մեր ժողովրդին». ընտրություններից անմիջապես հետո Ս. Էջմիածնի Գահակալական Տաճարում Հայաստանի Հանրապետության մեծահարգ նախագահի արտաբուխ այս խոսքերը, ուղղված Գարեգին Ա Կաթողիկոսին, ուժգին տպավորություն թողեցին ներկաների և համայն հայության վրա: Իսկ նորընտիր Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը չուշացրեց այդ խոսքերի իրագործումը, եկավ ապացուցելու, որ դրանք ոչ թե խոսքեր էին, այլ բխած ներքին անդիմադրելի մղումից: Վեհափառ Հայրապետն իր շքախմբով պաշտոնական այցելություններ տվեց իշխանություններին, նրանց՝ դեպի Ս. Էջմիածինն ունեցած անկեղծ և ցվիրումով լի վերաբերմունքի համար, եղավ ժողովրդի մեջ՝ հայ հոգևոր կենտրոն Վաղարշապատում և քաղաքամայր Երևանի տարբեր շրջաններում: Ամենուրեք շփումները ջերմ էին և անմիջական: Ամենուրեք Հայոց Հայրապետը սերմանում էր **Հավատ, Հույս և Սեր:**

Համայն հայության համար իրոք երանելի օրեր են, ամենուրեք երգ, երաժշտություն, ցնծություն... Վստահաբար պետք է ասել, որ Հայ Եկեղեցու և համայն հայության համար մեծ հույսերի և սպասումների ժամանակներ են սպասվում:

Ապրիլի 9-ին, Ծաղկազարդի տոնի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, բազմահազար հավատացյալների ներկայության, Ամենայն Հայոց Կաթողիկոսական իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց և արտագին ու անկեղծ քարոզ խոսեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը՝ իր խոսքը համեմելով բարեպաշտ քրիստոնյային վայել իմաստալից խուտումներով և պատգամներով:

Տպավորիչ էր և չափազանց հուզիչ պատարագի միջնամասը, երբ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծունկի եկավ և իր ուխտի խոսքըն ասաց, երբ երկու բարձրաստիճան հոգևորականներ նրան հանձնեցին կաթողիկոսական գավազան և մատանի՝ ի նշան կաթողիկոսական իշխանության, երբ տասներկու եպիսկոպոսներ, ի հաստատումն այս ամենի, մոտեցան և իրենց աջը դրեցին նրա գլխին: Տասներկու եպիսկոպոսների ներկայությունը խորհրդանշումն էր Քրիստոսի տասներկու աշակերտ-առաքյալների: Թվում էր, այո, թե Ամենայն Հայոց Հայրապետը ծունկի է եկել Աստուծո առջև, իր ժողովրդի առջև՝ հայցելու նրանց թողտվությունը՝ բոլորանվեր էությամբ շարունակելու իր նախորդների անավարտ թողած մարդասիրական և ազգանվեր գործունեությունը: Հենց այդ պահին կարծես Երկնային տասներկու լուսափայլ հրեշտակներ, տասներկու եպիսկոպոսների տեսքով, իջել են Ավագ տուրբ սեղան և Աստուծո շնորհներն են բաշխում ներկաներիս Հայոց Հայրապետին:

«Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս: Եւ եղեւ լոյս»:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ





ԳԻՐՔԸ

«Զայս անմահ թողում ձեզ վարդապետ»
(Անանիա Շիրակացի)

Դարնանամուտին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին այցելեցին հոգևոր ճեմարանի մի խումբ ուսուցիչներ: Այցելության ավարտին մեզանից ամեն մեկը Հեղինակից Գիրք ստացավ՝ «Հայաստանեայց Եկեղեցին իր «ծառայական կերպ»-ի մէջ» խորագրով, որը առաջին հրատարակության քառասնամյակին էր նվիրված: Ասել է՝ քառերկամյա ճորընճա վարդապետի շարադրանքն է:

Աշխատություն ունի կուռ կառուցվածք, հստակ մասնաբաժանում՝ խոսուն խորագրերով և դյուրընկալ շարահյուսությամբ: Նյութի տիրական իմացությունը, ներկայացնելու հմտությունը, գրավիչ և պատկերավոր պատմելակերպն ու սահուն լեզուն ընթերցողին կապում են գրքին և, Հեղինակի հետ միասին, անձնանձրույթ քայլում դարերի ու աշխարհի միջով, որպես ականատես Տեր և Ծառա Հայաստանյայց Եկեղեցու արարչագործության:

«Ներածությունը», ինչպես նաև մասերը՝ Ա. «Հայաստանեայց Եկեղեցին՝ ի սպաս հայ ժողովրդին», Բ. «Հայաստանեայց Եկեղեցին՝ ի սպաս ընդհանուր քրիստոնեական Աշխարհին», ունեն ամփոփ ենթաբաժիններ: Ավարտվում է «Վերջաբանով» և «Վկայություններով»:

Հենց միայն խորագրերի ընթերցումը թևածող տրամադրություն է ստեղծում Գրքի նկատմամբ. «Քրիստոսը Տէր և ծառայ..., Տէր լինելով հանդերձ, և աւելին նոյնիսկ, ծառայ է» ... «Քրիստոսի առաքելությունը՝ ծառայություն, նվիրում է...», «Եկեղեցին Քրիստոսի մարմինն է և ժառանգորդ ծառայության...», «Եկեղեցին՝ ի սպաս Հայ ժողովրդին...», «Հոգեկան սնունդի աղբիւր Հայ Հոգուն...», «Օջախ հայ մշակույթի»:

«Հայաստանյայց Եկեղեցին՝ քրիստոնեական կրոնի մարմնացումն է Հայաստան աշխարհի մեջ,—գրում է Գարեգին վարդապետը,—և այնպի-

ալի թափանցումով է տարրացել Հայ Հոգու հետ, որ բոլոր արտահայտությունները իրենով է դրոշմված, իրենով թաթախված, և հետևաբար՝ իրենով հասկանալի: Հայաստանյայց Եկեղեցու Մայր կոչումից՝ կրոնական հոգևոր ծառայությունից է առաջանում իր սպասավորության հայ մշակույթի օջախ լինելու ուղղությունը... Իր կրոնական առաքելությունը ի կատար ածելու համար նա պետք ունեցավ կենդանի խոսքի, բանավոր քարոզության կողքին՝ մնայուն գիրին, մշտատև գիրքին, նրա միջոցով իր ազդեցությունը, բարիքը հարատև և հաստատուն կերպով ընծայելու համար Հայ ժողովրդին»: Այստեղ կանգ առնենք և հետևենք «մնայուն գիր» ստեղծելու Հայաստանյայց Եկեղեցու սպասավորների հետևողական ջանքերին, որը պսակվեց աստվածապարգև նշանագրերով և դրանցով գրված Սուրբ Գրքով ու ողջ ազգային դպրությամբ: Հայոց գիր ունենալու առաքելությունը ի կատար ածեցին Հայաստանյայց Եկեղեցու և՛ Տեր, և՛ ծառա Սահակ Կաթողիկոսն ու Մեսրոպ քարոզիչը «որպեսզի բոլոր մարդկանց հասնի քրիստոսաբեր փրկությունը»—գրում է Կորյունը:

Աստվածային պարգևը մարմնավորվեց Մաշտոցի ձեռքով: Նա էլ թագավորահիմն առաջին մեսրոպագիր դպրոցում կրթեց հայ մանուկներին, որով և վարդապետական գեղեցիկ աստիճանի հասավ: Երկու տարում նրա աշակերտները այնպես հանգամանորեն խորամուխ եղան օրենքների ու պատգամների մեջ, որ «այնուհետև աստվածային գործի մշակություն ասելով՝ սկսեցին ավետարանական արվեստը—թարգմանել, գրել և սովորեցնել...

«Այն ժամանակ անպայման աքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը,—գրում է աքանչացած Կորյունը,—ու երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ, միանգամից եկան հասան, Հայրբարբառ, Հայրենախոս դարձան օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասի հետ, և առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին»:

Եվ այսպես շարունակվում է Հայաստանյայց Եկեղեցու սյուների ծառայությունը՝ ժառանգաբար անցնելով սերունդների, լուսավորվում է քրիստոնեության լույսով Հայաստան աշխարհը:

Հիրավի, Հայաստանյայց Եկեղեցին միշտ իր ծառայական կերպի մեջ է եղել՝ ծառայելով Աստծուն և Հայ ազգին: Աստծու խոսքը հասցրել է Ազգին նաև աստվածապարգև գրի միջոցով, և ժողովրդի ի խորոց սրտի խոսքը՝ Աստծուն: Նաև Միջնորդ է և Բարեխոս Հայաստանյայց Եկեղեցին՝ առաջի Աստծո, և միշտ սպասավոր:

Սմենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի Մատյանը նույնպես Հայաստանյայց Եկեղեցու ծառայական կերպի արտահայտություններից է, որով անընդհատ հիշեցնում և զգաստության մեջ է պահում ոչ միայն Եկեղեցու սպասավորներին, այլև ամեն մի հավատացյալ հայ քրիստոնյայի, և սրանով ամեն մեկի համար մնում որպես վարդապետ-ուսուցիչ:

Գիրքը ձոնված է Վեհափառի մեծ ուսուցչին՝ Մեծի Տանն Կիլիկիո Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Հովսեփյանի հիշատակին, Հայ մեծ հոգևորականին, Հայաստանյայց Եկեղեցու, գրի և դպրության բազմաբեղուն երախտավորին, որն ուսուցանում է. «Հայոց Եկեղեցին՝ մեր ազգային ամենամեծ ստեղծագործությունը, ամենամեծ ժառանգությունն է՝ մեր նախնյաց թողած»,

ևան՝ «Ամեն մի հայ ընտանիք Եկեղեցին է, և ամոր սրբազան քահանան Մայրն է»: Սքանչելի է: Մարդկության ընկերության հիմքը, ընտանիքը՝ Եկեղեցի, սրբազան քահանան՝ Մայրը, միշտ ծառայական կերպին մեջ Մայրը՝ այդ հիմքին հիմքը:

Հայաստանյայց եկեղեցին...

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԵՐԿԱՐՈՐԵՆ ՍՊԱՍՎԱԾ ԳԻՐՔ*

Մշակութային արժեքներն ի պահ են տրվում գալիք ժամանակներին ու սերունդներին, սակայն, հակառակ զարգացման տրամաբանությանը և հնոց գանձերը պահպանելու համար թափված ջանքերին ու փայփայանքին, պատմական ձախորդ հանգամանքները հաճախ պատճառ են դառնում անդառնալի կորուստների: Հայ հին գրականության կորուստները ցավալիորեն շատ են: Մեզ չեն հասել Պետրոս Սյունյաց Քերթողի, Շապուհ Բագրատունու, Հովհաննես Կոզեռնի, Հովհաննես Սարկավագի և Վանական Վարդապետի պատմագրքերը, որոնք հետնորդներից հիացմունքով են հիշատակվում, Մամբրե Վերծանողի, Խորով Անձևացու, Անանիա Նարեկացու և բազում այլ մատենագիրների երկեր: Ժամանակն անիանա է գտնվել նաև այնպիսի մի մեծահռչակ պատմագրի անհատմամբ, ինչպիսին Եղիշեն է, որի պաշտելի անունն իսկ, թվում է, բավական էր անկորուստ պահպանելու այն, ինչ կապվում է նրա «ոսկեծղիկն» աջի հետ: Այն ամենը, ինչ պահպանվել է Եղիշեից, խնամքով հավաքել և նրա պատմության հետ միասին, «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք» խորագրով, մի ծաղրակշիռ հատորով երկիցս հրատարակել են Վենետիկի Մխիթարյան հայրերը (1838 և 1859 թթ., վերջինն՝ ավելի ամբողջական): Սակայն դա մեծ մատենագրի ողջ ժառանգությունը չէր:

Եղիշեի վարքում, ի թիվս նրա պատմության, ճառագրական, ներբողական և մեկնաբանական երկերի, հիշատակվում է նաև մի կարևոր գործի անուն՝ «Արարածոց մեկնությունը»: Հայ հին մատենագրության մեջ այդպես էին կոչվում մեկնաբանական բնույթի այն աշխատությունները, որոնց նյութը, քննության առարկան Աստվածաշնչի «Ծննդոց գիրքն» էր՝ նրան հաջորդող «Ելք», «Թիւք», «Ղեւտականք» և «Երկրորդումն օրինաց» գրքերի հետ միասին, Հնգամատյան անվանումով, վերագրված Մովսես մարգարեին: Գիտությունը, փիլիսոփայական միտքը հատկապես վաղ միջնադա-

---

* Գարեգին Վեհափառը, լինելով հմուտ աստվածաբան և հայ գրքի նվիրյալ, մեր մշակույթի ու գրահրատարակչական գործի զարգացմանը ատտարել է ոչ միայն Կիլիկյան Աթոռում, այլև իր օրհնությունն ու օժանդակությունն է բերել Հայաստանում տպագրության պատրաստ գործերի հրատարակությանը: Վեհափառ Հայրապետի շնորհիվ հիմքը դրվեց «Աստվածաշնչական մեկնություններ» մատենաշարի, որով հաջորդաբար հրատարակվում են մեր Եկեղեցու երջանկահիշատակ հայրերի մեկնողական գործերը:

Սույն ներկայացնում ենք շարքի առաջին գրքին նվիրված գրախոսությունը:

ում քրիստոնյա աշխարհում զարգանում էին Սուրբ Գրքի ամենաբավ ծիրի մեջ, մտածող մարդու փորձն ու արտաքին աշխարհի ազդակներով պայմանավորված իմացությունը գիտական գրանցում էին ստանում նրա թույլատրած շրջագծի սահմաններում: Իսկ «Ծննդոց գրքի» մեկնաբանումն այն գայթակղիչ ասպարեզն էր, որը աստվածաբան-գիտնականին հնարավորություն էր ընձեռում խորամուխ լինելու տիեզերքի կառուցվածքի, երկնային մարմինների շարժման, օդերևութաբանության, կենդանական աշխարհի, բուսաբանության և ուրիշ-ուրիշ խնդիրների մեջ, որոնք հետագայում, ավելի նոր ժամանակներում էր, որ տարանջատվեցին և դարձան գիտության առանձին բնագավառներ:

Եղիշեն այն մատենագիրն է, որն իր մյուս գործերում ևս, առանձնապես պատմության մեջ, հանդես է բերում իմաստասիրական հակում, քննելու և իրերի ներքին խորհուրդը հայտնաբերելու խանդավառ մղում, և «Արարածոց մեկնություն» ստեղծելու իրողությունը բխում է նրա, իբրև մատենագրի, հարուստ անհատականությունից՝ համակողմանի իմացություններից, տրամաբանելու և ճշմարտության հանգելու անսովոր կարողությունից: Մեր ազգային դպրության արշալույսին առաջինը նա է ձեռնարկել և գլուխ բերել մեկնաբանական այդպիսի մի գործ:

Հայ հին գրականությանը և Եղիշեին անդրադարձած բանասերներից շատերն են առիթ ունեցել հիշատակելու այդ մեկնությունը՝ ամեն անգամ ափսոսանքով արձանագրելով նրա կորուստը, սակայն լուրջ փորձ չի արվել այն հայտնաբերելու ուղղությամբ, բացառությամբ հետևյալ անհաջող քայլի. 1928 թ. Վիեննայի մխիթարյաններից անվանի հայագետ Հայր Ն. Ակինյանը Եղիշեի անունով հրապարակ հանեց մի անվավեր բնագիր՝ «Հարցմունք և պատասխանիք ի Գիրս ծննդոց» խորագրով, ֆրանսերեն զուգադիր թարգմանությամբ, բայց իսկույն էլ հիմնավորապես ժխտվեց այդ երկի՝ Եղիշեին պատկանելու հնարավորությունը: Բանասիրական հսկայական ջանքեր պահանջող խնդրի իրականացմանն ավելի քան հիսուն տարի առաջ, երկրորդ աշխարհամարտի տարիներին, ձեռնամուխ եղավ Լևոն Խաչիկյանը, գիտական խոր ու բազմակողմանի պատրաստությամբ, ինքնամոռաց նվիրումով, լրջմիտ ու բանիբուն մի երիտասարդ, որին մոտիկից ճանաչողները՝ նրա ուսուցիչներն ու ժամանակի մեծ հայագետները, փայլուն ապագա էին գուշակում:

Դժվար էր ակնկալել, որ արդեն իսկ մինչև 13-րդ դարը կորած «Արարածոց մեկնությունը» հանկարծ կարող էր հայտնաբերվել հնօրյա ձեռագրերից, դա բացառված էր: Կար մեկ հնարավորություն. որոնումներ կատարել, մանրակրկիտ աշխատանքով քննել ու խուզարկել այն աղբյուրները, որոնցում այլ հեղինակների օգտագործմամբ Եղիշեի աշխատությունից պահպանվել են քաղվածքներ, մանր ու մեծ հատվածներ, պեղել և ի մի բերել դրանք, բեկորների միջոցով, թեկուզև պակասավոր վիճակում, վերականգնել մատենագրի գործը, հավանական պատկերացում տալ նրա նախնական կառուցվածքի ու ընդգրկումների մասին: Խաչիկյանն ընթացել է այդ ճանապարհով և հասել ցանկալի արդյունքի: 1945 թ. նրա աշխատությունը պաշտպանության է դրվել իբրև թեկնածուական դիսերտացիա: Այն ժամանակ պաշտոնական ընդդիմախոսներից մեկը՝ ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանը, շատերի կարծիքն արտահայտելով, առաջարկել է արժանավոր հայցողին միանգամից պսակել բանասիրական գիտությունների դոկտորի աստիճանով: Դա Խաչիկյանի ծանրակշիռ հետազոտության բար-

ձըր գնահատականն էր, ցավոք, հայագիտության համար մի անբարենպաստ ժամանակահատվածում, երբ Սուրբ Գիրքն ու հոգևոր թեմատիկան իսպառ դուրս էին մղված ասպարեզից, և նրանց հետ կապված արդարացի ոչ մի առաջարկ անհնարին էր իրականացած տեսնել:

Արդեն 40-ական թվականներից Լ. Խաչիկյանը ծավալեց միջնադարագետի արդյունաշատ գործունեություն: Ժամանակը նոր խնդիրներ դրեց նրա առաջ, ամենից առաջ՝ հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակումն ու գիտական արժեքավորումը՝ որպես պատմական հուշարձաններ: Երևի խստապահանջությունը, արվածը նոր կողմերով հարստացնելու մտահոգությունը թույլ չտվեցին, որ նա հրատարակեր վաղուց պատրաստի իր ուսումնասիրությունը: Վաստակաշատ գիտնականին մոտ կանգնած և գործին ձեռագիր վիճակում ծանոթ մասնագետները հաճախ թախանձագին հիշեցնում էին պատրաստի աշխատանքը տպագրելու մասին: Սակայն վրա հասավ անժամանակ մահը: Ու հիմա է, որ շուրջ 50 տարի ուշացումով, իբրև «Ատենաբանական մեկնություններ» մատենաշարի առաջին գիրք, բանասեր ընթերցողին է ներկայացվում ակադեմիկոս Լ. Խաչիկյանի աշխատությունը՝ վավերականորեն Եղիշեին պատկանող բնագրային հավելվածով և հարուստ ծանոթագրություններով (Երևան, «Զվարթնոց» հրատարակչություն, 1992 թ., 328 էջ): Ողջ մատենաշարի հովանավորությունը հանձն է առել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, հայագիտության արժեքների կայացման անխանձախնդիր, մեծաշնորհ Գարեգին Երկրորդը: Գիրքը խմբագրել և հմտալից առաջաբան է գրել ատենաբանության քաջատեղյակ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Ծանոթագրություններում խմբագրի հավելում-միջամտությունները տեղին են և արդարացի, քանի որ անցած հինգ տասնամյակի ընթացքում հրապարակ են եկել բնագրագիտական-բանասիրական բնույթի շատ աշխատություններ, լույս ընծայվել կարևոր հուշարձաններ, որոնք այս կամ այն չափով առընչվում են Եղիշեի ժամանակին ու ժառանգությանը, օժանդակում-հավաստում են Խաչիկյանի կռահումներն ու ենթադրությունները (հազվադեպ՝ նաև հակառակը), ուրեմն և անհրաժեշտ էր, որ թեկուզ ծանոթագրություններում հաշվի առնվեին: Իսկ հակիրճ, բայց բովանդակալից առաջաբանը («Խմբագրի կողմից») հանգուցյալ հայագետի առաջին մենագրության գիտական անկողմնակալ գնահատություն է, նրա առավել նշանակալից արդյունքների ամփոփումը, նաև Խաչիկյանի հետազոտական ոճի ու մեթոդի առանձնահատկությունների բնութագրումը: Մանավանդ վերջինը շատ կարևորելի է այն իմաստով, որ հանձին Լևոն Խաչիկյանի մենք ունենք տիպար օրինակը մի գիտնականի, որը մինչև վերջ հավատարիմ մնաց «սև աշխատանքին» և անդադրում պրպտումին, որի համար ավելի բարձր շահ, քան հայ մշակույթը, գոյություն չուներ, ամեն ինչ զոհաբերելի էր նրան, ուժերի անմնացորդ նվիրաբերումը՝ պարտադիր: Արդարև Խաչիկյանի ուղին և անհատականությունը միշտ էլ ուսանելի օրինակ կարող են լինել հայագիտության ոլորտը ոտք դնող երիտասարդների համար:

Ինքնին հասկանալի է, որ իր որոնումների ընթացքում Խաչիկյանը չէր ոգևորվում այն հույսով, թե հայ ձեռագրական հարուստ աշխարհում հնարավոր է հայտնաբերել Եղիշեի անհայտ աշխատությունը՝ իբրև մատենագրական անկախ ու ամբողջական միավոր: Այդպիսի հայտնաբերման մասին խոսք լինել չէր կարող: Բանասիրական հետախուզումները պետք է տարվեին նրան ծանոթ ու անմիջականորեն կամ միջնորդաբար նրանից

օգտված հետագա մատենագիրների այլևայլ աշխատություններում պահպանված հատվածներն ի հայտ բերելու, դրանք տրամաբանված հաջորդականությամբ միմյանց հետ միավորելու և երկի մոտավոր կառույցը վերականգնելու ուղղությամբ: Ինչպես Խաչիկյանն ինքն է հատակ ձևակերպել իր ծրագիրը, մենագրությունը նվիրված է «հրի ու սրի, մտքի ու գրչի ճակատներով մաքառող գործչի՝ Եղիշեի լավագույն աշխատություններից մեկի բեկորները պեղելուն և բեկորների միջոցով ողջ աշխատության հավանական կառուցվածքը պատկերելուն» (էջ 19): Ուրեմն, հատկանշաբերում՝ վերականգնման ճանապարհով: Ըստ այդմ, գրքի առաջին գլուխը՝ «Եղիշեի Արարածոց մեկնության մեզ հասած հատվածները», անդրադառնում է այն բոլոր հիմնական աղբյուրներին, որոնցում պահպանվել են անվանի մատենագրի աշխատություններից մեծ ու մանր հատվածներ:

Միջնադարի գիտական մտքի պահպանողական բնույթը, ընդունված հեղինակություններին կառչած լինելու սովորույթը նոր ժամանակներում իր նշանակությունն է ձեռք բերում այն առումով, որ հներից քաղագրելը, ընդանց գրածն առանց փոփոխության փոխառնելը ինչ-որ չափով ծածկել է վաղ հուշարձանների կորուստը: Վերջիններիս բախտին արժանացած Եղիշեի «Արարածոց մեկնությունը», 5-րդ դարում հայերեն թարգմանված Փիլոն Եբրայեցու (1-ին դ.), Եվսեբիոս Եմեսացու, Եփրեմ Ասորու, Եպիփան Կիպրացու, Բարսեղ Կեսարացու (բոլորն էլ 4-րդ դ.), Հովհան Ոսկեբերանի (4—5-րդ դդ.), ինչպես նաև հույն Գեորգ Պիսիդեսի (7-րդ դ.) և Ստեփանոս Սյունեցու (8-րդ դ.) համաբնույթ գործերի հետ միասին, թերևս նրանցից ավելի, մշտապես ազդել ու արգասավորել է հայ գիտական միտքը, եղակետային եղել շատ հեղինակների համար: Հետազոտողը Եղիշեի անվիճելի ազդեցության ուժեղ հետքեր է տեսնում Անանիա Շիրակացու և 9-րդ դարի կաթողիկոս Զաքարիա Զագեցու գործերում: Բայց այդ առումով առանձնանում են հատկապես երկուսը՝ Տիմոթեոս վարդապետը (ապրած հավանաբար 9-րդ դ.) և մեծանուն պատմիչ, գիտնական ու մանկավարժ Վարդան Արևելցին (վախճ. 1271 թ.): Տիմոթեոսը, Եփրեմից, Ոսկեբերանից և Եղիշեից առատորեն նյութեր քաղելով, իր ժամանակին կազմել է Ծննդոց գրքի մի ճոխ մեկնություն, որը նույնպես մեզ չի հասել, սակայն Վարդան պատմիչը նրա երկն ունեցել է իր ձեռքի տակ և նրա միջոցով ծանոթացել Եղիշեի կորած աշխատությանը: Վարդանի երկու գործերը՝ Մովսես մարգարեի Հնգամատյանի մեկնությունը և «Լուծմունք ի Սուրբ Գրոց» (ավելի տարածում գտած «Ժղլանք» անունով), մի քանի ձեռագրերի պարունակած հատվածական նյութերը, մասնավորապես 971—981 թթ. օրինակված թղթե հայերեն հնագույն գրչագրի հետ միասին, հանդիսանում են այն էական աղբյուրները, որոնց մանրակրկիտ քննությամբ Խաչիկյանն արտածել-վերականգնել է հայ գիտական-մեկնաբանական մտքի վաղագույն հուշարձանը:

Եթե Շիրակացին, Զաքարիա Զագեցին և «լուսաւոր վարդապետն Տիմոթէոս, այդ հուշարձաններն ծանոթ են եղել անմիջականորեն, ապա Արեվելցին և ձեռագրական հատակոտորների անհայտ հեղինակներն ու գրիչները Եղիշեի գործին հասու են դարձել և նրանից օգտվել ոչ անմիջաբար, այլ Տիմոթեսի միջոցով: Վարդան Արևելցին Ծննդոց գրքի մեծահամբավ հեղինակներից իր նախընտրությունը տվել և վիճելի հարցերում նախապատիվ է համարել Եղիշեի բացատրությունները՝ «Ժղլանքում» անվարան հավաստելով իր վերաբերմունքը նրա նկատմամբ. «...զոր սիրեմ մանաւանդ

և հանոյ է ինձ»։ Պատահական չէ, որ Եղիշեի գործի գերակշիռ մասը նրա աշխատություններում է պահպանվել։

Գրքի առաջին գլխում, աղբյուրների մանրազնին համեմատության ու քննության ճանապարհով, Խաչիկյանն ի մի է բերում ծավալուն կամ համառոտ այն բոլոր հատվածներն ու բեկորները, որոնք վստահաբար կարելի է համարել Եղիշեի աշխատության մասեր։ Պարզվում է, որ 49 գլխից բաղկացած Ծննդոց գրքի 46 գլուխների համար Եղիշեի գործից պահպանվել են հատվածներ, որոնք, անշուշտ, այս կամ այն չափով պակասավոր են։ Դրանց մեջ առավել արժեքավոր են առաջին գլուխների մեկնաբանումները, որոնք շոշափում են աշխարհաստեղծման, տիեզերքի կառուցվածքի, երկնային լուսատուների դիրքի ու շարժման, օդերևույթի հետ կապված խնդիրներ՝ բերելով մի մակարդակ, որին հասել էր հայ բնագիտական և փիլիսոփայական միտքը հանձին Եղիշեի։ Փաստորեն միայն երեք գլխի (ԺԴ, Ի, ԻԳ) վերաբերյալ է, որ ոչինչ չի պահպանվել։ Եվ հետազոտողի եզրակացության հետ չի կարելի չհամաձայնել. «...առաջին հայացքից կարելի է կարծել, թե մեզ հասած մասերով համարյա ամբողջապես հնարավոր է վերականգնել կորած բնագիրը. դժբախտաբար այդպես չէ» (էջ 78)։ Ապա և՝ «Բերված օրինակները ցույց են տալիս, որ մեր հավաքած հատվածները կարող են միայն մոտավոր, լավագույն դեպքում՝ բավարար պատկերացում տալ այն մեծարժեք աշխատության մասին, որի ամբողջության կորուստը թերևս մեր հին գրականության ամենացավալի կորուստը պիտի համարել» (էջ 79)։

Խաչիկյան աղբյուրագետի խորիմացությունը լավագույնս ի հայտ է եկել գրքի երկրորդ գլխում, ուր քննության առարկա է դարձել «Արարածոց մեկնության» հայտնաբերված հատվածների հարազատության հարցը։ Կիրարկված են ստուգման տարբեր միջոցներ, բանասիրական մոտեցման ու համեմատության արդյունավետ եղանակներ, որոնց շնորհիվ, բացառությամբ մի քանի երկբայելի հատվածների, հիմնավորվում է Եղիշեի հեղինակային իրավունքը։ Հակառակ հայագիտության մեջ տեղ գտած կարծիքի, թե «Արարածոց մեկնությունը» նշանավոր պատմիչից տարբեր, 7-րդ դարից այս կողմ ապրած համանուն մեկ այլ Եղիշեի գործն է, Խաչիկյանը, Եղիշե անունով հիշված վավերական ու անվավեր մատենագիրների ցանկը քննելով, գալիս է այն անվարան հետևության, որ մեկնության հեղինակը «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» վիպասքի հեղինակ Եղիշեն է, ծնունդով Կողբ ավանից, Եզնիկ փիլիսոփայի հայրենակիցն ու նրա կրտսեր ժամանակակիցը։

Աշխատության հաջորդ գլուխը բացահայտում է Եղիշեի մատենագրական աղերսները հայերեն թարգմանված օտար հեղինակների հետ։ Ենթադրվում է, որ նա օգտվել է Եվսեբիոս Եմեսացուց, Հովհան Ոսկեբերանից, Եվսեբիոս Կեսարացուց, բոլորն էլ հույն հեղինակներ, որոնց աշխատությունները հայերեն են թարգմանվել հայ դպրության ձևավորման վաղ շրջանում։ Սակայն Եղիշեի հիմնական աղբյուրները հունաբան դպրոցի գործունեության վաղ շրջանից են՝ Փիլոն Եբրայեցի, Հերմես Եռամեծ, մասամբ նաև Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատությունը, «Բարոյախօս» ժողովածուն, Պլատոնի «Տիմէոս» տրակտատը և այլն։ Առընրված օրինակների ու հատվածների համեմատությունն անկասկածելի է դարձնում այդ աղբյուրներից Եղիշեի կախումը։ Հետևաբար, գիտնականի հիմնավոր կանխատեսությամբ, հունաբան դպրոցի սկզբնավորման ժամա-

ևակը 6-րդ կամ 7-րդ դարից պետք է տանել 5-րդ դարի 3-րդ քառորդը՝ ընդունելով, որ Եղիշեի «Արարածոց մեկնություն» ստեղծվել է 470-ական թվականներին, հիշյալ հայացված գրականության առկայության պայմաններում: Ասենք, որ 1940-ական թթ., հայագետ Գ. Տեր-Մկրտչյանի հետքերով, դա համարձակ տեսակետ էր, երբ հրապարակի վրա հունաբան դպրոցի զարգացման շրջանների մասին անբաժան իշխում էր Հ. Մանանդյանի, Ն. Ադոնցի, Ն. Ակինյանի տեսությունը: Հունաբան հայերենի սկըզբնավորումը 6—7-րդ դարերը տանելով՝ խախտվում էր նաև «Եղիշեի դիրքը որպես Ե դարի հեղինակի»: Խաչիկյանի տեսակետի ընդունմամբ հունաբան հայերենի ձևավորումը ենթադրելի է իր բնական ու տրամաբանված ժամանակակետի մեջ:

Հունաբանության բնորոշ լեզվաքերականական հատկանիշները համեմատաբար մեղմ արտահայտություն են գտել «Արարածոց մեկնության» մեջ և նույնիսկ ավելի թույլ՝ Վարդանանց պատմության մեջ (ի դեպ, այստեղ հունաբանության այնքան հատկանշական նախածանցներից հանդիպում են միայն չորսը՝ **առ, բաց, վեր, տար,** այն էլ խիստ հազվադեպ բառակերտումներում), որի ստեղծման ժամանակը, Ստ. Մալխասյանի, Մ. Աբեղյանի և այլոց կարծիքով, ընկնում է 460-ական թվականների կեսերին: Խաչիկյանի աշխատության մեջ է, որ առաջին անգամ բնութագրվում է Եղիշեի բնափիլիսոփայական հայացքների համակարգը՝ իբրև մեզանում նորպլատոնական ուղղության ամենավաղ արտահայտություն:

Խաչիկյանը, ի թիվս այլ հանգամանքների, հայ հին գրականության մասնագետների ուշադրությունը հրավիրում է երկու իրողության վրա՝ որոշելու համար Եղիշեի և Փարպեցու ժամանակային հաջորդությունը: Նախ՝ Փարպեցին իր պատմության մեջ Վարդան Մամիկոնյանի մասին խոսելիս գործածում է «սուրբ» և «երանելի» բառերը, որ նշանակում է, թե երբ նա իր գործն էր գրում, Հայոց Եկեղեցին Վարդանին և նրա նահատակ զորակիցներին արդեն պաշտոնապես դասել էր սրբերի շարքը: «Եղիշեի պատմության մեջ, սակայն, Վարդանը ոչ մի անգամ նման ձևով չի հիշատակված» (էջ 153): Միայն հայոց ազատամարտի իրադարձություններին ժամանակակից և ականատես պատմիչը կարող էր Վարդանին հիշատակել սոսկ սպարապետ հորջորջմամբ, երբ Եկեղեցին դեռևս չէր սրբացրել նրան:

Այնուհետև. չնայած բազում առիթներին՝ Եղիշեն իր գրքում, ինչպես և վարքագիր Կորյունը, ոչ մի անգամ չի տալիս Գրիգոր Լուսավորչի անունը, միևնույն չէ՞ որ Վարդանը փառապանծ Լուսավորչի տոհմի շառավիղն էր, և Գրիգորի անվան հիշատակումն ավելի կընդգծեր Վարդանի հեղինակությունը: Հետևապես, ըստ Խաչիկյանի, Եղիշեի պատմությունը գրվել է նախքան հայ կյանքում Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի հաստատումը: Այս երկրորդ նկատումն, անտարակույս, երկբայության տեղիք է տալիս, որովհետև Եղիշեն ինքնաբերաբար դիտվում է ժամանակով ավելի վաղ, քան Փավստոսը և Ագաթանգեղոսը: Նաև այսպես թե այնպես ստվեր է ձգվում Լուսավորչի կերպարի պատմականությանը: Սակայն Խաչիկյանի մոտեցումը Եղիշեի ժամանակի խնդրին Փարպեցու հարաբերությամբ՝ միանգամայն փաստարկված է ու ընդունելի:

Նույնքան ուշարժան է փաստերի թելադրանքով գիտնականի արած այն հետևությունը, որ «Բարոյախօս» ժողովածուի և Պլատոնի «Տիմէոս» տարամախոսության թարգմանությունները կատարված են նախքան «Արարածոց մեկնության» ստեղծումը, և Եղիշեն օգտվել է նրանցից (ի դեպ,

Պլատոնի չորս տրամախոսությունների պահպանված գրաբար թարգմանությունները մասնագետները կապում են հունաբան դպրոցի վերջին, երրորդ շրջանի, այն է՝ 7—8-րդ դդ. հետ):

Ատաղձ ունենալով մի կողմից՝ քրիստոնեական աստվածաբանությունը, մյուս կողմից՝ անտիկ գիտությունն ու փիլիսոփայությունը՝ Եղիշեի աշխատությունը շոշափել է բազմաբնույթ հարցեր, մեզանում ժամանակին կատարել մի տեսակ հանրագիտարանի դեր: Տիեզերքի կառուցվածքի, երկրնքի, մարդկանց աշխարհի, կենդանական ու բուսական կյանքի մասին Եղիշեի ուսմունքը, անշուշտ, լիցքեր է ստացել նաև հայ ժողովրդական պատկերացումներից: Այդ ամբողջի ուսումնասիրությունը և «Արարածոց մեկնության» գիտական համակողմանի արժեքավորումը Խաչիկյանն իրավացիորեն համարում է առանձին գիտությունների պատմությամբ զբաղվող մասնագետների խնդիրը, բայց իր գրքի չորրորդ գլխում ինքն էլ նախապես ընդհանուր ծանոթություն է տվել մի շարք հատվածների գիտական արժեքի մասին, նաև ներկայացրել այն տևական ու համատարած ազդեցությունը, որ հետագա դարերում նախ՝ Տիմոթեոս վարդապետի և ապա՝ Վարդան Արևելցու աշխատությունների միջնորդությամբ ունեցել է Եղիշեն հայ գեղարվեստական ու գիտական մտքի վրա: Նրա հայացքներն իրենց ակնհայտ արտահայտություն ու զարգացումն են ստացել Հովհաննես Սարկավագի, Վարդան Այգեկցու, Հովհաննես Պլուզ Երզնկացու, Ֆրիկի, Հովհաննես Թլկուրանցու, Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Խլաթեցու, Առաքել Սյունեցու, Մատթեոս Ջուղայեցու և այլոց գործերում:

Խաչիկյանի աշխատությունը կես դար ուշացումով տպագրվեց, սակայն, անվերապահորեն, նրան վիճակված է մնայուն կյանք, այն գրքի երջանկությունը, որի ուսումնասիրումը պարտադիր է դառնալու մերօրյա և գալիք հայագետների համար: Ձվճարված պարտքի զգացումով, ցավ ի սիրտ ուզում եմ Մաշտոցյան մատենադարանի և հայոց պատմաբանասիրության ուշադրությունը հրավիրել մի կարևոր խնդրի վրա, կարծում եմ, արտահայտելով շատերի ցանկությունը. անհրաժեշտ է ամսագրերից, գիտական հանդեսներից, տարեգրքերից և այլևայլ ժողովածուներից ի մի բերել մեծ հայագետի բազում հոդվածներն ու մանր ուսումնասիրությունները և հրատարակել հատորանիով՝ տեղ տալով նաև Եղիշեի աշխատությունից նրա հայտնաբերած-վերականգնած բոլոր հատվածներին, որոնց մի մասն է միայն ներկայացված գրախոսվող գրքում: 1960—80-ական թվականներին հայ բանասիրական գիտության թոհ-բոհի ու ձեռքբերումների մեջ Խաչիկյանի երախտիքը շատ մեծ է, նրա ծառայություններն անգնահատելի են: Նրա ամեն մի հոդված իսկական գյուտ էր և ուղենիշ՝ միջնադարյան մշակույթի տարբեր բնագավառների հետազոտման համար: Դրանց մեկտեղված տպագրությունը կլինի պատշաճ հարգանք նրա արժանավոր հիշատակին և, մանավանդ, օժանդակություն ու շահ հայ պատմագիտության ու բանասիրությանը:

ՊՈՂՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԵՀԱՓԱՌԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԻՑ

Հայ ձեռագիրը ամենէն վճիտ հայելին է հայ հոգեկանութեան: Հայու պատմութեան տաքն ու պաղը, սեւն ու ճերմակը, փառքն ու աւերակը իր մէջ խառնած հնամենի բայց միշտ նոր, մագաղաթեայ անշարժութեամբ բայց հաղորդական եւ յուզական ջերմութեամբ բարբառող վկայ է հայ ձեռագիրը: Հայ կեանքի ամենէն նուրբ, մտերմօրէն բաբախուն ապրումները, որոնք առհասարակ դուրս կ'իյնան «հանգամանաւոր» պատմիչներու, «պաշտօնական» մատենագիրներու լայնարձակ կարկիններէն, այնպիսի տաքութեամբ մը կը խօսին հայ ձեռագրի էջերուն խուճապեալ անկիւններէն, որ անկարելի է չբռնուիլ անոնց հոգեխոով քաղցրութենէն, սրտայոյզ անկեղծութենէն ու յանկարծաբուխ պարզութենէն:

* * *

Քանի հայը միտքն ունի իր ճակատին, միտքին փայլը լոյս պիտի դառնայ իր քայլերուն առջեւ եւ օտարութեան փոշին կեղտ պիտի չկպչի այդ ճակատին, իր ճանապարհը ուղիղ պիտի ըլլայ, իր գնացքը՝ տոկուն ու յաղթ:

* * *

Ջանգը՝ մեր գիւղին սի'րտն էր: Խօսնա'կը՝ որուն «խօսք»ը կը հասնէր գիւղի բոլո'ր մարդոց: Կոչնական էր ան, որ կը հանդիպէր ամէն մէկ գիւղացիին, ուր ալ ըլլար ան՝ դաշտին թէ այգիին մէջ կամ տան երդիքին տակ, դպրոցի շրջափակին թէ նեղլիկ կրպակի մը մէջ, փողոցներու մէկ անկիւնը կամ տանիքներու վրայ: Երբ կը հնչէր՝ բոլորն իր ձայնին մէջ կը միացնէր, գիւղը իրմո'վ կը միազանգէր: Իր ղօղանջով գիւղը գի'ւղ կ'ըլլար: Գիւղացիք իրմո'վ իրար կը հանդիպէին, իր մէջէն գիրար կը գտնէին եւ իրենց համայնութիւնը իրմո'վ կ'ապրէին: Ջանգը ժամացոյցն էր մեր գիւղին եւ իր ղօղանջը՝ ժամադրավայր մեր գիւղացիներուն:

* * *

Փոշի դարձողը միս ու ոսկորն է, իսկ մարդը միս ու ոսկոր ունեցող, բայց միս ու ոսկոր չեղող այն էակն է, որ ունի հոգեկան ապրումներ, գաղափարներ, ունի իտէալներ եւ մանաւանդ կեանքի մէջ ստեղծագործութեան եւ յառաջդիմութեան անյագ տենչ եւ անսանձ թռիչք: Եւ մեռելներն

են որ մեզի կը յիշեցնեն թէ իրենք կ'ապացնին, իրենց ապացնելիք միս ու ոսկորով, բայց կ'ապրի՛ն, որովհետեւ իրենց հաւատքը, գաղափարը, ստեղծագործութիւնը վեր կը մնան հողայնութեան օրէնքներէն:

* * *

Թադէոս Առաքեալի ճաճանակութեան դրուագին մէջ հայ ժողովուրդը ըմբռնած է աստուածային, քրիստոսասանդ այն ճշմարտութիւնը որ երջանկութեան կը վերածուի երբ մարդ կարենայ զայն խառնել իր գիտակցութեան եւ կամքին մէջ, թէ՝ **«հոգի առաւել է քան զմարմին»**, թէ՝ ճշմարտութեան, բարիին, հաւատքին, սիրոյն, կեանքի ազնուագոյն ապրումներուն, ընտրելագոյն գաղափարներուն եւ գերագոյն գաղափարականներուն համար՝ կ'արժէ կեա՛նք տալ, արի՛ւն հեղուլ, որպէսզի ապրին Եկեղեցին ու Ազգը, Կրօնն ու Հայրենիքը, Գիրն ու Լեզուն, Մշակոյթն ու Արուեստը, առանց որոնց մարդիկ ու ազգեր պղինձ կ'արժեն պատմութեան գանձանակին մէջ, թեթեւ կը կշռեն պատմութեան կշիռի ճժարին վրայ եւ ակընթարթային արագութեամբ կ'անցնին աշխարհի թատերաբեմին վրայէն:

* * *

Կաղնի՛ է հայոց ազգը: Դարաւո՛ր կաղնի: Եւ անոնք որոնք ազգին պատկանելու իրաւ, գիտակից զգայարանքը ունին, դէպի ապագան նայիլ գիտեն, չեն կրնար կտրուիլ կաղնիի բունէն ու արմատներէն, որովհետեւ կ'աղքատանան ու կը տկարանան առանց մեր հայրերու ստեղծագործութեան հարուստ ենթահողին եւ անկէ ծնող աւիշին: Այսօր աշխարհի չորս ծագերուն վրայ բոլոր ազգեր, անոնց շարքին նաեւ մեր ժողովուրդը, որոնք հողի վրայ, երկրի երեսին հսկայական նուաճումներ կը կատարեն գիտական, ճարտարարուեստական եւ մշակութային մարզերուն մէջ, կը պեղեն նաեւ իրենց հայրենի հողը եւ հողի ընդերքներուն մէջ կը փնտռեն արմատները իրենց գոյութեան:

Հող, մարդ եւ գիր
Անթիլիաս 1983

Եթէ ազգանունդ Հայաստան բառին առաջին երեք տառերէն է շինուած, եթէ անուանդ վերջին երեք տառերը **նան** մասնիկով են կնքուած, պատկանելիութեան գաղափարին որպէս ցուցանիշ, եթէ արիւնդ մարմնիդ մէջ հայութեան մարմնի արիւնէն է կաթած, եթէ պատմական յիշողութիւնդ Հայաստանի եւ հայ ժողովուրդի պատմութեան տուեալներով է միայն ըմբռնելի, եթէ կենսագրութիւնդ առանց հայրերուդ կենսագրութեան անհասկնալի կը մնայ նոյնիսկ քեզ համար, հետեւաբար, ներկադ, այսօրուան կեանքդ ու գործդ չեն կրնար մնալ անբաժան այժմ եւս ապրող, մանաւանդ վերածնած, ազատօրէն հայացած, ինքնօրէն անկախացած Հայաստանէն եւ անոր կեանքը վարելու կոչուած ազգակերտութեան հրամայականին տակ գործող Հանրապետութենէն եւ ազգընտիր Պետութենէն:

Վասն Հայրենեաց
Անթիլիաս 1992

Էջմիածինը միշտ ևոր է, եւ՝ ևորոգո՛ղ: Որովհետեւ Հոգին է որ քարերուև հետ է էացած հոգույև մէջէև աևոր՝ որ քարերև այևտեղ հիւսեց շաղախովը իր հաւատքիև, լուո ու մութ քարերուև տուաւ լուսախօս լեզու, «Աշխարհի Լոյս»ը իր աչքերուև տեսիլքովը խաևձելով Արարատէև թագաւորիև դիւցազևեայ ուսերովը բերուած վէմերուև եւ Արարատեաև դաշտէև թագուհիիև բեհեզեայ գոգևոցովը բերուած հողիև եւ աևով զաևգուած շաղախիև:

Միածինը մէկ աևգամ ծևաւ ի Բեթղեհէմ եւ մէկ աևգամ իջաւ ի Հայաստաև աշխարհ: Բայց ամէև աևգամ որ մէկը այցելէ ի Բեթղեհէմ եւ ի Ս. Էջմիածիև, Միածինը վերստիև կը ծևի ու կ'իջևէ աևոր մէջ եթէ աև իր հոգիև չէ բաևտարկած ու կղպած իր մարմնիև ու մարմնեղիևութեաև պարուևակիև մէջ, իր հոգեղէև զգայևութիւևը չէ եևթարկած աշխարհայիևիև հեղձուցիչ, ջլատիչ եւ այլասերիչ չարագործութեաևը, որուև աևուևն է վատ հաղորդութիւև կամ պարզապէս՝ աևհաղորդութիւև:

* * *

Տառապաևքն ու չարչարաևքը, ևեղութիւևն ու աևձկութիւևը, մղձաւաևջն ու աևդոհաևքը վերջը չեև կեաևքիև, երբ այդ կեաևքը իր մէջ վատ պահած ուևի յաւիտեևութեաև կայծը, աևմահական հոգիիև աևմահարար շուևչը, ամեևայաղթ Աստուծոյ պատկերիև ջիևջ պայծառութիւևը:

* * *

Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր հաւատքի աղբիւրէև կը քաղէր իր հոգեկաև արիութիւևը, իմացական պայծառատեսութիւևը եւ տեսլապաշտ ոգիև: Կը հաւատար որ քրիստոևէական կրօևիև մէջ կար ստեղծագործական վեհացուցիչ ոյժ մը, որով մարդը վեր կը բարձրաևար հողեղիևութեևէ, կը ձերբազատուէր աևցաւոր գոյութեաև մը մարդկայիև գիտակցութեաև պարտադրած ահաւոր աևձկութեևէև եւ ևերքիև մղում կը ստաևար ևիւթը ևուաճելու եւ աևով հոգեկաև մևայուև արժէքևեր կերտելու համար:

1700-ամեակը Նոր Հոգեգալուստ
ԵՒթիլիաս 1994

Իրար սիրել՝ կը ևշաևակէ իրարու օգևել, իրարու զօրավիգ կաևգևիլ, իրարու ծառայել:

Քրիստոս սիրեց մարդը եւ աևոր համար մա՛րդ եղաւ: Ծառայեց մարդուև ի խևդիր աևոր հոգեկաև երջաևկութեաև, աևոր փրկութեաև:

* * *

Աշխատութիւևը այև է երկրիև ու կեաևքիև համար ինչ որ է հոգիև՝ մարմևիև: Հաևեցէ՛ք հոգիև մարդուև՝ մա՛ճ է այևտեղ: Հաևեցէ՛ք աշխատութիւևը կեաևքէև՝ մեռելութի՛ւև է այևտեղ...:

* * *

Աստուածածնի անձին պանծացումը մեր մէջ կը վերապրեցնէ մաքրամաքուր հոգեկան ապրումներու եւ առաքինութիւններու եւ մայրական կոչումի պատուականագոյն եւ հայաշունչ գաղափարը, որուն այսօրուան աստիճանական գունաթափումը աղէ՛տ է մեր ժողովուրդի ընտանեկան կեանքի արբութեան եւ փրկարար ազգային դերին վրայ բերած իր մթագող ստուերով:

ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔի հայաւանդ սովորութիւնը մեր Հայաստան աշխարհը կը փոխադրէ մեր արտերուն մէջ: Հայկական հողի ընտրելագոյն բերքին՝ ԽԱՂՈՂԻՆ եւ անոր կապուած աւանդութիւններուն հանդէպ Հայց. եկեղեցւոյ ցոյց տուած սիրոյ եւ յարգանքի այս արտայայտութիւնը, բերքին մէջէն **հո՛ղը** օրհնուած պահելու իր դարաւանդ անխախտ պարտականութիւնն ու հաւատարմութիւնը պէտք է որ արժեւորուի՛ն մեր ժողովուրդին գիտակցական առողջ մօտեցումով եւ գործնական ընդառաջումով եւ մասնակցութեամբ:

* * *

Եղիր ու մնացիր ուխտի ժողովուրդ:

Ուխտ՝ կը նշանակէ **հաւատարմութիւն** հանդէպ Աստուծոյ եւ հանդէպ ազգիդ: Ուխտ ընել գիտցող եւ ուխտը կատարել կրցող ժողովուրդը չի՛ մեռնիր: Ուխտ ընել գիտցող եւ ուխտը կատարել կրցող անհատը՝ Աստուծոյ եւ ազգի հաղորդութենէն աւիշ կը քաղէ եւ կը մնայ առողջ ու տոկուն, կանանչ ու պտղաբեր: Ուխտը կը բարձրացնէ մարդը դէպի Աստուած եւ կը շաղկապէ ազգին:

* * *

Ա՛լ դադրինք թափառաշրջիկութեան չլսատիչ հոգեբանութենէն, որ մեր պատմական կեանքի չարաղէտ ու քանդարար երեւոյթներէն մէկն է եղած արդէն: Ինչպէս թօթափեցինք գաղթականի հոգեբանութիւնը, շպրտե՛նք նաեւ գաղթականի ցուպը...: Անցեալի սխալը չկրկնենք: **Համախումբ ապրելուն մէջն է ազգի մը ոյժին աղբիւրը:** Որքան նօսրանանք այս աշխարհի չորս թեւերուն վրայ մշուշի պէս տարածուելով՝ այնքան կը տկարանանք հովերէն տարուելով եւ ընդհանուրին մէջ մեր ինքնութիւնը կորսնցնելով:

* * *

Աւանդութիւնները ազգերու ինքնութեան շաղախիչ տարրերն են, որոնք երբ անտեսուին, մոռցուին, արհամարհուին՝ գունատութիւն եւ կերպախաթարում յառաջ կը բերեն այդ ազգերու դիմագծութենէն վրայ եւ, ի վերջոյ, դէպի նօսրացում եւ աղօտութիւն, թուլացում եւ անէացում կ'երթան անոնք:

Աւանդութիւնները խարիսխներ են ամրութեան եւ տոկունութեան: Հանենցէք զանոնք ժողովուրդներու կեանքէն. ազգերը կը տատանին անարմատ եղէգներու պէս եւ կը թափին ճիւղերէն փրթած տերեւներու նման:

Ծանիր զքեզ
Անթիլիաս 1983

Ինչ կ'ուզէք ըրէք, մեր հողը **«ղայի՛մ»** բռնեցէք, ամո՛ւր կառչած մնացէք այս սուրբ հողին: Հողէն ծնած ենք: Հողն է Աստուծոյ մեծագոյն պարգեւը մարդուն: Աստուած մարդը երկինքի կապոյտէն չստեղծեց. Աստուած մարդը ջուրէն չստեղծեց. Աստուած մարդը հողէ՛ն ստեղծեց: Հո՛ղն է մարդուն համար կեանքի աղբիւրը: Եկէ՛ք, հետեւաբար, մեր հայրենի հողը լքելու փորձութենէն հրաժարինք: Թող Լենինականի աղէտը ամէն մէկուս համար ուխտի պահ մը դառնայ, ուխտի՝ որ մենք պիտի չթողնենք այս հայրենիքը, պիտի չերթանք օտար աշխարհներ: Մեր թշնամին մեզի ստիպեց որ մենք Սփիւռք դառնանք. դուք ձեր կամքով սփիւռք մի՛ դառնաք: Սփիւռքը մահուան նախադուռն է, առանց հայրենիքի:

1988 թ. դեկտեմբեր

Քրիստոնէական համատարած տիեզերական ծառի բնից առաքելական ճագմամբ ուղղակիօրէն շառաւիղուող, Հայաստան աշխարհի տարածքի վրայ եւ Հայ ժողովրդի կեանքի մէջ իր հովանին սփռող, եւ իր աւիշը ներարկող սաղարթալից ու պտղալից մի ճիւղ է Հայոց եկեղեցին:

Մի ճիւղ՝ որ իր հովանիով, դարերի ընթացքում, զովութիւն եւ զուարթութիւն, թարմութիւն եւ աշխուժութիւն է ներշնչել իր ներքեւ մակաղած հօտին, ապաւինութիւն՝ ընդդէմ այրող արեւների, ցուրտ փոթորիկների ու հեղձուցիչ խորշակների:

Մի ճիւղ՝ որ իր հարուստ պտղաբերութեամբ հայ ժողովրդի հոգիին—եւ մերթ մարմնոյն—սնունդ է հայթայթել, նրա կեանքը յաճախ փրկելով մահից, մահուամբ մահը խորտակելու քրիստոնէական հրաշագործ զօրութեամբ, եւ նրա գոյութիւնը երկարելով, ստեղծագործութեան ճանապարհով, դէպի յաւերժութիւն:

* * *

Հայ ժողովրդի համար հոգեւոր ճշմարտութիւնների, բարոյական սկզբունքների, ազգային առողջ գիտակցութեան ներշնչական-վառարան եղող **«հոգեւոր հայրենիք»**ը Հայաստանեայց եկեղեցին է. բազում անգամ ասուած, բազում անգամ ասելի:

* * *

Քրիստոնէութիւնը **աղ** եղաւ մեր ժողովրդի հոգեկան կեանքի համար: Եւ Հայաստանեայց եկեղեցին հանդիսացաւ **աղամանը,** որտեղից նա ստացաւ իր համեմիչ հիւթը՝ դրանով իր կեանքն անելու համար աւելի իմաստալի եւ ուրախալի, մանաւանդ երբ սրտմտութեան եւ վիշտի ալաքը սուր խոցում էր սիրտը հային, եւ վհատութեան ամպը փորձում էր թանձրօրէն ծանել նրա հոգու մէջ...:

* * *

Բնութեան օրէնքը չի թոյլատրի ոեւէ դատարկութիւն: Դատարկութիւն գոյութիւն չունի Աստծու ստեղծագործութեան մէջ: Երբ ոեւէ պատճառով դատարկութիւն է ստեղծւում, այն անմիջապէս լցւում է մի բանով ու մի ձեւով: Մարդկային կեանքում եւս դատարկութիւնը տեղ չունի: Երբ պա-

բապութիւն ստեղծուի այս կամ այն պատճառով, եթէ մենք չիմանանք եւ չճգնենք այն լցնելու մեր անհատական անձի եւ մեր սեպհական ազգի բարիք բերող տարրերով ու տուեալներով, ուրիշներ կու գան իրենց ուզած ձեւով ու չափով այն լցնելու:

Հայաստանեայց Եկեղեցին իր «Ծառայական կերպ»ին մէջ
Անթիլիաս 1994

Այն մարդը եւ այն ազգը որ կը կտրուին գիրքի աշխարհէն՝ չոր անապատ ու տափաստան կը դառնան, ուր միայն փուշն ու տատասկը, օձն ու կարիճը տուն կը գտնեն...: Գիրքի աշխարհին մէջ ապրող մարդն ու ազգը իրենց կեանքը ածուի կը վերածեն, ուր կենդանութիւնը կանաչավառ կերպարանք կը զգենու ու պտղառատ բեղմնաւորութեամբ կ'իմաստաւորուի եւ հրճուալից կենսաբուվանդակութեամբ կը գեղեցկանայ:

* * *

Ճմոռնանք. հայ ժողովուրդին կեանքին մէջ գիրքը ծնած է Սո՛ւրբ Գիրքով, Աստուածաշունչ մատեանով: Հայ Գիրը ստացուած է երկինքէն եւ կամ երկնաւած է երկնայնացած միտքին մէջ հայոց երկրէն ծնած եւ երկիրը երկինքին, կամարակապած մարդու մը տեսիլքին մէջ: Եթէ Եբրայեցի ժողովուրդը իր Օրէնքը երկինքէն առաւ՝ Սինայի բարձունքէն զայն պոկելով, հայ ժողովուրդը իր Գիրը երկինքէն ստացաւ՝ Ս. Մեսրոպի աչքերէն զայն քաղելով...:

* * *

Աղբիւրէն խմուած ջուրին զովութեան, արեւէն շառաւիղած ճառագայթին ջերմութեան, ծառէն քաղուած թարմ պտուղին համին պէս բան մը կը պակսի անոր՝ որ իր աչքերը փակ կը պահէ հայ գիրին հանդէպ, երբ իր ներքին իմացողութիւնը իր սնունդը չ'ընդներ հայ-արմատ ծառին ու հայագիր Լուսաւորիչ ակունքէն:

* * *

Հայ Գիրքը, այդ մշակոյթին ամենազօր կորիզը, եղաւ հայ մարդուն ընկերը ամէ՛ն տեղ եւ ամէ՛ն ժամանակ: Հո՛ն ուր հայութիւնը օտար աշխարհներէ եկող օտարացնող ազդեցութիւններու տակ տժգունեցաւ եւ աղօտեցաւ՝ Հայ Գիրքը դարձաւ գոյն եւ լոյս: Հո՛ն ուր հայութեան շունչը շիջելու վտանգաւ տկարացաւ ու բարակցաւ՝ Հայ Գիրքը փչեց «շունչ կենդանի» եւ դարձաւ ձայն պայծառաշեշտ: Հո՛ն ուր հայութիւնը խոտորեցաւ ներքին անհատատարմութեան, ուծացումի փորձութենէն այցելուած՝ Հայ Գիրքը դարձաւ շեփորաձայն յուշարար եւ խիղճի զարթնումի եւ ուղղումի մշտահունչ ղօղանջ:

Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց
Անթիլիաս 1990

* * *

Հոգեւորականութիւն կը նշանակէ **խաչելութիւն.** ան որ խաչը շալկելու քաջութիւնը չունի չի՛ կրնար Քրիստոսի աշակերտ եւ նահատակներու շառաւիղ ըլլալ:

* * *

Կ'աղաչեմ ձեզ, կրակէն անցած եւ մաքրափայլօրէն ոսկիացեալ հոգիներով յառակատես նահատակներ, շա՛նթ թափեցէք մեր գլուխներուն եթէ թուլնանք մեր միութեան ամենազօր եւ ամենայաղթ հանգոյցներէն. ձեր աստուածացոլք ցասումը կայծակեցէ՛ք մեր գլուխներուն երբ անտարբերութեան եւ հոգելքումի կամ սրտաթափումի թմբիրը այցելէ մեզի այս **օտար ամայի ճամբէքի վրայ:** Եղէք մեր խիղճը, մեր միութեան յարաբարբառ յուշարարը, հայութեան չինչ հայելին, որուն յստակութիւնը, հարազատութիւնը, մաքրութիւնը արեամբ զոհողութեան փայլուն է շահուած: Ձեր նահատակքը մի՛ հեռացնէք մեզմէ. ձեր այդ նահատակքին մէջ մենք ունինք սլաքը մեր ուղղութեան եւ խթանը մեր արթնութեան, գաղտնիքը մեր յաղթութեան:

* * *

Փա՛ռք քեզ, Հոգի Աստուծոյ, որ ահա կը շրջիս հայութեան կոտորակուած մարմնին վրայ աշխարհի չորս կողմերը եւ յարութեան շունչով նոր կեանք կու տաս մեր հին բայց հինանալ չգիտցող հայ ազգին՝ հայրենի հողին թէ արտերկրի վրայ: Հոգեկան հրաշակերպութեան աղբիւր ես դուն, որ **ձկնորսները առաքեալի կը վերածես, հովիւներէն մարգարէներ** դուրս կը բերես: Իմաստութեան, արիութեան հոգին ապրեցուր հոգիներուն մէջ մեր նոր զաւակներուն, որպէսզի կարենան հասնիլ այն ապագային, որ մեր ազգի երազն է, մեր պատմութեան ժառանգն է, մեր նահատակներու կոչնակն է, մեր ցեղի իրաւունքն է եւ աստուածային արդարութեան ու աստուածապարգեւ ազատութեան տուրքն է տառապակոծ, խաչապաշտ ու խաչաչարչար ժողովուրդիդ:

* * *

Սէրն է ստեղծարար, ատելութիւնն է քանդարար:

* * *

Հայեր կը մեռնին, բայց հայութիւնը չի՛ մեռնիր...:

* * *

Հաւատքը չէ՞ր արդեօք, որ անապատի աւազներուն վրայ շարժեց հայ մօր ձեռքը, եւ աւազին վրայ այդ ձեռքի չորցած մատներուն գրել տուաւ Ա.Բ.Գ.-ը: Հայ մայրը գիտէր որ աւազը հովին հետ պիտի երթայ բայց հաստատօրէն կը հաւատար, որ իր վերապրող զաւկի աչքերուն մէջ Ա.Բ. Գ.-ի տեսարանը յաւէտ պիտի մնար:

* * *

Ողջ մեռնիլը աւելի դառն է, աւելի սոսկալի է քան իրական մահը: Տէր Զօրի նահատակները մեռած ողջեր են. մենք չդառնանք ողջ մեռելներ կեանքին մէջ:

Գիտակցինք, նորոգուինք, հաւատքով թրծուինք, սպունգ դառնանք հաւատքին, սպո՛ւնգ: Մէկը եթէ մեզ բռնէ ու քամէ՝ հաւատք եւ սէր միայն դուրս գան մեր սպունգացեալ անձերէն:

Անցեալը անցած չէ
Անթիլիաս 1986

* * *

«Մարդ է որ գործէ զերկիր»: Եկեղեցին իբրեւ շէնք, իբրեւ ծէս, իբրեւ ձեւական աւանդութիւն չէ որ պիտի իրագործէ իր փրկարար դերը, այլ՝ որպէս երկրի վրայ ապրող եւ գործող հաւաքականութիւն մը, միութիւն մը եւ մասնաւորապէս **եկեղեցականութիւն** մը Աստուծոյ շունչին տրոփը իր արտի զարկերուն մէջ եւ ազգին սէրը իր արեան տարրերուն մէջ: Եկեղեցին, այս իմաստով, ժողովուրդը պատրաստելու համար ինք պէտք ունի պատրաստութեան: Անձնական պատրաստութենէ զուրկ եկեղեցականութիւն մը չի կրնար հաւրայնի ծառայութեան զինուորեալներու յատուկ դերը կատարել արդիւնալից կենսունակութեամբ եւ ստեղծագործականութեամբ: Փարատոքսային է մտածել որ իր անձը չկազմաւորած մարդը կամ մարդերու խումբը կրնայ ժողովուրդ մը կազմաւորել: Քրիստոս, Մեծ Վարդապետը, Տիպար Ուսուցիչը երեք տարի գործելու համար երեսուն տարի պատրաստուեցաւ...:

* * *

«Թարգմանիչ» համեստ անուան տակ թագնուած այն մեծ հոգեւորականները, որոնք տարիներ ամբողջ իրենց Վարդապետին կենսատով «ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ», իրենց մտաւորական աշխարհը լեցուցին Բիւզանդիոնի, Աթէնքի, Եդեսիոյ, Աղեքսանդրիոյ նման իմացական կեդրոններէ քաղուած գիտերով եւ Հայաստանի մէջ ճրագի նման վառեցան, իւղի վերածելով քաղուած գիտերը եւ իբրեւ լոյս սրսկելով Հայաստան աշխարհի մինչեւ մութ, լքուած անկիւնները..., Ոսկեդարի՛ վերածելու համար մեր պատմութեան Ե. դարը:

Եւ գիտենք որ դարերը չկրցան ջնջել անոնց անունները հայ ժողովուրդի յիշողութեան մէջ եւ անոնց հանդէպ երախտագիտութեան եւ հաւատարմութեան զգացումը եղաւ հիմնական պայմաններէն մէկը մեր գոյութեան: Որովհետեւ անոնց մէջ կը կրկնուէր աւետարանեան պատկերը **աշակերտութեան** եւ **առաքելութեան:** Որովհետեւ կրցան ըլլալ այնպէս ու այնքան **աշակերտ** ինչպէս եւ որքան **առաքեալ** էին, եւ ըլլալ այնքան ու այնպէս **առաքեալ,** որքան եւ ինչպէս **աշակերտ** էին...: Միշտ հաւատարիմ Վարդապետին եւ նախանձախնդիր անոր վարդապետութեան ցանքին:

— **Հալիլ՝ լոյս տալու համար...:**

Ահա թէ ինչո՛ւ **մոմին պատկերը** եկեղեցւոյ մէջ՝ արտառուչ պատկեր մըն է հայ մարդուն համար...:

Լոյս տալը՝ մեր գոյութեան վախճանն է: Լոյս առնելը՝ մեր գոյութեան պատճառը: Իրարմով կան անոնք: Առանց մէկուն կամ միւսին՝ անիմաստ է այս կամ այն: Մին առաքելութիւնն է: Գագաթը լերան, ուր մեր մարը կայ: Բայց... միւս լանջին, մեր լոյսէն՝ կեանքը ուրիշներուն: Մովսէս տեսաւ Քանանու երկիրը: Ու մեռա՛ւ: Առաքելութիւնը աւարտած էր: Լերան գագաթը՝ մեր **առաքելութիւնը:** Իսկ բարձունքի լանջին մեր բարձրացումը սա տագնապով, տքնութեամբ—անհամա՞ր գիրքեր, տետրակներ, բառեր, ժամեր, ձախողութիւններ, վերականգնումներ—իրագործուող՝ մեր աշակերտութիւնը:

Կրնա՞նք հասնիլ գագաթին: Աշակերտ ենք ուրեմն: Կրնա՞նք մեռնիլ գագաթին վրայ: Առաքեալ ենք, հետեւաբար:

Մեր Հայրերու յիշատակը այնքան յաճախած է մեզ մեր կեանքի ընթացքին, որ մեզ դարձուցած է անցեալին երկրպագուները, պատմութեան բարեպաշտները, եւ մենք նուիրականութեան սրբազան շղարշով ենք պատած ամէն ինչ որ կու գայ անցեալէն: Եւ երբեմն հասած ենք այն աստիճանին, ուր նոր ստեղծագործութեան հրայրքը այնքան է տկարացած մեր սերունդներուն մէջ՝ որ անցեալի ոգեկոչումով, անցեալի արժէքներու վերարժեւորումով, անցեալի մխրճագործութիւններու յիշատակով միայն կը գոհանան անոնք: Եւ սակայն, Վերածնութեան Սերունդի մը յատկանիշը չի կրնար ըլլալ այս: Նոր կեանքի մը բաբախումներով նոր արեան թարմութիւնը իր երակներուն մէջ զգացող հայ երիտասարդ սերունդը պէտք է հայի դէպի **գալիքը:** Ամէն սերունդ **ի՛ր** պարտքը պէտք է կատարէ, **ի՛ր** լուման պէտք է նետէ Հայութեան յաւերժակառոյց գանձանակին մէջ:

* * *

Հայ հոգեւորականութեան նոր սերունդը ոգիով եւ բուռն նախանձախընդրութեամբ հաւատարիմ՝ նոյն եւ մէկ ու անփոփոխելի Հայց. Եկեղեցւոյ Հիմնակառոյցին, առանձնայատուկ դիմագծութեան՝ պիտի կարենայ քայլ պահել Ի. դարու եկեղեցական եւ քաղաքակրթական ընդհանուր կեանքի գնացքին հետ եւ բերէ **իր սեպհական** ծառայութիւնը, **իր անհատական** դրոշմով: Այս է պատմութեան իրաւ հասկացողութիւնը: Կրկնութիւնը մարդկային կեանքի բնական ձեւը չէ: Մարդկային կեանքը **ռիթմ** ունի, շարժում՝ հարթութենէ դէպի բարձրութիւն, բարձրութենէ դէպի գագաթ... Մեր եկեղեցին ժողովուրդին չի կրնար ծառայել եթէ ծառայութեան նոր ձեւեր չըգտնէ նոր դարուն մէջ ապրող հայ մարդուն սպասաւորելու համար:

* * *

Հայ հոգեւորականը աշխարհի որ անկիւնին մէջ ալ որ նետուած ըլլայ այսօր, ի՛նչ պայմաններու տակ ալ որ ծառայէ, պէտք չէ ձեւազեղծէ հոգեւորականի այս կերպարը որ մշտատիպար, քրիստոսապատկեր եւ հայաձեւ կերպարն է հոգեւորականութեան, աստուածային քահանայութեան՝ ի սպասաւորութիւն Թորգոմայ Տան աշխարհացրիւ զաւակներուն:

Հայ հոգեւորական սերունդին համար Հայ ժողովուրդին ծառայել Ի. դարուն, կը նշանակէ այնպիսի հոգեւոր, ազգային եւ մշակութային նուաճումներով զօրացնել Հայց. Եկեղեցին, որ ան կարենայ դառնալ աղբիւր

մը, ուրկէ հայ ժողովուրդը իր հոգիի եւ ազգային ապրումներու առօրեայ ծարաւը կարենայ գոհացնել, եւ ոչ աւազան մը՝ անցեալէն եկող ջուրով միայն լեցուն...:

Հայ եկեղեցւոյ Վերածնութեան Սերունդին միայն կը մնայ գտնել գաղտնիքը ժայռերէն ջուր բխեցնելու հրաշքին, հայութեան կեանքին մէջ, եւ աղբիւրներու յորդահոս մատուցումով ինքզինք արժեւորելու որպէս ծառայ Աստուծոյ եւ սպասաւոր պանծալի ու պաշտելի եւ անխորտակելի Հայ ժողովուրդին:

* * *

Դա՛րձ դէպի մեր արմատները. դա՛րձ դէպի մեր ինքնութիւնը, դա՛րձ դէպի մեր արժանապատուութիւնը, դա՛րձ դէպի մեր արժէքները, որոնք խորթ չեն, հարազատ են, մարդկային քաղաքակրթութեան անկորնչելի արժէքներուն. բայց մե՛րն են, մեր արիւնին խառնուած, մեր հայրերու հոգիով կեանք առած, մեր նախնեաց անուններով մկրտուած: Դա՛րձ դէպի ինքնաճանաչում, ինքնախորացում, ինքնալիցքաւորում: Այդ դարձով մենք աւելի մօտ կ'ըլլանք Աստուծոյ եւ մարդկութեան բարձրօրէն բարացուցիչ եւ բնորոշիչ ստեղծագործական, քաղաքակրթական ոլորտներուն:

* * *

Սիրելինե՛ր, երբ աշխարհը այսօր **«պանքա»**-ներով կը շատնայ դուք **«վանք»**-ով աճեցէք...: Այս աշխարհը վանքին սովը պիտի ունենայ ու պանքի առատութենէն պիտի տառապի ու՝ արդէն իսկ կը տառապի: Ոչ մէկ ազգ շռայլութեան մէջ, յղփութեան մէջ, առատութեան մէջ կրցած է տոկալ. ազգերու անկումը սկսած է երբ մարդիկ յղփացած են ցիւթով. վկայ՝ Հռոմը ինկաւ երբ Հռոմէացին յղփացաւ:

Այսօր, **վանքը** օրհնութիւն մըն է մեր ժողովուրդին համար. գիտնանք այդ վանքին մթնոլորտը ապրիլ ու արժեցնել: Կը հաւատամ, որ վաղը աւելի պիտի գնահատուի. որովհետեւ վաղը **վանքը** աւելի պիտի արժէ քան **պանքը**: «Զարգացող», «յառաջացող», «հարստացող», «ճոխացող», «յղփացող» գնացքն այս աշխարհի արդի կեանքին՝ աւելի եւս պիտի զգացնէ մարդուն հոգեկանին սովը եւ «հարստութեան» մէջ մարդկային աղքատացման երեւոյթը: Վաղը «ոգեղէն հաց»ի կարօտութենէն աւելի պիտի տառապի մարդը «նիւթեղէն հաց»ի առատութեան իր վիճակին մէջ:

Երուսաղէմի Տաճարը կեդրոնը չէր միայն Եբրայական պաշտամունքին եւ կրօնական կեանքի արտայայտութեան ուրիշ վիճակներու եւ երեսներու, այլ՝ միանգամայն շտեմարանը Եբրայեցւոց՝ իբրեւ կրօնական հաւաքականութեան, նիւթեղէն հարստութենէն: Բոլոր անոնց, որոնց համար Ս. Գրոց պատմութիւնը օտար կամ խորթ կալուած մը չէ ծանօթութեան՝ պարզ իրականութիւն է որ ամէն Եբրայեցի իր կարողութեան չափով իր նուիրաբերութեան բաժինը ունէր Տաճարին ճոխութեան եւ կեանքին ու գործին մէջ: Ամէն անգամ երբ բարեպաշտ Եբրայեցին ներս մտնէր իր Աստուծոյն Տունէն, իր սրտէն բխած նուէրը կը նետէր տասնեակներէ փողանման գանձանակներէն մէկուն մէջ: Սովորական ու գովելի արարք: Ոչինչով սակայն մասնաւորապէս յատկանշական: Այնպէս ինչպէս մեզի

համար եւս ոչինչ ունի իր մէջ ուշագրաւ հայ հաւատացեալի մը ներէին զետեղումը բանկալի կամ իր առջեւէն անցնող պնակին մէջ եւ կամ մոմի մը գնումն ու վառումը:

Բայց սովորական այս պատկերին մէջ կար մէկ յատկանշական անկիւն.—Յիսուս գանձանակին դիմաց, քիչ մը հեռուն, լուռ ու հանդարտ կանգնած՝ կը դիտէր...: Աչքերը սեւեռուած էին ժողովուրդի անվերջ շարանին վրայ, ուրկէ մարդիկ մէկ-մէկ կը քակուէին ու իրենց տուրքը կը ձգէին գանձանակին մէջ: Կը դիտէր թէ **ինչպէ՛ս** ժողովուրդը իր ներէրը կ'ընծայէր Աստուծոյ: **«Տեսանէր թէ գիա՛րդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն»:** Կը դիտէր բոլորը անխտիր. ու կը մնար ինք՝ անձշմար: **Տուրքին** վրայ չէր սեւեռուած իր ակնարկը այնքան՝ որքան **տուողին:** Իրեն համար տուրքին ներթեղէն չափն ու արժէքը չէին մտածման առարկան: Կը դիտէր **մարդը** տեսնելու համար այն **ոգին,** որով մարդիկ կը շարժէին իրենց ձեռքերը տալո՛ւ **ժեսդ**-ին մէջ:

Դժուար չէ, եւ ոչ ալ սխալ պիտի ըլլար, երեւակայել հպարտ, արհամարհոտ կեցուածքը այն մեծահարուստ անձերուն, որոնք երբ իրենց ծանր կշռող դրամները կը ձեռէին գանձանակին մէջ կը սպասէին լսել անոնց ձայնը եւ ունկնդրել արձագանքին...: Աւետարանին խօսքը իրենց մասին՝ որքան պարզ այնքան եւ թելադրիչ է. **«Բազում մեծատունք արկին բազում ինչ»:** Այս բոլորին դիմաց Յիսուս մնաց անվրդով: Ծանօթ էր իրեն տիպարը այդ մարդերուն, որոնց երբեք չհանդիպեցաւ իր համակրութիւնը:

Սովորական տեսարանին մէջ յանկարծ նոր ու անսովոր գիծ մը դրոշմուեցաւ: Յիսուսի աչքին ներթուածքը սլաքուեցաւ անոր ու կարծէք նոր փայլ մը շող արձակեց այդ ամենատես, հեռահայեաց, խորազնին եւ յայտնաբերիչ հայեացքին մէջ.

Ահա յանկարծ այրի կին մը մօտեցաւ ու շատ հաւանաբար վախով, ամօթի զգացումով ու թերեւս գաղտնի ներթեց նաքարակիտ մը՝ երկու լումայ արժող: Բոլորը անտեսեցին անշուշտ խեղճ կինը: Ի վերջոյ, ի՞նչ կ'արժէր ինք. եւ ի՞նչ պիտի արժէր իր ներէրը: Յիսուս էր միայն, որ իր թափանցող հոգեկան հայեացքով կրցաւ չափել խորքը ներէրին՝ կնոջ հոգիին մէջ, ու զգալ բարոյական գեղեցկութիւնը արարքին: Անմիջապէս իր մօտ կանչեց իր առաքեալները ու անոնց բացատրեց արարքին իմաստը.— Այս տառապած կինը,—ըսաւ իր աշակերտներուն,—շատ **աւելի** ներթեց գանձանակին մէջ քան բոլոր անոնք՝ որոնք դրամ ձգեցին հոն: **Աւելին՝** տրուածին քանակին մէջ չէ, այլ այն ոգիին, հոգեկան տրամադրութեան, որով տրուածը տրուեցաւ: Մեծահարուստները իրենց ունեցածներու աւելորդներէն տուին. իսկ սա, իր չքաւորութեամբն հանդերձ, ինչ որ ուներ՝ տուաւ, մինչեւ իսկ իր կեանքը պայմանաւորող նաքարակիտը: Մէկ խօսքով՝ տուաւ իր Աստուծոյն, առանց հաշիւի, սահմանափակումի, կողմնակի դիտումներու: Տուաւ այնպէս ինչպէս իր սիրտը շարժեց իր ձեռքերը. տուաւ այնքան որքան էր իր ամբողջ ունեցածը: Ու երբ տուաւ՝ ալ չմտածեց ուրիշ հաշիւներու մասին. ալ չմնաց իր մօտ ներուզագոյն մասնիկ մ'իսկ իր ունեցածէն:

Ահա՛ տալու այն ձեւը եւ տրուածը արժեցնող այն ոգին, որոնք հրճուեցուցին սիրտը Երկնաւոր Վարդապետին ու պատճառեցին իր գովեստի խօսքը տառապած ու արհամարհուած այրիին մասին:

Գանձանակը, հոգւոյ տեսութեամբ դիտուած, մարդկային պատմութիւնն է՝ Աստուծոյ ձեռքին մէջ: Անոր առջեւէն անցեր են ու կ'անցնին միշտ ան-

համար մարդեր ու բազում ժողովուրդներ անվերջ դարերու սահանքին հետ միասին:

Հայ ժողովուրդն ալ, հարիւրաւոր այլ ազգերու շարքին, անցաւ այդ Գանձասարակին առջեւէն եւ անոր կեանքը դարերու տարածքին վրայ երկնող սերունդները մէկ առ մէկ իրենց տուրքը դրին Գանձասարակին մէջ:

Լուսաւորիչ՝ մեր հաւատոյ Հայրը, հոն դրաւ իր արցունքը՝ որպէս ձէթ անապատ, եւ անշէջ պահեց Արագածի կատարի կանթեղին խորախորհուրդ լոյսը:

Ուրիշ սերունդի մը ռահվիրան՝ Ս. Մեսրոպ Մաշտոց, Հայ Գիրը դրաւ հոն տասնաբաւեայ պատուիրաններու նման զայն քանդակելէ ետք հայու հոգիին մէջ:

Ղեւոնդ Երէց, իր թերեւս կոտրած խաչը զետեղեց հոն զոհողութեան գաղափարին իբրեւ վկայութիւն եւ ներշնչող աղբիւր: Իրմէ անբաժան Վարդանը Կարմիր՝ անպայման խաչին կողքին դրաւ իր արիւնոտած սուրը ի սէր Հայ Հաւատքին ու Հայրենիքին:

Խորենացին մեր ժողովուրդը իր ազգային գիտակցութեան բարձրացնող ու անոր մեծութեան ոգին արթուն պահող իր մատեանը դրաւ հոն անցեալի որպէս փառքի կոթող:

Աղօթաւոր հայ ճգնաւորներ անցան նոյն Գանձասարակին առջեւէն ու աղօթքի խորհրդաւոր մրմունջներ կաթեցուցին հոն: Նարեկացին անոնցմէ՝ իր միստիկ հոգիէն մասնիկ մը դրաւ հոն իբրեւ անկորնչելի գանձ:

Հայ բիւրաւոր ճահճատակներ քալեցին Գանձասարակին առջեւէն ու իրենց կեանքէն մէկ-մէկ բջիջ, իրենց արիւնէն մէկ-մէկ կաթիլ ծորեցին հոն:

Անցան երաժիշտներ՝ Շնորհալիի քաղցր մեղեդիներուն զօրութեամբ հոգեգրաւ ու սրտայոյզ ձայնեղէն ալիքներ ու շեշտեր արձակելով իրենց հոգիներէն Գանձասարակին անպարագիծ տարածութեան մէջ: Ճարտարապետներ՝ որոնք բերին հոն յաւերժականգուն ու վերասլաց կաթողիկէներու աստուածամերձ դրացնութիւնը երկնքին հետ: Քանդակագործներ՝ որոնք մահուան վրայ կեանքին յաղթանակը երգող գեղազարդ խաչքարերու անտառներ ամբողջ ընծայ բերին անոր: Ու գրիչներ եւ ծաղկողներ գեղագիր ու գեղակազմ ձեռագիրներու, եւ ճրքագիծ ու գունագեղ մանրանկարներու ճոխ մատենադարաններ դասաւորեցին անկիւնի մը մէջ այդ անպարագիծ Գանձասարակին:

Ահա, այսպէս, հազար ու մէկ հայ սերունդներ անցան Գանձասարակին առջեւէն եւ հազար ու մէկ տեսակ նուէրներ դրին հոն: Բայց բոլորի տուրքին մէջ՝ հակառակ տեսակի այս սկզբնական այլազանութեան՝ կար բան մը որ հասարակաց էր բոլորին —անոնք տուին այն ինչ որ ունէին՝ իրենց ամբողջ կեանքը, նման այրի կնոջ, առանց հաշիւի, սակարկութեան, այլ տարուած՝ Գանձասարակին տիրոջ հանդէպ իրենց ունեցած սիրոյն ու նուիրումի զօրութենէն եւ, ապա, քրիստոնէական կրօնի հաւատքին եւ հայ ցեղի առաքինութիւններուն անդիմադրելի ոյժին մղումովը:

* * *

Հետքերը Քրիստոսի, ինչպէս կ'ըսէ Ջեռնադրութեան Մաշտոցը շարադրող Հայ Վարդապետը, վիշտն է, տառապանքն է, նախատինքն է, չարչարանքն է, քաղցն է, աղքատութիւնն է: Այս բոլորով ի՞նչ ըսել կ'ուզէ.

աւօթի՞ մնալ, ծարա՞ւ մնալ, անպայման դիտմամբ չարչարուի՞լ: Ո՛չ երբեք: Այս բոլոր բառերը խորհրդանշական իմաստ մը ունին եւ բոլորը մեր մըտքերը կը տանին եւ կը սեւեռեն նոյն եւ մէկ կէտին—մոռնալ այն ինչ որ անձին կը պատկանի, բոլոր այն ինչ որ միայն անձին շահն է, եւ երթալ ծառայել անոնց, որոնք Աստուծոյ անուանով մեզի յանձնուած են: Աստուծոյ անուանով բաժնել մարդոց վիշտը, հասնիլ մարդոց կարիքներուն, տառապանքներուն, տառապիլ անոնց տառապանքովը. ա՛յս է գերագոյն երջանկութիւնը: Քահանայութիւնը, Աստուծոյ նուիրումովը, ուրիշ բան չէ եթէ ոչ ինքնամոռացութիւն, իբրեւ անհատ, այսինչ այսինչեան մարդ, եւ ինքնընծայում Աստուծոյ եւ Իր ժողովուրդին: Իսկ հայ քահանայութեան պարագային, դեռ աւելին՝ ծառայութիւն հայոց ազգին, հայոց մշակոյթին, զանոնք նկատելով իբրեւ գերագոյն արբութիւն, բարձրագոյն արժէք եւ անձը անոնց ծառայութեան մէջ միայն ըմբռնելով իբրեւ արժէքաւոր գոյութիւն:

Խորհէ և մտիր
Անթիլիաս 1984



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, շաբաթ.— Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սուրբ հայրապետին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 2-ին, կիրակի.—Զ կիրակի Քառասնորդական Պահոց (Գալըստեան):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն արդ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Ապրիլի 3-ին, երկուշաբթի.— Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 15-ին, շաբաթ.— Ճրագալոյց Զատկի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հանդիսավոր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 16-ին, կիրակի.— ԶԱՏԻԿ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մա-

տուցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ շնորհավորելով համայն հայության Ս. Ջատիկը:

* * *

Ապրիլի 17-ին, երկուշաբթի.— Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

* * *

Ապրիլի 23-ին, կիրակի.— Կրկնազատիկ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Ապրիլի 30-ին, կիրակի.— Կանաչ Կիրակէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր աբդ. Չիֆթեճյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *



„ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АПРЕЛЬ 1995г.)

НОМЕР ПОСВЯЩЕН ИЗБРАНИЮ И ИНТРОНИЗАЦИИ ЕГО СВЯТЕЙШЕСТВА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГАРЕГИНА I

РЕДАКТОРСКАЯ

1. От Тебя исходящий Тебе приношу (стр. 3—6).

2. ГЕВОРК ДЕВРИКЯН—Во славу Веры и Отечества (стр. 7—13).

3. Собранная биография Его Святейшества Католикоса всех армян Гарегина I (стр. 14—17).

4. Список делегатов Национально-Церковного Собора 1995 года (стр 18—29).

5. Оглавление гостей на торжествах интронизации Его Святейшества Католикоса всех армян Гарегина I (стр. 30—31).

6. Национально-Церковный Собор (стр. 32—35).

7. Протокол Национально-Церковного Собора (стр. 36—46).

8. Телеграмма Президента Республики Нагорного Карабаха Р. Кочаряна Патриаршему Местоблюстителю Патриарху Торгому Манукяну по случаю созыва Национально-Церковного Собора и выбора католикоса, 11 апреля 1995 г. (стр. 47).

9. Телеграмма Председателя Верховного Совета Республики Нагорного Карабаха К. Бабуряна Патриаршему Местоблюстителю Патриарху Торгому Манукяну по случаю созыва Национально-Церковного Собора и выбора католикоса, 4 апреля 1995 г. (стр. 48).

10. Телеграмма Премьер-Министра Республики Нагорного Карабаха Л. Петросяна Патриаршему Местоблюстителю Патриарху Торгому Манукяну по случаю созыва Национально-Церковного Собора и выбора католикоса, 1 апреля 1995 г. (стр. 49).

11. Слово Патриаршего Местоблюстителя архиепископа Торгома Манукяна на Национально-Церковном Соборе (стр. 50—51).

12. Слово Президента Республики Армения Левона Тер-Петросяна на Национально-Церковном Соборе (стр. 52—54).

13. Слово Католикоса Киликийского Домна Гарегина II на Национально-Церковном Соборе (стр. 55—56).

14. Слово Католикоса Гарегина I в Кафедральном соборе Св. Эчмиадзина после избрании (стр. 57—58).

15. Слово закрытия Католикоса Гарегина I на Национально-Церковном Соборе (стр. 59—64).

16. Поздравительное слово Президента Левона Тер-Петросяна в тронном зале резиденции Католикосата (стр. 65).

17. Слово Католикоса Гарегина I в тронном зале резиденции Католикосата после избрании (стр. 66).

18. Президент Респиблики Армения Левона Тер-Петросян принял Католикоса всех армян Гарегина I, 5 апреля 1995 г. (стр. 67).

19. Католикос всех армян Гарегин I принял посланников Исламской Республики Иран, 10 апреля 1995 г. (стр. 68).

20. Интронизация Его Святейшества Католикоса всех армян Гарегина I, 9 апреля 1995 г. (стр. 69—71).

21. Проповедь Его Святейшества Католикоса всех армян Гарегина I в Кафедральном соборе Св. Эчмиадзина по случаю патриаршей интронизации, 9 апреля 1995 г. (стр. 72—76).

22. Банкет, данный в Спортивно-концертном комплексе, по случаю интронизации Его Святейшества Католикоса всех армян Гарегина I (стр. 77—88).

23. Проповедь Католикоса всех армян Гарегина I в Кафедральном соборе Св. Эчмиадзина по случаю Светлого Воскресения Христово, 16 апреля 1995 г. (стр. 89—92).

ПОЗДРАВЛЕНИЯ ПО СЛУЧАЮ ИНТРОНИЗАЦИИ

24. Духовные главы Сестер-Церквей и церковные высокопоставленные деятели (стр. 95—110).

25. Государственные и общественные деятели иностранных государств (стр. 111—118).

26. Государственные деятели Республики Армения и Арцаха и общественные деятели Спюрка (стр. 119—128).

27. Поздравления по случаю избрания Католикоса Гарегина I (список)—(стр. 129—149).

28. М. ВАРТАНЯН—Посещение Католикоса всех армян Гарегина I Цицернакаберда (стр. 150—152).

29. Патриаршее паставление по случаю 80-ти летия Геноцида армян в Отоманской империи, 17 апреля 1995 г. (стр. 153—155).

30. Международный симпозиум «Вопросы Геноцида» в Национальной Академии Наук, 21—23 апреля 1995 г. (стр. 156—158).

31. Слово благословения, произнесенное католикосом всех армян Гарегином I по случаю открытия музейного комплекса Цицернакаберда (стр. 159—160).

32. Проповедь Католикоса всех армян Гарегина I в Кафедральном соборе Св. Эчмиадзина, 24 апреля (стр. 161—163).

33. АРХИЕПИСКОП МЕСРОП АШЧЯН—Из Рэмклая в Св. Эчмиадзин (стр. 164—166).

34. СЕН АРЕВШАТЯН—Друг и блоготворитель Матенадарана им. М. Маштоца (стр. 167—168).

35. БАБКЕН ЧУГАСЗЯН—Достойный преемник (стр. 169).

36. АРТАШЕС МАРТИРОСЯН—Лампада Лусаворича (стр. 170—171).

37. ГЕВОРК АБГАРЯН—«Его помять вечно живёт во мне» (стр. 172—174).

38. ГЕВОРК ДЕВРИКЯН—Во имя гордого будущего нации (стр. 175—177).

39. ГАРНИК АНАНЯН—Учёный и педагог (стр. 178—181).

40. ВОЛОДЯ АБРАМЯН—Ещё один светящий маяк (стр. 182—184).

41. АРТАШЕС МАТЕВОСЯН—Книга (стр. 185—187).

42. ПОГОС ХАЧАТРЯН—Долгожданная книга (стр. 188—194).

43. Из размышлений Католикоса всех армян Гарегина I (стр. 195—207).

В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ ЭЧМИАДЗИНЕ

44. Церковная хроника первопростольного Эчмиадзина за апрель месяц (стр. 208—209)

„ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(APRIL 1995)

THIS NUMBER OF THE MONTHLY IS OFFERED TO THE ELECTION AND ENTHRONMENT OF HIS HOLINESS GAREGUIN I CATHOLICOS OF ALL ARMENIANS

EDITORIAL

1. Yours to you (pp. 3—6).

2. GEVORG DEVRIKIAN—For the glory of Faith and Fatherland (pp. 7—13).

3. The short biography of His Holiness Gareguin I Catholicos of All Armenians (pp. 14—17).

4. The list of the delegates of the National-Church Assembly of 1995 (pp. 18—29).

5. The list of the guests who have participated to the enthronement festivities of His Holiness Gareguin I Catholicos of All Armenians (pp. 30—31).

6. The National-Church Asembly (pp. 32—35).

7. Inscription of the National-Church Assembly (pp. 36—46).

8. Cable of Mr. R. Kotcharian (president of the Republic of Karabagh) to the Locum Tenens of Catholicossate His Beatitude Patriarch of Jerusalem Archbishop Torgom Manoukian on the occasion of the Assembly and the patriarchal election, 4-th April 1995 (p. 47).

9. Cable of Mr. K. Babourian (president of the Supreme Council of the Republic of Karabagh) to the Locum Tennes of Catholicossate His Beatitude Patriarch of Jerusalem

Archbishop Torgom Manoukian on the occasion of the Assembly and the patriarchal election, 4-th April 1995 (p. 48).

10. Cable of Mr. L. Pedrossian (prime-minister of the Republic of Karabagh) to the Locum Tenens of Catholicossate His Beatitude Patriarch of Jerusalem Archbishop Torgom Manoukian on the occasion of the Assembly and the patriarchal election, 4-th April 1995 (p. 49).

11. The address of the Locum Tenens Archbishop Torgom Manoukian in the National-Church Assembly (pp. 50—51).

12. The adress of Mr. Levon Der-Petrossian, president of the Republic of Armenia, in the National-Church Assembly (pp. 52—54).

13. The address of His Holiness Gareguin II, Catholicos of the Great House of Cilicia, in the National-Church Assembly (pp. 55—56).

14. The address of His Holiness Gareguin I in the Mother Cathedral after the election (pp. 57—58).

15. The closing speech of His Holiness Catholicos Gareguin I in the National-Church Assembly (pp. 59—64).

16. The congratulatory address of the president Mr. Levon Der-Petrossian in the hall of Throne (p. 65).

17. The address of His Holiness in the hall of Throne of the patriarchal residence after the election (p. 66).

18. The president of the Armenian Republic accepted the Catholicos of All Armenians, 5-th April 1995 (p. 67).

19. His Holiness accepted the delegates of the Islamic Republic of Iran, 10-th April 1995 (p. 68).

20. Enthronement of His Holiness Gareguin I Catholicos of All Armenians, 9-th April 1995 (pp. 69—71).

21. The sermon of His Holiness Gareguin I Catholicos of All Armenians in the Mother Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the patriarchal enthronement, 9-th April 1995 (pp. 72—76).

22. On the occasion of the enthronement of His Holiness Gareguin I given the dinner party in the Athletic-Concert hall of Yerevan (pp. 77—88).

23. The sermon of His Holiness Gareguin I Catholicos of All Armenians given in the Mother Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of the feast of Holy Easter, 16-th April 1995 (pp. 89—92).

CONGRATULATIONS ON THE OCCASION OF THE ENTHRONEMENT

24. Spiritual heads of Sister Churches and high ranking clergymen (pp. 95—110).

25. Governmental and public persons of foreign powers (pp. 111—118).

26. Public persons of the Republic of Armenia, Karabagh and from the Armenian diaspora (pp. 119—128).

27. List of congratulations on the occasion of the election of His Holiness Gareguin I Catholicos of All Armenians (pp. 129—149).

28. M. VARDANIAN—The first visit of His Holiness Gareguin I Catholicos of All Armenians to «Dzidzernagaberd» (pp. 150—152).

29. Patriarchal message on the occasion of the 80-th anniversary of the Armenians' April genocide, 17-th April 1995 (pp. 153—155).

30. International scientific assembly about the «Questions of genocide in the Academy of National Sciences», 21—23-rd April 1995 (pp. 156—158).

31. On the occasion of the opening of the museum at «Dzidzernagaberd» the address of blessing of His Holiness (pp. 159—160).

32. The sermon of His Holiness in the Mother Cathedral of Holy Etchmiadzin (pp. 161—163).

33. ARCHBISHOP MESROP ASHDJIAN—From Hromgla to Holy Etchmiadzin (pp. 164—166).

34. SEN AREVSHATIAN—The friend and the benefactor of the Mashtotzian library of manuscripts (pp. 167—168).

35. BABGEN TCHOUKASZIAN—The meritorious successor (p. 169).

36. ARTASHTS MARTIROSSIAN—The lamp of the Illuminator (pp. 170—171).

37. GEVORG ABGARIAN—«His memory is living mixed with my person» (pp 172—174).

38. GEVORG DEVRIKIAN—On the name of the approaching proud nation (pp. 175—177).

39—Garnik ANANIAN—The scholar and the Pedagogue (pp. 178—181).

40. VOLODYA ABRAHAMIAN—Also a luminous lightouse (pp. 182—184).

41. ARTASHES MATHEVOSSIAN—The book (pp. 185—187).

42. BOGHOS KHATCHATRIAN—Book wich has been expected from longtime (pp. 188—194).

43. From the meditations of His Holiness (pp. 195—207).

THE HOLY SEE

44. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of April 1995 (pp 208—209).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT—SIEGE D'ETCHMIADZINE
(AVRIL 1995)

CE NUMERO EST DEDIE A L'OCCASION DE L'ELECTION
ET D'INTRONISATION DE SA SAINTETE GAREGUINE I
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

EDITORIAL

1. Votre à vous (pp. 3—6).

2. GUEVORGUE DEVRIKIAN—Pour la gloire de la foi et de la Patrie (7—13).

3. Brève biographie de Sa Sainteté Garéguine I Catholicos de Tous les Arméniens (pp. 14—17).

4. La liste des délégués qui ont participés à l'Assemblée Nationale-Ecclésiastique du 1995 (pp. 18—29).

5. La liste des hôtes qui ont participés aux solennités de l'intronisation de Sa Sainteté Guaréguine I Catholicos de Tous les Arméniens (pp. 30—31).

6. LAssembleé Nationale-Ecclésiastique (pp. 32—35).

7. Inscription de l'Assemblée Nationale-Ecclésiastique (pp. 36—46).

8. Cable de Mr. R. Kotcharian (président de la République du Haut Karabagh) à Locum Tenens du Catholicossat Sa Béatitude Archevêque Torgom Manoukian, Patriarche de Jérusalem, à l'occasion de l'Assemblée et de l'élection patriarcale, le 4 Avril 1955 (p. 47).

9. Cable de Mr. K. Babourian du Conseil Suprême de la République du Haut Karabagh) à Locum Tenens du Catholicossat Sa Béatitude Archevêque Torgom Manoukian, Patriarche de Jérusalem à l'occasion de l'Assemblée et de l'élection patriarcale, le 4 Avril 1955 (p. 48).

10. Cable de Mr. L. Petrossian (premier ministre de la République du Haut Karabagh) à Locum Tenens du Catholicossat Sa Béatitude Archevêque Torgom Hanoukian, Patriarche de Jérusalem, à l'occasion de l'Assemblée et de l'élection patriarcale, le 4 Avril 1955 (p. 49).

11. L'adresse de l'Archevéque Torgom Manoukian, Locum Tenens du Catholicosat à i'Assemblée Nationale-Ecclésiastique (pp. 50—51).

12. L'adresse de Mr. Lévon Ter-Petrossian (président de la République d'Arménie) à l'Assemblée Nationale-Ecclésiastique (pp. 52—54).

13. L'adresse de Sa Sainteté Garéguine II Catholicos de la Grande Maison de Cilicie à l'Assemblée Notionale-Ecclésiastique (pp. 55—56).

14. L'adresse de Sa Sainteté Garéguine I Catholicos de Tous les Arméniens dans la Cathédrale aprés l'élection (pp. 57—58).

15. L'adresse de Sa Sainteté Catholicos Garéguine pour la fin de l'Assemblée Nationale-Ecclésiastique (pp. 59—64).

16. L'adresse de félicitation du président Mr. Lévon Ter-Pedrossian dans le salle du trône (p. 65).

17. L'adresse de Sa Sainteté dans le salle du trône de la Résidence Catholicossale aprés l'élection (p. 66).

18. Le président de la République d'Arménie a reçu le Catholicos de Tous les Arméniens, le 5 Avril 1995 (p. 67).

19. Sa Sainteté a reçu les délégués de la République Islamique d'Iran, le 10 Avril 1995 (p. 68).

20. L'intronisation de Sa Sainteté Garéguine I Catholicos de Tous les Arméniens, le 9 Avril 1955 (pp. 69—71).

21. Le sermon de Sa Sainteté Garéguine I Catholicos de Tous les Arméniens dans la Cathédrale de St. Etshmiadzine à l'occasion de l'intronisation Catholicossale, le 3 Avril 1995 (pp. 72—76).

22. Diner donné a l'occasion de l'intronisation de Sa Sainteté Catholicos I dans le salle de Gymnaso-Concert (pp. 77—88).

23. Le sermon de Sa Sainteté Garéguine I Catholicos de Tous les Arméniens à l'occasion de la fête de St. Résurrection dans la Cathédrale de St. Etchmiadzine, le 16 Avril 1995 (pp. 89—92).

FELICITATIONS A L'OCCASION DE L'INTRONISATION

24. Chefs spirituels des Eglises soeurs et de haut grade du clergé (pp. 95—110).

25. Personnes gouvernementales et publiques des pouvoirs étrangers (pp. 111—118).

26. Personnes publiques de la République d'Arménie, de Haut Karabagh et des Arméniens des pays d'étranger (pp. 119—128).

27. Liste des félicitations à l'occasion d'élection du Catholicos Garéguine I (pp. 129—149).

28. M. VARDANIAN—La visite de Sa Sainteté Garéguine I Catholicos de Tous les Arménitns à «Dzidzernagaberd» (pp. 150—152).

29. Message Patriarcal à l'occasion du 80-iéme anniversaire du génocide d'Avril 1915 (pp. 153—155).

30. L'assemblée scientifique internationale à propos des «Questions du génocide» dans l'Académie Nationale, 21—23 Avril 1995 (pp. 156—158).

31. L'adresse de bénédiction de Sa Sainteté à l'occasion de l'ouverture du musée de «Dzidzernagaberd» (pp. 159—160).

32. Sermon de Sa Sainteté dans la Cathédrale de St. Etchmiadzine (pp. 161—163).

33. ARCHEVEQUE MESROP ACHDJIAN—De Hromgla à St. Etchmiadzine (pp. 164—166).

34. SEN AREVCHATIAN—L'ami et le bienfaiteur de la bibliothèque des manuscrits Machdotzien (pp. 167—168).

35. BABKEN TCHOUKASZION—Le successeur méritoire (p. 169).

36. ARTACHESS MARTIROSSIAN—La lampe de l'Illuminateur (pp. 170—171).

37. GUEVORG ABGARIAN—«Sa mémoire vit ensemble avec ma personne» (pp. 172—174).

38. GUEVORG DEVRIKIAN—Au nom L'avenir de la nation (pp. 175—177).

39. GARNIK ANANIAN—Le savant et le pédagogue (pp. 178—180).

40. VOLODIA ABRAHAMIAN—Encore un phare qui donne de la lumiere (pp. 182—184).

41. ARTACHESS MATHEVOSSIAN—Le livre (pp. 185—187).

42. POGHOS KHATCHATRIAN—Livre qui était attendu depuis longtemps (pp. 188—194).

43. Des méditations de Sa Sainteté (pp. 195—207).

AU SAINT-SIEGE

44. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la Cathédrale de Saint Etchmiadzine au cours du mois d'Avril 1995 (pp. 208—209).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ջքոյս ի քոյոց քեզ մատուցանեմ 3

ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ—Ի փառս Հավատի և Հայրենյաց 7

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ամփոփ կենսագրությունը 14

1995 թվականի Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամավորների ցուցակը . . 18

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության հանդիսությունների հյուրերի ցանկ 30

Ազգային-Եկեղեցական Ժողովը 32

Արձանագրություն Ազգային-Եկեղեցական Ժողովի 36

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի հեռագիրը Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկյանին՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարման և կաթողիկոսական ընտրության առթիվ . . 47

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Կ. Բաբուրյանի հեռագիրը Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկյանին՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարման և կաթողիկոսական ընտրության առթիվ 48

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ Լ. Պետրոսյանի հեռագիրը Կաթողիկոսական Տեղապահ Թորգոմ Պատրիարք Մանուկյանին՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարման և կաթողիկոսական ընտրության առթիվ . 49

Կաթողիկոսական Տեղապահ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի խոսքը Ազգային-Եկեղեցական Ժողովում 50

ՀՀ նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանի խոսքը Ազգային-Եկեղեցական Ժողովում 52

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ-ի խոսքը Ազգային-Եկեղեցական Ժողովում 55

Գարեգին Ա Կաթողիկոսի խոսքը Մայր տաճարում ընտրություններից հետո . . 57

Գարեգին Ա Կաթողիկոսի փակման խոսքը Ազգային-Եկեղեցական Ժողովում . . 59

Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի շնորհավորական խոսքը գահասրահում . . . 65

Վեհափառ Հայրապետի խոսքը Վեհարանի գահասրահում ընտրությունից հետո . 66

ՀՀ նախագահն ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին 67

Վեհափառ Հայրապետն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակներին 68

Գահակալություն Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի 69

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում կաթողիկոսական գահակալության առթիվ . 72

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջին Կաթողիկոսի գահակալության առիթով տրված ճաշկերույթ Մարզահամերգային համալիրում 77

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի Սուրբ Յարութեան տոնի առթիւ Մայր տաճարում 89

ԸՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Քույր Եկեղեցիների հոգևոր պետեր և եկեղեցական բարձրաստիճան գործիչներ . 95
Օտար պետությունների պետական և հասարակական գործիչներ 111
Հայաստանի Հանրապետության և Արցախի պետական և սիյուրքահայ հասարակական գործիչներ 119
Ընորհավորականներ Գարեգին Ա Կաթողիկոսի ընտրության առթիվ . . . 129

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Առաջինի այցելությունը Ծիծեռնակաբերդ 150
Հայրապետական պատգամ Ապրիլեան եղեռնի 80-ամեակի առթիւ . . . 153
«Ճեղասպանության հարցեր»-ի միջազգային գիտաժողով Գիտությունների Ազգային Ակադեմիայում 156
Ծիծեռնակաբերդի թանգարանային համալիրի բացման առիթով ասված Վեհափառ Հայրապետի օրհնանքի խոսքը 159
Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում ապրիլի 24-ին 161
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՍ ԱՇՃՅԱՆ—Հռոմկլայեն Սուրբ Էջմիածին 164
ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ—Մաշտոցյան Մատենադարանի բարեկամը և բարերարը . . 167
ԲԱԲԿԵՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆ—Արժանավոր հաջորդը 169
ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Լուսավորչի կանթեղը 170
ԳԵՎՈՐԳ ԱԲԳԱՐՅԱՆ—«Նրա հիշատակը իմ աձի հետ միաշաղախաոձ ապրում է» 172
ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ—Հանուձ ազգի ինարտ գալիքի 175
ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ—Գիտնականն ու մանկավարժը 178
ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ—Եվս մի լուսատու փարոս 182
ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Գիրքը 185
ՊՈՂՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ—Երկարորեն սպասված գիրք 188
Վեհափառի մտածումներից 195

ՄԱՏՐ ԱԹՈՌՈՒՄ

Եկեղեցական բեմ. լուրեր 208
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 210
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 212
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 214

Խմբագիր՝ ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱՄԻՆ

«ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie.

Հանձնված է արտադրության 10.04.1995 թ.։ Ստորագրված է տպագրության 30.06.1995 թ.։
Տպագրական 13,5 մամուլ+28 գիրդիր, թուղթ 70×108 1/16, պատվեր 116։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան